

ՍԱՐԳԻՍ ԶՈՒԼՆՅԱՆ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԱՏԻԱՄԱՆԻ**

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ**





ՍԱՐԳԻՍ ՉՈՒԼՃՅԱՆ  
**ԳՍՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՏԻԱՄԱՆԻ  
ԻՆՎԱԿԱՆԱԳՐԱԳՅՈՒՆ**

---

SARGIS CHULJYAN  
**HISTORY OF ADIAMAN  
AUTOBIOGRAPHY**

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

SARGIS CHULJYAN

**HISTORY OF ADIAMAN**

**AUTOBIOGRAPHY**



---

YEREVAN 2004

947.925



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ԶՈՒԼՃՅԱՆ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՏԻԱՄԱՆԻ

ԻՆԵՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍԵՑ  
ՍՎԻՆ ԶՈՒԼՃՅԱՆ

*(Որպես որդիական պարտք, թեկուզ ուշացումով,  
պարտականաթյունը Համարեցի Հրատարակել այս գիրքը)*

A 7  
89214



ԵՐԵՎԱՆ 2004

ԽԳ՝ 841 (479.25)  
ՊՄ՝ 63.3 (21)  
Չ 864

**Տպագրվում է ԳԳ ՊԱԱ Արժեզագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագիր՝ Պ. Ա. Չոլեյան**

Չ 864      **Չոլեյան Սարգիս**  
**Պատմություն և աշխարհագրություն**  
- Եր. - Զանգակ-97, 2004, - 256 էջ:

Մեծ եղեռնից վերստիվում է Սյուրմալի աստվածային հետազոտության բաժնի  
ընդ Սարգիս Չոլեյանի ներքա աշխատությունը անցյալ դարասկզբին հայ ժողովրդի  
կյանքում աշխատական դիր ունեցած իրադարձություններն ժամանակակից ու  
տեղանառն ուղիներով իրադարձում նկարագրություն է: Չոլեյանը անձնական զի-  
տադրություններ է առանձին կոնկրետ գիտական հիմնով վերադասում, վեր է հա-  
նում սաման-տարածական պետության ցեղասպան բաղադրականության իրական-  
մայնան զրոսպատմանը, ընթացքը, հետևանքներն ու դասերը:

Չ 0503020913-2004 p.  
0003(01)-2004

ՊՄ՝ 63.3 (21)

ISBN 99930-2-937-9

© Ս. Չոլեյան  
© - Զանգակ-97-

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Չայրս՝ Սարգիս Զուլեյան, «Ատիամանի պատմությունը» գրեց 1960-ական թվականների վերջին և 70-ական թվականների սկզբին, Երևանում:

Լինելով ուսուցիչ և ունենալով հետաքրքրությունների լայն շրջանակ, շրջած լինելով ամբողջ շրջանը մինչև Մալաթիա, Ուրֆա, Այնթապ՝ նա մեզ է թողել ականատեսի իր հավաստի նկարագրությունները:

Տարածաշրջանի պատմության ետնախորդի վրա նա մանրամասն ուսումնասիրել և շարադրում է Ատիամանի և շրջակա հայկական ավանների և գյուղերի հայ բնակչության, ինչպես նաև բռնի իսլամացած և քրդացած ցեղախմբերի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև Եղեռնը և հետեղեռնյան շրջանը:

Աշխատությունն ընդգրկում է նաև շրջանի աշխարհագրությունը, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, բնակչության էթնիկ կազմը, կրթական և եկեղեցական կյանքը, պատմական հուշարձանները, 1895–1896-ի կոտորածները, Եղեռնը, զավառաբարբառը, տնտեսությունը և այլն:

Ի տարբերություն Արևմտյան Չայաստանի շատ քաղաքների և շրջանների՝ Ատիամանի մասին շատ քիչ է գրվել:

Աշխատությունը կարող է, թեկուզ համեստ չափով սկզբնաղբյուր դառնալ, եթե մի օր ձեռնարկվի Արևմտյան Չայաստանի և Եղեռնի համապարփակ պատմության պատրաստությունը:

Գիրքը ունի անձնանունների և տեղանունների ցանկ, բառարան, քարտեզ և այլն:





## Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ա Տ Ի Ա Մ Ա Ն Ի

### Չ Ո Ն

Ի հիշատակ մտիականցի այն նրբաստատրոններուն, կի-  
նկերուն, աղբիկներուն, դրոնք, քարաքար կռկելով Ռուքայի  
հեղտատարտիմննն կնկրտայի ծանապարտիմն, ինկան քայ  
ժակատ, ն ածուլի տանքանքներով քարղվածներուն, տա-  
րազրված կիներուն ու մանուկներուն, դրոնք մետան պրտ-  
րի շնքազքիմ:

Ա. Չուլճյան



## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ՝

**Յ**ուրաքանչյուր գրված գիրք նպատակ մը ունի: Այս համեստ գործին նպատակն է ծանոթացնել հայ ժողովուրդին մոռացության արված շրջան մը, որ Հայաստանի հարավային հեռավոր մեկ անկյունը՝ սահմանին վրա կգտնվի: Իր աշխարհագրական գիրքը, հազարզակցության համփաներու և միջոցներու զժգորությունն ու պակասությունը չնկողացուցած և հարարերությունն հեռու պահած էին, ուստի՝ զրեթև անծանոթ մեր ժողովուրդին: Միքելու համար հայրենիքը անհրաժեշտ է տեղյակ լինել անոր աշխարհագրության, անցյալ պատմության, ծանոթանալ ժողովուրդի բարբին ու կենցաղին և անոր կատարած գործերուն և այլն: Հազարամյակներու ընթացքին հայ ժողովուրդն ու Հայաստանը կրած են անչուր տառապանքներ, վերիվայրամներ, ավերածություն, կոպտուտ, սրածություն, սով, համաճարակներ, ենթարկված քահանա ազնուներու, կուրծք տված պարսիկ, ասորեստանցի, հռոմեացի, հույն, արաբ, սելուկ, խաչակիր, քուրդ և այլ և այլ թշնամիներու: Հայաստանը շատ մեծ պատերազմներու թատերաբեմ եղած է և այս բոլոր թռչուրտահին մեջ տոկուն ու գիմադրական կեցվածքով իր գոյությունը պահպանած է մինչև այսօր: Նամակավանդ 1915-ի վերջին ազեաը, որ զործադրողները ծրագրած էին ի սպառ վերացնել հայն ու Հայաստանը:

Վերադարձ տախմանցիներեն շատ քիչերը կհիշեն իրենց ձեռագրայրը, որովհետև ասրիքոտ կամ երիտասարդ հազիվ տասը այր ազագեցան սպանդե, բացի Թուրքիայեն զուրս զանգոզները: Իսկ մնացյալ մասը փոքրիկներ կամ անչափահաս պատանիներ էին: Անոնց հիշողության մեջ կմեա տղավորված միայն այն ահուկի ջարդին և թշվառության տեսարանները, տարագրությունը և որբությունը, որուն մեջն անցան Հուրի և սուրի անապարհի ընթացքին: Մնացյալ մասը հեապատերազմ-

<sup>1</sup> Գրատառակրում է ըստ ինքնագիր օրինակի՝ պատկանելով հելլենագրի մը և ուղղագրությունը (մաք):

յան ծնունդներ են օգյոււսքի մեջ՝ ստար երկնքի, ստար աստղերու սակ  
Հասակ նեռան, և քիչ բան գիտեն իրենց նախնոց և ծնողներու ծնող-  
վայրի մասին: Ատիամանի և շրջակայքի պատմական անցյալը չի է վերի-  
վայրումներով և ուսանելի կողմերով, ինչպես ամբողջ Հայաստանինը:

1895-1922 ասարիններու զեպքերը մանագանդ 1915-ի եղևոնը,  
Արեւմտյան Հայաստանի Հայ ժողովուրդին սապանաբարը կերտեցին:  
Արեւմտյան պետութիւններ, Հասկապետ գերմանացիք, առիթ ստեղծեցին  
և քաղաքներին թուրքը՝ իր թաքուն ծրագիրները իրականացնելու Հա-  
յության նկատմամբ:

Գառահականութեան Հետեանք չէին Վանի, Ուրֆայի, Սփեոխայի  
(Սուսա լեռ), Ետօյին Գարահոսարի ինքնապաշտպանութիւնները, 1915-  
ի շարդերը, և ոչ ալ կամաժօրական շարժման պատճառով, այլ՝ ի վաղուց  
անար թուրք կառաժարութեան որդեկրած քաղաքականութիւնն էր  
Թուրքիո բաղկացուցիչ ասարերու - ոչ թուրք ազգերու նկատմամբ, ընդ  
որս և Հայերու:

Սուլթանական կառաժարութեան Հայերի նկատմամբ Հետապնդած  
քաղաքականութիւնը շատ որոշակի և ջնհիկորեն բնորոշել էր զեւես  
անցյալ դարի վերջին քառորդին մեծ Հողտտեր, Հայտնի պետական գոր-  
ծիչ Քեամիլի փաշան: Հիշելով Եփրոպական Թուրքիոյում ոչ մուսուլման  
ժողովրդական ազատագրական շարժումների և եփրոպական պետու-  
թիւնների միջամտութեան մասին, մեծ վեղիր Քեամիլի փաշան ստում էր.

«Եթէ Եփրոպիո մասին մեր ծոցը ռմ սնուցիւնք, պետք չէ, որ եւս չի Հի-  
մարութիւնն ընենք մեր Ասիական Տանկաստանի մեջ: Ենդրութիւնը  
չնչել վերջնելն է այն ամեն տարերքը, որ որ մը կրնան մեզ եւս չի զտան-  
գը ծնանել և սասրին ձեռնմխութեան առիթ և գործիք լինել: Հիմա, այ-  
սոր գոնե, Անդլիո շահերը կպահանջեն, որ Փոքր Ասիո (մենք և Անդլի-  
ան Հայաստան բառը ոչ միայն չենք հանչեր, այլ այդ տեսնը Հնչող  
կզակները պետք է լաօխտիենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան  
ստարին միջամտութենն և միջամտութեան ամեն առիթներն, ուսար այդ  
սուրբ նպատակին Համար պետք է, և պետական իրավունքը կպահանջեն,  
որ որեիքց կսակածելի տարրը անհետ ընենք, որպեսցի ապագան ապա-  
Հովենք. ուրեմն այդ Հայ ազգը վերացնելու, անհետ և տնեմտ ընելու ենք:  
Եւ այդ ի գլուխ Հանելու Համար բան չի պակասիք մեզ, ամեն գործիք  
պատարաստ ունենք - կուսակալ, գառաժօր, Հարկահան, սասիկան, վեր-  
ջապետ՝ ամենայն ինչ. կրտնական պատերազմ մը կհրատարակենք և  
դուրբն պատերազմ այնպիսի ազգի մը զեմ՝ որ ոչ գենք ունի, ոչ զինվո-  
րութիւն և ոչ պաշտպան ... Եվ եթէ այդ Հայ ազգը բնաջինջ լինի և

քրիստոնյա եփրոզյան կրօնակից ձը փնտռե և չի գտնե Տանկական Ասի-  
ո մեջ, կի՞տզու, զմեզ Հանգիստ և այն ասան կզբազմենք ներքին գործն-  
քով և բարեկարգությամբ...»<sup>2</sup>:

Ճով ի սիրա պետք է խոստովանել, որ անցյալ դարի վերջին քառոր-  
դին մեծ եպարքոս Բեամիլ փաշայի արտահայտությունը թեև 1879-ին  
Քարգանաված է «Փորձ» թերթին մեջ<sup>3</sup>, բայց և 1879-1914թթ., 35 տարվա  
ընթացքին, Հայ ժողովուրդի զեկավար տարրը գլխի չէ ընկած և պարբե-  
րաբար անցի ունեցած ջարդերեն չէ իրատված ու միշտ խարված է:  
Թուրք գրող Օսման Նուրի իր «Ապասուլ Համիտ և իր ժամանակաշրջա-  
նը» գրքին մեջ (Ասամպուլ, 1909, էջ 818-819) կգրե.

«Մուրատ Ե-ի (1876) գաճընկեցութենեն Հետո Հայերու նկատմամբ  
սկսեր էր անարգարություններ գործադրվիլ: Հայոց պատրիարքը բազ-  
միցս բողոքներ է ներկայացուցեր Բ. Դուռը բարենորոգումներ անցկաց-  
նելու նպատակով, խոստումներ էր սաացել, բայց այդ խոստումներեն և  
ոչ մեկը գործադրության չէր գրվիլ»:

1822-1922 թվականներուն 26 ջարդեր անցի ունեցած են, ջարդված  
են 2.368.477 մարդ՝ Թուրքիո զանազան վայրերը այլևայլ ազգերն,  
ատոնցմն 2.245.527 գուտ Հայեր<sup>4</sup>:

Հայկական նահանգներեն անդահանված ժողովուրդին մեծ մասը  
ջարդվեցավ Եփրատի ձախ ափին Տիգրանակերտ - Մոսուլ ուղղու-  
թյամբ և աջ ափին՝ Մալաթիա, Բեախթա, Ատիաման, Սամուսաթ ետ-  
նապարհին վրա: Այս աթիղ պետք է ճանչնուլ թուրքը իր խկական  
գրիճաղժով և հոգեբանությունով, կատարած անմարդկային նախճիրնե-  
քով, աներևակայելի վայրագություններով անգնե ժողովուրդի ձը Հան-  
զեոց, որ միակ շննցեոց, գարգացեոց և Հասութարեր տարրն էր երկրին  
Համար:

Ուշագրավ է կարգ ձը եփրոզացի Հեղինակներու վկայությունը Հա-  
յոց մասին:

«...Հայ պանքիրները, ֆիկանսխատները, վաճառականները՝ Համայն-  
քի բարձր խավերի մեջ, իսկ զբաժափոխները և շրջիկները՝ ժողովուրդի  
ցածր խավերու մեջ, կարևոր դեր են խաղացել Օսմանյան կայսրության  
մեջ և անոնցմն շատերը Հասել են տնտեսական բարձր գիճբերու»<sup>5</sup>:

<sup>2</sup> Մրենյալիտական ժողովածու, I, Երևան, 1960, էջ 392:

<sup>3</sup> «Փորձ», ազգային և գրականական միասնախաղիս, Տիգրա, 1879, թիվ 7-8:

<sup>4</sup> Մանրամատնոցունը տես Ա. Լ. Մնացականյան. Դայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 1966:  
Տեղեկալիք ԱՄՆ-ում իրատարակված 19-20-րդ դարերուն սներ ունցած շարքերու - Պուր-  
բական րուսակաճեղը - վիզը անգլերեն և հայերեն, իրատ. կրթ-Յոթը, 1963, էջ 12-13:

<sup>5</sup> Marrott, The Eastern Question, London, 1951, p. 396.

Քրքական առածը կրես. «Հայը երեսը չի նստիք, երբ հոգնած չէ»: Այսպիսի վկայություններու շարքը կարելի է երկարել, բայց այնքան չափ են, որ կարելի չէ բուրբ մեջ բերել այսանդ:

Քուրքը երկար դարերու ընթացքին չէ կրցած քաղաքակրթվիլ, մինչ օրս թալաններ, քանտեր, ուրիշներու աշխատանքի արդյունքը հափշտակելով ապրեր, առանց խղճահարսւթյան շարունակ փշերն ու անցեր են ամեն տեղե, և պատմական արժեք ներկայացնող հակա կոթողներ գեանի հաճախար կործանած են՝ անըմբանելի ժուլուցքէ բռնոված: Եթե թուրքեր պահեցին կարգ մը Հայ գոթորիկներ և արհեստավորներ, նախ անոնց պետք ունեին, երկրորդ՝ մեծ հույս ունեին, որ պատերազմը պիտի շահին և այդ խլայկները կամա- անկամա պիտի թրքական, ինչպես արդեն շատ մը մանուկներ, աղջիկներ և կիներ թրքացած կ'մնան: Այս կեսն ալ Քալաթի դադանի հրահանգներուն մաս կ'կազմէ:

Այս աշխատութիւնը քիչ մը այլապէս երանգներ կ'պարունակէ, յուրաքանչյուր մաս առանձին առնված է սեղմ և կրճատ կերպով: Լրիվ պատկերացում մը տրված ըլլալու համար այս շրջանին և շրջակայքի մասին անոր այնպէ կողմնորը ներկայացված են այնպես, ինչպես որ են: Ատիամանի և շրջակայքի բնական գիրքը, երկրին կողմութիւնը, բերքերը, բնակչութիւնը կազմը, անոնց հոգեկան և բարոյական կողուցվածքը, Հին և Նոր պատմական անցուղարձերը, անհետացող Հայանի դեմքերը, սրտը մեծ ծառայութիւն մատուցած են այս շրջանի Հայութիւն, ներկայացված են խիստ համեստ կերպով: Բացի պատմական Հին ժամանակներու անցյալին, մնացած մասերը ակտեստեսի վկայութիւններ են և կես դար Հետո Հիշողութիւնով վերարտադրված:

Վազնի Կոմսագենի և Հաջորդող շրջաններու պատմական տեղեկութիւնները համառատ կերպով քաղված են այլևայլ աղբյուրներէ, որոնց մասին Հիշատակված է աշխատութիւն մեջ:

Գերախոսարար այս շրջանին մասին շատ քիչ բան գրված է: Մրանասցի *Vital-Cuivet* Փոքր Ատիո մասին ընդարձակ աշխարհագրական տեղեկութիւններ կուտա շատ թերի և թուրքերու կողմէ զիտուժնավոր և ազաժաղալ աջայներով ու վիճակագրութիւններով: Հայ մատենագիրներ գրեթէ ոչինչ գրած են: Գերմանացի և անգլիացի պատմագիրներ գրած են միայն Հայտաններու մասին: Եղիա Քասունի Կոմսագենի և Հայտաններու մասին ընդարձակ կերպով կգրե Պատմութիւն Այնթապի գրքին մեջ և շահեկան տեղեկութիւններ կ'հաղորդե: Հայ մատենագիրներն միայն Մատթոս Ուռհայեցիին է, որ արարական և առավելապէս խաչակիրներու և Բյուզանդիանի մասին իր ժամանակագրութիւն մեջ կգրե,

տակայն ժյառ և մասափա կերպով: Իսկ Միքայել Ասորի և Բարճերբոս ուղղակի վառ ներկայացնելու կաշխատին, Հասկնալի պատճառներով, որովհետև այս շրջանին մեջ Հայերու Հաստատովիչն ու բազմամուլը և տիրելը այդ Հոգերուն, ասորիներու և Հույներու Հանելի չէր: Թուրք աշխարհագիր էվլիյա Չելեպի մի քանի աշխարհագրական տեղեկություններ կուտա, նույնպէս արար պատմիչ Յակուբ-ալ-Համադի մի քանի տեղեկություններ կ'ազդարդէ: Իսկ Ա Համաշխարհային պատերազմի և անոր Հետեաներներու մասին շատ ու շատ գրգամ է թերթերու մեջ և առանձին գրքերով Հայերու և ասորիներու կողմն: Պատերազմի սկիզբը Քրանսական թերթ մը կ'գրէր. «Թուրքիան այ կող էլով կարափանին կիսանսփռ»: Մահճան եղր Հառած «Հիզանդ մարզը» Հոգնարքի վիճակն Հոգեզարժ եղով և, ապավինամ Գերմանիայի ուսին, մտով պատերազմի մեջ 1914թ. Հոկտեմբերին: Կովկասի իսլամ ցեղերու վրա Հույս դնելով, պրուպկանտիստներ, լրտեսներ և քաղաքացիական զգեստով զինվորականներ զրկելով և Կովկասի իսլամներու Հետադիմական տարրերու կոթնած թուռն աշխատանք ծաղկաց' առատ կերպով գանոնք ֆինանսավորելով: Պանթուրքիզմի և պոմերուսիզմի ախտն թոնջած ողային զգյաղներ կկառուցանէր, այս հանազարՀին վրա միակ արգելիքը, ըստ իրեն, Հայերն էին, ուստի նախապէս ծրագրված և Հեանդականորեն Հետապնդված նպատակին Հասնելու Համար սրշած էին ընալնէն Հայ ժողովուրդը: Սկսով պատերազմի և սկսով ընալնէն մի գործողությունը Հայ ժողովուրդի Հանդէպ' աշակցությամբ և օժանդակությամբ և ցուցմունքով գերման կառավարող շրջանակներու: ՏեղաՀանել Հայ ժողովուրդը իր բնիկ երկրն, դավադրարար և խարբերայորեն քշել ամայի և լեռնոտ վայրեր, անթի, ծարավ և բոկոտն պատցնել այդ զժգարին վայրերը և տասինանարթը Հյուսնի ու...

Յողոխովված ժողովուրդին զնկավար մասը, Պուսն սկսած մի՞նչև գավառները, ապրիլի 24-ին՝ մեկ գիշերվա մեջ Հովաքված, ոմանք՝ տեղն ու տեղը, ոմանք՝ գունապոն վայրեր ուղարկելու պատրվակին ասկ միշտ բնակավայրերն Հեռու տեղեր, Հովատարնական տանջանքներով Հոշտովված ու սպաննված էին:

Նայիմ պեկը՝ Հալեպի դաղթականներու վարչության քարտուղարը, կ'գրէ. «Հայոց եղերական տարագրության և սպաննության խնդիրը, որ թուրք անունը մարդկային Հովիտնական անեծքին արժանի կզարձնէ, տմանկ կկարծեն, թե Համաշխարհային պատմության մեջ մինչև այսօր արձանագրված դարձուրելի գեպերեն ոչ մեկուն կմտնի: Թուրքիո ընդարձակ Հոգամասին որ անկյունն այ որոնվի, որ ամենամութ խորշն այ

խաղարկվի, ամենամեծագույն կերպով խողխողված Հազարավոր Հայերու գրականը և կմախքները պիտի գտնվին»<sup>4</sup>:

Բնաջնջվեցա՞մ միլիոն Հայ և Հրաշքով ազատվածները ջիր ու ցան եղան Սուրբո, Իրաքի և Անդր—Հորզանանի այլ և այլ վայրերու մեջ և, սակայն, Թուրքիան ոչ միայն չհասա՞վ իր նպատակին, այլ չարաչար տուժեց: Նախքան Հեանանքներուն մասին խոսելիս, լսենք օտարներու վկայութիւնը Հայերու մասին:

«Հայերն են, որ Օսմանյան կայսրութեան մեջ կզրաջվին մեծաքանակ վաճառականութեան, և այդ կանեն ամենայն խելացիութեամբ: Անոնք Համբերատար են, տնտեսագետ և անխոնջ: Անոնք կճանապարհորդեն Ասիայի խորքերը և Հնդկաստան, ունին վաճառատուներ և կառներ ամենուրեք»<sup>5</sup>:

Լորա Պրայս կգրէ. «Փոքր Ասիո մեջ չկա ուրիշ սնն ցեղ սժտված միշտ վերանորոգվելու կարողութեամբ և նույնքան զարմանալիորեն, որքան Հայ ցեղը»<sup>6</sup>:

«Հայերը ոչ միայն արեւելքի վաճառականութեան տերերն են Հանդիսանում, այլ և Հաճախ եվրոպական մեծ քաղաքներուսմ»<sup>7</sup>:

Կ. Տոմերկը կգրէ. «...այս ժողովուրդին կարելի է գնահատել որպէս Փոքր Ասիո մեջ քաղաքակրթութեան սարածման Համար ամենահաստատուն և ամենակարող ցեղը: Իրենց ընդունակութեան և մտաւոր կարողութեան շնորհիւ Հայերը, թէև այնքան քիչ սիրված (թուրքերու կողմէ), կզբազեն Թուրքիո մեջ ամենաբարձր պաշտոնները»<sup>8</sup>: Փնայնելով Հայերը, փճացա՞մ նաև ինք՝ Թուրքիան, զեպի Կովկաս սնուցած քաղաքականութիւնը ի դերն ելա՞մ, պանխլամիզմը, պանթուրքիզմը և պանթուրանիզմը և այդ առթիւ՞ ըրած զոհողութիւններն ու ջանքերը մնացին երազ: Թրքական ուժեն ազատագրվեցան Արարական թերակղզին, Անդր—Հորզանանը, Սուրբոն, Լիբանանը և Իրաքը: Կովկասի, Տարսանելի, Պաղեստինի և Իրաքի նահատներուն վրա պարսութիւնը կրեց, բանակները փնջացան: Երբ Հայ չմնաց Անատոլիո մեջ, Թուրք կառավարութիւնը սկսա՞մ գրավել Թուրք ժողովուրդի պարենը և Հանձնել զերմանացիներուն, զորս զրկեցին Գերմանիա: Թուրք ժողովուրդի զգայի մի մասը մեռա՞մ սովահարութենէ: Պաղեստինի նահատը քոյքայվելի և Արտաշի կռիվն Հե-

<sup>4</sup>Արս անտոնյան, Լայնո պնի ինչոլոյոյոյննննն, Պոսոն, 1921, էջ 18—20:

<sup>5</sup>Ölmez, Voyage dans l'empire Ottoman, էջ 6:

<sup>6</sup>V.V. pour mieux connaître les amériens du Liban et de la Syrie, 1931, էջ 21:

<sup>7</sup>Լայն սնն, էջ 23. շարդ P.P. de Tounefort.

<sup>8</sup>Լայն տնն, էջ 28:



աս, երբ թուրք բռնակը խուճաղահար սկսով փախչել, արարներ նազլուսնն սկսած Դամասկոս, Հալեպ և մինչև Ղաթմայի կայսրանը թալլեցին և սղաննեցին թուրք զինվորները:

Արևմտահայությունը կորսնցուց իր պապնեական հողը, սուներ, կալվածները, Հարատությունը և ցրվեցավ ի սփյուռս աշխարհի՝ Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Փանասա, Հարավային Ամերիկայի զանազան երկիրները. բոլոր երկիրներուն մեջ ու նաև Սուրիա, Պաղեստին, Իրաք վերականգնեց իր անասությունը, Հասավ բարձր զիրքերու ամեն մարզի մեջ: Այսօր այդ երկիրներուն մեջ կան անթիվ մասնագետներ, մտավորականներ, գիտնականներ, արհեստագործներ, առևտրականներ և միլիոնավոր գարձաւ Հայեր: Թրքական կառավարութեան հօտի վարչակեր և բռնութիւնները արգելական էին Հայ ժողովուրդի Հառաջադիմությունը, այսօր այդ Հայերը Հարգ ու պատիվ կվայելին իրենց զանկամ երկիրներու ժողովուրդն ու կառավարութիւններն:

Արևմտահայութեան փոքրիկ մեկ մասը հաղիվհազ կարողացավ ապաստանել Արևելյան Հայաստան, անհազարաք կորիմներ, անթիվ գուհեր տալն հետո, հազարամյա իր հողը չքելով զինեց ուստական հովանիին, երազ մը, որ Հայ ժողովուրդը փայփայած էր զարերի ի վեր և Հաճախ բռնագոր և գրագոր զիմուծներով խնդրած էր ուստական կառավարութեան պաշտպանութեանը:

Այս շրջանը կարևոր և օգտակար դեր կատարած է Հայութեան Համար, մասնավորապես Հայաստանի պետականութեան անկուծին հետո: Փոքր Հայքի այս բերրի շրջանը հյուրընկալած և գրկարաց ընդունած է Հայաստանն զաղթող Հայությունը, տեղավորելու, անոնց ֆիզիկական զոյությունը պահպանելու և տնտեսանացնելու գործով, շնորհիվ իր հեռատես և իրատես քաջ առաջնորդներու, որոնք հիմնադիրը եղած են կրիկիայի Հայոց թագավորութեան, որ տնած է ավելի քան երեք դար:

Հայոց պատմութիւնը ուսումնասիրողներու Համար կարևոր նյութեր կան այս շրջանի անցյալն, անոր հնութիւնները, բնական անասառ ազդրութեանը, շուսումնասիրված արձանագրութիւնները և ավերակներու ու քանդված բերդերու մեջ պահված հարուստ նյութերը բարերախա որ մը նոր լույս կրնան սփռել մշուշի մեջ թաղված այս շրջանի անցյալի վերա:

Այս աշխատութեան մեջ ներկայացված է նաև Ատիամանի գավառաբարտնն ու բառարանը՝ աշխատութեան ծաւալի ներած չափով:

Լեզուն ժողովրդի մը մտքին Հայելին է, և գավառաբարտները եւս յն լեզուն խոսող ժողովուրդին վարքին ու բարքին և զարգացման աս-

տրեանաչափերն են ու Հարստութիւնը: Անոնց մեջ կան Հարուստ  
առաջ՛ գրական լեզվի Համար:

Աշխատած եմ իմ կորոզութեան ներս՛մ չափով Հարազատորեն ներ-  
կայացնել այս շրջանը՝ նյութ մատակարարելու Համար մեր պատմագիր-  
ներուն:

Անթերի գործ մը Հրատցնելու Հավակնութիւնը չունիմ:

1970 թ.

Սարգիս Զուլենեմ

**1. ԱՎՆԱՐԿ ԱՏԻԱՄԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԴՌՐՔԻ, ԿԼԻՄԱՅԻ, ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԿԵՆԴԱՆԱԿԱՆ  
ԱՇԽԱՐՀԻ, ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

A  
II  
89214

**1. Ատիամանի բնական դիրքը**

Տարածքի լեռնաշղթային հարավային կողմը երկու շրջաններ վար, արգավանդ և ջրարբի դաշտի մը մեջ է քաղաքը, պարսեպենքով և խաղողի այգիներով շրջապատված, որմե հետո կանխին արձախի ընդարձակ դաշտերը և արոտավայրերը: Քաղաքին կեդրոնը կանգնած է հսկա բերդը, մինչև արևելյան, հարավային և արևմտյան փնջերուն և զուտիվայրին վերջագործությունը եղած է բերդին ապրանքությունը, չորս կողմը փողոցներ և տուններ, ապա՝ տափարակ մասին վրա քաղաքը, բերդին արևելյան և հարավային փնջերուն վրա թուրքերու տուններ, ապա՝ թուրք թաղերը, իսկ հյուսիսային և արևմտյան փնջերուն վրա հայոց տուններ և ապա՝ հայոց թաղերը: Հսկա բերդին հողիվ կեդր մտացած է, որուն վրա կան 150-ի չափ հայ տուններ: Բերդի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասին վրա կանգնած էր ընդարձակ եկեղեցին, Աստվածամեա նվիրված, 16 հսկա քարե սյուներու վրա կանգնած, առանց դժբեթի, տանիքը մարզակներով և տեսակ մը կարծրացող կրային հողով ծածկված, անձրևներու ժամանակ և մեռները ծյունը մարբեկ հետո, կը լողնին շկաթելու համար: Եկեղեցին ուներ ընդարձակ բակ մը, ուր կային մանկապարտեպի, աղջկանց վարժարանի, մանչերու վարժարանի երկհարկանի շենքերը՝ մեծ դահլիճով մը: Վարի հարկի սենյակները կը ծառային համապարհուրդ հայերու որպես օֆեան և գրիչերելու տեղ կամ պատսպարան՝ ճրարար: 1895-ի ջարդերու ժամանակ թուրքերու մեղքով քանդված և անգործածելի դարձած Առաջնորդարանը 1907-ին Կիլիկիո Սուհակ կաթողիկոսին Ատիաման այցելելու տոթիթով վերակառուցվեցավ: Շարաթիվա ընթացքին ժողովուրդը չորս սենյակով Առաջնորդարան մը կառուցեց և կահավորեց իր բոլոր հարժարություններով:

Ժամանակ մը առանձին թեմ և առաջնորդներ ունեցած է Ատիամանը, իսկ վերջին ժամանակները կառված էր Մալաթիայի Առաջնորդարանը:



նին և ուներ քահանա մը՝ առաջնորդական փոխանորդ, կրիկիտ կոթողիկոսության ենթակա էր, ինչպես Մայաթիան և Ուարբերդի Նահանգը:

Եկեղեցիի բակին մեջ կար պատմական ջրհոր մը, խորունկ, որու հասան ջուրը լեռներն բերված էր սալահասակված ջրմուղով մը, բացի այդ բերդին վրա կար երկու ջրհոր ևս: Այժմ եկեղեցին և զոլորոցները հիմնահասակ կործանված են, և բերդին այդ մասը առջևի ֆուզոցին հավասարեցված է: Թուրքերը քանդած են այն նպատակով, որ Առաջին Համալսարհային պատերազմը վերջանալէ հետո, չլինի որ հայերը կրկին դան և տիրանան:

Թուրք կառավարութիւնը հատկապես բանվորներ կրերն ու քանդելու առան եկեղեցին. քանդելու ժամանակ խորանին տակէն կարասով ոսկի կը գտնուի խոշոր և արտակարգ մեծութիւնով: Այն զբոված է ժամանակին, որպէսզի եկեղեցին քանդվելու պարագային կրկին շինվի, որովհետև Ատիաման և շրջակայքը մի քանի անգամ երկրաշարժն ավերված են: Արդեն վերջին անգամ 1893-ին զորավոր երկրաշարժն մը բերդին մեկ մասը փլած և վարը գտնված մի քանի տուներ քանդված և երկու հայ ընտանիք մեռած են փլատակներուն տակ, իսկ եկեղեցիին պատերը ևս նեղքրտած ու ավանդատուներ փլած էր և չէր շինված, ժողովուրդը քարեր պատրաստած էր վերանորոցելու համար: Հսկա տարածութիւն մը գեանին համարանցներէ հետո թուրքերը քարերն ու հողը փոխադրած են, որպէսզի տեղը բոլորովին անհայտ դառնա:

Հիմնահասակ քանդած են նաև հայ-կաթողիկներու եկեղեցին և հայ-քաղաքականներու ժողովարանը, նույնպէս հայոց բոլոր թաղերը: Բերդին վրայի հայ տուներն ալ քանդած են՝ թուրքի հատուկ քանդելու բնածին վայրագութեամբ: Բերդին վրայի տուները քանդելէ հետո վարի հարկերը երևան ելած են և հին ժամանակներէ պահված ցարեն և ֆայտ գտնված է սենյակներու մեջ ֆատած վիճակով, նաև արձանագրութիւններով քարեր արարներն լեզվով:

## 2. Կլիման և քրագրութիւնը

Գտնվելով Հյուսիսային բարեխառն գոտիի հարավային մասին մեջ, Ազիտման ունի տաք բարեխառն կլիմա, եղանակները կանոնավոր կերպով իրարու կը համընդհան, ամառը տաք է, ձմեռը առատ ձյուն կը տեկա, որովհետև Տավրոսի լեռնաշղթայով շրջապատված է երեք կողմէն, անձրևները առատ են, երաշարը հազվադէպ է: Ամեն տեսակ արմաթք, պատուշներ և բանջարեղեն կանխն առատ կերպով, շրջակայքը կան արտավայրեր և մարգագետիններ արածող կենդանիներու համար, գտրնան՝

լեռները և անոնց լանջերը կը ծածկվին առատ խոտով, ուր կտրածին անբակափոր և կեղահափոր բազմաանասկ կենդանիներու հոտեր:

Լեռնային շրջանի գյուղերը կը պահեն այժ և ոչխար, շատ քիչ կով, իսկ գառառային շրջանի գյուղերը ոչխար և կով, այդ իսկ պատճառով կաթ, մածուց, պանիր և յուղը առատ էին և աժան: Տավրոսի լեռնաշղթային վրա տեղացող առատ ծյուների և անձրևներու շնորհիվ ամեն կողմ առատ ջուր կա: Ատիամանի յուրաքանչյուր փոսոց և թազ ունի աղբյուրներ, ամեն տուն ունի նաև սոսնձին ջրհոր, խորունկ հորեր չկան, քաղաքին մեջ և շուրջը կան լրատատ քամակ ավելի աղբյուրներ: Հայոց հսկի-տերայ կաշված թաղին մեջ կա մզկիթ մը և Փաշա-փունարի կոշված թաղին մեջ ավերակ մզկիթ մը, շուկային մեջ չորս հաս մզկիթ, յուրաքանչյուրը ունի 8-10 ծորակով աղբյուրներ՝ Հարմարեցված թուրքերու ապակեթի (լվացվելու) և նամագի (աղսթքի) համար:

Աղբյուրներու անունները թրքերեն են, միայն քաղաքին Հարափային ծայրը կա աղբյուր մը Աստուածանա տնուեով (Մեյրամանա) ու արևմտյան կողմը պարսեզներու վերջավորութիւնը՝ Ալիբասին աղբյուրը: Բոլոր աղբյուրներն ալ հնագոյրան ձևով քարոշն են: Ատիամանի շրջակա ձորերու մեջ, ուր խիտ ծառերով զտառտու պարսեզներ կան, տեղ-տեղ կան ջրմուղներ (յիփա կոշված) 21/2 մեթր բարձրութիւնով, մեկ մեթր լայնքով, պատերը սղորկ և լավ աաշված 30-50 սանթիմետր խորութիւնով, մաքուր հոտոջ ջրերով: Կամարան այդ ջրմուղները միայն ջուր ստանալու համար չեն, որովհետև բնակութիւններն հեռու են, տեղ-տեղ՝ գյուղերու մօտին կամ Տավրոսի գիշերուն տակ, միայն ջուր ստանալու համար այդքան երկար աշխատանքի պետք չկար և ոչ ալ կանոնափոր կամարներու: Այդ ջրերը ուսգման համար եւ չեն գործածվիր, Հափանաքար աստեղ վտանգի գեղերին սրպես թաքսաց ծառայած են, ներքը փորված կողմնակի տեղեր ալ կան:

Ատիամանեն Հյուսիս-արեւմուտք, Տավրոսի լեռնաշղթային 100 մեթրի չափ բարձր և սեպ պատի նման միակտուր ժայռերու մեջ, բարձրութիւն կետեն վեր անմաաչելի քարայր մը կա, որուն մուտքը Հափանաքար վերնն եղած է ու այժմ գոցված ու անհայտ, իսկ ներսի կողմը ինչ կա՝ անձմեռով է. միայն վայրի մեղուներ բույն գրած են հոն և հաճախ Հորդած մեղրը կը հոսի սառորտի քարերուն վրա: Հայտնի չէ, թե ինչ նպատակի համար շինված է այդ քարայրը: Ըստ ժողովուրդի մեջ տարածված գրույցի մը, տերվիշ մը եկած մուտքի քարը վերցուցած, ինչ որ բաներ առած և կրկին մուտքը փակած անհայտ ձևով ու ինքն ալ անհայտացած է:

Ատիամանեն գեպի արևելք, 5 քիլոմետր Հեռավորության վրա, Տաճրոսի անմիջապես ստորոտը կա Փիրինի լիճը՝ 400 քառակուսի մետր տարածությունով, տեղ-տեղ մեկ և մեկուկես մետր խորությունը, չորս կողմը շատ խոշոր քարերով սալահատակված: Զուրը Հառակեն կը բլխի և լիճեն դուրս եկող ջուրը մեկ մետր լայն, կես մետր խորությամբ, դուշայ և շատ պազ, կը Հոսի գեպի Ատիաման և թրքաց կողմի պարտեզները կուտղն: Կես հանապարհին կա Խարխար կոչված տեղ մը, ուր կզերքը կան շինություն խոշոր քարերու մնացորդներ, բայց երբեք ավերակ բերգի մը Հնարերուն չի նմանիր: Լեռ կը Հիշէ՞ Խարխար անունով բերգ մը Ատիամանի մտակայքը: Հայկական ՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի 1961 թվի Հրատարակած Առլասի 102 էջին վրա Խարխար նշանակված է որպես անուն ցեղերու և ժողովուրդներու:

Փիրինի լիճեն 200 մետր գեպի արևմուտք կա Փիրին գյուղը, քուրդերով բնակված և քարաշեն Հսկա աղբյուրի մը շափ Հոսող առատ ջուրով:

Փիրինի լիճեն արևելք անառուտ է և պարտեզներ կան, ամեն կողմն ազիակներ կը Հոսին գեպի առջևի խորունկ ձորերը: Ասկից 150 մետր գեպի արևելք կա (Իւլ զէօզ) Երեք ակ անունով քարձր և Հսկա պատմական կամուրջ մը, մեկ կողմը խիստ քարձր, մյուս կողմը շատ ցած վայրի մը վրա, Համանուն փոքրիկ գետակով, որ մտակա լեռներեն կը բլխի, կամուրջին երկու կողմերը խոշոր քարերով պաշտպանված խրամիկակով մը: Ատիամանեն քիլոմետր գեպի Հարավ-արևելք Սեթլընա անունով գառիվայր մը կա, ուրկն վար դաշտին մեջ Հսկա ձառի մը տակ առատ ջուրով աղբյուր մը կա Ենիֆեթին կոչված:

Անկե երկու քիլոմետր Հարավ կա Զիյարեթ անունով գետ մը, որը կը բլխի Քնափի ցեղախումբի բնակած Տաճրոսի լեռներեն ու կը Հոսի գեպի Հարավ և կը խառնվի Եփրատ գետին:

Ասկե քիլոմետր գեպի Հարավ, Սամուռատի ճանապարհին վրա, կա Խալպուրեթի գետը, որը դարձյալ կը բլխի Քնափի ցեղախումբի բնակած Տաճրոսի լեռնաշղթային ու կը Հոսի գեպի Հարավ և կը խառնվի Եփրատ գետին, վրան տեղ-տեղ կամուրջներ կան:

Ատիամանի արևմտյան կողմը Տաճրոսն բլխող առու մը կա, կը Հոսի դաշտերու և պարտեզներու մեջեն (Մենենտ օղլու զէվէրը) կոչված, որ արևմտյան կողմի Հայոց պարտեզները կուտղն: Անկե 5 քիլոմետր արևմուտք կա Էնիլլայ անունով գետ մը: Այս ջրերը և Ատիամա-

<sup>11</sup> Լեռ, Պատմություն Իսլամ, էջ 250:

նի մեջնն Հոսոզ ջրերը կը միանան Ջիյարեթ գետին: Գարնան այդ-  
ներու մեջ կը բոխին շատ մը աղբյուրներ, ժողովուրդը Հագիզա (ազու-  
զա) կանգանն, ամառը կը ցամաքին: Քաղաքին շուրջը ամեն կողմ քա-  
րաշեն աղբյուրներ կան: Մալաթիայի ճանապարհին վրա Հատանը—մեք-  
քե Թաղին ծայրը կա Համանուն աղբյուր մը օստիարակ գետնի վրա,  
քարաշեն, շուրջ մեկ և կես մեթր բարձրութենե մը կը Թափի քարե  
ափազանի մը մեջ:

Մամուսաթի ճանապարհին վրա քաղաքին եղերքը կա քարաշեն  
աղբյուր մը: Դեպի Վարզանա գյուղը կա Մայր—Աստվածածնա աղբյու-  
րը, խորունկ ձորին վրա ձգված Համանուն կամուրջ մը: Պեհեսնիի ճա-  
նապարհին վրա Երբշըր աղբյուրը մեկ և կես մեթր բարձրութենե մը կը  
Հոսի քարե ափազանի մը մեջ, քարերու Հնությունը կը վկայէ, որ Հա-  
զարոսյա (դույն ափելի Հին) ժամանակի շինություն են, անկե 150 մեթր  
Հարավ կա նաև Տերվիշ—փուխարը կոչված աղբյուր մը՝ 4 մեթր բարձ-  
րութենե մը կը Թափի վար կրկին քարե ափազանի մը մեջ. իսլամներու  
Համար ուխտատեղի: Նույն ճամբուն վրա Ալիքսանին աղբյուրը:  
Գարձյալ դեպի Պեհեսնի տանող ուրիշ ճանապարհի մը վրա կա Ալը—  
աաշի կամուրջը, որուն աջ կողմը՝ Համանուն աղբյուր մը, ձախ կողմը՝  
ուրիշ աղբյուր մը, պարանգներու մեջ՝ Գոզ—պեկին աղբյուրը: Ատիա-  
մանի Հյուսիսային կողմը կա Կեոյա—պաթմազ աղբյուրը, լեռնեն ջրմու-  
ղով մը բերված առատ ջրով առու մը: Հայոց Թաղերուն մեջ կան մի քա-  
նի աղբյուրներ, նաև կարգ մը տուներու մեջ աղբյուրներ: Ատիամանեն  
25—30 քիլոմեթր արևմուտք՝ դեպի Պեհեսնի, կա Կեոք—սու գետը  
(պատմական Սինգի գետը), խիստ արագահոս. Տափրոս լեռնաշղթայի  
Աղեա—աաղի, Գարա—աաղի կողմերեն կը բոխի, Մյուրկյու գյուղի  
առջևեն կանցնի, Հեառ կելլե գաշա՝ իր մեջ ընդունելով շատ մը մանր  
առուներ, կը Հոսի դեպի Հարավ: Թուս գյուղին քով կա Հոսվմայեցի-  
ներու կողմե շինված կամուրջ մը: Նույն գետին վրա (Ատիամանեն Այն-  
թաղ տանող ճանապարհին վրա) Քուլաֆըզ գյուղին քով կա Հին կա-  
մուրջ մը: Քուրդերու կողմե կամուրջին մեջնաղի մասը քանդված է՝ եր-  
կու Հակառակ քուրդ ցեղախումբեր իրարու դեմ կռվելու ժամանակ  
Հատկապես քանդած են, որպեսզի Հարձակումները արգելեն: Նույն գե-  
տին վրա, ափելի Հարավ, Այնթաղի կողմեն դեպի Մամուսաթ տանող  
ճանապարհին վրա կա քանդված կամուրջ մը, սո Հոսվմեական փաղան-  
գի ճանապարհն է (բասաֆ). ափելի Հարավ կա կամուրջ մըն ու: Որն  
Հեառ կը միանա Եփրատին:

### 3. Լեռներ և դաշտեր

Տագրութի լեռնաշղթան կրկնկիային կերկարի գեպի արևելք՝ մինչև Տիգրանահերա և ավելի Հեռու, այլևայլ տեղեր զանազան անուկներով կը հորջորջի: Մարաշի մոտ Ախրը—տաղ կոչված լեռնաշղթան կերկարի գեպի Պեհեսնի, ուր կա Աղնա—տաղ լեռը և Համանուն դավառակը, Ատիամանի և Այնթապի մեջտեղը՝ Լոռուկոյի Հյուսիսը, կը կոչվի Գարա—տաղ: Ատիամանեն գեպի Մալաթիա՝ ձմեռային ճանապարհով, ամենաբարձր լեռն է. Կոստան լեռը, որ իր Հին անունը պահած է: Դարձյալ Ատիամանեն գեպի Մալաթիա՝ ամառնային ճանապարհով, Նալ—տեօքեն և Ատիամանի ու Մալաթիայի կես ճանապարհին կա Մար—Կեզեր անուն բարձր լեռը:

Մար—Կեզերի Հյուսիսային զառիթափին առջև կը տարածվի գեղատեսիլ ընդարձակ Պուլամի դաշտը բերրի և ջրարբի, լեռներով չըջուղատված: Գաշտի մեջն կը Հոսի Պուլամի—չայ կոչված գետը, չափազանց առը և խիստ մաքուր ու զուլալ ջուրով, մինչև Հոստակը Հայելիի նման վճիռ կերեի: Կրան կա Հին պատմական քարաշին կամուրջ մը, այժմ տեղործածելի դարձած:

Պուլամի դաշտին մեջ կա, ի միջի այլոց, Պուլամ գյուղը, ուր կա Հին Պալուա քաղաքին ավերակները: Պալիան անունով ուրիշ գյուղ մըն ալ կա՝ քուրտերով բնակված:

Պուլամի դաշտեն գեպի Հյուսիս լեռնային բարձրութեան մը վրա նեղ և երկար կիրն մը կա: Նույն բարձունքին ստորտը կը տարածվի ավելի ընդարձակ Ապտ—ուլ—խարապի դաշտը, Համանուն մեծ գյուղ մը և Ապտ—ուլ—խարապ անունով մեծ լին մը: Լիեին մեջտեղը կա ցցված ծայռափոր տեսիլ մը, որու մասին զանազան ավանդույթայիններ կան: Ապտ—ուլ—խարապի լինեն 15 քիլոմետր գեպի արևելք, անտառուտ լեռներու մեջ, բարձունքի մը վրա կա Հանքային պաղ ջուր մը: Ժողովուրդը Իզմի կը կոչէ այդ աղբյուրը և բուժվելու Համար Հոն կերթան սասմոքսային և այլ Հիվանդութեան ունեցողները:

Այս լեռնային մասերը զուտ քրդարնակ են, ոչ մի Հոյ կամ թուրք չկա: Ատիամանի գավառակին մաս կը կազմեն: Լեռները ծածկված են անտառներով, չինարի, կաղնիի, կաղամախիի և զանազան տեսակի ծառերով, նաև պաղատու վայրի ծառերով՝ տանձների, խնձորենի, պտճի, պեպկի, խոզկաղիների, ընկույզի և այլն:

Ատիամանեն գեպի արևմուտք մինչև Գարա—տաղի և Աղնա—տաղի լեռները, դաշտային են, նույնպես արևելյան կողմը գեպի Քեաթիա գաշ-



տային է, իսկ Հարավային կողմը դեպի Սառուստոս և մինչև Ուրֆա բնավ չունենր չկան, խիստ բերրի դաշտային հողեր են, անդ—անդ բլրակներ կան: Սառուստոսն դեպի արևելք և դեպի արևմուտք՝ մինչև Հասմկլայի սահմանը, կրկին դաշտային է: Բոլոր գյուղերը, ասանց բացառությամբ, ունին խաղողի այգիներ: Սառուստոսի մասերը նփրատի եզերքը ցորենի ցողունները անհագնատալի կերպով կը բարձրանան, երբեմն մարզու Հասակեն ավելի բարձր և յուրացանչյուր ցողունի վրա 250—300 ցորենի Հատիկներ կըլլան, նույնը նաև Ուրֆայի կողմը Խառանի գաղտին մեջ: Աստվածաշնչի մեջ Հիշված Խառանն է, որ այժմ կը կոչվի Հարբան:

#### 4. Բուսականություն և բերքեր

Ատրամանեն դեպի Հյուսիս, չորս ժամ Հեռավորության վրա, անտառները վառելիքայտի Համար կտրելով փնացուցած են, իսկ նորերը չեն անկված: Ուստի այդ մասերը գրեթե լերկ են, իսկ մնացյալ կողմերը, և դեպի Մալաթիա, խիստ անտառներով ծածկված են: Կարտազրեն շինության փայտեր, վառելիքայտ, ծխախոտ, զխառր, խողկաղին, ազտոր, պեպեր, վոյրի պտուղներ, պանիր, յուղ և ընկույզ՝ աստա կերպով: Պանիրը, յուղը, ընկույզը կարտառեն դեպի Ուրֆա, իսկ ծխախոտը՝ դեպի Ուրֆա, Արևմապ, Քիլիս և Հալեպ, նաև յուղ՝ դեպի Հայեպ: Լեռնային մասին մեջ խաղողի այգիներ գրեթե չկան, նույնպես բանջարեղեններ:

Գաղտային մասը բերրի է, աստա կերպով կարտազրե ցորեն, դոլրի, սուզ, սիսեռ: Գյուղերը ունին խաղողի այգիներ, որմէ սուփ և պատուկ կը պատրաստեն, արևելյան գյուղերը ունին նաև պտղատու ծառերու պարտեզներ: Իսկ Ատրամանը ունի լախատարած պարտեզներ և այգիներ, ամեն տեսակ պտղատու ծառեր, կարտազրե ուսի, չամիչ, ծխախոտ, խաշխաշ, ափսոն, չիր, բուրդ, բամպակ, չոր թուզ և մետաքս: Եռաշխաշի Հունար կը զրկվի Մալաթիա՝ յուղը Հանելու Համար, իսկ ափսոնը՝ Հալեպ, բամպակն ու բուրդը՝ Ուրֆա, ուրիկ կը փոխադրվի Հայեպ:

Լեռնային շրջանի գյուղացիները իրենց բերքերը կը ծախեն Ատրամանի շուկան և փոխարենը կը զենն արմտիք, բանջարեղեն և այլ պտույթներ, նույնը կընեն նաև դաշտային շրջանի գյուղացիները: Յարենը և դարին Սառուստոսի առջևն նփրատի վրայով լաստերով կը փոխադրվի Ծարապլուս, ուրիկ երկամուղիի միջոցով կը փոխադրվի Հայեպ և այլ շրջաններ: Ներկայիս Մուրիայի Հեա առևտուրը վերջ գտած է և Ատրամանի ու շրջակայքի բերքերը կը փոխադրվին դեպի Մերսին:

## 5. Կենդանիներ

Ընտանի կենդանիներու և թռչուններու գրեթէ բոլոր տեսակները կան: Վաչկատուն ջուրդերը ուշա եւ կը պահեն և սեղո՛վ փոխադրութիւններ կը կատարեն: Վայրի կենդանիներեն կան գայլ, ազգես, ճագար, նապաստակ, բորենի, արջ, գայլի խոզ, շնագայլ, գայլի կատու և մուշակափոք ուրիշ մանր կառնազգիներ:

Վայրի թռչուններու շատ տեսակները կան, արծի՛վ Հազվադուռ, ուրուր, ցին, բուրնակ, սղոսղ, աղա՛վնի, կիտ, կաքա՛վ, քարածիճառ զաշա, կեռներ, գայլի բազ, սագ, կարգ մը մանր թռչուններ և այլն:

Նոսէ չ՛գող թռչուններ՝ կռունկ, արագիչ, կարապ, ծիծեռնակ, ու ջրային թռչուններ, ձկնկուլ և այլն:

Անտառներու, ծառատաններու, պարանգներու և այգիներու շատությունը, արմտիքի և պտուղներու առատութիւնը շատ մը տեսակ թռչուններ կերակրելու և պատապարելու Հարմարութիւնը ունին:

## 6. Դանքեր.

Լեռներու կազմութիւնը տեղ—տեղ իրարմէ կը տարբերին, Հովիտներեն և ձորերեն Հոսող ջրերու եզերքը ճերմակ, դեղին գույներով մետաղի փաշիներ կը փայլին, գնալի Մալաթիա լեռներու մեծ մասը կայծքարային է, սոկիի, արծաթի, երկաթի և այլ Հանքեր կան, բայց չեն շահագործվիր: Ատրամանի Հյուսիսային կողմը այգիներու, Հարավային կողմը, Վարդահա դուռի շրջակաները և արևմտյան կողմի այգիներու ջրհորները, ամառը՝ ջուրերը ե՛վազած ժամանակ, գտողի հաս ունին: Արդեն վերջին տարիները նա՛վթ Հայտնաբերված է:

## 7. Ճանապարհներ և հաղորդակցութեան միջոցներ

Արևելյան, Հյուսիսային և արևմտյան կողմերը լեռնային են, նեղ շա՛ղիղներով, տեղ—տեղ կիրճերով դժվարանցանելի լինելու պատճառով շրջակայքի հետ Հարարբութիւնը խիստ դժվար եղած է, մանա՛վանց մենաք, որ ամբողջ այդ կողմերը առատ կլուսեով կը ծածկվին և նույնիսկ գյուղերու հետ Հազորդակցութիւնը կանց կանեն:

Հարավային կողմը գաշտային է և Ուրֆայի հետ կը Հարարբի: Բոլոր տեսակի փոխադրութիւնները գրտտաներով՝ շարիներով և էշերով կը կատարվին, Հասարակ կառք մը կամ այլ սայլ մը տեղում չկար, որով-

Հնան գեներն ու գեոտիները սրգեյը կըլլային և կամուրջներ գոյութայն շունեն, մի քանի կամուրջներն ալ մտտիկ անգերու Հարաբերութայն կը ծառայեն:

Արտածումը Աստուտաթ կողմեն գեայի Ուրֆա կը կատարվեր, ուրկն՝ Հայկ: Ուրֆայն կատանային կաշի, պղնձեղեն, արծաթ: Այնթապեն կատանային գործվածքեղեն մանուսա (տրանա), երկաթ և պղնձեղեն, իսկ վանաուսկանական բոլոր տեսակի ապրանքները կատանային Հայկան: Արզեն մինչև 1914 թվականը Հայկազ ամրող Արեմոյան Հայաստան նահանգներու, Իրաքին և Պարսկաստանին վահաուսկանական ամեն տեսակ ապրանք մատակարարող կեդրոն էր և առևտրական Հանգույց:

Ատիտանը թուրք կառավարութայն կողմ անտեսված և խոր անգյուն մը ինկամ գազաակ մըն էր: Հակառակ այս բոլորին ընդարձակ շուկա և լավ առևտուր ունեյր, որովհետև շրջակայքը Պեհմանի, Ալեա-տազ, Քնախթա, Երբու և Կարիստ փոքրիկ գյուղացուղաներ էին և բավարար արհեստագործներ շունենին: Այս շրջաններու գյուղացիները ամեն որ Հագարներում և ամեն պիտույքի Համար Ատիտան կը դիմեն և այս զատակառով այդ շրջանի առևտրական կեդրոնն էր: Գյուղացիները իրենց ապրանքներու փոխանակութայնը Ատիտանի շուկայի միջոցով կը կատարեն:

### 8. Գնուրյուններ

Ատիտանի կեդրոնը կանգնած էր կործանված ու քարուքանդ Հոկա բերդեն մեծ զանգված մը՝ հին ու նոր, լավ ու վատ տներու լուռ վիան, Հարազ-արանկյան մայրը աշտարակի մը ավերակ մնացորդը միայն կուր: Իսկ վարի Հարիկը կանգուն կը մնան և բոլորովին գոցված են:

1900-ին Հայու տուն մը նորագերու ժամանակ զանգվեցավ փոքրիկ մատուռ մը՝ քարե սյուներով: Բերդին Հյուսիսային կողմը կա թաղամաս մը և Հրապարակ մը Հսիկ-սերայ կոչված: Բերդը կանգուն եղած ժամանակ այդ տեղը բերդին մաս կազմած է և Հոն եղած է կառավարական աունը (սերայ): Քանգվիչե Հետո այդ մասը կոչված է Հսիկ-սերայ:

Բերդին Հյուսիս-արանկյան և Հարազային մասերը թրքական թաղեր են, Հյուսիս-արանայան և արեմոյան մասերն ալ Հայոց թաղերն էին: Քաղաքին ամեն կողմը լայն, բարձր և կամարակապ կոյուղիներ կան՝ մյուսՀայի և անկրկներու ժամանակ լեաներին վաղը Հորդուտտ Էրբը անվանա գարձնելու Համար: Կամուրջներ, ապրյուններ և այլն բոլորն ալ նախքան թուրքերու գրավումը շինված են:

Քաղաքին Հյուսիսային կողմը, Մայաթիս ասեղոց ճանապարհին զրու, պատահամբ գանձեցամ ձուկ մը, քացվելն Հետո վիճափոր սենյակ մը երևան ելամ, մեղը՝ երեք դուռ, երկուքը քարերով գոցված, մեկը՝ բաց, մին՝ գեղեի Հարավ, մյուսը՝ գեղեի արևմուտք և Էրրորդը՝ գեղեի Հյուսիս ասեղոց, մեկ մեթր լայնքով, երկու մեթր բարձրությամով դառանի նստարաններ ունին մտանկա բերդերուն Հետ Հարաբերելու Համար<sup>10</sup>:

Ատրամանի Հարավ—արևմտյան կողմը պարտեզներու վերջացած տեղը, որ Ջիմեն կը կոչվի, բերդի մը կամ ամրոցի մը ավերակները կը մնան: Ջիմենեն գեղեի Հարավ Վարդանայի բարձունքը, որմն Հետո կա խաղողի այգիներու ընդարձակ տարածութիւն մը՝ 3 շիլոմեթր լայն և 10 շիլոմեթր երկայն, այգիներու վերջավորութիւն՝ Հայտնակ Վարդանա գլուղը, լայնատարած գաշտ մը և այգիներ: Հոս ևս կան բերդի մը ավերակներ: Գլուղը ունի փոքրիկ եկեղեցի մը:

Ատրամանեն 10 շիլոմեթր Հարավ, Զիարեթ գետի եզերքը, Տիշ—պուտաղ (Հացի ծառ) անունով քրդաբնակ գլուղ մը կա, ուր կան բերդի մը ավերակները: Առկից 5 շիլոմեթր Հարավ Ղզղըլ—Հյուսիս գլուղին քով կան բերդի մը ավերակները: Ղզղըլն—փունար գլուղին և Համանուն Հարի նման աղբյուրի մը մտար կան բերդի մը ավերակները, սեկն 8 շիլոմեթր Հարավ Գոգ—Հյուսիս կոչված գլուղին քով կան ևս բերդի մը ավերակները:

Ատրամանեն 3 շիլ Հյուսիս Տաճրոսի փնջերուն զրու կա Զուկ անունով քրդաբնակ գլուղ մը, բերդի մը և տուններու ավերակներ կան այստեղ, այս գլուղը կարտագրե բրինձ: Գլուղին առջևը կա աղբյուր մը՝ Զր—Հարի նման մեկ և կես մեթր խորությամբ, Խուրը Հատակէն շատրվանի նման վեր կը ժայթքե, բնական ցայտաղբյուր մըն է: Զուրին Հանած ժայենն անունը գրած են Կոմպլասակ: Լեռ Ատրամանի մտա կըհիշե երկու բերդեր՝ Մաց և Ապլնե<sup>11</sup>: Մագը այս Զանն է, իսկ Ապլ—ենը Արիամանեն 10 շիլ Հարավ (Ըստ Միտաք Տեղագրիչի կազմած քարտեսին): Արարիբեն անունը կը Հայտնե բերդին կարեւորութիւնը: Ընչ կը նշանակե զինգորական առաքման մեկնակետ. Ապլ—Տեղ բանակատեղիի Հայր՝ բառացի իմաստը: Ուտի այս բերդը եղած է մտայուն բանակի կեդրոն մը, ուրին զինգորական առաքումներ կը կատարվին այնպի կողմեր ուղ-

<sup>10</sup> Պահի հարավ գաջող Տաճարոսի Ատրամանի բերդն ենու, ընչի հյուսիս գաջող Տաճարոսի Զանի (Տան) բերդն ենու Կարաբերդիս համար է, իսկ զնախ արձուտար գաջող Տաճարոսի մտառա քարաղբերու ենու հարաբերելու համար է և կամ, քիբու, վարդուտի համար է:

<sup>11</sup> Լեռ, Պատմութիւն հայոց, Ա. հատոր, էջ 206:

մական կամ այլ նպատակներու համար: 1305-ին Կիլիկիայի Հեթում I թագաւորը Հաղթնց եղիպատսի մեմուքներուն և Ղաթաթից եղիպատսկան բանակը այս բերդին քով:

Ձախի գետակին կողքը Գայալը—Տամ անունով վայր մը կա և շատ մը քարայրներ՝ միակուսք ժայռերու մէջ փորված մաքուր և սրբաօայ: Անցյալի մէջ եղած է բնակավայր և թաքստոց, քարայրներու մէջ կան քանդակված գայլ, առյուծ, խաչելութեան և ուրիշ նկարներ և արձանագրութիւններ:

Ձախի արևմտեան կողմը՝ Կելինճիկ լեռան վրա, Փրսիկ—Ռամանա կոչված անոցը ժայռերու մէջ փորված 1500-ն ավելի քարայրներ կան, սառերկրոյա քաղաք մը, գետնափոր, մաքուր տաշված բնակավայրեր, գավիթ մը, որ սանդուխներով պետք է բարձրանայ, քարե փորված բազրիկներ, ուր—մուր փողոցներ, պատերուն մէջ փորված ավազանիկներ՝ անձրևի ջրերը հալարելու համար, վարը սառնիճներ՝ անձրևի ջրերը հալարելու համար, ավելի վարը միերու կամ կենդանիներու համար ախոռներ, ախոռներու մէջ զաա—զաա մուսրներ: Քարայրներու մէջ կան փորագրութիւններ, նկարներ, արձնափ զործեր, արձանագրութիւններ, գանձած են այլևայլ առարկաներ: Գտներու մէջ փորված գերեզմաններ են, մարդկային կմախք և այլն:

Մ. Ռուհայեցի կէիշն Փերսին—Մածը անունով վայր մը Հարսն—Մուրի<sup>10</sup> (Ատրամանի) Հեա, այս է Փերսին—Մածըը (Միտակ Անվահիրիյանի կողմած քարտեսին վրա ձիշց ու ձիշց ցույց տրված է այս վայրը Փերսին—Մածը անունով): Կա նաև Քեաթիայի գավառակին մէջ նման անոց մը<sup>11</sup>:

Փիրիկի առջևը լեռներու մէջ կան նախապատմական ժամանակի քարայրներ, երբ մարդիկ տոհմային կյանք կապրին, որուն Հաջորդած է քարայրներու կյանքը: Հոս կան անթիվ անհամար քարայրներ, մէկ ընտանիքի համար շինված պատերուն մէջ փորված գերեզմաններ՝ քարե կախարիչներով, Հասակը, պատերը և առատաղը ողորկ տաշված, ամեն կողմ մաքուր, պատերուն և առատաղի ներմալութիւնը կը մտն մինչև այսօր: Այս անթիվ քարայրները խիստ կանոնավոր շարքերով, թաղ առ թաղ լեռան ստորոտն զեպի վեր շինված են: Ուշագրութեան արժանի է այսանոց մարդկային զարգացմանը համընթաց բնակարաններու փոփոխութիւնը. քարայրներու կյանքը վերջ գտած է և Հեաո, ներկա Փերսին գյու-

<sup>10</sup> Մ. Ռուհայեցի, էջ 323:  
<sup>11</sup> Օսէ. Գայալը—Տամ, Փիսիկ—Ռաման, Փիսիկ [ի անթիվ բախարներ], Ալ—ուճի, այս բոլորը իրարու կողմ և մարտն օրնՕՍ շրջանակը մեջ կը գտնվին. Մ. Ռուհայեցիի հաշիւմարտ ֓իսիկը վրամտը է Փիսիկ—Ի:

զի հյուսիսը՝ Փիրբինի լճին արևմտյան կողմը, Տավրոսի ստորադը ձորի մը երկու կողերուն վրա կառուցված Փիրբին քաղաքը, որու ավերակները՝ քանդված տուներու կես փլած պատերը, եկեղեցիի մը ավերակները և այլ շենքերու հետքերը կան: Կամար մը կանգուն կը մնա որպէս մուտք և շենքի մը մնացորդը: Ավերակներու կողքը միակտուր ժայռերուն մեջ փորված քարայրներ, վիճակոր քարայրի մը մեջ քարի օրորոց մը, քանդակ մը, ուր մայրը մանուկը կը լողցնէ, այրը ջուր կը լեցնէ: Քարայրներուն մեջ քարն նստարաններ, կաթնեղու համար քարն բարձեր, փորագրութիւններ և արձանագրութիւններ: Ուրիշ քանդակ մը. կիսամերկ կինը պառկած՝ մեկը մեռը երեխային վրա, այրը կնոջ հակառակ կողմը պառկած, նոյնպէս կիսամերկ: Ուրիշ տեղ մը պատին վրա փորագրված՝ նային կամ կռիկի: Քաղաքը ավերակ դառնալէ հետո, ինչպէս կերևի, ժողովուրդը տեղափոխված է Ատրաման՝ Փիրբինի անունը արձկնով Ատրամանին (PERTE): Դարերու մշուշին մեջ թաղված այս տեղերը բնով չեն հետազտված, և իսր մթութեան մեջ կը մնան իր անցյալի հիշատակներն ու գաղտնիքը:

Փիրբինի լճին արևելքը քարայր մը կա սեպ ժայռի մը երեսը՝ չորս մեթր բարձրութեան վրա, վերևը՝ ավելի բարձր ու անմտաշէի, ոտքի տեղեր շինված են, վարեն միայն մտղչցելով կարելի է կշիշ, ճգնաժողով մը քարայրը եղած է և այդ անունով ոչ կը կոչվի մինչև այսօր: Հանդիպակաց, արևելյան կողմը խորունկ ձորերուն և լեռնալանջներուն վրա ևս կան քարայրներ:

Ատրամանեն 35 քիլոմեթր հարավ եփրատի աջ կողքին վրա տարածված են պատմական Սամուսատ քաղաքի ավերակները: Այս քաղաքը թերևս մ.թ.ա. երկու հազար տարի առաջ գոյութիւն ուներ: Մ.թ.ա. 1325-ին ան մայրաքաղաքն էր Կոմմագեննի և Մելիտանի: Այս տիտան քաղաքի ավերակները իրենց մեջ թաքնված ունին հնամօր անցյալի մը փոթորկալից պատմութիւնը: Ան եղած է ինչպէս ուղմական, այնպէս ալ մշակույթի կեդրոն, իր համբալք տարածված էր ամեն կողմ: Ծոխութեան, հարստութեան և զեղեցիկութեան համար եկող ու գացող բոլոր աշխարհակալներու և կողոպտիչներու հարձակման ենթարկված է երկար դարեր, որքէն հիմնահասակ կործանուած վկա է իր համառ գիմաղրութեան, հաճախ ավերված, կրկին շինված, վերանորոգված, հպարտորեն իր գոյութիւնը պահպանած է շնորհիվ իր դիրքին և ամրութեան՝ բոլոր հարձակողներու դեմ: Թանգրակեցիներու շարժման պարագայիններն մին էր Պոպոս Սամուսաթցին:

ՅԵ-ին (մ.թ.ա.) Լուկուլլոս գրավեց Սամուսատը: Մ. թ. 957-ին հռոմէները գրավեցին Սամուսատը, այրեցին և քորուքանդ ըրին: 1114-ին

եղբրաշարժե մը կործանեցա՞վ Սամուսաւը: 1150-ն Հալէայի սուլթան Նուրեւաինը գրաւեց Սամուսաւը:

Արդե՛ն այս Հակա քաղաքին յայնասարած ավերակները գիտողին կը տանին դեպի մշուշապատ և Հեռավոր անցյալը, և մարդ սարսուռ կզգա կտարաքմած ավերածութեան ի տես: Կիսակործան պարիսպներ խիստ լայն, տեղ—տեղ կես մեթր բարձրութեամբ մնացած կործանեցած աշտարակներ, խոր քունով ննջող Հոյակապ սյուներ՝ փոքած գետին, գետին Հաճասարած քաղաք մը՝ միայն մեջտեղը Հակա բերդին Հողակույտը, կտարը՝ սրպես վկա, երկաթե դուռը, որը ծանր ըլլալուն Համար չեն կրցած տանել: Պարիսպը շինեցած է մանր խճաքարերով և սառած ցեմնետի նման խիստ ամուր, որմն կտոր մը փրցնել շատ դժուար է: Հաջորդական տրշտամբները՝ տարաբան, Լենկ—Թիմուրի և սելուզներու, կործանած են քաղաքը. եթէ քաղաքին բան մը մնացած էր, ան ոչ թուրքերը քանդած են:

Քեախիթայի գետնէ ջրանցք մը բացված է մինչև Սամուսաւ, քաղաքի շուրջը ընդարձակ դաշտերը սառելու Համար, տեղ—տեղ ճանապարհին վրա ջրանցքին քով քարե սյուն մը կանգնեցուցած են, ջրանցքին վրան զոցված է սալերով, մարերու վրա կամուրջներ ձգված են, դեռ ևս մեծ մասամբ անվթար կմնա, ե՛րբ և որո՞նց կողմն շինված է, Հայտնի չէ: Եփրատը Հարզած ժամանակ Հեղեղները արգիլելու Համար շինված է ամբարտակ մը, որ մինչև այսօր կմնա:

Սամուսաւի շրջանին մեջ կա Վանքուկ տնուեով քրդարեակ գյուղ մը, մոտակայքը՝ ավերակներ: Հայտնի է, որ այդտեղ գոյութեան ունեցած է վանք մը, որուն իբր Հետք և սպասույց մնացած է միայն Վանքուկ տնուեը: Նույնպէս կա Վայկ տնուեով ուրիշ գյուղ մը քրդարեակ: Դարմայ Սամուսաւի արևելքը մի քանի բխումներ տեղին կա Քըլխան (Քըլխան քրդերեն կնշանակէ եկեղեցիներ) տնուեով քրդարեակ գյուղ մը, կան ավերակներ: Ուրեմն այստեղ մեկն ավելի եկեղեցիներ եղած են և այդ ավերակները կանգուն կզար ժամանակ Հոծ բնակչութեան մը աղբած է Հոն: Պարզ է, որ այս տեղումն բնակիչները եղած են քրիստոնյաներ, իսկ այս շրջանին մեջ պեղումներ չեն կատարված Հայտնարեբելու Համար անտեց իսկական տերերը: Հայտնի չէ, թե այս գյուղը անցյալի մեջ ինչ անուն ունեցած է, և քուրդերը որոնցմն խլած են այս բերրի Հողերով դաշտային տեղը: Հաճասարար տնուք քրդացած Հայեր կամ ստորինք եղած են, շատ մը տեղերու մեջ եղածին նման:

Սամուսաւին վեց մամ գետի արևելք, Եփրատի եզերքը, Միբրզանա կոչված տեղը, մարդու Հասակի չափ օե կրանիթն արձան մը գոյութեան

ուներ, Մեծն Տիգրան և Թադուհին՝ թե թեի, մասսփորապես 1900 թվականին անհայտացավ այս արձանը, եւրոպացիներ տարած են:

Հին Սամաաթի արեւմտյան ծայրը բարձր տեղ մը շինված է Նոր Սամաաթը, մեծ գլուզ մը՝ այդ շրջանի գլուզարոււմքի (ճաշիչ) կնդրոնը, Ատրաւտանի զաւթուակին մաս կկազմն:

Մինչև 1915 թվականը տեղացի բնիկ հայեր կապրեին այնտեղ և բարեկեցիկ կենեք ունեին:

Բնրդին Հոգարուրին գրա և կողերը ցորեն կցաններն, որը Պալ—ազա անունով հայու մը սեփականութիւնն էր: Նույն Պալ—ազայի աղաքներեն մին՝ Մխտն, որ հրաշքով սղջ մնացած է, այժմ կապրի իր ընտանիքով Սամաաթի մեջ: Կիքկո (Գրիգոր) անունով հայ մը այդ շրջանի աւ ու սարսափն էր, առանց անոր խորհուրդին ու համաձայնութիւն և մասնակցութիւն քուրդ աղաները ուն քայլ չէին առնէր: Ներկայիս ևս Հոն ապրող մի քանի Սամաաթցի հայեր կան: Իսկ Սամաաթի քուրդ աղաները, որ այդ շրջանի տերն ու տիրակալն էին, գախապահաններ են, գաղթած մասսփորապես 180 տարի առաջ Ճըղդիր—Պոթիանն: Այս աղաները տիրացած են Սամաաթի և շրջակա շատ մը գլուզերու, Գրիման, Պար—Պարեթ, Ղանթարտ և այլն, կառարչալ Տերե—պիլներ էին մինչև Ա համաշխարհային պատերազմը: Մուսթաֆա—Բեմալ աստեցմն շատերը կախաղան բարձրացուց և անոնց ազդեցութիւնը վերացուց:

Սամաաթը իր շուրջը ունի շատ ընդարձակ վարելահողեր և խաղողի այգիներ: Եփրատը Հորդիկ և Խուրը քաշվելի հետո զետին բերած սիկահողին վրա զանազան բանջարեղեն, սննի, ձմերուկ, վարունգ և այլն կցանեն: Տեղ—տեղ Եփրատը կղզյակներ կկազմն, Հոն ևս բանջարեղեն կցանեն: Նույնը կընեն Եփրատի և Տիգրիսի երկու եզերքներուն վրա քնակող ժողովուրդները, Ճարապուս, Գերեհիկ, Բագգա, Տեր—Ջոր մինչև Պասրա և Պարտից քոց:

Սամաաթը ցորենի շտեմարան էր և փոխազրութիւնները կկատարվին լաստերով Եփրատի վրայով դեպի Ճարապուս (Կարկեմիշ), ուրկն գնացրով դեպի Հալեպ:

Մարտոյ Մաշթոց այցելից այս շրջանը, նախ Ամիզ, հետո Ուրֆայի մատենադարանը, Դանիելի մոտ, որու քով կային մի քանի գրքեր, ապա անցավ Սամուսատ՝ Հաուֆանուի քով, ուր կար ճոխ մատենադարան և գրքեր, երկար ուսումնասիրութենն հետո հնարեց Հայոց այրուրներ, որը եղավ Հայ ժողովրդի գոյութիւն և պահպանման հիմնարարներն մին և ամեննն տոկունը գծնական դարբնու ընթացքին:



Մամուսատի գիմաքը. Եփրատի ձախ եզերքը, կա Ղանթարա մեծ գյուղը՝ քրդաբնակ, և քովը՝ բերդի մը ավերակները: Այս բերդը և գյուղը ժամանակին եղած է Անլիկիա քաղաքը: Անլիկիա անունով ուրիշ երկու քաղաքներ այ կային, մեկը Միջերկրական ծովի եզերքը Կիլիկիայի մեջ (այժմ՝ Զիլիֆկե), մյուսը՝ Միջագետքի մեջ:

Մամուսատի գաղափարներն մեջ կա Պիրիի անունով քրդաբնակ գյուղ մը, ուր կան բերդի մը կամ ամրոցի մը ավերակները և բնակության ավերակներու մտերակույտ մը, պատ մը՝ Հսկա քարերով և քովը Հնամենի քարաշեն գեղեցիկ աղբյուր մը: Նույն շրջանին մեջ է նաև Բորսին գյուղը (քրդաբնակ), որու այգիներուն մեջ ձգված էր գերեզմանաքարի նման քար մը, 25 սանթիմ ՀասաուՅյամը՝ մեղանոցը 10 սանթիմ արամազնով ծակ մը, ծակին մեկ կողմը Տիգրան Մեծը և մյուս կողմը – քույրը՝ Տիգրանու Հին, կողքին վրա՝ Հուճարեն արձանագրություն: Ատիամանցի Հակոբ Գույուճճյան այդ քարը տարավ Մամուսա և լատաով Եփրատի վրայով փոխադրած առեն, Պերենիի առջև թուրք կառավարությունը գրավեց և զրկեց Ասանա, այժմ քարը ու՞ր է, Հայանի չէ:

Ատիամանի շուրջը շատ մը բերդերու և վանքերու անուններ կը Հիշվին, սակայն այդ բերդերն ու վանքերը այնպես Հիմնահատակ կործանված են և ժամանակի ընթացքին գետնի Հավասարած, որ կարելի չէ երևակայիլ, թէ այդ տեղերը ժամանակին բնակավայրեր կամ վանքեր եղած են:

Ատիամանեն Հյուսիս–արևելք, մի քանի ժամ հեռու, կա Արթան գյուղը՝ ՈւռՀայեցիի ժամանակագրության մեջ Հիշված Հարջան քաղաքը և բերդը, ուր կան քաղաքին և բերդին ավերակները<sup>16</sup>:

Դարձյալ նույն ուղղությամբ կա Ռազիպ գյուղը, նախկին Ռազաիպ քաղաքը, բերդը և ավերակները<sup>17</sup>: Մամուսաան զեպի արեժուտը՝ Եփրատի եզերքը, մի քանի ժամ հեռավորությամբ թուրուշ անունով գյուղ մը կա, այս ալ նախկին Քորեշ քաղաքն է, որու բերդին և քաղաքին ավերակները կը մնան<sup>18</sup>: Այդ շրջանին մեջ կա Յուրուճ անունով գյուղ մըն ալ: Ըստ Արշակ Այգոյանեանի<sup>19</sup> Ատիամանի գյուղերն են Պէշրին, Գուլուք, Տարազան, Պէլու Բունար, Կէզրիկ, Կոզանի, ՕՀայք, Իշուք, Գանթարա, Խրաֆի, Բյուզիսանի, Մարմարա, Մամուսա, Ենազի, Քավոթը, Քիրքեթիլ, Ռիմն, Վարդանա, Զարկոյ, Զուրնա–նազանի: (Այս անունները ինձ ավեց տարթ. Աարգիս Գարսեան):

<sup>16</sup>Ս. Ռուսայեցի, էջ 306–323:

<sup>17</sup>Նույն, էջ 323:

<sup>18</sup>Ռուսայեցի, էջ 323:

<sup>19</sup>Արշակ Այգոյանեան, Գասճուրյուժ Աղաքիի հայոց, էջ 466:

## 9. Բնակչությունը

Ատիամանը ուներ 25.000 կամ քիչ մը ավելի բնակչություն, ստանց հաշվելու գյուղերը: 16.700-ը՝ թուրք, որու կեսնն ավելին շրջակա գյուղերն են կամ հաստատված քուրդեր էին, կես թրքացած կամ թրքացած ժամանակի ընթացքին և կամ ուղղակի քուրդ, 8000-ը՝ հայեր և 300-ը՝ հայախոս ասորիներ: Գրավումեն մինչև 1908 թվականը՝ Թուրքիայի սահմանադրության հռչակվելը, յուրաքանչյուր հայ կամ ոչ իսլամ, այդ մարզու ծնած օրնն մինչև մահը 40 դուրուշ ոսկեդրամ գինգորական տուրք կը վճարեին ամեն տարի, որովհետև հայերը և ոչ իսլամները բռնակ չէին ընգտներ, այդ իսկ պատճառով շատ հայեր նորածին արու զավակները արձանագրել չէին տար՝ տուրք չապու համար: Նույնը կրննին գյուղացի քուրդերը բռնակ չերթալու համար: Բացի այդ, հայերու և քուրդերու թիվը միշտ իրականն պակաս ցույց կը արվեր պետական պաշտոնական հաշորդագրություններու մեջ գիտումնավոր կերպով և հասկանալի պատճառներով: Պետք է ըսել, որ Ատիամանի, Պեհեսնիի, Աղնա-Տաղի, Բեախթայի, Շիրոյի և Կարկասի գավառակներուն մեջ մեկ հատիկ թուրք գյուղ չկար: Իրենց պատմական հին անունները պահած կարգ մը գյուղեր կան (Խուրնուֆ, Ղասան, Բորսին, Պիրիկ, Պեպեր, Փալաշ, Հյուշմեն, Ղոթուր, Պրագ և այլն):

Հայկական անուն կրող շատ մը գյուղեր կան, որոնց բնակիչները՝ հայ և քուրդ խառն են (Բարքուռ, Կարդանա, Խասրիկա, Պապլիկա, Պալյան, Փշենիկ, Թարման, Չարշուկ, Չարխնակ, Սարոյան, Մաղի, Խամշիկ, Կեյրուկ, Հայկ, Հոյիկ և այլն): Թրքական անուն կրող մի քանի գյուղեր կան, բայց թուրք բնակիչ չունին: Արարական անունով մեկ հատիկ գյուղ կա՝ Ղանթարա (քրդարնակ):

Ատիամանի շուրջը կան հետևյալ քուրդ ցեղախումբերը՝ գավառակին ենթակա.

Խըռըրսոր. Թուրքերը ստանց Ղըզըլ-պաշ (Կարմիր գլուխ) կանվանեն կամ Բաֆուզի (կրոնական հավասարյիք չունեցող): Ասոնք ունին ցեղապետ մը՝ Տէաէ (պապ, տերվիշ) կոչված, որ միաժամանակ իրենց կրոնապետն է և որը ժառանգական է: Մասնավոր արարողութիւն չունին, միայն գիշերները կը հավաքվին, Տէաէն սազ (տամպուրա-չարափոր նվագարան մը) կը նվագեն: Հետեորդները Տէաէին զանազան նվերներ կը բերեն: Այս շրջանի ամենամեծ և բազմամարդ ցեղախումբն է, Ատիամանենն զնպի Հյուսիս՝ Տալլոսի լեռնաշղթային վրա տեղավորված են: Խաշուրած անտառածակ են և ծխախոտի մշակությունով կըրպային, կրննրը

գորգ և կարգեա կը գործեն: Հայերու Հեռ սերտ Հարաբերություն ունին և թուրքի առև բնագ Հյուս Էջին ըլլաբ: Այս ցեղախումբի անմիջապես քովը լեռնային շրջանի մը մեջ կապրի Մեկիբանցի ցեղախումբը: Երաբարոյքներու արևմտյան կողմը, Ասիամանի և Պեհեսնիի Հողերուն վրա Տափրուսի ասորաք կը բնակի Փշենիկցի ցեղախումբը, որ վաղկատուն և վրանտրնակ է, խաշնարածությունով և մասամբ ուղաապանությամբ կը բարդին: Այս երկու ցեղախումբերը Երաբարոյքի ցեղին Հեռ գրեթե նույնը՝ նույն Տէտէին ենթակա, նույն Հազատույիքները ունին: Այս ցեղախումբերու մարդիկ, նամանականց կիները, զաղտնի Հայոց եկեղեցի կուգային, նվիրներ կը բերին, Հազարգություն կառնին, մաս և նշխար կը տանին, գլուխնին ավետարան կարգալ կուտային, Ս. Սարգսի և 7 շարսթ մեծ պահէր կը պահէին, Հայ քահանաները գլուխները Հայոց տունները օրհնելու զացած մամանակ, սմանք իրենց առնները օրհնել կուտային, խմորին վրա խաշ կը քաշին և այլն:

Երաբարոյք ցեղախումբի Տէտէն Քուրեյշը, երբ Ասիաման գար, միշտ Հորս Հորեղբայր՝ սկիբիչ Քեորգ Սահակյանի առնը օրերով Հյուս կը մնար, ուրիշ սեւ տեղ չէր երթար, ամենք Հարազատ Հորեղբոր որդիներ ենք», — կըսեր, և իր այդպիսին կրնդուներ, տունեն դուրս չէր ելլեր օրերով, Հազմագեղ միայն շուկա կերթար գործով և շուս մը կը վերադառնար: Հսկա, Հազմանդամ մարդ մըն էր, օրական 3 թիւ օդի կը խմեր և սակափախու էր: 1911-ին, երբ կրկին եկած էր Քեորգին առնը, անոր առաջարկեց.

— Մի Հառիկ աղջիկս մեր տղաքներն մեկուն Հեռ պետք է ամուսնացնեմ, չեմ ուզեր ուրիշի ապ:

Քեորգ ըսավ.

— Թուրք կառավարությունը մեր առնը քար ու քանդ կընեն, կը փախանք:

Քուրեյշ ըսավ.

— Տղաքներն մին թող առնե Ամերիկա երթա, ամեն տարի իրենց տարուաքը և ծախքը լիութի կը զրկեմ և այլն:

Քեորգ մերժեց և Քուրեյշը դժգոհ մնաց:

Ասիամանի Հյուսիս-արևելյան և մասամբ արևելյան կողմը կը բնակի Քնափի կաշված ցեղախումբը, լեռնային և մասամբ դաշտային գլուխներու մեջ, որոնք սյուններ են և նամազ կընեն իրր թէ: Երաբարոյքներու Հեռ միշտ Հոշա կապրին, ցեղախումբերու մեջ տեղի ունեցող կախմներու և Հարձակումներու (Հանախ պատերազմի մե կառններ) մամանակ միշտ Երաբարոյքներու կողմն էին: Բայր քուրգ ցեղախումբեր Քնափի-

ներեն կը վախճային, շրջակա քաղաքներու քով մեծ անուն և հսկայ ունեին (Մալաթիա, Ուրֆա, Այնթապ և Հալեպ) սրացն քաջ և խիզախ կուսակներ. ավազակներ կրէրէք չէին մոտենար ստոնց, կրէ հակառակ օրենքի, մաքսանենդուսթյամբ փարսաական ծրարտա կը փոխադրէին շրջակա քաղաքները: Քեազիները, որոնց ցեղախումբի անունն իսկ կը մասնն անցյալի մեջ հայ ըլլայինն ցուցնող, Գևորգ անունով՝ հայու մը անունով, կոչված են Քեազի: Հարթան և Ռազարիպ պատմական քաղաքները այս ցեղախումբի հողին մեջ են, ունին շատ մը հայ անունով գյուղեր, նաև Քեազի ծերերու խոստովանութիւնը իրենց հայ ծագումի մասին, հայերու հանգեայ համակրանք ունենին:

Վերահիշյալ ցեղախումբերու մասին Քուրդըրը և տարեց քուրդեր կը պատմեն, թէ՛ անցյալի մեջ ենիչերիններու հայաժանքներու խժամութեանց և տանձարձակ վայրագութեանց ժամանակ քրդացած են, չեն իշտացած կամ թրքացած՝ այն հուշով, որ որ մը լավ և պատեհառիթ ժամանակ կուգտ և նորեն կը դառնան հայութեան գիրկը: Դժբախտարար այդ առիթը կրէրէք չներկայացած և հակառակը տեղի ունեցավ: Իսկ ինչպես տեսանք, իրենց գյուղերու հայ անունները և իրենց քրիստոնեական կարգ մը սովորութիւնները, հայոց հանգեայ ունեցած համակրանքն ու սերը և պատմական այն վայրերն ու հիշատակարանները, որոնք մինչև այսօր կը մնան իրենց բնակած հողերու վրա, արդէն մեծագույն ազացույց են անցյալի մեջ իրենց հայ ծագումին: 1895-ի և 1915-ի թուրք կառավարութեան կողմն կազմակերպված ջարդերուն և արան-թալանին այս ցեղախումբերը չմասնակցեցան, իսկ 1895-ին բացի քաղաքներն գյուղերու մեջ հայկական ջարդ տեղի չունեցավ:

Իսկ 1915-ին թուրք կառավարութիւնը գյուղերու հայերն ալ բնաջնջեց: Կազմվածքով և տիպով հար և նման են հայերու և անապարտ ու մաքուր պահած են իրենց ցեղային կազմվածքը, սրովհետև թուրքերու հետ բնավ չեն խոսնդված և ամուսնութիւն չեն կնքած: 1915-ին հայ կրիտասարդներ պահած են իրենց մտ, իսկ կրէ թուրք կառավարութիւնը սկսած է նեղել գիրենք, չեն հանձնած և զրկած են Ուրֆա կամ Այնթապ:

Ատիամանի արևելյան կողմը կը բնակին Զրաքանցի կոչված քուրդ ցեղախումբը և Հարափային կողմը՝ գետի Մամուտա, Գեղդրի կոչված ցեղախումբը: Ասանք մարմնական կազմով, դիմագծով և տարազով բոլորովին կը տարբերին նախագես հիշված ցեղերն, շատ մը գյուղեր զուտ հայոյան դիմագիծ և կազմվածք ունին, արևատ կրեաներով, հասայաններու, ասորիներու և մտամբ հայերու խոսնուրդ են: Այս ցեղախումբերու մեջ հայ գյուղեր և քուրդ ու հայ խոսն գյուղեր շատ կային:

Այս երկու ջեզախուժքերը կառարելապես խլամառացած և սյուննի են գարձած և նամազ կրնեն, մուլլաներու, շէյխերու և անդիշներու աղչեցումն ենթակա ու խիտ նախապաշարժած են: Նախապես հիշված ջեզախուժքերու հետ միշտ զինչայ բաղխումներ կուճենային և յուրաքանչյուր անգամ կը պարտվէին Հակոբակ Քուրք կառավարութեան ընձեռած գազանի ստանդակութեան ու Համակրանքին: 1895-ին Հայկական Չարդերուն և թաշանին տխրի մասնակցեցան, իսկ 1915-ի Չարդերուն և սարազրութեան՝ Հոգիով, մարմնով և չորս ձեռքերով մասնակցեցան ու կարավանները կողոպտեցին: Ջրովքան ջեզախուժքի ջեզապես Բուլլք գյուղացի Պատըր ազան և եղբայրը՝ Ջեննիլը, Չարդերու կազմակերպիչը եղան, մանավանդ Ջեննիլը: Հայկական նահանգներն ենթա թոյր կարավանները կողոպտելի և Չարդելի ու մեծ մասամբ Եփրատը թափելի Հետո, մնացած Հատ ու կուսր կիկներն ու երեխաները քիցցին զեպի Ուրֆա, անկից ալ զեպի Տեր-Ջոր ու անապատի խորերը՝ փճացնելու Համար:

## 10. Դպրոցներ

Ատիամանի գաղտնի եզած է Տեր-Քոզիկյան, անցյալը մուքի և մշուշի մեղ է: Մինչև Կիլիկիայի Ռուսերիյան թագաւորութեան անկումը վաճեքը գոյութեան անկին, ուր կրօնական ուսում մը կտրվեր: Վանքերու կործանումն Հետո ասուներու, խանութներու մեղ, ենկեղեցիի խուցերը եզած են ուսման վայրեր, զոյր խալֆաներ էին ուսուցիչները:

Սաղմոս, Կարնի, ութը կանոն, Հայամալուքը էին գասագրքերը, և գրարար լեզվով, Հակոբակ անոր, որ Կիլիկիան բամկորենին Հախոզած էին աշխարհարար գաղտնարարաներ: Ուսանողներ իրենց կարգացածը չէին Հասկնար, ենկեղեցական շարահաններն ալ չգիտցողները ուսուցիչ չէին Համարվեր:

Ատիամանցի Սարգիս Տեմիրչյան Հեանայ շահեկան տեղեկութեանները կը գրե Ատիամանի կրթական կյանքի մասին:

«1858-ին Մազսեա Կուլտուրիյան անունով Այնթապցի երիտասարդ մը եկած է Ատիաման իրը վարժապետ և տիրացու: Այս թվականն առաջ կրթական սեղ քայլ չենք գիտեր, Համանարար քահանաներ և տիրացուներ Տեր-Քոզիկյան գրութեանը՝ կրօնական գրքեր կը կարդացնէին բացառիկ անհասներու: Կուլտուրիյանի որով սկսած կերեի մասամբ աշխարհիկ կրթութեանն ու գաստիարակութեանը: Մանավանդ որ այս որերուն կը գուգաղիպի (1860) Ազգային սահմանադրութեան Հաշակումը, որուն խոշոր աղտօտութեանը կզգացցի նույնիսկ այս ամենահետին գաղտնի կեղր-

նին մեջ ու կրթական զարթոնքը կսկսի: 1860-ին Հիմնված է այսպես կոչված Հին վարժապետներ, որուն շինութեան ամբողջական ծախքը ստանձնած է այն առնեման օգտներին Գաղանկի Արխի Թորո Գաղան, ի Հիշատակ վազամեակի իր մեկ Հատիկ զազկին: Թե քանի տարի պաշտանավարած է այս Այնթապցի ուսուցիչը, Հայտնի չէ, միայն տնոր մեկնումսն մինչև 1880 կրթական կյանքը մեծ անկում կրած է: Ենթադրելով զաստիարակած են նոր սերունդը (Մինտո խալիֆա, Քէօր վարժապետ, Խոսրով վարժապետ և այլն): Կրթական անկման այս շրջանը կախարահ Հանձին Ուրֆացի Սարգիս վարժապետ Հակոբյանի (1880-ին): Այս ուսուցիչը, Հակառակ բարձր ուսում ժը չունենալուն, ինքնաշխատութեամբ զարգացած անհատ ժը, իսկապես Հիմքը դրած է աշխարհիկ դպրոցին: Բաւին բովանդակ առումով ազգասեր այս եզենիացին կազմակերպած է դպրոցը, առաջին անգամ ըլլալով զաստիարակած է քերականութեան, թվարհութեան, աշխարհագրութեան և Հայոց պատմութեան: Այս ուսուցիչը Հասցուցած էր երկու տասնյակ աշակերտներ, որոնք Հետագային նվիրվեցան դպրոցի զարգացման ու Հառաջգրմութեան: Ազաներու սովորական Հակամարտութեաննեւուն վերջ տալու Համար ըրած քրտնաշան աշխատանքներին պարտատած, այս անխանջ կրթական մշակը ձգած է Ատիւսմանը 1882-ին ու մեկնած Ուրֆա...:

Այս թվականին մինչև 1894 կրթական կյանքը անկումի շրջան ժը կը բոլորի՝ կը պաշտանավարեն Հարութեան խալիֆա (վերջին տեր Կարապետ), Լեւոն խալիֆա տեր Հովակիմյան, Մանուկ խալիֆա, Ղազար վարժապետ: 1894-1895 Ատիւսմանի դպրոցը նորին կը փայլի: Հովհաննես վարժապետ Առաքելյան և Ենուք վարժապետ (Արարիկբոյն) մեծ զորիկ կուտան դպրոցին, բայց զժրախտարար 1895-ի աշնանը (Հայկական մեծ շարժին) զուկ կերթան Թրքական սնարդ յաթաղանին ու դպրոցն ալ կը փակվի<sup>20</sup>:

Հին դպրոցը անգործանելի դարձած էր, առաստաղը բոլորովին բաց՝ երկրորդաբժի ժը տանն քունդված էր և այդպես ալ ավերակ կը մնար, 25 մեթր բարձրութեամբ բերդի պատին վրա և միշտ փլելու ենթակա: Եկեղեցիի կողքը շինված էր ուրիշ սրահ ժը որպես դպրոց, որը Հետո կգործածվեր մանկապարտեզի Համար: Այդ Հին շէնքի անբավականութեանը և անհարմարութեանը նկատի ունենալով շինված էր Ատիւսմանի նոր դպրոցը՝ Հսկա շէնք ժը, երկհարկանի և Հսկա սյուներու վրա կանգնած, սրբատաշ քարերով, Ուրֆացի ուստա Միքայելի հարաբարագետու-

<sup>20</sup> Սարգիս Տնօթման, Պատմութեան Կարգանքի, Պաշտու, 1948, էջ 15:

Յլումք: Ազաները՝ և ժողովուրդը նյութական և բարոյական ամեն զոհողութիւն ըրած և կանգնած են իրենց ուժերն վեր Հօկա դպրոցական շէնքը բերդին վրա, Ատիամանի մէջ միակ աչքի զարնոզ գեղեցիկ շէնքը: 1895-ի Զարդի և Թալանի օրերուն զպրոցի 25 խոշոր պատուահաններու երկաթի ճաղերն անգամ քաշած տարած էին թուրքերը, ինչպես նաև եկեղեցիներ ու Հարակից սենյակներունը: 1895-ին Հասո երկաթի ճաղերուն տեղ փայտե ճաղեր դրվեցան:

Տեր Թողդիկյան սխառմը շարունակած է մինչև 1880 թվականը, խալֆաներով, անազուպղինձն կազմարները գոտին մէջ խրած ուսուցիչն ու աշակերտը Հովասարտայն: Դրախտն էլսած կրթիչ Փայտիկան, մեկ սաքի վրա կենալ ծանրութիւն մը ձեռքը, խճաքարերուն վրա ծուկի գալ, եկեղեցիին դուռը կենալ, որ ժողովուրդը տեսն ծույլ կամ անհնազանդ աշակերտը՝ միշտ պահակ մը քովը և այլն, մանկավարժութեան գլխավոր սկզբունքը եղած է:

Ուրֆոցի Սարգիս վարժապետի Զանգերով նոր սերունդ մը Հասած էր, Հինն բոլորովին տարբեր ըմբռնումով և ժամանակի ոգովոյն Համապատասխան ազգային դաստիարակութիւնով մը զորացած, աշխարհաբար գրքեր Գոսնն եկած, գրաբարը կամայ կամաց տեղի տալով պատիժները որոշ առաիճանի մեղմացած, բայց Փայտիկան, ճիպտալ ու մեկ սաքի կենալը կար ու կար: 1895-ի Զարդը գլխիվար շրջից Սարգիս վարժապետի սկսած գործը, ամեն ինչ կործանած և թալանված, ազքատացած ու կոտորաված ժողովուրդը Հիմնն պետք է վերականգնել ամեն ինչ: Ան ի շղոյն լավագույնի, մի քանի խալֆաներ սկսան դպրոցական գործը: Նաև կարն ժամանակի մէջ ժողովուրդը իր վերջերը դարձանց և աշխուժով աշխատանքի սկսով և, շնորհիվ իր ճարտիկութեան ու արհեստներու, տնտեսականը բարելավեց ու վերականգնեց:

Սարգիս վարժապետի Հասցուցած նոր սերունդը սկսով գործի. մի քանի պատանիները զրկվեցան այլ և այլ տեղեր, Սարգիս Երչմանյան զրկվեցով Մանասարյան վարժարանը, Նազարեթ Վարդ-Գոզոսյան՝ Խարբերգի Եփրատ գոյնջը, Հակոբ Բընըրճյան և Հակոբ Այլիքոսանյան՝ Երուսաղէմի Ժառանգավորացը, Կարապետ Երիկիճյան՝ Այնթապի Ատենական վարժարանը: Իսկ Հայ բողոքականներ ու պատգեղի Վարդան Նաճարյանի միջոցով Ուրֆոյի Ամերիկյան որբանոցը կը զրկվին շուրջ 150 երկօտ որբեր, 4-8 տարեկան, ի շարս որանց Սարգիս Տեմիթյան:

Էին խալֆաներն մեկ երկու Հոգի դեռ կը մնային: Տախտակի մը վրա թուղթ մը փակցված էր, վրան այբուբենի տառեր գրված (չառ անգամ այգ տախտակը իբր կովի գործիք կը ծառայէր):

Քաղաքի Հանրապետության կողմից հաստատված (Համարը) կը կարգար, ինք չէր լսեր, աշակերտը կուպակեր, որ դասը փոխեմ, երբ որ արթնեմար, կը Հարցներ՝ կարգացի՞ր:

— Այո:

Տեղ մը ցույց կուտար.

— Ասկե-Հոս ստղի:

Սահայն Հեռագրի գրական միջնակարգ վարժարաններն շրջանավարտ երիտասարդ ուսուցիչներ Հրավիրվեցան և զպրոցի պատկերը փոխվեցաւ: Հոս կարժեմ Հիշատակել անունները այն մշակներուն, որոնք Հայ ժողովուրդի փոքրիկ մեկ մասնիկը ուսումով ու դիտարկմամբ զինելու Համար արեւմտեան աշխատեցան և եւլին այդ ժողովուրդին Հետ նահատակվեցան իրենց կյանքի բեղուն շրջանին ծառայելու պատրաստակամութեամբ, Հանգրվանի կեանքն անտարբէր:

1895—1915 Հաշտարար պաշտանավարներն Քոթայք վարժարան Արամազայան (Հանընցի), Հարություն խալիֆա, Լևոն խալիֆա Տեր-Հովակիմյան, Ղուկաս Ղուկասյան, Նազարեթ Քուրդ-Գոգոսյան, Հակոբ Բընըրեյան, Կարապետ Շիրիկեյան, Լևոն Գուլումեյան Արամազայան, Անջրդեցի Առաքել վարժարան, Արտաշես (Արարիկիցի), Ստանիկ Տեր Գեարգայան (Անջրդեցի), Նիկողոս Պեկյան (Բինկյանցի):

1903-ին Սարգիս Շիրմանյան ավարտելով Սահասարայան վարժարանը, վերադարձաւ Արամազան ու զպրոցը Հասով ներկայանալի վիճակի մը: Նորահաս տերունդը սկսած էր թոթափել նախապաշարունակներու և ավելորդապաշարութեաններու բնույթը: Հինի և նորի կոնֆլիկտ վերջ գտած էր, երիտասարդութեանը խաղաղի և ազիտութեան պատենը քանդած էր, ազեա կրթականներու սխալ ու վերացական և բնացենց քարոզութեաններու թմբիկներն արթնեցած էր:

1904-ին, երբ Սարգիս Շիրմանյան Հայոց պատմութեան կը դասավանդեր, Հանկարծ լուր եկաւ, թէ՛ թուրք ժանտարմաներ կուզան զպրոցը խուզարկելու, Համիայան պաշտանյաները Հոս տուած էին: Անմիջապէս Հայոց պատմութեան միակ գիրքը ծոցս դրին ու աշակերտներու գոտինը իրար կուպելով՝ զիս զպրոցի ետեի կողմի պատուհաններն վար կարեցին ու գիրքը տարի ախտը պահեցին: Դասացուցակին մեջ այդ դասի տեղ ուրիշ դաս նշանակված էր, ժամանակ մը այդ դասը ընդհատվեցաւ: Ամեն մի դրէի կամ դասապրքի շաղկիկն վրա Հեանյալ թրքերն մակազրութեանը պէտք է ըլլար. «Վսեմ. Լուսավորութեան միութեան» այս ինչ թիվ արտակարգով տպված է», այլապէս որպէս փոստակար գիրք կը դրուվին և կը պատմեն թրքավարի կերպով: Հայերենի զուգընթաց թրքե-



բեն, ֆրանսերեն, անգլիերեն լեզուները և գիտության բոլոր ճյուղերը կը զաստիճանագործեն ըստ ծրագրի:

Ս. Շիշմանյանի Հաղորդեց Սամուել Վոշկարյան Այնթապցի, ոպտ Կարապետ Թափթուփյան Ուրֆացի: Այս ազգասեր երիտասարդը կարելի է կոչել Նոր Ուրֆացի Սարգիս վարժապետը: Շիշմանյանի շրջանին ցանկած կրթական սերմերը անոր օրով կը բուսենին, կուճանան ու պտուղ կուտան. զոչոքը կը Հասնի բարձրագույն նախակրթարանի տախճանին ու կուսենա իր անդրանիկ շրջանավարանները:

1910-ին Այնթապեն կը վերազանա Սարգիս Տեմիրճյան, ազնական ուսուցիչներ ունենալով Սարգիս Չուլճյան, Հովհաննես Աղբարչարյան (Այնթապցի), Հակոբ Մահանյան (Այնթապցի), Գեղամ Այխրտանյան (Մալաթիացի): Այս շրջանին զոչոքը իր լավագույն գիճակին կը Հասնի, կօժովի արդիական դասաղբերով ու մանկավարժական ծրագիր կանոնադրով ծը: Տեր Թոզիկյան մանկավարժութունն ու պատմի միջոցները այլևս պատմության գիրքը անցած էին:

Մանկապարտեզը արդեն վաղուց հիմնված էր, եկեղեցիին կից Նոր շենք մը ծախու առնված և վերածված էր ազլիանց վարժարանի: Ազլիանց վարժարանը կը զբվի մանկավարժական հիմերու վրա, աշակցությամբ վարժուհիներ Մաթեր Սրագործյանի (գաստտեղավոր մշակ 1900-նն ի վեր) և օրիտղներ Աննա Միսի Արրահամյանի և Լուսիկ Գոչոտյանի: Վարժարաններու Հարակից դարկ կը արգի լաբարանին, որ արդեն իսկ հիմնված էր Թափթափյանի և Գնորգ Ազնոպուրյանի շանքերով ու շրջակա քաղաքներու նախանձը շարմելու տասինան կը փոյլի, ուսմունք շամբելով ուսուճնագուրկ չափաճա սերունդին: Հիմնվեցավ զբաղարուն մոդոլուրդին Համար, կիրակնօրյա լաբան իդական սեւին Համար՝ տիկիճներ Ներմն Գ. Ազնոպուրյանի և Մաթեր Մանուկյանի աշխատանքով և Կարմիր խաչ:

Հայերեն, թրքերեն և Հայաստա թրքերեն պոլտական թերթեր կտանային, ներկայացուճներ կը արվին եկեղեցիին մեջ, ոչ մեկ զժողուճյուն կամ մոլեռանկութուն՝ ուրիշ քաղաքներու մեջ եղածին պես:

Ատրամանի Մեսրոպյան վարժարանի շրջանավարտներ Հանի Հայպանյան, Հաճի Նահարյան և Հովհաննես Գէոյուք-Գաղլյան ևս սկտան որպես ուսուցիչ աշխատիլ: Դպրոցը բոլորովին ծրի էր աղբատ և Հարուստ ուսանողներու Համար, ազգային խանի և այլ կալվածներու եկամուտը Հատկացված էր զոչոքին և բավական էր ոչյուսանն Հաճասարակչուս Համար: Դպրոցի մակարդակը բարձրանալու Հետ զուգընթաց, բնականաբար ոչխի աճելնար պյուսանն ևս, այդ պարագային կարդ մը Հարուստ ազգայիներ Հավարվելով, իրարու մեջ Հանգանակութուն մը

կրնենք ու պայտանեն կը դոցվեր առանց ժողովուրդն բան մը պահանջելու: Քաղաքի խորհուրդները եկեղեցիի եկամուտն բաժին կը հանեն գալուցին: Իսկ ժողովուրդը զանազան տոներու առթիվ եկեղեցիի միջոցով նպիրատվութուններ կրնէր գալուցին: Արտաքին ոչ մէկ ոգնութիւն:

1908-ի Օսմանյան սահմանադրութենէն Հետո շատ մը պատանիներ շրջակա քաղաքներու Հայ միջնակարգ վարժարանները, ամերիկայան դռները և Քրքական իտալիները Հահախէլ սկսան ու մի քանիներ թրքական բժշկական, գերմանական, ֆրանսիական Համալսարանները ավարտեցին: 1915-ի եղեւնը վերջ տվաւ այդ պատանիներու և երիտասարդներու կյանքին:

Հայ կաթողիկոսներու դպրոցը աշխատած են Հարութիւն Մնզրյան, Վենետիկի Միսիթարյան վարժարանն շրջնավարտ, այժմ Նյու-Յորք, Պոզոս Ասլանյան, Աարգիս Տեմիրճյան և ուրիշներ: Հաճախ գալոցը տարիներով զոց կմնար, վերջ ի վերջո ավելորդ Համարեցին առանձին դպրոց ունենալը և միացան Հայոց դպրոցին:

Հայ բողոքականներու դպրոցը Հերթով աշխատած են Ներսես Գուլումեյան, մեջ ընդ մեջ՝ Լևոն Գուլումեյան, իսկ տնական՝ Ատոս վարժուհի:

Ասորիներն ալ կը Հահախենին Հայոց դպրոցը: Ասորիները իրենց մայրենի լեզուն կորսնցուցած էին և Հայերեն կը խոսէին: Ատիամանի և շրջակա դավառակներու գյուղացի ասորիները Նույնպէս Հայախոս էին: Միայն Ատիամանի ասորիները կը սորվէին ասորական տառեր և այդ տառերով թրքերէն կը գրէին:

Ատիամանի շրջակա գյուղերու, Քեախթալի, Շիրոյի շրջաններուն մեջ ոչ Հայ, ոչ քուրա և ոչ ալ թրքական դպրոցներ գոյութիւն չունէին: Ատիամանի մեջ կար թրքական Նախակրթարան մը և Հեօճուրու մուլլաներ պատրաստելու Համար:

Հայոց դպրոցի Հառաջգիմութիւնը և մակարդակը թուրքերը խնթիվ կը դիտէին, Նամանավանդ թուրք գայմազամներ կամ պաշտոնյաներ, երբ ներկա կըլլային Հանդիսութեանց: Թուրքը Հակառակ էր Հայ ժողովուրդի մշակութային, կրթական, տնտեսական զարգացման և թվական անման, առաջին Հերթին բնաջնջեցին մտավորական դասակարգը:

## 11. Ատիամանի եկեղեցական կյանքը.

Ատիամանի շրջակայքը և ուրիշ քաղաքներու բերդերուն վրա Հայոց առևներ և Հայոց եկեղեցի ու դպրոց բնավ չկա: Ատիամանի բերդը բացառութիւն կը կազմէ: Եկեղեցին շինված կամ նորոգված է թուրք սուլթան

Մահմուտ Բ-ի ժամանակ, զուան վրայի Հայերեն արժանազուրկյան մեջ հիշված է իբր անուհը: Մուլթան Մահմուտ Բ թագավորած է 1809-1839 թվականներուն: Մույն քաղը այժմ կը մնայ Հայ տիկնոջ մը քով: Մարգիտ Տեմիրճյան Հեռեկայ ձեռք կը բացատրե այս իրողությունը:

«Հայոց եկեղեցին, որ կը զարգարեր Մանսուրի բերդին Հյուսիս-արևմտյան հակառը, Հափանահան չէ, որ Գաղտատի ռեև խալիֆա թուր-լատրած ըլլա անոր շինությունը այս քաղմական խիստ կարևոր կետին վրա: Կերևի թե թաթար-սելճուկ արշավանքներով վերջ գտնող արաբական տիրակալության վերջալույսին, երբ բերդն ալ արդեն քար ու քանդ եղած էր, Հայերը, սգավելով պատահ առիթնն, այս կարևոր կետին վրա Հիմնած են իրենց սրբավայրը՝ կատարված իրողության մը առջև զնելով նորնկ իշխանությունները:

Միայն Հաստաա է, որ Հին եկեղեցին այրած է 1871-ին, որովհետև թրքարարառ երգ մը կա, որ կըսե. «սենն օդն սեքիզ յուզ կիմիշ օլբրին-տե, Հազզ թարաֆրնուտան յանար քիլիսա» (1871 թվին Աստուծո կողմն աչրեցով եկեղեցին): Այս միջոցին ազգային ժողովը խիստ զորավոր կազմ մը ուներ, բացառապես կազմված Հզոր ազաներու կողմն, ազգապետությունը Գոտ-Գապայի, որը թուրքերը կը Հորջորջին Գէյուք-Մըզաբուր: Հնելով այս ազաներու նյութական, բարոյական ու կառավարական ուժին վրա Մուլթանի Սրատիոն եպիսկոպոսը վերանորոգած է Ս. Աստվածածին եկեղեցին: Երկեսն ասիանանցին մեկ մարդու օգն սաքի ելլելով՝ մեկ տարված մեջ վերականգնած է իբր ասեարը, որուն իբր աշակցությունը բերած է Ասիանանի թուրք ժողովուրդը: Սրապիսն եպիսկոպոսն Հեսա իբր կտրեոր տաաջնորդ Ասիանանի, կերեկա Հրաշագործ Գրիգոր եպիսկոպոս Աջապահյանը (Սեւցի) 1878-ին, որուն օրովը շինված է զոլոցը: Գրիգոր եպիսկոպոսն Հեսա իբր Հաջորդող ծանոթ աաաջնորդներ եղած են Գրիգոր ծայրագույն վարդապետ Աբարդյան (Ջեյթունցի), թոթովա-խոս, բայց լավ սանևարան, քաջ աղգատեր, ծառայած է զոլոցին իբր ուսուցիչ և նոթիս, Հարություն վարդապետ (ժախանուեը և տեղը՝ անծանոթ), Հակոբ վարդապետ Կէսեուլլյան (թրքախոս Սեւցի), Եղիշե վարդապետ Գալֆայան Գոյսեցի, օրենսգետ և սրախոս: Ասոր արով Ասիանան գտնված է նաև փաստարան Հովհաննես Էֆ. Աճեմյանը (Մուլթանցի): Գալֆայան և Աճեմյան մեծ օգտակարություն ունեցած են ազգին կալվածները օրինական հիմերու վրա զնելով և թուրք դատարանին ու քաղաքապետարանին մեջ Հայ անդամներու իրավունքի վերահաստատման գործով: Աչքի գարնող քահանաներ եղած են բնիկ Ասիանանցի Մարը-Տերաներ, Տեր-Հովհաննես, Տեր Գրիգոր, «Տեր Հովհաննիս Գաղա» և Տեր

Կարապետ ժամկոչյան: Տեր Լովակիմ Պապան եղած է Ատիամանցիի Լոգերանության ամբողջ մարմնացումը, երկաթն զտվազանով իշխած է իր ժողովուրդին վրա և ահ ու սարսափ ձգած է թուրքերուն և իշխանության վրա: Ապրած է 1895-ի ջարդեն վերջն աշ<sup>20</sup>: Ատիամանը Հեռավոր անցյալի մեջ եղած է առանձին առաջնորդական թեմ, որն Հեռո կցված է Մալաթիայի թեմին:

Հավանական է Ս. Տեմիրճյանի վերոհիշյալ ենթադրությունը՝ եկեղեցին բերդին վրա Հաստատվելու պարագան, նույնքան Հավանական է բուզանդացիներու, Փիլարտոս Վահրամ Վարամնուկիի և Գոգ Վաթիի իշխանապետության շրջանին բերդին զբաղումը հայերու կսցան և եկեղեցիին բերդին վրա Հաստատվիլը, բացի այդ բերդի տարածության վրա հայ առևներու գոյությունը մինչև 1915 թվականը: Ատիամանը ունեցած է Հինգ քահանա, երեք զախնանամ էին, երկուքը շարունակեցին մինչև 1915-ի եղանը: Տեր Կարապետ ժամկոչյանը խածդուժ ժաճով և շարչարանքներով սպաննեցին: Իսկ ծերունի Տեր Գրիգորը 1895-ի ջարդին ստիպած են, որ խալամնա և մի քանի որ դուխը ճերմակ փաթթած ու Հեռո մեկզի նետած է: 1915-ին, նույն այն թուրքը, որ ստիպած էր զինքը խալամնալու, կրկին կուզա և կրեռ. «Անցյալ անգամ զիս խաբեցիր, այս անգամ այլևս քեզ Համար ազատիլ չկու»: Բերդին մեծ գահլիճներեն մին, որ արտաբերոցի վերածված էր Հին ժամանակներն ի վեր, Տեր Գրիգորը կրճզեն մեջը, զոյր Մանակ Խալիֆան կը կանչեն և անութներեն պարան մը կապելով՝ վար կը կախեն, որ քահանան դուրս Հանն, պարանը կը կտրեն, ան ուլ կիխա քահանային քով ու երկուքը միտսին կը խեղդվին ազտեզութեանց մեջ:

Ենչչերիներու Հայրամանքի շրջանին ժողովուրդը եկեղեցի Հրավիրելու Համար ժամկոչը առաուն կանուխ տուներու զանրը ծեծելով կը կանչն եղեր, Հեռո արտանված է տախտակն կոշնակ մը գործածել, Հուսկ Հեռո երկաթն կոշնակով մը կը կանչեն: Նույնոցիս կոշնակ ունեին Հայ բողոքականները, ասորիները և ասորի կաթոլիկները, իսկ Հայ կաթոլիկները ունեին խոշոր զանգակ մը, որուն Համար թուրքերը խխա կը շղայնանային:

## 12. Հարանվանություններ

Քարերախտարար կաթոլիկությունն ու բողոքականությունը Ատիամանի մեջ խորունկ արձառ չէին կրցած ձգել, որով զավանական վեներ գրեթե չեն եղած: 20 ընտանիք Հայ կաթոլիկներ կային, նույնքան մըն

<sup>20</sup> Ս. Տեմիրճյան, Գաղութորուն Անթուսակի, էջ 24-26:

այ Հայ բողոքականներ: Օտար միսիոներներու կեզծ քարոզութիւններն չէ ազդում Ատիամանի ժողովուրդը: Միսիոներներն շատերը լրաններ և քաղաքական գործիչներ էին ի Հաշիվ իրենց պատկանած կառավարութեան, քրիստոնեութեանը դիմակ էր միամիտ և կույր քրիստոնյա Հայ ժողովուրդը պատահելու և իրենց քաղաքական նպատակներուն գործիք դարձնելու, Հետո այ սինիքորին կըտնին. «Քուրք եղիք, փոխանակ ջարդովելու»: 1908-էն Հետո, երբ ժողովուրդին աչքերը բացվեցան, կաթուղի և բողոքական Հայեր սկսած էին լքել իրենց եկեղեցին, բայց շուտով վրա հասավ 1915-ի եղեւորը: 1915-ին Պերճիկի Հայոց եկեղեցիները, դպրոցները և տուները խուզարկելու անն Հայ բողոքական պատվելի Կարապետ Քեթեանյանի տունն գանգեցավ ծրագիր-պրոշուր մը, ուր մանրամասնորեն ծրագրված էր, թէ ինչպէս պէտք է սրսայ Հայ լուսավորչականները:

Սուլթան Համիտ խորամանկ ու նենգամիտ, պայման դրած էր միսիոներներուն, որ թուրք և քուրդ տարրին մէջ քարոզութիւն չընեն, այլ միայն Հայ և ուրիշ քրիստոնյաներու մէջ, որպէս թէ անոնք ոչ քրիստոնյաներ ըլլային:

Հայ կաթուղիներու եկեղեցին Հիմնված է Մալաթիայի առաջնորդ Միքայիլ Կերապալտաին կողմն: Ատիամանի Հայ կաթուղի առաջնորդներուն մէջ պէտք է հիշել Գուլազազյան Գեորգ վարդապետ, ԵաՀանայան վարդապետ Մարաշի, Կեմեմ վարդապետ ՊեՀանաշի, Միքայիլ Ժ. վարդապետ Աստվածատուրյան: Այս վերջինս, Սերաստացի ուսույչ և ազգասեր վարդապետը, Հարանգանական անիմաստ գեները կըցած է վերցնել Հայ Հատվածներու մեջն ու Հայ կաթուղի դպրոցը, որ մինչև իր օրը անգանական դոյութեան մը ունեցած էր, բարձրացուցած է օրինակելի վիճակի մը: Այս անձնվեր և քաջ Հայ վարդապետը երկար օրեր ծննդէն, խոշտանկելէ, սուքերը պայտելով քաշեցնելէ վերջը սպաննեցին ու գլուխը քարերով հզմեցին:

Հայ բողոքական եկեղեցին ունեցած է իր Հովիվները՝ պատվելի Գևորգ, պատվելի Վարդան Նաճարյան ու, ի վերջո, պատվելի Ներսես Գուլամեյան: Այս վերջինը մեծապէս օգտակար եղած է Ատիամանի Հայութեան:

Հայախոս ասորիներու եկեղեցին Հայ եկեղեցիին շափ Հին ըլլալու է, անոնց եկեղեցին միշտ սիրված է Հայերին: Մեծ տունական օրեր, շատ մը Հայեր Հաճախած են նեստորական եկեղեցին, որուն արարողութեանները գրեթէ Նույնն են Հայ եկեղեցիինին: Վերջին քաՀանան էր Սայիոյ:

Ատիամանի մէջ կար երեք ընտանիք ասորի կաթուղի և ունին փոքրիկ եկեղեցի մը: Այդ երեք ընտանիքի Համար գրկված էր երկու վարդա-

պետ Հալեպեն: Մին՝ Ղաս Անթուան, մյուսը՝ Ղաս Սաման, երկուքն այ՛ Հալեպցի: Երկու վարդապետով երեք ընտանիք կը հովգնին:

### 13. Արիեստներ.

Ատրիամանի արհեստավորները, բաղջատմամբ գաժառակի ենթակա ընակչության, չափազանց շատ էին, բայց որովհետև շրջակա շորս գաժառակներու մեջ քաղաքներ չկային և գաժառակներու կեդրոնները փոքրիկ ավաններ էին կամ մեծ գյուղեր, ուստի այդ տեղերու գյուղացիությունը իր կարիքները հագայու համար կազմած էր Ատրիամանի շուկային, այդ իսկ պատճառով շրջակա գաժառակներու հայ գյուղացիներ եկած հասաստված էին Ատրիաման:

### Չուտ հայ արիեստավորներ.

Ներկարար, կապույտ և կարմիր ներկող, երկաթագործ, պղնձագործ, սկնբրիչ, դերմակ, սափրիչ, բժիշկ, զեղագործ, սրագործ, թաղիքագործ, համետագործ, զինադործ, թիթեղագործ, գինեպան, շաղաքպան (բուրջ շաղաքները հայու սեփականություն էին), փինկ, որմնագիր, քարտաշ, քարահատ, նվագածու, կլայեկ, լղուտ, պայտար, բրուտ, շերամարույծ, մամագործ, մուլող, հրուշակեղեն:

### Չայ և թուրք խան.

Վանառական՝ 90 տոկոսը հայեր, կոչկոկոսը՝ մեծ մասը թուրք (եմենի կարողներ), կոչկակար՝ հայ (նվրուպական կոչիկներ), փերեզակ, մափանա – թուրք, հոջագործ՝ թուրք, շորնպան՝ հայ և քուրդ, ուղտապան՝ քուրդեր, նպարաճանառ՝ թուրք, պարտիզդան և այգեպան՝ հայ և թուրք, այգիի պահապաններ՝ թուրք, հյուսն՝ հայ և թուրք, մշակ՝ խան, բաղենպան՝ թուրք, ջուլհակ՝ խան, խազախորդ՝ խան, բամբակ գտող մեքենաներ՝ հայ, 1 հատ թուրք, հերկողներ՝ քուրդ և թուրք և այլն:

## 2. ՍՈՑԻԱԼ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ

**Ա**րիամանի և շրջակայքի սոցիալ—քաղաքական և տնտեսական մեջ տեղի ունեցած կալվածներու և այլ բուսադրամուծներն: Քաղաքական աչքառու հայրածանքներ գրեթե չեն եղած (ի բայ ասեալ ենիշերիներու ժամանակնն, ուր ամեն տեսակ խժգժություններ կկատարվին ստեմարձակարեն): Այդ փորձանքի վերացումնն Հեռո հայ համայնքը միայն չուեջ առած է: Գլխավորաբար այն պատճառով, որ Արիամանի և շրջակայքի ժողովուրդին նշուղ մեծամասնությունը քուրդեր էին և որոնց մեծ մասը քրդացած հայեր էին, զազառականքու կեդրոնին մեջ նաև քնակիչներու նշուղ մասը քուրդեր էին, իսկ գյուղերու մեջ քուրդ, հայ և քիչ թվով ասորիներ կապրեին խառն համերաշխաբար, առաի չափ քուրդ ցեղախումբերու մեջ Հայեր՝ խառն, կամ զուտ հայ գյուղեր, նույն ցեղախումբի համահավասար անդամներ էին, ցեղախումբերու մեջ տեղի ունեցած կռիվներու (որ երբեմն պատերազմի մե կատանար) ժամանակ հայ գյուղացիներն ալ պիտայ մասնակցելու պարտավոր էին, որպես նույն ցեղախումբի (աշխրեթ) անդամներ, զենք կրելը (ոչ պետական) արգիւյված չէր նաև Արիամանի թուրք, քուրդ և հայ բնակչության համար: Արիամանի թուրքերը սերու կերպով կապված էին Հայերու Հեռ, որովհետև բոլոր արհեստավորները հայեր էին, և թուրքերը ամեն ինչի համար պետք ունեին հայերու, նույնպես շրջանի բոլոր քուրդերը: Արիամանի և շրջակա փոքր քաղաքներու գյուղերուն մեջ բնավ թուրքեր չկային: Արդեն բուն Արիամանի քաղաքարնակ ժողովուրդին մեկ երրորդը հայեր, նույնքան ալ քուրդեր և մնացալ մեկ երրորդին ալ մեծ մասը կես—թրքացած քուրդեր էին և մնացածը թուրքեր էին: 50 քնտանիք հայախոս ասորիներ կային: Ժամանակ—ժամանակ թուրք կառավարության մասնավոր զրգուրթյունները կըլլային, ժողովուրդը շատ խաղաղ կապրեր իրեր ոգևությունով: Թուրքիս այլևայլ կողմերը տեղի ունեցող Հեղափոխական շարժումները անմիջապես արձագանք կգտնեին այս շրջանին մեջ, որը կհանդեր թուրքերու խոժոս վերարերմուցին, առանց սակայն անախորժ դեպքեր պատահելու, մանք մուկը դեպքերու տոթիվ ալ հայերը ընկրկողը չէին և լավ փոխհատուցումի միշտցները գիտեին:

Արիամանի հայ ազաները բոլորովին տարբեր գիրք ունեցած են զբացի քաղաքներու հայ ազաներնն, ազգային զարթնոցի առկվիրտներ եղած են: 1860 թվի Ազգային սահմանադրութեննն վերջ տուլթան Մահ-

ժուտի և սուլֆան Ազիզի բարենարգումներու շնորհիվ կառավարութեան մեջ ունեցած են երեք անգամ, մեկը՝ քաղաքապետարանի, մեկը՝ Թաղապետութեան, մյուսը՝ գաղտարանի մեջ (Հարցաքննիչ գաղտարը միշտ Հայ էր), որոնք Հզորացնա պաշտպանած են Հայ ազգաբնի գաղտ Թուրքին դեմ<sup>10</sup>: Համիայան և Սահմանադրութեան շրջանին այնքան զորացած էին, որ շատ անգամ պաշտօնեանկ ընկէ կուտային տեղօրոյն կառավարիչը կամ ուրիշ պաշտօնյաներ, Հենարան ունենալով Մալաթիայի և Խարբերդի կառավարական շրջանակներուն մեջ ազդեցիկ մարդիկ: Հաճախ մահացու պաշարք մղած են Թուրք ազաներու դեմ, միանալով Թուրք ազաներու մեկ մասին՝ քնդդեմ ուրիշներու:

Յնապէս Հոսի վարչաձևը մեծ ազդեցութեան չէ ունեցած Ատիամանի և շրջականերու Հայութեան վրա ենիչերիներու ջնջիչինն Հետո:

Բազղատարար Թուրք ժողովուրդին Հայերը տնտեսապէս ավելի լավ էին՝ պարտեղներու, այգիներու և հողերու երեք-չորրորդը Հայերու ձեռքին էին, նույնպէս վաճառականութեան և արհեստների, Թուրքեր և քուրդեր կախում ունեին Հայերին:

Շատ ետեմեական էր գուլգատեանութեանը, արքրով կհերկէին, ասրի մը ցանված արտը Հախրոզ տարին չէին ցաներ, պարսպ կմնար հողը Հանգատանալու Համար, ուրիշ մաս մը կհերկէին: Հողը բերրի էր, բերքը՝ առատ, փոխադրութեան միջոցներու ղեկարութեան պատճառով արմախքը շատ աճան էր, միայն Սամուսաթ առջինն, Եփրատի վրայով, լաստերով կփոխադրէին Ճարապուս, ուրկն գնացրով՝ Հալայ: Իսկ Սամուսաանն Հնուս տեղերու արմախքը կապառեր շրջակա քաղաքներու մեջ և տեղւոյն վրա, արմախքի վաճառականութեան գրեթէ չկար:

<sup>10</sup> Արիմանը այսօր Յուզքիայի 67 նահանգներից մեկն է, տարածութեանը՝ 7600 քառակուսի կիլոմետր, բնակչության թիվը՝ մոտավորապես 400.000 շուն: «Արիմանի պատմության» հեղինակ Սարգիս Գուլջանը մտախալ 1972 թվին երևանում: Խորհրդային իշխանության տարիներին լեր կարող զրկ Արիմանի տարածքում գործունեության ունեցած հայկական կուսակցությունների մասին: Յարիների շնացքում Գալաթում, ապա Գալատանում մեք տանը իր պատմածներից հիշում եմ (մանրամասնություններ լեր պատմել): որ Արիմանի մեջ գրեթեում է ունեցել և զորով Գալ Գեղախիական Գալանցության Կոմստուպուն և Գեյալանների մի խմբով: Դատով է նաև, որ Օսմանյան Սահմանադրության շրջանին կիլիկիա շրջապատյաթ էլած Գեյալյան հայրնի ղեկավար Փարամազ աջելել է նաև Արիման, որ Գալանցությունը լինելով ավելի լավ կազմակերպված, մեծ հարգանքով դիմախոյել է և շնչունել այդ մեծ հայրենասիրը, որը ելուցներ և դասախոսարաններ է ունեցել հայ շնակության համար և այցելության ավարտին արժանի կերպով և մեծարանքով ճանապարհել է կրան: Յերդն պահին Փարամազ իր հիշակյան ընկերներին ասել է, որք այստեղ փոքր թիվ եք կազմում, լավ կեներ, որ միանար Գալ Գեղախիական Գալանցությանը լիվն Օուլջանը:



Թուրք և քուրդ հողատեր տղաները կշահագործեն հողագուրծ, ազ-  
քատ բանվոր քուրդերուն: Փուրջ կանայք այրերեն տղելի չարքաշ, ճար-  
պիկ և աշխատասեր էին, կգործեն կապերա, գորգ և այլ գործածական  
պիտույքներ:

Իրավական անասկետով հաճաատութիւնն չկար. հայեր և քուրդեր  
թուրքերու հաճաատը չէին, սակայն շնորհիվ հայ աղաներու ազդեցիկ ու-  
ժին և թուրք, քուրդ համայնքին հայ արհեստագործերու կարտո գիճա-  
կին ակնառու անիրավութիւնները գրեթէ չկային, հայ վաճառականներն  
և արհեստագործներն ամեն ինչ պարտքով կվերցնէին, և բերքի ժամանակ  
կվեարենին:

Սահմանադրութիւն չըջանին անգամ մը հայերը պոչքոթի ենթարկե-  
ցին բազմիքները (բազմիքները թուրքերուն էին և բազմեպանները՝  
թուրք), շատ խնդրանքներով հազիվ հող թուրքեր շահեցան հայերու  
սիրտը: Նույնպիսի մի պոչքոթի ենթարկեցին նաև թուրք մտավաճառնե-  
րուն և Ուրֆային հայ մտավաճառներ բերել տվին հայերը: Սահմանադ-  
րութիւն չըջանին հայեր կաղմակերպեցին արհեստակցական միութիւն-  
ներ՝ հայ և թուրք խառն:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

## 1. ԱՏԻԱՄԱՆԻ ԱՆՈՒՆԸ

Ատիամանը արևելյան միջորոշականի 38 և Հյուսիսային լայնության 38 աստիճաններուն վրա կը գտնվի, որը ունեցած է Հոկտեմբերի մը, և՛ բր և որո՞նց կողմն շինված է այդ բերդը և իր սկզբնական շրջանին ի՞նչ անուն կրած է, Հայանի չէ: Միայն որոշ է, որ քարայրներու կյանքը վերջանալու և Փիրինը ավերակ դառնալու հետո, Փիրինի ժողովուրդը տեղափոխված է Ատիաման, և Փիրինի անունով կոչված է, որովհետև հին անունը պաշտոնական արձանագրություններու մեջ կը մնար և զավառը կը կոչվեր Բիան զազառը, բայց ժողովուրդին մեջ զորածանական չէ այդ վաղեմի անունը: Հետագային կրած է այլևայլ անուններ: Հռոմայեցիներ Փիրինը կոչած են Պարուլա – ΡΟΥΛΕ – ֆիլ: Քրիստոսե ետր 61-ին և 64-ին Կորբուզոն և Պնոսու Հռոմէ կարգված Կաղաղովկիս կուսակալները և պարթևներու զեմ պատերազմին Հռոմայեցի զորավարները Մալաթիան կայան ըրին իրենց բանակներուն՝ Հայաստանը եզմելու համար:

1910-ին Թիֆլիզ հրատարակված պատմական Հայաստանի ընդարձակ քարտեսի մը վրա Ատիամանի տեղը նշանակված է Կորբանոն: Հավանաբար Կորբուզոն իր անունով կոչած է և փոխված-եղած է Կորբանոն: 361–363-ին (մ.թ.) Լուլիանոս կայսեր կողմն Հերաքոմն (Heracome – քուրմի բնակարան) անունը տրված է Ատիամանին (Imp. Caesar Flavius Claudius Julianus Augustus)<sup>29</sup>:

Քեաթիզ Չելեպի Հանի Խայիֆա «Ճիհան նյումա»-ի (Աշխարհացույց) մեջ (էջ 601) հետևյալ տեղեկությունը կուսա Ատիամանի մասին.

<sup>29</sup> Փրոֆ. Ն. Մանանդյան «Դճ Դալարամի պատմության համալսարանի» 361–363 թվականին լույսնված շարունակ (ըբ 6):

«ԿԵՐԵՐԸ (այժմ գյուղ մը – Ս. Զ.) լեռան անկյունը բերդ մըն է, որն մեկ օրվա ճանապարհով՝ Հարավ արևմուտքն է Քեաթթան, Հըսնի-Մանսուրը եփրատի արևմտյան կողմը Սաժուսատի մասն է. Մանսուր-խոն-Ճաուևա-խոն-ալ-Հարիս-ալ-Ամրիին կը պատկանի: Մրժանի սրբուհի Մուհամմեա-ալ-Ճաաթիտի-Մանսուրը այս բերդի նորոգության ձեռնարկեց, որը Աղյուղ (կապույտ) գետի Հյուսիսն է, Հըսնի-Մանսուրի և Մալաթիայի միջև լեռ մը գոյություն ունի, որ կապի միջոց է: Արգալուտյան (Արղա) Մալաթիայի մաս ամուր բերդ մըն է: Մարաշի քուրդերը, բուշվանները, բաշխներ – ասանք եղբոր են»:

Իսկ Եսկոււ-ալ-Համաղի ավելի մանրամասն տեղեկություններ կուտա Հըսնի-Մանսուրի (Ասրաման) մասին. «Հըսնի-Մանսուրը Դրյար-Մուսարի գավառներն է<sup>21</sup>, կը գտնվի Եփրատի արևմտյան կողմը Սաժուսատի մաս: Հըսնի-Մանսուրը ուներ պարիսպ, խրամառ և երկք զոներ, իսկ կեղտոնը՝ ամրոց և բերդ՝ կրկնակի պարիսպով: Հըսնի-Մանսուրն մինչև (Սաժուսատի) մեկ օրվա ճանապարհ է: Ան կը վերագրվի Մանսուր-խոն-Ճաուևա-խոն-ալ-Հարիս-ալ-Ամրի-ալ-Կայսիին, որ ստանձնած էր անոր շինությունն ու վերանորոգումը, և որու մեջ կապրեր Մրժան-խոն-Մուհամմեաթի օրոք՝ Յընամին ետ մղելու Համար, Միրիայի, Նեղիբեյի և Հայաստանի ժողովուրդն կազմված զորքերով: Այս Մանսուրը կառավարիչն էր Ուհայի քնակիչներուն, երբ այս վերջիններս ընդդիմացան Արրասյան պետության սկզբնական շրջանին ու Ալու-Ջաֆար-ալ-Մանսուրը, որ իր եղբոր Սաֆֆաշի կողմն կառավարիչն էր Ճեղիբեյի և Հայաստանի վրա, պաշարեց Ուհան, որը զրավելն Հեոթ Մանսուր-խոն-Ճաուևան փախավ, Հեոթ երաշխիք ստանալով նորեն երևան եկավ:

Երբ Ալոտուլլա-խոն-Ալին պաշտոնազրկեց Ալու-Ջաֆար-ալ-Մանսուրը, նա ուստիկանության պետ նշանակեց Մանսուր-խոն-Ճաուևան, իսկ երբ Ալոտուլլա Պարա փախավ, Մանսուր-խոն-Ճաուևան թաքցրեց Ալոտուլլային, սակայն 754 թվին խնայվելով, նա (Մանսուր-խոն) Ճաուևան բերվեց Ալ-Մանսուրի մաս, որ սպաննեց զայն Բազալի մեջ: Ուրիշներ կրան, թէ Ալոտուլլա-խոն-Ալիի փախուստն Հեոթ Մանսուր-խոն-Ճաուևան ապահովություն ստանալով երևան եկավ, բայց Հեոթ անոր մաս գտեվեցան գրություններ՝ ուղղված Հույներուն, որ կը զրպարտեին մահմետականները, այդ պատճառով Ալ-Մանսուրը սպան-

<sup>21</sup> [Պիար-Մուսաթի] երկրամաս մեծ է Տեղիբեյի Միջագետքի մեջ և կը տարանվեր Եփրատյան երկիրներ, Սաժուսատի միջև Անա, կեղտոն եր Բազալ:

նեց զայն Բողզայի մեջ: Լեոն (Լարսև) ալ—Ռաշխար կառուցեց Լըսնի—Մանսուրը, անբացուց և մարզերով ու մեղացուց իր Հօր ալ—Մեհաբի օրոք»<sup>27</sup>:

Քուրդերը մինչև օրս Ատիամանին Մամսուր կըսեն (Լըսնի—Մանսուրին ազգագոյյալ ձևը), կա նաև Էսկի—Մամսուր անունով քրդաբնակ գյուղ մը, ներկա Ատիամանեն 10 ջլմ. Հարավ Զիյարեթ գետակի եզրերը, ուր կան բերդի մը ավերակները:

Փիրին անունը մինչև այսօր կա. Փիրին գիւղը, Փիրինի լիճը և քարայրները: Իսկ Լըսնի—Մանսուր անունը գործածական էր պաշտօնապես թուրք կառավարութեան կողմէ մինչև 1922 թվականը: Մուսթաֆա Քեմալի ժամանակ ջնջվեցաւ այդ անունը և Ատիաման կոչվեցաւ, թրքացնելով քաղաքին անունը: Իսկ ժողովուրդը արարական անունը չէր գործածեր, արարներն տառերով արձանագրութիւն մը գտնվեցաւ բերդին մեջ, թուրք կառավարութիւնը անմիջապէս գրովեց այդ մեծ քարը և անՀայացուց:

Պետք չէ շփոթել նաև Լըսնի—Մանսուրի բերդը ետրուղի տվող Մանսուր—Իսկի—Ճառնան Ապու—Ճաֆար—Մանսուր խաչքարի հետ:

Լ. Ս. Էփրեկյան Բնաշխարհիկ բառարանի<sup>28</sup> մեջ կը հիշատակէ Հեռեյալ երեք անունները.

1 Ատեաման կամ Ատիեաման — գիւղ Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Քալեայ գիճակի Հիւսիսային սահմանաձայրը: Ունի 553 բնակիչը, բաժնուած 50 տան: Գիւղիս Հին Հայկական անունը ծանօթ չէ, սակայն Հուսթեանը վկայ է Հոյակապ և անսխալ գմբեթավոր եկեղեցին, որ ոչ այնչափ ընդարձակ, բայց վայելուչ է, և շատ կենանի էջմիածնի Ս. Լուիսիոսիոսոց վկայարանին: Եկեղեցին ունի շարս պատուհան և 12 գմբեթն, որոց վերին ծայրը կործանած լինելով, փայտերով ծածկած են բնակիչը (Այրարատ, 134):

II Ատեաման Վերին — Հայաբնակ գիւղ Միւնեաց Փեղարբուսի գաւառի. Կոնյա Հիւսիսային կողմը կէս փարսախ Հեռու, Ելիսանազետի եզրերը՝ բարձր դիրքով, բնակիչը՝ 987, բաժնուած 77 տան, գաղթած են Ալաշկերտի կառուար գիւղեն, ունին եկեղեցի մը՝ Ս. Գէորգ, անշուք ձևով: Տես — Գոթ:

<sup>27</sup> Յանուս—ալ—Կանաչի, Սուրած—ալ—Բուլղան, արաբ. Իրաք. Դեյուք, 1906, էջ 265: Չիբարուս — ջալալը 1 Թուրքիայի մեջ Մալաթիային ելուտ օրոշս ճանապարհով հեռախոսային վրա, Խույնեղու երկրի աննամուտ ստեմանածոր՝ վարն էր, զտակվեցաւ ալ—Սուրաբիկի կողմ (795—842թթ.):

<sup>28</sup> Վեմաբիւ—Ա՛նազար, 1903—1905:

Ատեման կամ Հասան—Մանսուր — փոքրիկ քաղաք երբորդ, Մայաթիոյ գաւառի մէջ: Քնակիւք են թուրք, ասորիք և Հայք՝ յուսասորչական, կաթողիկէայ և բողոքական: Լուսասորչական Հայոց եկեղեցին նախուսած է Ս. Աստուածածնի: Ունի նաև վարժարան մը թուրքիենաց:

Հարց է, թէ վերահիշյալ երեք անունները երբ և որոնց կողմն արժամ են սույն վայրերուն: Արեւելյան և Արևմտյան Հայաստանի մեջ նույն անունը կրող վայրերը, որ իրարմէ Հազար քիլոմետրեն ավելի հեռու են, ո՞ր մեկը մյուսեն փոխ առած է այդ անունը և կամ, անկախ իրարմէ, նույն անունը արժամ է յուրաքանչյուրին:

Ջոնաթան պատմագիրներու Հազարգամ տեղեկություններն Հայանի է, որ վաղեմի կոմսագնեմի մեջ և շրջակա դավառները հուռց ի վեր Հաստատված Հայություն մը կար, ինչպես նաև վեցերորդ և հետագա զարեբուն շարունակ գաղթի հոսանք մը տեղի ունեցած է դեպի Եփրատացիք կամ Փոքր Հայք և Կիլիկիա, երբեմն՝ կամովին և երբեմն բռնությամբ:

Ատիամանի գավառաբարադին մեջ հետքերը մնացած արեւելյան Հայաստանի կտոր մը բաւերու (շամաւել, անապել, ամարել և այլն) և հնչումներու նմանությունը պահ մը ենթադրել կուտա, թէ արցալոք այդ անունը արեւելքն արեւմուտք փոխադրված է:

Միւսմամանակ Հայանի է նաև պատմական այն դաման պահերը, որ անցուցած է Ատիամանը այլևայլ դարերու ընթացքին և այն համառ զիմադրությունը, որ ցույց տված է Ատիամանի ժողովուրդը այլևայլ Հարձակումներու դեմ, և որ հսկա թերդին ՀաղիվՀաղ կեսը կըմնա, մեծ դանդաված մը, իսկ քաղաքի պարիսպներն, խրամատեն, կեղքոնի ամրոցն ոչ մի հետք չէ մնացած:

Նաև Փիլարոսու Վահրամ Վարամունի արեւելյան Հայաստանն գաղթող Հայերը տեղավորելու համար Հայն, ասորի, արաբ և այլ ժողովուրդները կատարելով գրավեց անոնց հողերը և տեղավորեց գաղթականները: Այս բոլորը շրջակա ժողովուրդներու վրա ահ ու սարսափ է ձգած: Մինչև 1914 թվականը Յրանսիայի կապիտալիստներու կողմէ թուրքիայի մեջ Հաստատված բեմիի (ձխախտի) մենաշնորհը մուտք չէր գտած Ատիաման և շրջակա գյուղերը, թուրք կառավարությունը վերջին ատենները քանիցս փորձած էր ընթին Հաստատել Ատիամանի գավառակը և սակայն Հայ, թուրք և քուրդ ժողովուրդներու ընդդիմության շնորհիվ ձախողած էր: Միախտաը ազատ կերպով կը մշտկվեր ու կը ծախվեր, պետության առանց տուրք վճարելու, իսկ շրջակա քաղաքներու մեջ արգելված էր:

Սեւշուք թուրքերու երևալն հետո միայն Ատիաման անունը կրնա արժամ ըլլալ Հընի—Մանսուրին: Ըստ երևույթին Ատիաման անունը թր-

քերեն է, և թրքերեն յաման բառը շատ մը գործածական մենք ունի, այլևայլ իմաստով, թէ՛ արեւելյան և թէ՛ արեւմտյան Հայաստանի Հայերու մեջ, (որինակ — յաման օրեր, յաման աչքեր, յաման մարդ, յաման կոխիվ և այլն): Իսկ յաման բառը Հայերենի մեջ Համապատասխան ճիշտ ու ճիշտ բառ չունի: Ատիաման անուանին նշանակութիւնը ժառանգորայն կարելի է Հեանայոյ բառերով արտահայտել, անուանք անգույժ և սարսափազգու:

## 2. ԱՏԻԱՄԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ Մ.Թ.Ա. II ՀԱԶԱՐԱՄԹԱԿԵՆ ՄԻՆԶԷ ԱՐԱՐԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐՁԱՆԸ (VII ԴԱՐ)

— Ատիամանի և շրջակայքի պատմականը.

Ատիամանի շրջակայքը, նախապատմական և պատմական ժամանակներու բազմաթիւ գաղափարները՝ Տափրոսի փեշերուն վրա, Հնութիւնները և տարբեր գաղափարներու Հատուկ արձանագրութիւնները, Քեախթայի շրջանի Հնութիւններն ու արձանագրութիւնները ցույց կուսան անոր վաղեմի ժամանակներու պատմական կյանքը, Փիրին, Մաժուսաա, Ուրֆա, Մնչեսինն շրջանակի ճիշտ կեդրոնը:

Ատիաման և շրջակայքը միևնույն պատմական անցյալը ունին, անոնք Հաջորդաբար մաս կազմած են Եփրատաջվոց, Միջագետք Հայոց և Փոքր Հայքի:

Հին Եգիպտացի գարափոններ, բարեւայցիներ, ասորեստանցիներ, Հատայաններ, պարսիկներ, Հռոմեացիներ, Հոռոմներ, արաբներ, սելջուկներ, խաչակիրներ, Հայք և այլն փոխնիփոխ արբած և բազխումներ ունեցած են այս երկրամասի վրա:

Ամենն վերջը արբած են թուրքերը: Կոմաղենիի քաղաքակրթութիւնը շատ Հին ժամանակների սկսած է: Անոր սահմանները փոփոխութեան ենթարկված են այլևայլ պատերազմներու Հետեանքով, ինչպես փոխված է անոր անուանք ժամանակի ընթացքին՝ նայած տիրողներու:

Ուստի զազափար մը կազմելու Համար անոր անցյալի մասին, այլևայլ ուղղութիւնների ժամանակագրական կարգով Համաստադրված է պատմական այն մասերը, որոնք կը վերաբերին Ատիամանի և շրջակայքին:

Եփրատ գետը նարբերդի, Մալաթիայի շրջանն անցնելն Հետո, կը Հոսի դեպի Հարավ լեռներու մեջն, Կարկառի արեւելյան կողմն կը մա-

նն Կամմազեանի երկիրը: Եփրատի 30 սահանքներն վերջինը Հոս է, զե-  
տը արդեն ուռնացած է զանազան գետեր կամ գետակներ ընդունելով իր  
մեջ, և Հոս Հակո գետը 15 մեթր բարձրութենն մը շառաշյուսեով կը թա-  
փի վար: Կարկառի կոնակեն կանցնի զեղի Երրոյի գաղառակը, Թոխարի-  
ոի արևելքնն կը Հոսի զեղի Մեակին (գյուղ մը Եփրատի աջ եզրերին  
վրա, բնակված Հայերով և ասորիներով) խիտ օժաղառւյտ ընթացքով  
մը, այս կողմերը կընդունի Քեախթա գետը, Հեառ կը թերփի զեղի  
արևմուտք, ուր կակտին զաշտային Հողեր (ասկէ վար նաժարկելի է):

Սամուստի առջևն կանցնի և կընդունի Խալալուրնի, Զիյարեթ և  
Կեք Սու գետերը ու կրկին կը մանն լեռներու մեջ, Սյուփյուրկինի (Ս.  
Փրկիչ գյուղը) առջևն կրկին լեռնային խոր մտրերու մէջնն օժաղառւյտ  
կը Հոսի զեղի Հասմկա ու կրկին կելլէ զաշտային Հողեր, Պերնեհի  
առջևն կիջնէ զեղի Ճարապուս ու կը մանն Սուրիական Հող:

Ե. Քառուծի «Պատմութիւն Անթիպի Հայոց» Ա. Հասարի մեջ ի մի-  
ջի այլոց կը գրէ. «Անախորի լինեն մինչև էլ—սղուի և Կհօլպաշքի լինե-  
րը և անկն այ զեղի արևելք մինչև Արապանի և Ատրամանի զաշտերը  
երկարոց ճաշիմներու գոտին և Ամանոտ արևմուտք Զուգուր—օվայի  
ճարեհարուանելը Եփրոսացոցոց բանականերուն Համար անանցանելի  
տեղեր էին, ու Հողթական փարավանները կը Հարկագրվէին գիրենց կա-  
տեցնել, այս ճարեհարուտներն ընդունիլ իրենց կայսրութեան ծայրագույն  
Հյուսիսային սահմանազուխը» (էջ 106):

«Միտանիի թագափորը Սուսլլատար, զաշտակցելով Բարելանի Հեա ու  
նախ և առաջ նմանելով Ասորեստանը և կործանելով Արրապիտայի (Քեր-  
քուք) և Սանգարի (Մինճար) թագափորութիւնները և վերջապես տիրանա-  
լով աղազա Հայաստանի Հարավային ստորին սահմաններուն, կարճ ժամա-  
նակի մեջ ընդարձակ կայսրութիւն մը կազմած էր: Միտանիի Հախորը թա-  
գափորն Արատամա Ա. Եփրատական զինակցութեամբ ալ զորացած՝ Եփ-  
րատեն արևմուտք իսկ արշափնց և Թեասցոցոց Հալթելով, վանեց զանոք և  
տիրացավ Հյուսիսային Սուրիայի և Եփրատացոցոց երկրին՝ Հայկ և Կար-  
քեմիշ կեդրոններով, Հեառ նաև Տեգարամայի (տարի Մելիտանիի) երկրին  
տիրեց և իրեն զինակից ըրավ Կիզլատնայի թագափորը Սունաշուրա, որ  
կիշխեր Կասափանի և Կիլիկիա երկրներուն վրա: Այսպես տեւց վրնակը  
մինչև զրեմն Ն. Ք. 1400 թվականը, քանզի Հաթիանց Խատուսիլ Բ. և  
Դուտիսայիա Գ. թագափորները չի Հաշտոցեան Միտանիի Շուսաանա Ա.  
և Տուշրատտա թագափորներուն զեմ ճակատ բռնել» (էջ 107):

«Ճարապուսի պեղումները երևան բերած են, որ փոուզիացոցոց Հա-  
մացեղ Հյուսիսային ժողովուրդ մը, Կարքեմիշի մեջ Հաստաօված է, զայն

նախ ավարելն, ազերելն ու քանդելն Հետո Հոն դարձած է ազգարնակչութեան մեայուն ու գերիշխան տարրը: Ասիկա Հայանի է մնացորդներն այդ նորամուծ ճշակույթին — զնեքնու, թաղման եղանակի, ամբուլիանց շինութեան և այլ բաներու մեջ, զորս այդ Հյուսիսային ժողովուրդը միասին բերած է: Առանձնապէս հիշատակութեան արժանի կետ ժրն ալ ու է, որ զուգիտեան կազմանքներն գտնված է նաև Կարքեմիշի մեջ»:

Այս արշավանքի ուրիշ մեկ կտրուր Հետեանքն էր Հաթյան կամ Ենտացի ժողովուրդի մնացորդ բարձր գասակարգին զեպի Եփրատացոց երկիրներն ու Հյուսիսային Սուրիա քշումը և այդ տեղեր խտացումը, որով Ասորեստանցիք այդ տեղերն այսուհետե իբր «Քաստիներու երկիր» կը ճանչնան: Այդ զանգվածային տեղափոխութեան շնորհիվ Մալաթիայն մինչև Համա կազմվեցան կարգ մը թագավորութեաններ, որոնք շարունակեցին ու զարգացուցին Փարս—Ասիո վաղեմի ճշակույթը՝ յուրահատուկ սեղ մը, որուն պատճառեալ «Նոր—Հաստան» անունը կու տան, և որու կարկառուն մեկ Հատկանիշն է «Հաստան» կոչված տեսակ մը կոշտ պատկերազիր կամ մեհնազիր արձանագրութեաներ և անոնց ընկերացող քանդակապատկերներ: Ասանցմե գտնված են նաև Անթեպ, բայց շատ ազնիւն՝ Մարաշ, Կարքեմիշ և Մալաթիա»:

«Այս նորակազմ թագավորութեաններն են՝ Կարքեմիշն զտա Կուսմուխ (Կամազենն)՝ Սամուստի շրջանակին մեջ, Գուրգուս Մարքասի (Մարաշ) կենտրոնով, Շամալ՝ Իւլաշիյեի շրջանակին մեջ Չենեիլիի և Մարչեկեկուզու կեդրոններով, Պատինա կամ ուզիլ ևս Քաստինա (Հաթյա), Անտիոքի և Ամրգի շրջանակին մեջ (էջ 106—7 և 110)»:

«Աշուրբիշի որդի Քազլաթփալատար Ա. (1117—1080 Ն. Բ.) Ասորեստանի հին կայսրութեան ամենամեծ աշխարհակալ թագավորը Հանդիսացած մասնագորապէս Նայիրյան երկիրներու (Արեւայան Հայաստանի) վրա ըրած երեք մեծ արշավանքներովը: Քազլաթփալատար Ա.—ի իշխանութեան սկիզբները, երբ Հյուսիսային Միջագետքի Սուրարի կամ Սուրարտու երկիրն ապստամբեցած Ասորեստանի դեմ, այդ ժամանակի Հաթյանց մեծ թագավորն իր օժանդակութեամբ ըրեալ ազատամբներուն իրեն Հպատակ Կասկա և Ուրամա ցեղերն 4000 զինվոր զրկելով, որոնք Սուրարտի քաղաքները զբաղեցին: Քազլաթփալատար Ետատի թագավորն զրկված այս զորքերուն պատահեցած թիւնս Ուրֆայից և Սնվերեկի մեջանցը, և սաստիկ կոխմեք ունեցած անոնց Հեա: Կերեկ թէ զաշնակիցք քանի մը ժամանակի Հազթութեաններ ալ շահեցան, բայց ի վերջո պարտվեցան և Կասկաներն ու Ուրամաները Եփրատն արեւուաջ քաշվե-



ցան, ուր անոնք վաղուց Հաստատված էին: Ուրումաներու Հաստատված անգերն էին անշուշտ ետքեն Կոմմազենն կամ Եփրատցիք ըսված երկրին մեջ մեծ զեռին եզերամտ մտերը, ուր իրենց անվան Հիշատակը պահեր են դասական աշխարհագրութեան Ուրիման, որ է արդէ Ուրում (էջ 113) ավերակը Նիզիպն քիչ մը Հյուսիս արևելք՝ Եփրատի եզերքը և Ուրեմն բերքը, զոր Մատթէոս Ուսուցիցին (էջ 403) կը Հիշէ Սամուսատի մտերը, թերևս նաև Նշանավոր Հոռոմիս ամրոցը (Նույն, էջ 113):

Թագլաթիպալասարի Հաջորդներն իզուր կը ջանան նախկին կայսրութեանը վերահաստատելու, բայց իրողութեան է, որ Հեռեկայ երկու դարերու միջոցին Ասորեստանեան վաղերագրերը գրեթէ քուլտուրին կը լսեն: Արդեն Թագլաթիպալասարի որով իսկ Խատտիները գորանալու վրա էին, որով Մելիտիա քաղաքն այլևս մաս չի կազմեր Խանիգալաստի, այլ կանցնի մեծ Խատտիի սահմաններուն մեջ: Այսպես նոր Հաստատներն իրենց գորութեանը վերագրած ըլլալով շուրջ 1000-ին Ն. Ք. Ասորեստանցիները կը ջարդեն Կարբեմիշեն ոչ Հեռու տեղ մը, և մեծ-Խատտիի Դաշ-Նակցային պետութեանն իր կատարյալ անկախութեան վերստին տեր եղած՝ պատեհութեան ունի իր մասնահատուկ ժառանգքը զարգացնելու, և անոր անդամներն ալ մեհենագիր արձանագրութեաններով պատկերաքանդակ Հիշատակարաններ կանգնելու իրենց Մալաթիա, Մարաշ, Կարբեմիշ և այլ ոտաններուն մեջ: Անթեպի կամ Տրուքի շրջանակն ալ այդ միջոցին Հզորագետ կենթարկվի Նոր-Հաթյան մշակութի ազդեցութեան (Նույն էջ 113-115)»:

«Սալմանասար Գ. (859-824 Ն. Ք.) Հարձակեցա՞մ զեպի արևմուտք և Եփրատը անցա՞մ, Կոմմազեննի թագավորը անոր Հարկ տվա՞մ»:

«Մեծն-Ազերտանգրի մահէն Հետո Կոմմազենն մաս մը կազմեր Սելևկեան ինքնակալութեան: Կոմմազեննի գլխավոր քաղաքն էր Սամուսատը: 112-ին (Ն. Ք.) Կոմմազենն անկախ եղա՞մ»: «Կոմմազեննի Անտրոքոսը և անոր Հաջորդները Հառաջդիմասեր մարդիկ էին, և երկիրը, որ ավելի քան վեց երկար դարեր մեծ պետութեանց Հեռավոր ու Հարկատու մեկ գաղտն էր եղած, անկախութեան և ինքնավարութեան ստանալով՝ նոր զարգացման շրջանի մը թևակոխեց: Զյուզմաներ (նախկանուրէն) նեղվեցան Եփրատի վրա՝ Սամուսատի, Հոռոմիսի և Պերեկիի քով: Քաղաքներ Խորեն սկսան շինուի, պողոտաներ նորոգվեցան: Երկրագործութեան, արհեստների և վաճառականութեան ծաղկեցան, ու կերեկի թէ մասվոր զարգացում մըն ալ ծայր տվա՞մ՝ կես Հելլենական և կես արևելեան ոճով»:

«Կոմմազեննի թագավորները թնիկ զեղարժեքս մըն ալ զարգացուցին, որ գլխավորապես մասնավոր ճարտարապետական ոճով մը շինված

և քանդակներով ու արձանագրութիւններով այ գարգարձած մաւոր-  
 ձաններն կը քաղկանար: Այս հարտարապետութիւնն ու քանդակագոր-  
 ծութիւնը զաղէմի «Հատյան» տե՛ն ժառանգ մնացած՝ քիչ մը կոչա, այլ  
 կենդանի և ապագորիչ Հասկութիւն մ'ունին իրենց մեջ, որ առանձին  
 դասակարգի մը մեջ կը զնն Կոմմաղենյան Հիշատակարանները: Ասանք  
 կը գտնվին Գարազուշ, Մեսիյոնք, Սամուսաթ, Գուրսենիք և մանա՛վանց  
 Քեօթիթայի մօտ՝ Քելլի լեռան վրա: Քելլի լեռան խիստ Հոյակապ ու Հս-  
 կա Հուշարձանը իր արձանագրութիւններով ու քանդակներով մեծ և  
 թանկագին յույս սփռած է ն. Ք. երրորդ դարու Հայոց պատմութեան  
 մութ մնացած մասերուն վրա: Սույն արձանագրութիւնները Հունարեն  
 տաւերով ու լեզվով են:

«Կոմմաղենի թագա՛վորաց Հաջորդութիւնը (մ.թ. 17-ին) ընդհան-  
 ցա՛մ, երկիրը մինչև 38 թվականը Հռոմեացիոց մարդ եղա՛մ և Սուրիա  
 եահանգին ամենաՀյուսիսային գա՛վառը կը կազմեր: Այս շրջանին սկիզ-  
 քը Գերմանիկոս կայսրը Սուրիա մեջ կազմակերպչական կարևոր գործեր  
 կատարեց, թէ՛ գինձորական և թէ՛ քաղաքային: Մինևույն ժամանակներն  
 իր Նշանա՛վար երկն ուսումնասիրող Սարաթոն իր Աշխարհագրութեան մեջ  
 Հետևյալ տեղեկութիւնները կուտա Կոմմաղենի և անոր Հարակից գա-  
 վառներուն վրայո՛ւմ: «Ասորիք (Syria) սահմանված է Հյուսիսն Կիլիկիա-  
 յո՛ւմ և Ամանոս լեռներո՛ւմ, Ժոցն մինչև Եփրատի կամուրջը (այսինքն՝ Խ-  
 սոսի ծովածոցն մինչև Զլուզմայի Կոմմաղենն) 1400 ասպարեզ Հեռա՛մ-  
 քութիւն է և կը կազմն վերահիշյալ (Հյուսիսային) սահմանը...:

Սկսյալ Կիլիկիայի և Ամանոս լեռներն՝ կը Նշանակենք իբր և Ասո-  
 րիքի մասերը՝ Կոմմաղենն...: Մանրամասնորեն նկարագրելով, կըսենք  
 թէ՛ Կոմմաղենն Համեմատարար փոքր երկիր մըն է: Կը բովանդակն  
 ամուր քաղաք մը, Սամուսատ, որու մեջ էր (Կոմմաղենի) թագա՛վորաց  
 ապարանքը: Ներկայիս ատրկա Հռոմեական գա՛վառ մըն է: Խիստ բա-  
 րերէր, թե՛ն փոքր, Հողամաս մը կը շրջապատն զայն (Սամուսատ): Հոս  
 է Հիմա Զլուզման կամ Եփրատի նա՛վաղամուրջը, և անոր մաս կը գտն-  
 վի Սելևկիա, Միջագետքի ամրոց մը, զոր Պոմպեոս Կոմմաղենացիոց  
 շնորհեց: Հոս Տիգրան ասե՛ն մը բանտարկեց և ապա մեռցնել տ՛վով զՍե-  
 ղենն, մականձանայն Կղնուպարա, զոր և Ասորիքի իշխանութենն գր-  
 կեր էր»:

«Ապա կը Հաջորդն Կուռեստիկայի գա՛վառը, որ կը տարածվի մինչև  
 Անտիոքիներ: Հյուսիսային կողմն են Ամանոս լեռ և Կոմմաղենն: Կուռես-  
 տիկա կը տարածվի մինչև այս տեղերը և կը զօղչի անոնց: Հոս կը գտն-  
 վի քաղաք մը Գինգարոս, Կուռեստիկայի միջնաբերդը և Հարմար թաքս-

աոց մը ավազակաց, և անոր մասն է Հերակլետն անուն տեղ մը: Այս ան-  
զերուն մասն էր, որ Պակուր, Պարթևաց արքային երիցազուն որդին, որ  
Ասորիքի վրա արշավեր էր, հաղթվեցա՞վ ու սպանվեցա՞վ Վենտիտոսն»:

«Անտիոքի արևելյան կողմը դեպի Սփրտա կը գտնվին Բամբուլե  
(Մերեծ), Բերիս (Հալեպ) և Հերակլեա (Պապ) փոքր ավաններ, որ նախա-  
պես Հերակլետի որդու ինստիտուցիայի իշխանության տակ էին: Հերակ-  
լեա Կուստատիկյան Արտեմիտի մեհյանեն քան ապարեղ հետու է»:  
Այս վերջին գավառը Քայրոսնիս կը կոչվեր:

«Ներսն կայսեր օրո՞վ Կլիկիս վերամիջցա՞վ անշատ մարզպանու-  
թյան մը: Կոմմագենների վերջին թագավորն էր Անտիոքոս Գ, որ (մ.թ.)  
38–72 իշխեց: Այս բոլոր թագավորները զբաղ ալ կոխած են իրենց  
անուններով ու պատկերներով, որոնց համար տես– E. Babelon, *Roi de  
Syrie, de Commag'ene et d'Arménie*—Հոյակապ գրամագիստական գործը»:

Կոմմագենների աշխարհը մեր 72 թվականին վերջնականապես նվաճ-  
վեցա՞վ, ու Սուրիա մեծ նահանգին մաս եղա՞վ՝ դառ կառավարչի՞ց մը  
(նույն, էջ 118–170): Սուրիա համար ըսված մեց լեզուներեն մեկը Սա-  
մուսասա կը մնար և կերնի թէ՛ մեկն ալ Անթիպի շրջանակին մեջ:

«Կոմմագենն մեր թվականի Բ. և Գ. դարերուն կը թվի թէ ավելի ըն-  
դարձակվեցա՞վ դեպի հարավ՝ ներսեւելով գոնե Կուստատիկան ալ և  
առանձին նահանգ եղա՞վ, անշատվելով «Սուրիա» նահանգեն: Վերջա-  
պես մեր թվականի 290-ի առեկները փոխվեցա՞վ սույն Կոմմագենն անու-  
նը, և նահանգն ալ այնուհետև պաշտոնապես Սփրատացիք կը կոչվեր:  
637-ին արաբներ զբաղեցին Կոմմագենեն:

«Բարսաղիքրի խիսա շահեկան պարագու մըն ալ կը հիշե, թե կանու-  
թեն Ասորիք հաստատվող այս հայոց իր օրո՞վ գործածած խոսակցական  
լեզուն վերին Հայաստանի լեզուներեն ազգված էր: Հեղինակը կը պատ-  
մե, թէ այնուհետև հայեր ավելի ու ավելի մեծ թիվերով Հայաստանե  
դաղթեցին Սփրատացիոց երկիրները և Հեռոզեստ ավելի եկեղեցիներ ու  
վանքեր, նաև դուռներ ու ավաններ զբաղեցին ասորիներեն» (նույն, էջ  
118–170):

«Ժ. դարու քառասնական թվականներուն Հալեպ ունեցա՞վ կորովի  
ամիրա մը Սէյֆ–էտ–Տեֆլէ անուն, Համզանյան ցեղեն, զոր հույներ  
Խարզան կը հնչեին: Ասիկա ուխտած էր Իսլամի առաջին դարու նվաճ-  
ումները նորոգել, և ուստի զորավոր բանակներով Հարձակումներ կը-  
ներ կայսերական երկիրներու վրա: «Ազուլ–Հասան–Ալի–Սէյֆ–էտ–Տէ-  
օվլեի ժամանակ,– կրտ Արա. Արքեպիս. Սուրմեյան,– Հալեպ կը նկատ-  
վեր մայրաքաղաքը ընդարձակ պետություն մը... որ կը բովանդակեր, ընդ

այլս, Կիլիկիան, Մալաթիա ու Տիլամալեքերի նահանգները՝ մինչև Այաթ Վանա լճին վրա: Հայկական Հյուսիս իր գլխավոր հրապարակներն էին Կյուսիս, Ռաֆանն (Քերես Թեյ-էրֆաա), Ալադ, Հաթնադ (Այնթապ), Ռուս-Քալե, Հրանի-Մանսուր, Սամուսաա և Մարաշ» (Հայեպ, էջ 912-3):

«957-ին Հոսոմները Հարձակել ուզելով ուզական Հայեպի վրա, Աէյֆ-էա-Տէօլլէ անոնց դեմ ելալ: Երկու բանակներն ընդհարեցան Տյուքի քով, ուր Հոսոմները Հազթեցին և Աէյֆ-էա-Տէօլլէի ազգականներն շատերը գերի առին: Ապա Սամուսաաը գրավելով հրո ճարակ ըրրին: 969-ին Բյուզանդացիք գրավեցին Կիլիկիան, Եփրատացիքը (Կոմսագեննե), Մելիտոսնե և այլ Հյուսիսային նահանգներ» (Ռույն, էջ 193-195):

Հայ ժողովրդի արտագաղթը իր ընդհանրական և Հաստատվիլը Եփրատացից երկիրը, Կիլիկիա և Փոքր-Ասիայի այլևայլ մասերուն մեջ, ու Հետագա դեպքերու զարգացումն ու պատճառները լավ եւ ըմբռնելու Համար Հարկ և անհրաժեշտ է տեղեկանալ արարներու և բյուզանդացիներու բռնած դիրքին ու քաղաքականության Հայաստանի և Հայ ժողովրդի Հանդեպ, որուն իբր անմիջական Հետևանք քայքայվեցավ Հայոց պետությունը բուն Հայաստանի մեջ և ստեղծվեցավ նոր Հայրենիք մը, Հայ ժողովրդի մեկ մասն Համար Կիլիկիայի մեջ. նախապես Հան տեղավորված Հայերու աջակցությունով ու ջանքերով:

Այժմ միջանկյալ Հարկ է ծանոթանալ արյունարբու, ընչաքաղց բուսակալ Ալադ-Ճաֆար-Մանսուր խալիֆային: Մոտացություն տրվելով Մանսուր-Իյան-Ճաուևային (որ Ատիսմանի բերդը վերանորոգած և իր անունով կոչված էր Հրանի-Մանսուր՝ Մանսուրի բերդ), սխալմամբ Հրանի-Մանսուրը ճանաչել սկսան Մանսուր խալիֆայի անունով: Այս Մանսուրի ժամանակ և անկե առաջ արարական արշավանքները շատ սուղ արժեքին Հայաստանի և Հայ ժողովուրդի վրա. խժտություններ և անլուր տառապանք, որ սարքեցին արար ոստիկանները Նախիջևանի, Դվինի, Արնն քաղաքի և ամբողջ Հայաստանի մեջ, Հիմքն սարսեցին Հայ ժողովուրդի պետական մեքենան, մշակույթը կասեցուցին, Ֆիզիքապես բնաջնջեցին, գերեզարեցին, տնտեսականը խորտակեցին, թալանեցին, կոզոպանցին ժողովուրդի ունեցածը և տիրեց ամայությունն ու սև սուղ ամեն ժողովի մեջ: Ինչպես ամբողջ Հայաստանը, մասնավորապես Ատիսմանը և չրխակայքը, շարաշար կրեցին ծանր լուծը՝ լինելով անմիջական Հսկողության տակ և կեդրոն գինեգրական գործողություններու, ընդհարումներու, ստվար բանակներու շարժման ճանապարհին վրա:

### 3. ԱՏԻԱՄԱՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ՏԻՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ԵՐՁԱՆԻՆ

Հայ պատմիչներ ընդարձակ կերպով նկարագրած են արարական տիրապետության շրջանի խժոճությունները, իսկ այս խժոճությունները՝ իրենց գագաթնակետին հասան Արքայաններու իշխանության ժամանակ:

Մրվանը Սուբին մեջ չարաչար հաղթվեցա՞յ, փախավ եգիպտոս ու Հոն սպաննվեցա՞յ 750 թվականին: Եռյիֆայությունը Գամակոսեն փոխադրվեցա՞յ Իրազ: Եռյիֆայությունը անցավ Արքայան առձմին, Ապու—Արքայու ժառանգեց գահը, որ արար պատմիչներ գինքը անվանած են ռաֆֆաշ (արչունարրու)՝ իր անչուր գագաթնություններուն և ռիբներուն համար: Ասոր օրով արարական տիրապետության աակ գանվող երկիրները և մասնաֆորապես Հայաստանը իրիստ դաժան ու անտանելի կնչկերումներու ենթարկվեցան, մասնաֆորապես ծանր հարկահանության պատճառով: Ապու—Արքայու իշխեց միայն երեք տարի (750—754թթ.) և մեռավ: Այս երեք տարգա միջոցին եղալը՝ Ապու—Ճաֆար—Մանուրը, պատեցա՞յ ամբողջ գրաձված երկիրները և Հարկահանության անտանելի ծանր սխտեմ մը հաստատեց:

Գահը անցավ Ապու—Ճաֆար—Մանուրին: Սա, բացի անգլխութենն, նաև արծաթանոց և ընչաբազց էր և իր այս օգահությունը Հիֆանդության տասինանի հասած էր: Իհարկն դանձր դիգելու համար յուծը պիտի ծանրանար Հայաստակ ժողովուրդներու վրա՝ Հարկահանության միջոցով:

Այրիներեն, որբերեն, մեռածներեն հարկ կը պահանջեր և կը տանջեր, քահանաները ձեծնչ կուտար՝ մեռածներու անունները հասկնալու համար: Իրբ Հեռեանք այս բուռություններուն նախարարներ և ժողովուրդը կը գիժեին Բյուզանդական երկիր:

Ապու—Ճաֆար—Մանուրը միջին Ասիայի կրտավայրենի ցեղերեն գերիներ բերա՞յ և գինվորապրեց, հաստատեց վարձկան գինվորության սխտեմ, հաջորդաբար ուրիշներ կամովին եկան ու գինվորազրվեցան:

Արքայանները ճամբա բացին այս թուրք ցեղերուն առջև, որոնք Հեռապային կործանեցին արարական պետությունը:

Ապու—Ճաֆար—Մանուրը թաղավորեց 21 տարի և մեռավ 775 թվին: Իրեն հաջորդեց որդին Մուհամմեդ—ալ—Մահաին (775—785): Սա շոալ էր, ուտի հարկերը ավելի ծանրացուց:

Հայաստանը իր սուղմական գիրքի պատճառով կուֆանձոր եղած էր արարներու և բյուզանդացիներու մեջ, երկու քն ալ կուգեին օգտագործել

Հայոց ռազմական ուժը ի նպաստ իրենց: Այս դրուժյունը ծանր կշռեց նաև Ասիականի և շրջականերու վրա, մանրամասնելու կարիք չկա, որովհետև շատ զբոլած է այս մասին:

«9-11-րդ դարերում մեծ փոփոխություններ են կատարվել Արևմտյան Հայաստանում, որը շարունակում էր գտնվել Բյուզանդական կայսրության տիրապետության տակ: Կայսրությունն իր դիրքերը Արևմտյան Հայաստանում ամրապնդելու և Հայաստանի այդ մասի բնակչությունը բյուզանդականացնելու համար ամեն տեսակի կամայականություններ կատարելուց բացի՝ դեռևս 6-րդ դարից սկսած բռնի ուժով պարբերաբար երկրից դուրս էր տանում բնիկ բնակչությանը՝ Հայերին:

«Բյուզանդիայի և արարական խալիֆայության պայքարի ընթացքում (որը տևել է երեք դար. 7-10դդ. և որը մղվում էր Հայաստանի, Փոքր-Ասիայի, Կիլիկիայի, Սիրիայի, Միջագետքի համար) Հայաստանը, Հատկապես նրա արևմտյան մասը, բազմաթիվ անգամ ենթարկվել է ավերումների: Բյուզանդացիների և արաբների արշավանքները սովորաբար եղատակ ունենին Հակառակորդի տերիտորիաները կողոպտելու, ավերելու և խաղաղ բնակիչներին գերեզարելու: Այդ երեքդարյան պայքարի ընթացքում խիստ տուժում է խաղաղ բնակչությունը, Հատկապես Հայ բնակչությունը, որը բնակվում էր ոչ միայն Հայաստանում, այլ նաև սահմանակից այլ երկրներում, որոնք նա զարմեղ էին արարա-բյուզանդական պայքարի առարկա: Արարական և բյուզանդական բռնակները կողոպտում և ավերում էին Հայաստանի քաղաքները և գյուղերը, բնակչության մի մասին ոչնչացնում էին, մի մասին՝ գերում կամ ուղղակի բռնի կերպով գաղթեցնում այլ երկրներ»<sup>21</sup>:

Կիւմրուշթեքեն ամիրան 1071-ին անբաժ էր Հիւսնի-Մանսուրի երկիրը և տեղւոյն իշխանները սպանեա՞ծ<sup>22</sup>:

<sup>21</sup> Պ. Ա. Չալոբյան, Գայաստանի պատմական աշխարհագրություն, սրակ 9, Երևան, 1954, էջ 75:

<sup>22</sup> Մատթեոս Ռոտայեցի, էջ 225: Պատմություն Մալաթիոյ Գայոց, էջ 218: Նաև տես ՉԵՐԿ. ԱճԳՐԱՆ Ալիքսանյան, Պատմություն Սեբաստիոյ, էջ 170:

#### 4. ԱՏԻԱՄԱՆԸ 11-12 ԳԱՐԵՐՈՒՆ

(Փիլարտոս՝ Վահրամ Վարամնունիի իշխանությունը)

**Մ**ատթէոս Ուռհայեցի Հետեյալ ձեռով կը ներկայացնէ Փիլարտոսը:

«1072 թվականին Փիլարտոս իշխանը, անորն և ամենաչօր, որ սատա-  
նայի խկական ծնունդ էր, Տրոսների անկումն Հետո արեց երկրին, մեղ-  
եոզ մարդ մը: Սա սկսով Քրիստոսի Հազմաաջայներուն զեմ պատերազ-  
միլ, և Հոր ու մոր կողմն Հայ էր, մանկության ասնն Հարան-Մուր (Ատի-  
աման) գաղտնի Զորգրի-Վոզեան վանքին մեջ Հորեղորդը քով կապրեր:  
Վանքննն կամ, արեց շատ մը երկիրներու և քաղաքներու և շատ մեծամեծ  
իշխաններ անողորմարար կորսնցուց և Մարաշի մեջ բնակեցաւ» (էջ 206):

Ուռհայեցիի սեղմ տողերը ընդարձակ պատմության մը կը բնութագրեն է  
և սակայն շատ բան կարելի է հետեցնել: Հայտնի է, որ Փիլարտոսի ծնող-  
քը շատ վաղուց Հաստատված էին Մուրֆագի դարչային, բարերեր և որ-  
գավանդ Հոգին վրա, ան մանկությունը և ամբողջ կյանքը անցուց այդ շը-  
խանակին մեջ, որով քաջ ծանոթ էր երկրի բոլոր անկյուններուն, որը իր  
Հետազա գործունեության և ծրագրներուն Համար շատ օգտակար եղավ:  
Պարզ է, որ ան կ'ավեցավ կեղծ քրիստոսիս և ընչաքաղց խաչակիր իշխան-  
ներու, նույնքան Հայոց թշնամի՝ Հույներու և թերևս սատրիներու և աշ-  
խարհիկներու զեմ և մաքրագործեց զանոնք ու անոնց անդ անզօգործեց ան-  
տուն, Հայտնական, բնիկ երկիրը լքած Հայ ժողովուրդի՝ ցիրուցան բեկոր-  
ները: Ի բնն ուշիմ այս պատանիին Համար նեղ եկավ վանքին վերացական  
և խորհրդավոր միջավայրը ու անցով Հակասակ կողմ զեպի բանակ և  
զինվորական կյանք, ուր կ'ավելով պետք էր սեր կանգնել ժողովրդի իրա-  
վունքներուն և պաշտպանել անոր ֆիզիկական զոյւթյունը, և Հասով ան  
գորաձարի աստիճանին ու պատերազմը եղավ իր մասնագիտությունը:

Միջայել Ասորի Հետեյալը կ'ավանդն Փիլարտոսի մասին:

«Հելուպակներն Հայ ջեղեն, թվով իրր 50 հոգի, միտրանեցան և  
խուսմը մը կ'աղմեցին: Թուրքերու արշավանքնն օգավելով՝ իրենք այ  
մտան (Հոսսոնոց աշխարհը) և ինքզինքնին ավին ավաղակության: Մա-  
րաշի դաժմախն մեջ անոնք Հանգիպեցան երիտասարդ մարզու մը՝ նմա-  
նակս Հայ Շիրքազ գյուղնն Փիլարտոս անունով»:

<sup>70</sup> Գրգրի - Վոզեան վանքը, Քեսուի արևելյան կողմը, Մուրֆագ (Շիրաք) գյուղի հարավ արևե-  
լյան կողմը, այժմ Մարտուզ կոչվող գյուղի վայրը, Քեսուն 10 քմ. հեռու, Կոթ-Սուր  
օժանյակ գետակնու անկն ձախ ավին և Քեսուն-շայ և Աղ-Աու ակնեյի մեջտեղը:

Տեսնելով, թէ ան քաջակազմ, խորամանկ և չարքաշ էր, ու վարժված կազուպաերու և սպանելու, զանի իրենց Հանկուչին և ան իրենց պարտազլուխն ու առաջնորդը եղավ: Ու քանի որ այս զավառներն առանց տիրոջ ու տիրականի մեացքեր էին, այս Հայերն ալ թուրքերուն Հեռ մինևույն ժամանակ կը կոզոպանին: Վերջպես Փիլարտոս տիրացավ ամրոցի մը կիլիկիս մեջ, մեծ թվով Հայեր Հաճաքվեցան իր շուրջը և նա այսպես շարունակեց տիրանալ կիլիկիս ամրացյալ կողմերուն մեծամասնության:

Ջայս իմանալով, Հոռոմոց կայսրը անոր ընծաներ զրկեց և, վերջպես, Փիլարտոս ինքը գնաց Կ. Պոլիս և Հոռոմներն ուրախացան իր վրայով, անոնք անոր ավին սակեղեն զրահ մը և զանի Անաստոս Հաստատեցին: Ան մեկնեցավ, իշխեց Տարսուսի և Մուզվեստի, ան զբաղեց Մարաշը, Բեսուսը, Թապանը, Եղեւթան, Անարզարան և մտավ Անտիոք: Ան զորացավ և Թափանցեց ՋաՀանի երկիրը և Մելիտիեն: Հաղթական ըլլալով, պատերազմեցավ թուրքերուն դեմ՝ Հոռոմոց բանակներով»<sup>19</sup>:

Ը. Պոզոս Վ. Համելյան ևս կը գրեն. «ԺԱ գարուն Փոքր-Ասիա սկսան արշավել սելճուքներ, որոնք շուտով խորտակեցին Բյուզանդական Հոգնած զորքերը: 1057-ին անոնք մինչև Կապադովկիա Հառաջացան, այրեցին Մալաթիան: 1071-ին Մանազկերտի մեջ Ջախջախիչ Հաղթություն մը տարին կայսեր վրա և մինչև իսկ զինքը գերի բռնեցին: Այսպիսով Բյուզանդացիք զարձայ ստիպվեցան ետ քաշվիլ իրենց սահմանները:

«Սահայն Թոմանոսի ձեռքին տակ կար Հայ զորավոր մը. Փիլարտոս Վահրամ անունով, որ կայսեր գերի բռնվելն վերջ սկսավ ինքնազուխ կերպով գործել արևելյան սահմաններու վրա: Փիլարտոս կատարյալ արկածախնդիր մըն էր և սահայն Հաշոգեցավ ընդարձակ երկիրներու վրա տիրել: Խարբերա Թոմանապոլիսն սկսյալ մինչև կիլիկիս Տարսոն քաղաքը, մեջը ունենալով Մուլտիիան, Մարաշը և Թապանը, Բեսուսը, Անարզարան և Մամվեստիան: Փիլարտոսի վազանցուկ իշխանությունը այն օգուտը ունեցավ, որ Սելճուքներն Հայրածված Հայ զաղթականներ եկան իր զբաղված երկիրներու մեջ Հաստատվելու: Այս կերպով Հիշյալ քաղաքներու մեջ խմբվեցան Հայեր և Փիլարտոսի ժաՀեն վերջ շատ քաղաքներու մեջ Հայ իշխաններ կառավարել եղան»<sup>20</sup>:

<sup>19</sup>Ազգեմ կը նշանակի ուղիի ծագ: Թեոմեմ 19 ցւմ. դեպի արևմուտք Կայմըր Քանքի ավանդները կան (Ճշգրտած Միսակ Օսլախորթյանի կազմած բարձրանմ) (Ա.Չ.): Շիրազ՝ արդի Սուրբազ գյուղն է. Գեներալի և Արխամալի Օնչուրի: Մինչև 1915 թվականը հայեր կապրելն հեծ: Փիլարտոսի ձայնի տես. Պատմութիւն Ապաքիոյ Դայոց. էջ 222: Եւս Պատմական Պատարանի ատմագրութեց, էջ 69:

<sup>20</sup>Պատմ. Ամբիսի հայոց, էջ 208:

<sup>21</sup>Խարբեր և իր զավակներու, էջ 32:



«Միջոյակ Ասարի և Բարհէրբետ միաժամանակ դարմայ կը գրեն թէ՛ Անիի կործանման Հաշորդ տարին՝ արկածախնդիր, փախստական Հայոց ուրիշ ազնւի մեծ խումբ մը Հառազ Մելիտոնին, 300 ազնւականներն ըստ պահանջի, որու գլուխը կը կենային «Գազրիկի որդիները» – Գազ-Վասի և իր Բազրտտ եղբայրը, իսկ խումբին մէջ էին Հազանորն Բազրտտի որդին Սմբատ, Վեստ Խաչատուր Անեցի, Գնորգ Շիրակացի և ուրիշ անվանի քաջերն էս: Հուշն կառավարութիւնն ասոնց Հետ ալ Համաձայնեցա՞մ և գանձեր գինձորական–գորշական պաշտոններով քաշխեց Եփրատացոց երկիրներուն, Ռուհայի, Անտիոքի, Կիլիկիայի և այլն:

«Կեդրոնական Ասիայնն զեզի արևմուտք արշավեցին սելճուզ քարքարոս և վրանարնակ ժողովուրդներ, 1018-ին կործանեցին Արծրունյաց Թագավորութիւնը և սկսան Հառաջանալ զեզի Փոքր–Ասիա, որը փոխեց Մերձավոր Արևելքի ետկատագիրը: Բյուզանդացիները կազմաւուծած էին Հայոց բանակը և պետական մեքենան, իսկ սելճուզներ, Հայաստանի տիրելն Հետս, Հոն Հաստաավեցան և նորանոր թուրանական ցեղերով լծցուցին իրենց զբաղած տեղերը: Այս դարասկիզբը սասանեցուց Հայոց պետութեան Հիմնաքարը և ստեղծեց եզնաժամային սուր ատենալ մը: Կործանման քաղաքներ, գյուղեր, կողոպտեցին երկիրը և ծայր տվա՞մ արտագաղթի զանգվածային Հոսանք մը զեզի արևմուտք մինչև Միջերկրականի մոտերը՝ Հանգիստ վայր մը գտնելու Համար: Արծրունյաց, Բազրտունյաց և Կարուց Թագավորութիւնները վերացան և փոխադրվեցան Անրատիա, Փրզու և Մամնդա՞մ:

«Թոմանոս Դ. Տրոմն կոյսեր 1071 պոստոս 19-ին Մանազկերտի ետկատամարտին պարտվելն և գերի իյնալն Հետս, կայսրութիւնը թուրքովին փոխվեցա՞մ և օրհասական դարձա՞մ Հայ ժողովուրդի Համար: Սելճուզները զորացան և սկսան Հեազհետն Քնշել Հայ իշխանութիւնները: Բյուզանդիանի սահմանները պաշտպանող պատգարները քանդվեցան, Հոսամները մեացին զեմ առ զեմ սելճուզ թուրքերու և կրեցին իրենց մոլեռանց կործանման և Հիմար քաղաքականութեան պատիժը:

«Այս թվականին Փիլարտոս կը գտնվի Խարբերտ, կոյսեր պարտութեան լուրը տանելու՞մ պետ իրր պաշկետի զորքերու Հրամանատար–պատեհ առիթնն պակնելով ջիր ու ցան և անկանոն նահանջող Բյուզանդական բանակի գինձորներն մաս մը միացուց իր բանակին, անոնց կորով ներշնչելով թումբ կանգնեցա՞մ սելճուզ Հորդաներու Հառաջիտացման: Հոսասան և իմաստուն ու խիզախ, սուանց վարանելու, ծրագրեց իր գործունեութեան ուղին: Գազթականութիւնը տեղավորեց Հարմար վայրեր. Գազ–Վասիլը բնակեցուց Քեասունի մէջ, Ռուբները Հանձնեց անոր Հոգա-

ծուխյան, մյուս իշխանները ըստ Հարմարության բաժնեց այլևայլ վայրեր ստեղծեց անկախ իշխանություն մը, և ինք եզաւ փաստորեն իշխանաց իշխան:

«Իր ծրագրին Համաձայնությունե Հայտնեցին Մարտչի Թաթուլ, Մելիխանի Գարրիել իշխանները, Ռարբերդի Լեվոնս Կուրազազաւոր Ատոմ Արծրունի՝ Մեքաօախ մեջ, Գազիկ Աշոտյան՝ Կեսարիո մաս, Գազիկ Աբասյան՝ Մասնդալի մեջ, Տարսոնի Աղլղարիք, Անտիոքի մեջ՝ Վասակ Գահլազունի, Ուրֆայի Վասիլ Ապուքրայան և ուրիշ մանր իշխաններ, ընդամենը՝ քսան, նաև մի քանի խոյամ էմիրներ օժանդակ Հանդիսացան իրենս<sup>20</sup>: Այսպիսի իսհանությունը կազմակերպված իշխանությունը եղավ կախաւր Կիլիկիայի Ռուբինյան Թագաւորության, որուն իսկական հիմնադիրն է Փիլարտոս, որը պատիվ կը բերե իրեն:

Թ. Խ. Լակոբյան ևս կը գրե. «Փիլարտոս Վարաժնունին Բյուզանդական Հայ Հաջողակ զորաւարներէց մեկն էր, և օգտվելով իր այդ զիրքից ու Բյուզանդիային սելճուկներէ կազմից սպառնացող վտանգից, նա կարողացավ ստեղծել մի ընդարձակ իշխանություն: Փիլարտոսը Ռոմանոս կայսրի կազմից նշանակվել էր Ռոմանոպոլսից (Քալու, Արածանիի ափին) մինչև Մելիխան (Մալաթիա, Եփրատի աջ կողմում) և Անտիոք ձգվող սաղմական կարևոր գծի զորքերի հրամանատար: Նա օգուտ քաղեց Հայերի մեջ Բյուզանդական կայսրության նկատմամբ եղած խորը ատելությունէրց, որն առաջանում էր կայսրության ծանր Հարկային քաղաքակաւթյան, կրօնական Հալածանքների և նորահատուտ Հայկական իշխանությունների իրավունքների սանահարման Հետեանքով:

«Մանազկերտի 1071 թ. նահատամարտի ժամանակ Փիլարտոսը կայսրության պահեստային զորքերի հրամանատարն էր և գտնվում էր Ռարբերդում: Նա կարողացավ այդ ճակատամարտում ջախջախված և ետ փախչող բյուզանդական բանակի մի մասը կանգնեցնել և նրա մեջ ներդնել արիություն և, իր զորքերի հետ միացնելով, կասեցնել սելճուկների առաջխաղացումը դեպի արևմուտք:

«Այսպէս, նա կարողացավ օգտվել ամեն մի առիթից և ստեղծել գրեթե ինքնիշխան մի լոյնատարած իշխանություն, ազա Հեռոզհետե ավելի ընդարձակել այն: Նա իր Համար իշխանանանիստ գարմըց Գերմանիկ (Մարաշ) քաղաքը:

«Բյուզանդական կայսրությունը այդ ժամանակներում ի վիճակի չէր Փիլարտոսին անհանգստացնելու, որովհետև վերջինս մի Հակա տերի-

<sup>20</sup>Պատմ Անքիւի, էջ 208:

տորիայի վրա պաշտօնական էր կայսրության սահմանները սելջուկներից և իրեն անվանապես համարում էր կայսրության սոսի պաշտոնյա:

«Փիլարտոսի իշխանությունն իրենից ներկայացնում էր Հայկական մի շարք իշխանությունների կոնգլոմերատ: Նա ինքը փաստորեն կատարում էր «իշխանաց իշխանի» պաշտոն:

«Մանազկերտի պարտությունից Հեռո Փիլարտոսի Հեռո միաժամանակ կայսրությունից իրենց անկախ Հայաստանիցին նաև Աերաասիայի, Մամեզազի և Պիզայի իշխանությունները: Փոքր Ասիայի արեւելյան սահմանադիրին առաջացած այս ընդարձակ իշխանությունը, սակայն, չկարողացավ մինչև վերջ նա չպրտել սելջուկյան Հորդաններին: Վերջիններս 1079—1080 թ.թ. Փիլարտոսի իշխանության Հյուսիսային շրջանները գրավելով անցան Փոքր Ասիայի խորքերը: Նրա իշխանության շրջանակներում մնացին կամազները և շրջակայքի մի շարք մարզեր:

«Փիլարտոսը իր իշխանությունն անկումից փրկելու համար զիջանագրական բանակցություններ է սկսում Մելիք—շահնի և Բաղդադի իսլամիստության Հեռո: Սակայն գրանք ևս չփրկեցին նրա իշխանությունը կործանումից: 1086թ. սելջուկները գրավեցին և վերջ տվին Փիլարտոսի իշխանությանը:

«Փիլարտոսի այդ իշխանությանը վերջ տալուց Հեռո նրա առանձին գաղափարներում ու շրջաններում եղած մանր իշխանությունները ձգտեցին համակերպվել առեղծված իրազրության Հեռո: Բազմաթիվ Հայ իշխաններ առանձին իրենց Հպատակությունը Հայտնեցին Մելիք—շահնի (1072—1092թ.թ.) և մնացին իրեն իրենց գաղափարի իշխողներ: Մելիք—շահնի մահից Հեռո, նրա սելջուկյան պետությունը սկսեց քայքայվել և նրա ներքում առաջացան խոսովություններ ու կատաղի պայքար, Հայկական իշխանություններից շատերը դրանից օգտվելով անկախացան և նույնիսկ կարողացան ընդարձակել իրենց իշխանությունների սահմանները: Այդ իշխանություններից էին Մարաշի, Քեսունի, Եղնիսի, Անգրիտների (Մարաշի մաս), Պիրի (այժմ կոչվում է Պերեջիկ, գտնվում է Եփրատի վրա՝ Եղնիսի մաս), Կարհառի և այլ իշխանություններ»<sup>30</sup>:

«Թոժանտու կայսեր Ալաուդին մաս պարտվելին քիչ Հեռո զեւթք մը պատահեցավ, որ ուշադրության արժանի է, զիխափորապես անոր համար, որ երևան բերավ սպա մը, որ շուտով կայսրության գործերուն մեջ առաջնակարգ դիրք մը պիտի գրավեր թէ Ասիո և թէ Եվրոպայի կողմերը: Այս է Գևորգ Մանիակես, այդ միջոցին Տյուք անուն փոքր նահանգի մը կա-

<sup>30</sup> Պ. Խ. Գևորգյան, Չախտումի պատմական աշխարհագրություն, արևմ. Պ. Երևան, 1954, էջ 92:

աւարիչ էր: Կայսերական բանակի փախուստն Հնառ, 800 Հոգին բաղ-  
կացյալ Արարոց վաշտ մը երեցամ պարիսպներուն տակն այն բերդին  
(Համառորն Անթեպի), որ Մանիակն կը նստեր և անոր գումեց կայսեր  
մահը և Սուրբո մեջ Բյուզանդական զորութեան խորտակումը: Անոնք  
պահանջեցին, որ Մանիակն խնդրէր պարսպ ամրացը՝ սպանաւորով Հա-  
ջորդ որը Հարձակիչ անոր վրա և ներքը գտնվող ամեն Հոգի ուրի անց-  
նել: Մանիակն ժառանց, որ անոնց պահանջին եղանակը կամ կը մատ-  
ներ անոնց տկարութիւնը և կամ թէ զամանանութիւն կար գործին մեջ,  
ուստի առաջարկեց այդ գիշեր ալ բերդին մեջ մնալ, որպէսզի նահանջի  
Համար պատրաստութիւն տեսներ: Արարներ Համանեցան և լիակատար  
կեր ու խումն Հնառ, խոր քունը մեջ ընկզմեցան: Մանիակն գիշերին իր  
պահակազորով ելալ Հարձակեցամ քնացողներուն վրա, մեծ ժառը սպա-  
նեց և նախապես կայսեր բանակատեղինն արարներու կողմուտանը՝ 280  
ուզտի բռն, թափեց անոնցմն, և սպանյալներուն կտրված քիթներուն ու  
ականջներուն Հնա կայսեր ընծա զրկեց: Մանիակն իբր վարձարու-  
թիւն իր այս քաշազորութեան, կտուավորիչ կտրվեցամ Սաորին Արմե-  
նիս, որու մայրաքաղաքն էր Մամուստա: Երկու տարի վերջը Մանիակն  
Եգեան (ՈւռՀայի) ալ տիրացամ: Մտովնու ՈւռՀայեցին կը Հարն, թէ՛  
երբ Մանիակն ապա պաշտանով ուրիչ տեղ փոխադրվեցամ, վերահիշյալ  
Ապուրապը կտուավորիչ կտրվեցամ ՈւռՀայի»<sup>11</sup>:

Մտովնու ՈւռՀայեցի կը շարունակէ. «Այս ժամանակ նենգամիտ Հո-  
ռոմներու կողմն Անտիոքի շուկային մեջ սպաննվեցամ Հայոց Վասակ իշ-  
խանը – Գրիգոր Մագիստրոսի որդին – որ Անտիոքի Դուքան էր: Երբ  
փողոցին կանցներ, երկու Համատաջայներ կուգային երկրպագելու ձեռով  
պատվելու Վասակին և սուտ թուզթ մը ներկայացնելով անոր, ծաւով որ  
թուզթը անն, անմիջապէս ուրագամ մը մեջքին զարկին և մտամով Վա-  
սակը անարժան և պիղծ մարդոց ձեռքով: Անոր զինուորները Համաքմե-  
ցան Անտիոքի բերդը և Վասակի արքայականներու գունդը, կանչեցին  
Փիլարտոսը և Անտիոքը Հանձնեցին անոր: Իսկ Փիլարտոս մի քանի օր  
Հնառ բոլոր նենգավոր Հորոմները ժողովի կանչեց 700 Հոգի և պատե-  
րագմի երթալու պատրվակով տարամ զանոնք Ափշուն գյուղը և այնտեղ  
կտորեց բոլորը, և Փիլարտոս տիրեց Անտիոքի և Վասակ ՄՍՏԻ արշան  
գրեծը առամ: Այս ժամանակ սպաննվեցամ Հայոց Եգիպտոս իշխանը, քաջ  
և պատերազմող մարդ մը Երրակա տուննն, որ իր քաջութեան Համար  
Հույներու թագավորը ստիպեց և Հուկազգաման մկրտեց, բայց նա ծածուկ

<sup>11</sup> Պատմ. Անթեպի, էջ 210:

Հայրենի Հաճաքը կը պաշար: Սա Հիմանդասցավ Անտրիուսի բերդին մեջ և Հոռոմներու թաղաճորը արեզա մը տված էր որպէս խոստովանահայր և առաջնորդ իրենց սնտի Հաճաքին: Իսկ անորն և գարշելի առաջնորդը՝ Հոռոմներու շարագործ և պիղծ կրտսմորը, որ մը մտավ Սպիխաին քով և տեսավ, որ նա քաղցրիկ կը քնանար իր մահէին մեջ, դազանարար Հարձակվեցավ անոր վրա, առավ բարձը և դրավ անոր բերնին վրա և ուժգին ընկավ անոր վրա և շարաշար սպաննեց զորովոր և քաջ մարդը: Նրբ անոր զինվորները իմացան քաջին մեռնիքը՝ նենգությամբ, մեծ բարկությունով շարշարեցին անորն Հերետիկոսը և շարշարելէ Հետս պիղծ արեզան ձկեցին վար բերդին ծայրի քարն և Հսն ստակեցավ շարաշար մահով ու կորովեցավ»:

Դանել Վարուժան իր «Անի» րանաստեղծության մեջ խառցած առգերով և բուն իմաստով կը պատկերացնէ Բյուզանդիսնի նենգամտությունը Հայոց Հանդեպ. «Նենգ Բյուզանդիոնն, այդ Բողոքդին Հոռոմի, քեզ կը դավեր լափլիզելու ախարժով»:

Փիլարտոս սրպես զորավար, ռազմական կարեւոր դերքերուն ծանոթ, շատ ընդարձակ երկրամասը ունէր իր ինքնավար իշխանության տակ և ընտրած էր Հարմար վայրեր. Անաի-Տաճրոսի, Տաճրոսի լեռնաշղթան, Ամանոս լեռները, որոնք բնական ամրություններ էին, բացի բազմաթիւ բերդերն ու ամրոցներն՝ որոնք այն ժամանակներու Համար խիտ կարեւոր էին ռազմական գործողություններու և ինքնապաշտպանության Համար: Այս շատ ընդարձակ երկիրը, Եփրատացոյց բերրի դաշտերով, նաև կիլիկիայի ու մյուս շրջաններու բարերիւր Հողերով՝ պետության մը բազմապիսի կարիքները Հոգալու բավարար էին: Այս շրջանները ունէին բազմամարդ քաղաքներ և գյուղեր, որոնց ճշող մեծամասնությունը Հայեր էին: Հայաստանն զաղթող ժողովուրդը ինչպէս իր բնիկ երկրին մեջ, նույնպէս ալ այս նոր Հայրենիքին մեջ, բնազգարար և առավելապէս ամուր և ապահով դերքերու մեջ Հաստատված էին, Փիլարտոսի ցուցմունքով և ջանքերով: Այս առթիւ (Պատմություն Ամեթլիի Հայոց գրքին մեջ) Ե. Քասուսի կը գրէ: «Եփրատացոյց և Կիլիկիայի շրջանակներու մեջ Հայոց Համար ուրիշ ավելի Հոծ քաղաքակրթության կողմն լուծվելու և ձուլվելու վտանգ ալ չկար: Հոս, Հինցած Ասորի մշակույթին և դեպի անկում դիտող Սարակիսոս ու Բյուզանդյան քաղաքակրթությանց սահմանազուլիսն վրա և իր բնակչութենն մեծապէս պարպված երկրամասի մը մեջ Հայեր չէին խեղդվեր և կրնային ազգային Հատկանիշները պահպանել և առանձին մշակույթը զարգացնել: Այսպէս Ամանոսի և Արևելյան Տաճրոսի երկու գագաթները Հոծ Հայությամբ մը լեցվեցան,

Հայ վանքեր՝ մեղուներու փեթակներուն շտափ բազմաթիւ, նույնքան ալ ժրաշան ու կենսայիր, բեղուն եռանդով կը շնորհակցին Ուլիթ, Բերդաւսի, Գերմանիկիս, Քեսուճի և Տլուքի շրջանակները, զորս մեր պատմութեանը ընդհանուր կոչումով «սեռայնրիներ» կանգանե և որ կը ապրածփի Եփրատեն մինչև ԶաՀան դեռ: Կարմիր վանք, Նուզր, Ընկազուր, Արեղին, Հրսույանց անապատ և ուրիշ մենաստաններ, Գրիգոր Վկայտոերի շանքերով ու Փիլարտոսի պաշտպանութեամբ կարե միջոցի մը մեջ կրթական գործունէութեան մեծ կեդրոն դարձան»: Փիլարտոսի մահէն Հետո 1087 թվականին, իր իշխանութեան անմիջական և արժանաւոր Հաշուրը Գոզ Վասիլ իշխանը եղած է: Արդեն Փիլարտոս Գոզ Վասիլին տված էր այն ժամանակ Հայտանի և նշանաւոր բերդաքաղաք Քեսուճը, որը՝ Փիլարտոսի ծննդավայր Սուրբփաղի խիստ մտախի է, ընդարձակ և բարեբեր դաշտի մը մեջ և զայն առած է իր Հոգածութեան տակ: Գարազաները այնպէս կը ցուցանեն, որ Փիլարտոսի և Վասիլի մեջ խիստ մտախի ազգակցական կապ մըն ալ ստեղծված է, և Փիլարտոսի մահէն վերջ անկախ իշխանութեան մը ունեցած է Կոմսագեների կամ Եփրատացոց երկիրներուն վրա:

Գոզ Վասիլ տնտեսական է Մովսէսի Գահապուհներու, Գրիկ Վասուկյանց, Կարկապի և ուրիշ մանր Հայ իշխանութեաններու, բոլորը միասին գրեթէ միութեան մը կազմած:

Մասնէնս ՈւռՀայեցի (էջ 323-324) Հեանյալը կը պատմէ Գոզ Վասիլի մասին. «1112 թվին Անտիոքի կոմսը Տանգրեան զինվոր ժողովեց և գնաց Վասիլ իշխանի դեմ Ռապանի վրա և սաստիկ պատերազմով զրոգեց քաղաքը Վասիլին և գնաց Քեսուճի վրա, իջած դաշտին դուրսը, Քիլի աղբյուրին ներքեւ: Վասիլն ալ Հինգ Հազար զինվոր ժողովեց, մի քանի որ կենալն Հետո պատերազմ չըրին, այլ սեր Հաստաանցին իրարու Հետ: Ռապանը դարձուց Վասիլին, Հարսն-Մուրք (Ատրաման) գաւառը, Թորեշը, (այժմ Թուրուշ գյուղը), Ուրեմնը տված Տանգրեանին, որովՀեան Վասիլը փռանգներեն զրաւմած էր Հարսն-Մուրք գաւառը, Փերսին-Մածքը, Ռազախը (այժմ Ռազխի գյուղը), Հարթանը, Թորեշը և Արեմեւը և Տանգրեան խաղաղութեանով գնաց Անտիոք:

1077-ին Ազուրապի որդին Վասիլ, այն, որ առաջ Դավիթ կուրապաղապին վրանապահն էր, ասոր Հրամանով Փիլարտոսը Հեծելազոր Հաւաքեց և եկած ՈւռՀայի վրա և շատ պատերազմով վեց ամիս կը նեղեր քաղաքը: Նույն տարին Վասիլ բերդաքաղաքին պարիսպը շինել տված, որ կը կոչվի Ռնապուլիս, որ Հոռոմներու Ռամանոս թագաւորը շինած էր: Ասկէ վերջ նեղեց ՈւռՀա քաղաքը, այն տան քաղաքացիները խուժեցին իրենց իշխանին (գուրո) վրա, որ կըսեն Լեան, որը Դավաաանոսի

եղբայրն էր: Լեւոն փախաւ Վերի բերդը, անոր Գուրգիստը (Ֆինանսներու կառավարիչ) մասով Ս. Աստվածածին եկեղեցին և սաստիկ զարկով եղջերաձև զարդին՝ և քաղաքացիք մանկւով եկեղեցի զազանարար սպաննեցին զայն Աստուծո Ս. սեղանին առջև: Այն օրը ՈւռՀան ավին Ալուքապի օրդի Վախիլին, որ բարի, Աստվածասեր, ողորմած՝ օրերու և այրիներու Հանգեպ, խաղաղասեր էր և շինող երկրին, որ նախապես անոր Հայրը Ալուքապի կապրեր ՈւռՀան, և նա շինած ու սահման գրած էր բոլոր զավտոին:

Այս թղկահանին սպաննեցեալ Գագիկ ԵաՀնշահը, օրդի Աշոտի, Բագրատունի ազգով: Հայոց Գագիկ թագաւորը, գինած՝ պատրաստած իր գինգորներու գունդը, գնաց Տարսն՝ իջալ Հայոց իշխան Ալազարիային քով (օրդին Հաստնա՝ օրդին Խաչկա Ելին) քաջ մարդ մը Վասպուրական զավտան: Սա գնաց Ալազարիային քով սիրու և խնամփութեան Համար, որ Ալազարիայը կանչած էր և պատճառով մը խնամփութեանը չեղավ, Գագիկ զարձակ առյուծի նման մանչալով՝ որովհետև մեծ, Հզոր և քաջ մարդ էր, և զավտի բոլոր իշխանները բռնելով, կը տաներ զանոնք իր առջևն երկաթն կապանքներով: Հազար մարդով Հաստով Արժախապի դաշտը, այն բերդը, որ Կիզիսարա կը կոչվի: Բերդատերերը Հոռոմներու իշխան երեք եղբայրներ էին, Մանասայի օրդիները: Գագիկ իր գինգորները ճանապարհին մյուս կողմը գրած, երեք մարդով կերթար անոնց կողմ: Իսկ անոնք առաջվրեն պատրաստած Հրսուն մարդ զարան դրին Գագիկի Համար, երբ Գագիկ բերդին մտնեցավ, երեք եղբայրները կուգային խոնարհութեան ընելու և երթալու ժամանակ կերկրպայտելին երեսներն խոնարհած: Երբ Գագիկ զանոնք տեսավ, կանչեց զանոնք Համբուրելու, և երբսր մտա եկան, երեք եղբայրները խոսք մեկ ըրած գրկեցին Գագիկը գիղեն և զայն մինն ձգեցին և Գագիկի ետևի մարդիկը փախան և զարանակալները էլան և բունեցին գինք: Զինգորները, այդ օր լսեցին, ցրվեցան: Գագիկը բերդ տարին:

«Ութերորդ օրը բոլոր Հայոց սպողը Հովաքմեցան բերդին շուրջ. Արասի օրդին Գագիկ և Սինեքերիմի բոլոր ցեղը, Աստմ և ԱլաուսաՀլ և Հայոց բոլոր ուրիշ իշխաններ և մի քանի օր պատերազմեցան բերդին վրա, բան մը չկարողացան ընել, որովհետև բերդը շատ ամուր էր և Գագիկը բռնողները կը վախնային թողուլ, որովհետև կը վախնային Գագիկին: Այն ատեն անոնց քով գրկեցին անօրին Փիլարդոսը, որ ըստ վանոց, թէ՛ «Ինչպես Համարձակեցաք այդ գործը ընել թագաւորին, ազատ թողուցեք, եթն ոչ, ատով ձեր կարստեան պատճառ կըլլաք»:

«Այն ատեն Հոռոմներու աստվածասպան սպողը աղեղի շարով խեղահեցին թագաւորը և օր մը ամբողջ պարիսպեն կախեցին, Հետո Հանեցին

բերդեն, զուրան թաղեցին, զեց ամիս վերջ Գազիկի քաղաքեն Բանիկ տնունով մարզ մը եկավ և դողցավ մարմինը՝ զիշեր ասնն Հանեց զերեզմանեն և սարսավ իր քաղաքը իր առճմին, մնաց Գազիկի ավազ որդին Հովհաննես, վերջացավ Հայոց Բազրատունի ցեղի թագավորութունը: «1079 թվին սաստիկ սոճ մը եղավ խաչապաշտներու բոլոր երկիրները ծովուն օվկիանոսին մյուս կողմը, որովհետև արյունարբու և զազանացած թուրք ազգը տարածվեցավ երկրի երեսը ամեն տեղ, ոչ մեկ դաժառ խազազ չմնաց, այլ ամեն քրիստոնյայի տուն սուրի և գերության մատնվեցավ, և ուտելիք Հացը պակսեցավ սուրոճ և զերությունով, մշակ և աշխատավորները պակսեցան առաջասարակ բոլոր երկիրներ: Եսա զազառներ անմարդաբնակ եղան և արևելքցիներու տուները քանդվեցան, Հոռոմներու երկիրը ավերակներ եղավ, ոչ մի տեղ Հաց չէին գտներ և կամ մարդկային Հանգստութուն, բացի Ռուհայե և անոր սահմանները: Անտիոք, ամբողջ Կիլիկիա, մինչև Տորոսն, Մարաշ, Տլուք և բոլոր այս երկիրներուն մեջ մարդոց Հանգիստ չկար և բոլոր արարածները միատեղ էր փախչեին, կու գային այս երկիրները (Ռուհա և շրջակայքը) անթիճ բազմությամբ, Հազարավորներ և տասնյակ Հազարներ, մարդիկ էր ծփային երկրի վրա և այս երկիրները ծածկվեցան և մարտիի նման անոնց բազմությունը երկիրը էր ծածկեր: Այսպիսի ահազին բազմությամբ երկիրը լեցվեցավ, մեծամեծ և փոռավոր մարդիկ, ազնվականներ և իշխաններ և մեծաուք կիներ պատելով էր մուրային, և այս բոլորը մեր աչքերը էր տեսնեին, և սովի ու պանդուխտ կյանքի Հետևանքով Համահարակ մահ ինկավ անոնց մեջ և բոլոր երկիրը, և զանեցան զանոնք թաղելի, երկիրը անոնց դիակներով լեցվեցավ, զազանները և թաղունները ուտելի մանեքացան: Անթիճ, անՀամար բազմություններ անթաղ մնացին, երկիրը Հոռեցավ անոնց մեռելներեն, փոռավոր քահանաներ և կրոնավորներ սաարության մեջ և պանդուխտ էր մեռելին և դազաններու, թաղուններու կեր կրլային: Այս եղավ սկիզբը Արևելքցիներու և Հույներու ասն ավերումին ու քանդվելուն:

«1107 թվին պարսիկները (իմա՝ սելջուկներ— Մ.Ձ.) 12 Հազար զինվոր ժողովեցին և անցան Տորոս լեռը և Անավարզա դաժառը, կողոպտեցին Ռուբենի որդի Թորոսի բոլոր երկիրը, եկան, անցան Մարաշի գաղտեն և անթիճ բազմությունով Հասան Գող—Վասիլի երկիրը, այն նվիրական սահմանը, որ Բերդուս էր կոչվի: Ասիկա իմաստալով, Հայոց Վասիլ իշխանը Հայոց զինվորները Հավաքեց: Արժիճի նման կամ որպես առյուծի կորյուն Հասան այլազգիներու վրա և սաստիկ ու աՀավոր պատերազմ ըրին և մեծ Հազմությունով թուրքերը փախուստի մատնեցին և



միաբան սուրով անոնց նսեմն վազեցին և անթիվ կատորեցին, անոնցմե շատերը բռնեցին և գերիները ազատեցին: Հայոց Վասիլ իշխանը և ազնվականներու բոլոր գուճեզերը մեծ Հազիթուխյունով և շատ ուրախությունով եկան Քեսուն:

«1108 թվին պարսիկները (իմա՝ սելջուկները — Ս.Չ.) դարձյալ Հափազդեցան և վնց Հազար ընտիր մարդերով, իրենց Սուլթանն ալ միտին, կուզային Հայոց Վասիլ իշխանի երկիրը. Քերզուսի կատորածին գրեթե լուծեցու Հաճար, և գազանարար Հասան Հարսն—Մուսր (Ատրաման) քաղաքի սահմանները: Հունձքի ժամանակն էր, մշակները կատորեցին և գերիներով դարձան Հարթան բերդին քով (ներկայիս Արթան գյուղը): Գող—Վասիլ<sup>26</sup> երբ լսեց այլազգիներու գալը, Հինգ Հայրուր գինձորներով Հասով անոնց վրա և Հայոց քաջ գուճեզերը սաստիկ պատերազմեցան, ազատանները իրար կը հորդորեին և Հաճարակամ քաղաքածուխյուններ կընեին թուրք գինձորներու դեմ: Այլառաջ ազնվականը իր գինձորներովը Հարձակեցավ այլազգիներու վրա, Գող—Վասիլի քեսորդին՝ Գեարուս, իր ազատներով քաղաքիսուն կընեց, և Վասիլ ազա անունով մեկը՝ մորը կողմն ազնվական, կը կատորե իր գինձորներովը պարսիկները կողքեն, և քաջ մարդ մը Տիրան՝ Հայ մեծամեծ ազնվականի որդի: Հայոց քաջ գուճեզերը ահավոր պատերազմ մղեցին և մեծ Հազիթանակ տարին այլազգիներու վրա, և սաստիկ կատորեցին և բռնեցին անոնց սուլթանը և ուրիշ շատ մը պարսիկ իշխաններ և գերի տարին: Հայոց Վասիլ իշխանը մեծ Հազիթուխյունով և շատ ազարով եկավ Քեսուն և փրկեց բոլոր Հայ գերիները, զոր առած էին այլազգիները<sup>27</sup>:

«1112 թվին Հայոց Արեգ (մարտ) ամսի 24-ին մեծ իշխան Գող—Վասիլը մեռավ: Սաստիկ սուգ եղավ բոլոր Հայերուն, որովհետև անոր քով Հավարժած էին Հայոց մնացյալ գինձորները, Բաղրասունչոց և Պահլավունչոց բոլոր ցեղերը, Հայոց թագավորազունները, բոլոր ազնվական գինձորներով անոր քով Հանգրստ կընեին մեծ պատիվով:

Մեռավ Հայոց Վասիլ իշխանը և թաղվեցավ Կարմիր վանքը: Վասիլի իշխանութունը տվին ազա Վասիլին՝ մոր կողմն Կամարական էր, մեծցած և զարգացած Վասիլի տան մեջ, ինչպես զավակ մը իր հոր ծոցին մեջ, գեղեցկատեսիլ, առուծազեմ, Հաջողակ և սրամիտ, քաջ և պատերազմող: 25 տարեկան ասիկա նստեցուցին մեծ իշխան Վասիլի աթոռը, և անոր Հնազանդեցան բոլոր գինձորները, որովհետև շատ աստատմուն էր և սիրելի

<sup>26</sup> Գող Վասիլի նստն տես. Գառնուրյուն Անյաթիլի Գայոց, էջ 70 և էջ 242—252:

<sup>27</sup> Մաթթոսու Առեալեցի, էջ 306:

եղա՞մ բոլոր գինգորներու աչքին: Տեր Բարսեղը մոզով ըրա՞մ և բոլոր իշխանութիւնը ա՞մա՞մ աղա Վասիլին, և ուրախութեան եղա՞մ բոլոր Հայոց:

«Այս սրերը Պաղտինը զօրքով գնաց ամուր բերդաքաղաք Ռազանի վրա և երկար սրեր զգուշութեամբ պաշարեց և ոչինչ կրցա՞մ առնել:

«Այս տարի Ուրֆայի կամը՝ Պաղտին, կրկին պատերազմի ելա՞մ Հայոց Վասիլ իշխանին վրա, որ Գոչ Վասիլի իշխանութիւնը ունէր:

«Այն ատեն Վասիլ գնաց Հայոց մեծ իշխան Լեոնի քով, որու քույրը կին առած էր: Այն ատեն Լեոնի եղբայրը՝ Թորոս, Հրավիրեց աղա Վասիլը և նենգութեանով բռնեց պայն և Հանձնեց Ուրֆայի կամ Պաղտինին, և նա զաղանարար խոշտանգեց քաջ և Հզոր պատերազմող Վասիլը և բռնութեամբ առա՞մ անկէ բոլոր զա՞մառները և խափանեց Հայոց իշխանութիւնը այն երկրի: Ե՞մ Վասիլ գնաց իր աներ Լեոնին քով և անկից ալ Կ. Պոլիս և Հասմներու թագա՞մորը մեծ ընդունելութեան ըրա՞մ անոր և իր բոլոր գինգորներուն:

«Սակայն Գոչ Վասիլի այրի տիկինը, իր քով Հա՞մաք՞մ Հայ իշխաններու միտքանութեան շնորհի՞մ, մինչև 1121 թվականը դիմադրեց, որմն Հետո մեռա՞մ և վերջ գաա՞մ Գոչ Վասիլի իշխանութիւնը և՞»:

Այս ատենները, նախապէս եղած փորձանքներու վրա, որոնք էին պարտիկները, սելճուզ—թուրքերը, Հույները, ա՞մկեցա՞մ նոր պատուհաս մըն ալ՝ «Խաչակիրները», ինչպէս պիտի տեսնենք Հետագա գեա՞քերու ընթացքին:

Խաչակիրութեանը՝ Հռովմի պապերուն նյութած սաղարանքներն էին, Մերձավոր Արևելքի քրիստոնեայ մողովուրդները Հռովմի ազտաա կառքին լծելու Համար:

Ուստի Արևելք գրկեցին փառասեր շահամոլ և ընչաքաղց իշխաններ՝ պաղտերու ծրագիրը իրականացնելու Համար: Տղետ Արևելքը, անգիտակ այս թարուն ծրագիրներուն, ընկա՞մ ծուզալը և քաղեց իր ազիտութեան մեղքը, կորսցնելով ատեն ինչ, որ մաքուր էր և իր սեպհականութեանը: Խաչակիրութեանը ծառայեց Բյուզանդիոնի կայսրութեանը ակարացնելու, Մերձավոր Արևելքի քրիստոնեաներն ու մահմեդականները արյան Հեղեղներու մեջ խեղճելու, Կիլիկիոյի ու Փոքր Հայքի Հայ մողովուրդը փնտցնելու և տեսական թշնամութեան մը Հաստատելու քրիստոնեայ ու մահմեդական մողովուրդներու միջև: Վկայասեր, որ 1099-ին Երուսաղեմ էր, այլազգի զօրքը կուգեր զինք սպանել, խաչակիրներուն պէս ըլլալուն Համար, Հագի՞մ Հագ փրկվեցա՞մ: Հռովմ իր ներքին ազտաութեանները թաքցնելու և իր պալը փրկելու Համար, շարունակաբար զա՞մեր կը

<sup>11</sup> Սատրեոս Ուշագիւղի, էջ 324:

եյութեր՝ խաչակիրները գործիք ընելով, Բյուզանդական կայսրությունը և Կ. Պոլսի տրեզորական պատրիարքությունը շնչելու և կամ զայն իրեն ենթարկելու նպատակով: Խաչակիրները կազմված էին բանակրեն արձակված զոռներ, ավազակներ և ռերազորման, ճամբան կը կողուպտին, ուր որ կը հանդիպեին: Հուսկ հետո սկսան իրար ջարդել ու պատերազմի իրարու դեմ: Իսկ հայ իշխաններ կրթն գործիք եղած են ստար հափշտակիչներու և ներքին երկպառակություններով ու կոխկներով քանդած են իրենց տունը: Պատմական ինչ ձիճաղչի զավեշտ, Արուսազեմը ազատելու համար ժահմեղական գրափումեն, արդյո՞ք պայման էր որ Անտիոքի, Մարաշի, Մալաթիայի, Ուրֆայի, Դամասկոսի, Կիպրոսի և այլ շատ մը տեղերու մեջ թագավորություններ ու կամություններ հիմնել ու ասորի, հույն և հայ ժողովուրդները ջարդել, անոնց կազմաններն ու ինչքերը գրափել: Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդները փեռացնել հետո, իրենք ալ անհետացան եսլոյն այդ երկիրներու թատերաբեմեն, տեղի տալով նախ արար, ապա թուրքերու գրավման:

«1113 թվին անտրեն, արյուճարու և գազան Մամուտա ամիրան՝ պարսիկներու սպասալարը, եկավ հասով Տանիկներու ծառան քաղաքը: Այն ատեն Ուռհայի Պաղտին կոմսը իր զինվորներով թլլալալար քաղաքը կը գանվեր, փութակներն գնասակար և ժանա մտածող մարդիկ շարության համար կոմսին լուր հասուցին և մատնեցին ու ըսին թէ՛ «Շատեր խոսք մեկ ըրած են և Ուռհան կուզեն հանմնել թուրքին»: Իսկ ան, հաճատալով անտրեն և շար լեզուներու սուտ շարախոսության, անմիջապես շար որչաւմ հանեց: Իսկույն Մուրուճի պայնն կոմսը զրկեց Ուրֆա և հրամայեց բոլոր քաղաքացիները Ուրֆայեն դուրս հանել, և քաղաքին մեջ ոչ մի մարդ չմնաց: Ժանակրեա ազգի մարդիկ խորհուրդ ըրին այն ասան և կուզին սուրով կատարել ընդհանուր քաղաքացիները և անպարտ ու անմեղներու արյունը թափել, որ արատ ըլլալիք ոչ մեկ հանցանք չէին գործած, և իրենց որտի շարութենեն անն մարդ ալ իրենց նման շարաքարո կը կարծենին:

«Իսկ Հոկտեմբեր ամսի կիրակի օրը ճաշի ժամանակ նեղության շար փորձանքը կը հասներ Ուրֆայի վրա, որ հայրը՝ որդին և որդին հայրը ուրացավ, որովհետեւ լաց, սգր և աղաղակ էր բոլոր քաղաքին մեջ, և որցունքով, սուգով և տրտմությունով կը կանչվաւեին տուն առ տուն, որովհետեւ բոլոր քաղաքացիները հանեցին ընեցին տուներեն և այրել հրամայեցին անոք, որ ատեներու մեջ կըմնային: Ոչ մի մարդ չմնաց, բայց միայն ութուճ մարդ, որոնք այն իրիկուն բերգի Ս. Թորոս եկեղեցին հավաքեցին ու զինվորներ կը հոկին անոնց վրա: Այն օրը մեծ սուգ

էր Ռերֆայի վրա փռանդներու կողմն նյութված, որովհետև ամեն մարդ իր անձին վրա կը կարգար և շարութեան ու մուրթեան ոչ մեկ անասկը չմնաց, որ չընենին փռանդները Ռերֆա քաղաքին: Ե՛վ այստեղ կտատար-վեցան առաջվրեն գուշակոցներու ըսածները, որոնք ըսին՝ թէ «Վայ ասն Արգարու»: Ե՛վ քաղաքին բոլոր մարդիկը գացին Սամուստ, և Ռերֆա մայրաքաղաքը եղա՞վ դատարկ և նստա՞վ այրի կնոջ նման, այն որ առաջ բոլոր արարածներու մայր էր և բոլոր աշխարհի ջրվածները իրեն ջով կը Հա՛վաքվին և կա՛մ անոնք, որ առաջ խաչով կը դիմա՛դորենին փռանդները, երբ մուրալով կուգային (փռանդները) անոնց քով, և ահա բարիքի փոխարեն այսպես վարվեցան անոնց Հեռ և չարիքով պատժեցին բոլոր Հա՛վաքայները: Այն ատեն թուրքերու գինձորները, որոնք իտա-ուան էին, գացին անցան Եփրատը և շարժեցան բոլոր բազմութեանով և գացին Ս. Երուսաղեմ, և բոլոր փռանդներն ալ մխտին: Երբ Պապինը ասիկա լսեց, թէ Սամուստը գնաց Երուսաղեմ, ամչցա՞վ իր սուտ գործին Համար, թուղթ գրկեց Ռերֆա քաղաքացիները վերադարձնելու Համար, և երեք որ Հեռա բոլորը դարձան իրենց առևերը»<sup>2</sup>:

ՈւռՀայեցի կը շարունակե ազնախ մը մտին. «Ժե՛կ Հայոց մայրս ամսուն (1114) սաստիկ վախ եղա՞վ երկրի վրա, որ այսօրոյս ազեա ոչ առաջ և ոչ այժմ չենք լսած, երբ խոր քունի մեջ էինք, Հանկարծակի աղաղակ և թնդում եղա՞վ, և բոլոր արարածները որոտումի նման մայն կը Հանենին: Սաստիկ դժբախտ եղա՞վ և ահագին թնդումով շարժեցա՞վ երկիրն ու լեռներ, ազառած քարերը պատճառեցան, բլուրներ ձեղքվեցան, և ահագոր ազնախն սաստիկութենն լեռներ և բլուրներ մայն կը Հանենին, և կենդանի անասուններու նման դողալով կը գոչենին (բչենին), նույն իսկ կը լսվեր լեռներու աղաղակը, բռնակներու բազմութեան մեծ ազմուկին նման կու գար, կը ծխար ծո՞վու նման, և Աստծո գորութեան վախն արարածները երերալով կը դողային, որովհետև պղինձի նման Հեշեցին բոլոր գաշտերն ու լեռները, և Հովնն շարժոջ ծառերու նման կերերային, կը դողային, կը սասանենին, արարածներու թնդալն ու արտու՛վախը կուգար երկարատե Հիվանդի աքսցին նման, և մեծ վախով կործանվածը տակն ու վրա կընէր: Երկիրը Հուսահատ փախտականի նման եղա՞վ, և ստկումով կը վախնար և մեղապարս մարդու նման ողբի ու լացի մայն կը Հաներ, և մայնը կը լսվեր շարժումն Հեռո մինչև գիշերվա ժամը մեկը: Ազմուկի սաստիկութենն ամեն մարդ Հուսահատեցա՞վ կյանքին և ըսին, վերջին գատասա-նի որը Հաստով, որովհետև այն օրվա պատկերը ուներ և վախցած էին Հու-

<sup>2</sup>Մատթեոս Ռեհայեցի, էջ 325-327:

սահառ մեռյալներու նման: Այս գիշեր կործանեցան շատ քաղաքներ և զավառներ, և կործանված տեղերը փռանդներու քաղաքներն էին, և ուրիշ ազգերու ոչ մի զնոս չեղա՞մ: Ե՛մ այս գիշեր ահա՞վոր կերպով կործանեցան Մամուսառ, Հարսն—Մուր (Ատրաման), Փնտուն, Ռազան և Մարաշ (քաղաքները) և քառասուն Հազարի չափ մարդիկ մեռան, որովհետև բազմամարդ քաղաքներ էին և աննցմե ոչ մեկը չմնաց: Այսպես կործանեցա՞մ նաև Մրսիսը և անթի՞մ մարդիկ ու կռնայք մեռան, և ուրիշ շատ գյուղեր ու վանքեր և անհամար մարդիկ ու կիներ, ազաք տասնյակ Հազարներով մեռան: Ե՛մ Ան չերան անվանի վանքը, որ կը կոչվեր Բարսեղյանց, Հայոց սրբազան կրոնավորներն ու վարդապետները Հա՞մարված էին եկեղեցին օրհնելու և Ասասուն պաշտոն կը մատուցանեին, եկեղեցին անոնց վրա փլա՞մ և երեսուն կրոնավոր ու երկու վարդապետ տակը մնացին ու մեռան, որ տակն են մինչև այսօր: Նույնպես Մարաշի մաս Հե՞սկանց մեծ վանքը կործանեցա՞մ և բոլոր կրոնականները մեռան: Երբ երկրաշարժը զազրեցա՞մ, սկոտով ձյուն դալ, և բոլոր այս երկիրներու մարդիկ տակը մեռան: Մեծ և փոռավոր վարդապետը՝ Գրիգոր, որ Մաշկեսը կրո՞վի, Նույն տեղը մեռա՞մ և ասոր նման շատ կոտորած և ազեա պատահեցա՞մ Հա՞մատացյալ ազգերուն: «1117 թվականին Ուրֆոյի կոմսը՝ Գաղտին, զինվոր Հա՞մաքից և Մուրունի կոմսը Կալարանի Հեա գացին Հայոց իշխան Ապրզարիպին վրա, որ Լիկոսի նորայրը և Վասակի որդիներն էին, որ Նիգիոյ կը բնակեին և նախապես Թլզաշարի տերն էին, որը և շատ այլ տեղեր քաջությամբ առած էին պարսիկներեն, ուժով առին Նիգիոյը և իրենց բնակարան շինեցին, որովհետև քաջ և անվանի պատերազմողներ էին և ունեին Հազար կործին զինվոր: Երբ կոմսը տեսա՞մ անոնց գա՞մառը, շտա կը նախանձեր և չկրցա՞մ ծածկել իր շար նախանձը, և զինվոր Հա՞վաքից ու զնաց Պրիի (Պերենիի) վրա, Քուրքերեն ավելի Հոգ պատճառելով քրիստոնյաներուն և տարի մը պաշարելով, Հայոց իշխան Ապրզարիպը շարաշար և տեսակ տեսակ նեղությունով, և վշտն ու վտանդեն անհար մնալով, տվա՞մ Պրբը և բոլոր գա՞մառը Գաղտինին, և ինք զնաց Ուրբենի որդի Թարաս իշխանին քով Անավարդա: Իսկ կոմսը Պրբը և բոլոր գա՞մառը տվա՞մ փռանդներու Կալարանին:

Այսպես կարգավ մի առ մի քանդեցին Հայոց իշխանները պարսիկներեն ավելի, և Հալածական ըրին զանոնք և այն, ինչ որ մնացած էին կատաղի թուրք ազգեն: Սա մեծ նեղությունով տարազրեց բոլորը, քանդեց Գոգ—Վասիլի իշխանությունը, փախապահան ըրա՞մ բոլոր ազնվականները Կ. Պոլիս, և Հայոց Բազրաս իշխանի բոլոր գա՞մառները Հոփշտակեց, որ կը բնակեր Արևընդան Կուրբսի մաս, մեռուց Կարկառի տեր Կա-

տանգիներ կապանքներու տակ չարաչար նեղութիւնով Մամուսատի բերդին մեջ երկրաշարժի գիշերը, որ գտան զայն Եփրատի եզերքը բերզեն վար ձգված: Ետզակ Մջնիկը բանտին մեջ գամեց և այնպես զար նետեց ու մեռավ: Նույնպես Պեմուհը՝ Հոսոմներու իշխանաց իշխանը, որ Մարաշ կը բնակէր, անամոթորար քշեց, նաև ուրիշ շատ մը իշխաններ բանտի մեջ շարչարանքներով ու կապանքներու տակ մեռցուց և շատերուն աչքը կուրցուց, մեռքերը և քիթերը կտրեց, անմեղ ազայոց կողերը կը նեղքեին և ցիցի վրա հանելով կսպաննէին՝ մնողաց կողմն խրատված կարծելով: Եվ այսպիսի անթմելի ու անպատմելի դործեր՝ միշտ անիրազարար գանձ առնելու համար, շարչարանքներով երկիրը ասպականեցին և ավերակ դարձուցին: Եվ միշտ բան—գործ չունէին և ուրիշ չեղած բաներ կընէին, միայն նստած շարութիւն կը խորհէին, և ամեն տեսակ գեշութիւն համարաները կը սիրէին.— բարիք և երախտիք մտադողներ—, անոնց շատ անիրազմութիւնները կուզէի գրել, բայց չհամարձակեցա, որովհետև անոնց իշխանութեան տակ էինք<sup>11</sup>:

1150 թվականին Ճոսլինի կոմսութիւնը խորտակվեցաւ: Կիլիկիայի Հայոց Թագավորութեան շրջանին է, որ կնկսի պակսիլ Հայ բնակչութիւնը, որովհետև 1150 թվականին սեռյալ Խաչակիրներու իշխանութիւնը այլևս վերջ գտած է Կամսակենի կամ Եփրատացոց երկիրներու վրային, և առաջ Իկոնիոսի և ապա Հալեպի ու վերջապես Ալուքյանց մահմեդական սուլթանութեան բռնակալութեան տակ կիլիան անոնք, որով մասամբ բռնի կամ կամավոր իսլամացումներով ու մասամբ արտագաղթով՝ Հալեք, նաև ասորի, Հույն և այլ ծագումով քրիստոնյաներ Հետզհետե կը պակսին այդ տեղերէն, և տարսված տեղերը կը լեցվին Թուրքներ, քուրդ և նման այլազգի ասորերով: Պաղատն և Գալերան կրեցին իրենց արժանի պատիժը. Խորրերգի տեր Պալակ ամիրային մեռք գերի ինկան և բանտին մեջ մեռան: Իսկ Ճոսլին Հալեպի սուլթան Նուրեատինին մեռքը գերի ընկավ, որը բանտարկից գրնքը և բոլոր երկիրները խցեց անկե,— Ազազը, Թլղաշաբը, Պիրը, Ռազանը, Մարաշը, Պեհեսին, Հըսնի—Մանսուրը, Մամուսատը, Կարկաը, Քեախթան և այլն: Մակայն Ճոսլին ասով ալ չազատվեցաւ գերութիւնէն, ինը ասորի Հալեպի բանտին մեջ մեռլն Հետո մեռավ: Ճոսլինի մահէն Հետո Թուրքեր Համարձակութիւն գտան և բազմաթիւ տեղեր առին փռանկներէն.— Կարկառ և Քեախթա, նաև Հըսնի—Մանսուր և Դեզինքար, որ մտան է նույնանուն վանքի<sup>12</sup>:

<sup>11</sup>Ս. Ուխայեցի, էջ 337-8:

<sup>12</sup>Ղեղմ քար Քեախթան յորս ժամ քաղելով հետո կը գտնվի և մինչև Իծոս Դեղիճ քար անունը կը կրէ: Գալեր և քուրդը Դեղին քար կը կրեն այս քնոցը (Ա.Յ.):

Թրմուքաշ՝ Մարզինի տերը, կիշիսեր Պիրի և Մամուսատի, Խուրիսի և Քեֆարսուտի վրա:

1223 թվականին Եգիպտոսի Մալիք-ալ-Քամիլ իշխանը արշավեց և Հիմնաշահաան կործանեց Ղըսնի-Մանուրը: Կիլիկիայի Հայոց թագավորության կործանումն հաջորդ 12 տարի Հեսա (1337-ին) սկսան Թրմուքլենի կամ Լենկ Թրմուքի աշխարհավեր արշավանքները, որոնցմն զերծ չմնացին Եփրատացիոց երկիրներն ալ: Զյուլզաթարյան իշխանությունը տևեց 1378-1515 թվականը, որն Հեսա Օսմանցիք տիրեցին Կիլիկիայի և Եփրատացիոց երկիրներուն:

## 5. ԱՏԻԱՄԱՆԸ ԹԻՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐՋԱՆԻՆ (16-19-րդ դար)

Թուրքիայի Հայոց վիճակը ժՋ դարուն շափազանց տխուր էր: Օսմանցիք, երբ նվաճեցին Անատոլուն, որու մասերն են Փոքր Հայքը և Կիլիկիան, արդեն իրենց իշխանությունը տարածեր էին Հայ ազգի կարեւոր մեկ զանգվածին վրա: Իսկ երբ ժՋ դարու վախճանին ամբողջ Մեծ Հայքեն զատ նաև Վրաց և Աղվանից երկրները, Ատրպատականի մեկ մասը՝ Քաղթրիզ մայրաքաղաքով, Հնազանդեցան օսմանցոց, անոնց տիրապետության տակ կը գտնվեր Հայության ամենամեծ զանգվածը՝ իր էջմիրանի, Սիսի և Աղթամարի կաթողիկոսություններով, ինչպես և Կ.Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքություններով: Այնուհետև երկու դար շարունակ Հայ ազգի բախտին վրա ազդող ամենազոր գործոնն է կղած թրքական տիրապետությունն ու անոր հոռի վարչակներ:

Թեև սկիզբն Հեսե Հայերն Օսմանյան պետության մյուս քրիստոնյա Հպատակներուն հազիսար իրենց կրոնական-ազգային արտևություններն էր կը վայելին, բայց և այնպես քրիստոնյաները քաղաքական իրավունքներու կողմն շատ կը տարբերին տիրապետող մահմեդական տարրեն, որոնք անարգական աչքով կը նայեին քրիստոնյաներուն վրա՝ իբրև անհավատներու (կեափուր) և սարուկներու վրա, և արդեն կառավարությունն ալ բայտ (աշխարհի Հոտ) և զիմնի (տուրքի պարտական) կանգաներ:

Բոլոր քրիստոնյաները և Հատկապես Հայերը կատարելապես զինաթափված էին և ոչ միայն չէին կրնար կանոնափոք բանակի մը զինվոր ըլ-

լալ, Հօսպօ մինչև անգամ նամորդութիան ասան ալօղազակներու դեմ ինքնապաշտպանութիան նպատակով զենք կրելու իրավունք չունենին: Անապօնեզ որ նեոթ, աղեղի և նիզակի պես Հին զենքերն այլևս անօղուտ էին նորահնար հրազեններու (հրացանի, տարճանակի) քով, որոնք մեռք բերել անկարելի էր թայաներու Համար: Կառավարութիան պաշտոնյա չէին կրնար ըլլալ, Հազուստով, տարազով պարտավոր էին զանազանովի մահմետականներին: Ամեն կրոնական Համայնքի անհատ ստիպված էր որոշ գույնի ու մեի Հազուստներ և գլխանոց կրել, և սվ որ այս կանոններն չեղեր, տուգանքի ու մինչև անգամ մահվան կենթարկվեր: Ոչ մահմետականներն արտոնված չէին մի և կամ շորի ալ Հեննելու, այլ միայն իշու վրա կրնային ճամբորդել, եթե սլ՝ Հեախոսն: Հարկերը ծանր և անարդար էին, որով ժողովուրդը կը կոռուպվեր:

Կյանքի և ինչքի ապահովութիւն չկար, Հարստացող Հայ մը անմիջապէս կը մեղադրէին, կաքօտրէին կամ մահվան կը դատապարտեն, գույքն ալ արքունիքէն կը գրավվեր:

Ոչ նվազ աղետաբեր էր մանկածողովի անզութ սովորութիւնը, որով ամեն տարի Հազարավոր քրիստոնյա մանչեր կը խլվին թշվառ ծնողաց գիրկէն և մահմետական կրոնքի Համաձայն մեծցվելով՝ ենիչերի ըսված ժողեռանդ և անազորույն զորքն կը կազմենին: Գեղեցիկ և Հուժկու մանչ զավակներ ունենալ այս կողմէն գնատակար էր քրիստոնյային, իսկ գեղեցիկ աղջիկներ ունենալն ալ՝ ուրիշ կերպով մը, որովհետև ասոնք ալ կը խլվին, երբ աչքի գարնենին՝ փաշայի, պէյի կամ իսանի մը Հարեմը զարգարելու Համար: Օրինակ Ռուսմանիան պարտավոր էր տարեկան 5000 մանչ զավակ Հանձնել թուրք կառավարութիան, նույնպէս ուրիշ քրիստոնյա Հպատակ ազգեր ու Համայնքներ:

Ահա այս ժամանակներն կսկսին Կիլիկիայի և Եփրատացոց դաշտային ու անապաշտպան գյուղական շրջանակներուն մեջ Հայոց զանգվածորն կրոնափոխ ըլլալը, երբեմն՝ կամովին, երբեմն ալ՝ բռնապատված: Անատոլուի և Կիլիկիայի Հայութիան կարևոր մեկ մասն ալ իր Հայքրիստանութիւնը պահելով Հանդերձ, Հետզհետե կորսնցուց իր մայրենի լեզուն և թրքախոս դարձավ: Արգիլված էր Հայերն խոսիլը, Համախ պատահած են զիպքեր, որ Հայերն խոսողին լեզուն կը կտրենին ստրտափ ազգելու Համար ուրիշներու, միայն տուներու մեջ զազանի կը խոսենին Հայերն:

Բայց Հակառակ խտտութիանց և ցույց տրված վառ վերաբերումին, Հայու քնածին շինարար և զարգացման ընդունակ նկարագիրը ամենեն անկապտա արտաքին և ներքին պարագաներու ներքև իսկ, տոկունու-



Յյուն և զիմազրություն ցույց ավան և իր գոյութիւնը Հարատեան է: Մեծ քաղաքները միշտ ավելի ազատով և հանգիստ էին համեմատաբար: Հայեր հեռագհեստ մզեցին երկրագործութեան և անասնաբուծութեան կյանքը, իրենց բոլոր գործունեութիւնը կենտրոնացուցին արհեստագործութեան և անասնաբուծութեան վրայ, և այս գրազուսմներուն մեջ Օսմանեան բոլոր հպատակ ժողովուրդներուն մեջ ամենահաջողն ու ճարտիկը եղան: Այնպէս որ, մանավանդ Ասիական Տանկաստանի արհեստներն ու վտանապահութիւնը շուտով զրկեց ամբողջապէս իրենց մտքն անցուցին Հայեր և մինչև ի գարու սկիզբը պահեցին: Գաղառներն Հայերը սկսան կամայ-կամայ մայրաքաղաք զիմել, իսկ գլուղական շրջանակներն ու տղամեններն ալ՝ գեղի կեդրոնական վանառաշաճ քաղաքները<sup>11</sup>:

Սուլթան Մահմուտ Բ որտեղեց ենիչերիները ընջել և անոր անց եմբողական մեթոտով կրթված նոր բանակներ պատրաստել: Մահմուտ իր այս ծրագիրը գործադրեց 1826-ին՝ Կ. Պոլսի մեջ ենիչերիները Հարգելով և անոնց սեփականը ընջելով:

Ենիչերիներու մասին շատ գրված է, միայն Ասիամանի մեջ անոնց խժողութեան և վայրագութեան մասին ժերուհիներ կը պատմեն: Ջորիներու վրայ հեռան, թամբին առջև պզտիկ թմբուկ մը զարնելով կը մտնեն քաղաք, ժողովուրդը Տըմպըլուպազ (թմբկահար) կը կոչեր: Կը բռնվեն Հայ տուներու և ընտանիքներու մեջ, կուտեն, կը խմեն և ամեն տեսակ լիտութիւն, խայտառակութիւն կընենին: Համախ սպաննութիւններ կընենին, կը գլխատեն, մահապարտին բերանը հայած կապար կը լեցնենին, մայրը սուր և գույնզգույն ներկված ցիցերու վրայ կը նստեցնենին ու ծանր թակերով ուտերուն գարնելով՝ ցիցը կոկորդին գուրս կուգար: Այս բոլորը կըլլային հրատարակով՝ ահաբեկելու համար հայութիւնը: Ասիամանի տուներու բակի դռները հատկապէս այնքան ցած կը շինենին, որ խորի մը չկարողանար ներս մտնել: Իսկ ուն տուն մը որ մտնենին, անոնցիները կը փախչենին և զրկեցն սուտը կը թալլվիր մինչև անոնց մեկնիլը: Դարեր շարունակ Հայաստանի և Կիլիկիայի հայութիւնը այսպիսի դաժան ժամանակներ անցնելն հետո, հազիվ ազատվեցավ այս պատուհասին: 1826-ին սուլթան Մահմուտ վերջ տվավ ենիչերիներուն ոչ թէ հայութեան կամ քրիստոնյաներու պաշտպանութեան համար, այլ որովհետեւ պատուհաս և փորձանք եղած էին թուրք կառավարութեան զլխին, թագաւորներ գահազուրկ կընենին և իրենց ուզածը կը նստեցնենին և այլն:

<sup>11</sup>Պատմություն Անթուխ, էջ 293:

1831-ին Եփրատը ստանցեց, սո՛վ եղավ, ժանտախա եղավ, կոտորած եղավ, 4000 ձարդ մեռավ Այնթապի քաղաքին. Հալեպ, Քիլիս, Պերեհիկ, Հըսնի—Մանսուր, Մարաշ, բազում գյուղեր նույնը եղավ:

## 6. ԱՏԻԱՄԱՆԸ 19-Դ ԴԱՐԵՆ ՄԻՆՁԵՎ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶԲԸ

(Վիճակագրական և պատմա-աշխարհագրական ակնարկ Ատիամանի և շրջակա գավառակներու մասին)<sup>1</sup>:

**1891**-ին Փրանտիայի *Vital-Cuinet*-ի կողմն հրատարակված 6 հատոր Փոքր-Ասիայի ընդարձակ Աշխարհագրության մեջ Հատկյալ կերպով ներկայացված է Ատիամանի և շրջակա գավառակներու վիճակագրությունը: Հասկանալի պատճառներով պակաս ցույց տրված է Հայերու, ոչ իսլամներու և քուրդերու թիվերը:

Մուրքական կառավարությունը հատկապես Արևմտյան Հայաստանում Հայերի թիվն արհեստականորեն պակասեցնելու նպատակով քանիցս փոփոխության էր ենթարկել Արևմտյան Հայաստանի մեջ մասնազ վիլայեթների վարչական բաժանումը: Վիլայեթների և սանջակների վերաբաժանումը կառավարվում էր այն հաշվով, որ Հայկական մեծամասնությունը բաժանվի տարրեր ազգությունների մեջ (թուրք, քուրդ և այլն): Մակայն չնայած այդ և նման միջոցառումներին, Հայերը Արևմտյան Հայաստանում շարունակում էին մեծամասնություն կազմել: Այսպես 1912 թ. Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների համաձայն, Հայերնակ վեց վիլայեթներում Հայերը կազմում էին ազգաբնակչության 38.9 %, թուրքերը՝ 25.4 %, քուրդերը՝ 16.3 %, մնացած ժողովուրդները՝ 19.4 %<sup>2</sup>:

Ատիամանի գավառակի բնակչությունը, ըստ <i>Vital-Cuinet</i> -ի (էջ 378)	
Մուսլիմաններ	22.000
Քուրդեր	4.034
Ղրղըլ—պաշ	13.200

<sup>1</sup>Ատիամանի մասին տես Պատմություն Սալարիոյ կայսր. էջ 86, նաև էջ 491-505:

<sup>2</sup>Արևելագիտական ժողովածու, 1960, երևան, էջ 389:

Հայեր	2.900
գումար՝	42.134

Պեհեանի գաղտնակի բնակչությունը ըստ Vital-Cuinet-ի (էջ 376)<sup>14</sup>:

Մուսլիմաններ	23.600
Քուրդեր	5.000
Ղըզըլ-պաշ	13.191
Հայ	2.829
գումար՝	44.620

Իսկ Պեհեանի քաղաքի մասին (էջ 377)

Մուսլիման	800
Քուրդ	220
Ղըզըլ-պաշ	379
Հայ	101
գումար	1500

Պեհեանին, Ախթամանեն 40 փրյոմեթը դեպի արևմուտք քաղաքափան մըն է, ունի Հին բերդ մը, գյուղին մեջ ևս բերդ մը կա: Պեհեանի մեջ Հին քանդղած կամուրջ մը կա: Հին ավերակ Պեհեանիին մասիկ տեղ մը շինված է նոր Պեհեանին:

Բնիկ Պեհեանըցի Հակոբ Եփրեմյան Հետեյալը կը գրե Պեհեանիի մասին «Պատմություն Անթիլիի Հայոց» գրքին մեջ.

«Պեհեանի՝ արևելքեն ու արևմուտքեն պատվարոց երկու սարերու մեջնեղ, ձորամեջ շինված ավան մըն է, 1880 տնօր: Բուր տուները շինված են ձորին արևելյան գարգերին զրա, որու երկայնությանը շինված է նաև շուկան և անոր Հյուսիսային ծայրն ալ կը գտնվի կառավարական շենքը: Ատենոր ավանին մեջ կար ավելի քան 400 տուն Հայություն, երեք հարսնականություններ՝ լուսազորչական – 300 տուն, բողոքական – 15 տուն, Հայ կաթողիկ – 40 տուն: Մնացած բուր բնակչությունը մահմետական էր, այսինքն՝ թուրք: Պեհեանին երկու ժամ դեպի արևելք կը գտնվի Սուրֆազ անուն՝ 300 տնօր գյուղ մը, որու իրը 20 տունը Հայ էր, բայց չափազանց աղքատ: Հայոց եկեղեցի մըն ալ կար, շատ գեղեցիկ շինված և ընդարձակ: Բուն գյուղին դիրքը տափարակ չէ, ոչ ալ բարձր լեռ ունի, այլ գարավանդներով բլրավան լայն

<sup>14</sup>Պեհեանիի մասին տես Պատմություն Անաթոլիայի հայոց, էջ 481–491 և էջ 84:

Հովիտ մըն է: Գյուղը երեք մզկիթ ուներ միևարեններով՝ գյուղամեջ, երկուքը՝ ամուր վիճակի մեջ, իսկ մեկը գյուղին դուրս՝ պատերը վրած—ավերակ: Առաջ 1000 տնօր ավան մըն է եղեր: Գյուղին մեկ ժամ Հարավն կանոցնի Սուրֆազ—չայ անուն գեղեցիկ գետակ մը, որ շատ արգյունաբերութիւն կը պատճառն: Սուրֆազի Հյուսիսային արևելյան կողմը, գրեթե Հինգ ժամ Հեռախոսութեամբ, կա Շամպոյարը (Շամպայաթ) անուն 500 տնօր գյուղ մը, ուր նաև տասը տուն Հայութիւն մը կը բնակեր:

ԳեՀեանին 10 մղոն դեպի արևմուտք կա Պելլերեն գյուղը, 200 տուն բնակչութեամբ, որու 15 տունը Հայերն կը բաղկանար: Ահա ասոնք են բոլոր այն տեղերն, ուր քիչ թէ շատ Հայ կը բնակեր, բայց 1895-ի կոտորածին Հայ գյուղացիներն շատերը սպաննվեցան և մնացածներն ալ ցիր ու ցան եղան:

Գալով Քեսուն գյուղին, որ կը գտնվի ԳեՀեանին 4 ժամ Հարավ, Հոն կը բնակին 200 տուն մահմետականք՝ թուրք և քուրդ: Բուն իսկ Քեսունի մեջ կան երկու լքված եկեղեցիներ՝ ավերակ վիճակի մեջ, մեկուն անունն է Վասիլոն, իսկ մյուսը Կարմիր վանք անունը կը կրէ, իսկ քարայր մը մնացած է: Ու գարնայ գյուղին դեպի Հարավ, երկու ժամ Հեռուն, լեռան մեջ կը գտնվի սբ. Հակոբ անուն եկեղեցիի մը ավերակը, որու դմբեթն ու կամարները դեռ 30 տարի առաջ գոյութիւն ունեին, բայց ներկա վիճակը չեմ գիտեր: Քեսունի դիրքը դաշտային է, դաշտը քան ժամօր երկարութիւն ունի, արևմուտքն արևելք, իսկ լայնութիւնն՝ երկու ժամօր նամբա: Թէ Հյուսիսային և թէ Հարավային կողմերը լեռնային և անտառապատ են<sup>66</sup>:

### 1. ԲեՀեանի կամ ԳեՀեանի

Հ. Ս. Էփրեկյան կը գրէ ԳեՀեանիի մասին. «Քաղաքական Երրորդ Հայոց (Մելիտոսի) Համանուն զազառի մեջ, բնակիչք մեծով մասամբ մահմետական են: Հայք ունին մեկ եկեղեցի՝ Ս. Փրկիչ և մեկ վարժարան՝ Ներսիսյան: ԲեՀեանի կառուցված է քարուտ լեռան մը կողմն վրա, անբը ցրված են, ուր կան նաև մնացորդները Հին ամրոցի մը, զոր 1116-ին առով Եղեւսի Գալովին իշխանը: Քաղաքագաներս մտեն կանցնի Սափրան գետակը, ուր թեև իտր չէ, բայց լայն է և արմատ, մանավանդ՝ տառացած մամանակ: Շուրջը ունի պարտեզներ և այգիներ՝ խաղողի սրտելի և մեծահատիկ տեսակներով: Նույնանուն զազաան ունի 45.000

<sup>66</sup>Պատմութիւն Անթիպի հայոց, Ա խտոր, էջ 81:

բնակիչք, որոնց այժմ միայն 3.000-ը հայք են: Բեհեսնիի գլխավոր վաճառքն են աթաթակ և գերան, վասնզի սևի մեծամեծ անասաներս<sup>46</sup>:

Պեհեսնի քաղաքավանը 1914-ին ուներ 15.000 բնակիչ, որոնց 3.000-ը՝ հայ: Տարագրութենեն հետս վերապրող պեհեսնացիներու թիվն էր 900 անո:

Պեհեսնին 1895-ի համախայան ջարդեն ազատ մնաց շնորհիվ Սաղուոյ փաշա անունով ազգեչնի թուրքի մը պաշտպան կանգնելովը և արզէյք հանդիսանալովը: Պեհեսնիի շուրջը, բացի վերև հիշված գյուղերեն, կային նաև Փելվերի, Էրքենեկ (Արդանակ), Էլմալի, Պալապան մեծ գյուղերը, որոնց մեջ հին ժամանակներն ի վեր բնակող հայեր կային: Խոզկաշեն և Խոզկերտ անունով երկու գյուղեր կան, որոնք Գող-Վասիլ իշխանի ժամանակից Խոզակ-Մրջնիկ իշխանի կողմն շինված և իր անունը կը կրեն, հոն ևս ապրող հայեր կային:

Պեհեսնիի շուրջը կան հետևյալ քուրդ ցեղախումբերը. Հավետի, Մըսան-Շիրս (վաչկատուն), Բեռավըլը, Պերուքի կամ Պրուք և Փշենիկցիներու մի մասը: Պեհեսնիի մասը կու Մատեն-Գեղ պնունով լին մը, պատմական անունը մոռցված է: Պեհեսնիի անմիջական շուրջը կան հետևյալ հիշատակութեան արձանի վայրերը. Ղըզլար-գալաը (ազլիկներու բերդ), Մննկենե, Ջննիր-Ղալա (Շղթա բերդ), Թեշտ-գազան և Մեծ-Խաթուն ջրարբի գրաստվայրը:

Պեհեսնիի հայութիւնը թրջախոս էր, դարերու ընթացքին բարբարոս թուրքերու բռնութեան և հալածանքի հետևանքով մայրենի լեզուն կորսնցուցած էին: Պերենիկ, Բում-Փալե, Էհենեշ, Ճիպին, Ախթաղ և Մարաշ թրջախոսներու սահմանը կը կազմեն, ուրկից արևելք թրջախոս վայրեր չկան: Մարաշը միայն սևի իր գաղափարաբարոսը, իսկ Ախթաղցիներու մեջ թրջերենի հետ խառն ազգավազյալ 1000-ի մօտ գործածական հայերեն քուսեր կան:

2. Ազնա-Տաղ գաղաթակը և բնակչութիւնը, ըստ Vital-Cabinet-ի 47.	
Մուսլիման	20.900
Բուրգեր	3.066
Ղըզլի-պաշ	12.099
Հայեր	1.791
գումար	37.856

<sup>46</sup> Ն. Ա. Էփրիկյան, Թաշխարիկի բուսաբան, Ա. Խառոբ, Վենետիկ-Ա. Պապար, 1903-1905:

<sup>47</sup> Աղբա տարի մասին տես Պատմությունը Սաղաթիցի Պապար, էջ 471:

Ազճա-Տաղը Ատիամանի Հյուսիս-արեւմտյան կողմն է, Արքա կա Արդա կեղքոնով: Գաժառակի կեղքոնը՝ Արզան, ունի 2.600 բնակիչ ըստ Vital-Cuinet-ի 1891-ի վիճակագրութեան.

Մուսլիման	1.250
Քուրդեր	603
Ղըզըլ-պաշ	637
Հայեր	110
զուճար	2.600

Ազճա-Տաղի Շուշուր կիրճին վրա ժայռերու մեջ փորված 1.500 քարանձավներ կան:

Հասնկյան Ատիամանի արեւմտյան կողմը՝ Եփրատի աջ կողքը կը գտնվի: Գաժառակի կեղքոնն է Խալֆեթի Եփրատի ձախ կողմը: Լեռ Հաչոց պատմութեան մեջ կը Հիշե երկու գաժառակներ Կամնազնների երկրին մեջ, Խալպի և Կիշտուն, Խալպին՝ ներկա Խալֆեթին, իսկ Կիշտունը՝ Գիշտամ գյուղը պետք է ըլլա: Ըստ Vital-Cuinet (էջ 264) գաժառակը ունի 27.696 բնակիչ, 25.677 թուրք, քուրդ և այլն, և 2.019 քրիստոնյաներ: Իսկ գաժառակի կեղքոնը՝ Խալֆեթին, ունի 1.560 թուրք, 440 քրիստոնյա, ընդամենը՝ 2.000 բնակիչ: 1914-ին Խալֆեթին ունեւր 1.200 բնականը, միջին Հաշվով՝ 6.000 հոգի:

Հասնկյան մեր եկեղեցական պատմութեան մեջ եղակի տեղ մը ունի իր փառավոր անցյալով: Այս բերդը եղած է Պաշլապուրի կաթնղիտաներու աթոռանիստ տեղը Կիլիկիայի Հայոց Թուրքիայի թագաժողովրդի մասունակ: Ներսես Ենոքհալի այստեղ սնած ու մեծացած և Հոս կաթնղիտու եղած է: Այս տեսակի բերդը կաժախնձոր եղած է և Հաճախակի Հարձակումներ կրած և մարտեր մղված են անոր շուրջ: Հասնկյայի բերդին աջ կողմը կա 15 մեթր լայնքով Հոր մը Եփրատին ջուր առնելու Համար՝ ոլորապատույա սանղուխներով, Հետո թյունեղ մը գնայի Եփրատ: Բերդին Հարաժային մասը 50 մեթր լայնքով, 100 մեթր խորութեամբ խրամատով մը բաժնված է, բերդին երեք կողմը ջուր է. Մերդմների գետակը և մեկ կողմը՝ Եփրատը: Բերդին վարի մասերը կը մնան անազարա, 4-5 բնականը թուրքեր կուպրին բերդին վրա:

Հասնկյային մեկ ժամ Հեռու Ս. Սանաղզ (Ս. Սանղուխ) գյուղը, գարնայ գնայի Հյուսիս, Եփրատին մեկ քիլոմետր Հեռու, առփարակ բարձունքի մը վրա կա Մյուսփյուրկի (Ս. Փրկիչ) քրտարնակ գյուղը: Հոս Եփրատը շատ խորունկ ձորերու մեջնն օժապտույտ կը Հոսի, այս մասերը լեռնային են: Հասնկյայի շուրջը կար էճնեղ զուտ Հայ գյուղը, 120 բն-

տանիք, որոնք կզբաղեն պիստակի մշակութունով, անասաւանդակութեամբ, անասնապահութեամբ և հողագործութեամբ: Կա նաև ճիւղին գյուղը կես առ կես հայ, թուրք և քուրդ: Շուրջը կան Հոշան (Օշին), Քիչտամ, Աղ-փունար և Սուվարը-չայը գյուղերը և այլն: Պալզըզ բերդը եփրատի աջ կողմը նիւղիպեն 10 քիլոմետր հեռու կը գտնուի:

#### 4. Քեախթաւ.—

Ատրամանեն 50 քիլոմետր արևելք կը գտնուի Քեախթաւ գավառակը, Քեախթաւ ժամանակ մը կոչված է նաև Արսամն՝ Անտիոքոս թագաւորի մեծ հայր Արսամնի անունով: Արսամն անունով վայր մըն ալ կա Կարկառի գավառակին մեջ: Քեախթաւի և ամբողջ շրջանին մեջ նշանակոր կը Պարսոս ազգա Պազրճյանը: Ավանին մեջ խան կամ Հյուրանոց չկար, ամեն ազգի անասաւանդակ, թրքական պաշտոնյա և այլն, ով որ Քեախթաւ երթար, Պարսոս ազգայի տունը պիտի իջնաներ և Հյուր ըլլար և այդ տան մեջ պիտի Հյուրասիրովեր, որքան ատեն որ հոն մնար: Թուրք կառավարութիւնը առաջին անգամ այդ բազմանգամ նահապետական ընտանիքը ոչնչացուց՝ ի վարձատրութիւն իր ծառայութեան, Հյուրասիրութեան և բարիքներուն:

Ըստ Vital-Cuinet-ի, 1891-ին Քեախթաւ գավառակը ուներ 46.264 բնակիչ:

Սուսուլման	23.100
Քուրդ	5.000
Ղըզըլ-պաշ	14.374
Հայեր	3.790
Գումար՝	46264

Իսկ գավառակի կեդրոն Քեախթաւ ավանի բնակչութիւնը.

Սուսուլման	700
Քուրդ	469
Ղըզըլ-պաշ	102
Հայեր	29
Գումար՝	1.300

1914-ին Քեախթաւ ավանի բնակչութիւնը 2.000 են ավելի էր: Քեախթաւին մեկ քիլոմետր դուրս, լերան ստորաւոր, անասաւանդակ Էրարբի և մշակելի հողերով՝ 15 քառակուսի քիլոմետր տարածութիւնով Թազուսի

կոչված վայրը էսկիյան երկու եղբայրներ իրենց ընտանիքով առանձին կապրեին: Առնոցն Հակոբը շրջանի քուրդներուն ահ ու սարսափ եղած էր, իր քաջության համար քուրդներ չէին համարձակեր որևէ մասս պատահուել: Հակոբը ձորթնցին Մուսթիայի բանտին մեջ 1915-ին, իսկ մյուսներն ալ քնաշնչեցին: Քեախթայի, Կարկառի և Երրոյի գաղափակներու և շրջանին մեջ կային նման բազմաեղան նահապետական շատ մը ընտանիքներ, որոնք թուրք կառավարութեան աջքին փուշ եղած էին, բոլորն ալ անխնա ջարդեցին, ոչ մի հոգի չազատուցուաւ պաշտանով:

Քեախթան ունի հսկա բերդ մը, լեռնային բարձր, ընդարձակ քարաժայռի մը վրա կառուցված, անառիկ դիրքով, անն կողմը կտրված անդունդներով, միայն դուռն կարելի է մտնել, քարե կարծր և հասա զուռը զեռ կը մնա, փոքրիկ ծակ մը՝ զուրսնն եկողը տեսնելու համար: Դռնն ներս փոքրիկ գավիթ մը կա, հետո դուռ մը զեպի բերդին ներսը տանող, գավիթի պատերուն վրա առյուծի և այլ նկարներ կան քանդակված, զուռը երեք կտոր խոշոր քարերով շինված է. աջ ու ձախ կողմը մեյմեկ հսկա տաշված քար և նուշեպիսի քար մըն ալ վրան սեամը: Բերդը կանգուն կը մնա, միայն վրայի հարկի մի քանի տեղերը փլած են, բակին մեջ կան ծառեր և ջրհոր մը՝ շատ խորունկ, բերդին հարավային կողմը՝ 30 մեթր վարեն, կը հոսի գետակ մը, զեպի գետակը տանող լայն հանապարհ մը կա՝ վրան գոցված և լուսամուտի չափ ծակ մը զեպի գետակը նայող, բերդին մեջ ջրամբարներ կան, դաշիճեններ և այլն, բոլոր հարկերը անվնաս կը մնան, տեղ-տեղ պատերուն վրա առյուծի և ուրիշ նկարներ կան փորագրված, նաև արձանազրութիւններ:

Ներկա Քեախթա ավանն 3 ժամ հյուսիս կան Հին-Քեախթա (Արսամն) քաղաքի ավերակները: Ներկայիս նույն տեղը դուռ մը կա Ալութ անունով: Քեախթայն Հինը քիչմեթր զեպի արևմուտք կա հրաշակերտ հսկա կամուրջ մը, շատ բարձր՝ խորուն ձորի մը վրա ձգված, երկայնութիւնը 500 ստնաչափ, բարձրութիւնը՝ գետի մակերեսն 50-60 կանգուն բարձր, լայնքը 3-3 1/2 մեթր, որու տակն կանցնի Քեախթա-չայի կոչված ջրառատ և խորունկ գետը, կամուրջը կը կրն ձեռտերն անուել: Կամուրջն վեր գետը կը կոչվի ձեռտերն գետ, իսկ կամուրջն վար՝ Քեախթա-չայ: Կամուրջին երկու կողմը խոշոր քարերով պաշտպանված բազրիքներ կան, երկու մեթր բարձրութիւնով պատի մը նման են, որոնց վրա ներսի և զուրսի կողմը հունարեն արձանազրութիւններ կան, ներսի կողմի արձանազրութիւնները քուրդերը փճացուցած են, իսկ զուրսի կողմինները կը մնան անվթար, որովհետև չեն կրցած փճացնել: Կամուրջին երկու կողմերը Հինը մեթր բարձրութեամբ շորս քարե սյուներ կան,



այսինքնին մեկուսն վրա արձանագրութիւն կա: Լսկա կամուրջը մեկ կամար ունի, կամուրջին տակ կըսր կամարին ամրացած է շղթա մը, շղթային մեջտեղին կախված էր խոշոր պայտի չափ ոսկի մը, քուրզեր հրացանի գեղակներով վար մզեցին ոսկին, որը ինկով գետին մեջ ու կորավեցով, շղթան կը մնա մինչև այսօր՝ երկու ծայրերը ամրացած կամարին: Մինչև 1908 թվականը այդ ոսկին կար:

Այս գետը ժամանակին կոչված է Նիմֆուխս, ըսա Քերեզա—Կորլի, որ Բեյլի (Նեմրուք) լիբան վրա պեղումներ կատարած, արձանները նկարած և արձանագրութիւնները ընդօրինակած ու վերծանած է, Հետեյալը կը գրէ (*National geographic*, vol. 119, no. 3 march, 1951). Սեկիթիսիոս Սեփերոս (192—211) կայսրը, որ թագավորած է, կամուրջը շինել տված է Ուրֆայի, Սամուսատի և Անտիտալասի Հետ Հարաբերութիւններ դյուրացնելու և պահելու համար: Ուրիշ արձանագրութիւն մը կըսէ. Անտիսքոս Ա-ի գերեզմանին Հողարուրը Նեմրուք լիբան 7.100 ոտք բարձրութեան վրա, նույնպէս անոր Հօրը Միհրդատ Ա-ի գերեզմանը Բեյլի (Նեմրուք) լիբան վրա: Եվ ուրիշ Հայտարարութիւն մը կըսէ. «Այս թագավորական Հայտարարութիւնը Արամեայի մեջ Նիմֆուխսի (Քեախիթա—չայ) վրա կը վճռէ պաշտպանութիւնը գերեզմանին և սրբավայրին Անտիսքոսի Հօր, Միթրատեյթեան (աստվածացած) և պահպանութիւնը իր պաշտամուծքին»:

Քեախիթայնն զեպի արևմուտք, 10 քիլոմեթր Հետու, կա Գարագուշ (Սե թաշուն) անուն Հսկա Հողարուր մը, գագաթը բազմած է սև քարե խոշոր թաշուն մը: Ժողովուրդը ավանդաբար կը պատմէ, թէ այդ քուրզը իշխանուհիի մը գերեզմանն է: Հողարուրին չորս կողմը քարե սյուներ կան, սյուներն մեկուսն վրա կնոջ մը պատկերը կա, կան նաև արձանագրութիւններ սյուներն մեկին վրա, ուրիշ սյունի մը վրան՝ արիի մը, մի ուրիշին վրա՝ գեմք մը: Հողարուրը տափօրակ գետնի վրա ճանապարհին մտա է, իսկ չորս կողմը լիանային է: Գարագուշն Հինգ քիլոմեթր զեպի արևմուտք Տալրոսի գիշերուն վրա, նամբուն եզերքը, խիտ անտառներու մեջ կա մեծ ավազանի չափ լիւն մը, որու մեջ անթիվ անհամար ագրուկներ կը վրտան: Ժողովուրդը այս ագրուկները կը Հանն և կողտագործն գանազան Հիփանգութիւններու համար:

Քեախիթայի շուրջը կան շատ մը ամրոցներու և վանքերու ավերակներ: Քեախիթայն չորս ժամ զեպի Հյուսիս կա Դեղին—քար անունով բերդ մը և արձանագրութիւններ:

Քեախիթայն երեք ժամ զեպի արևելք կա Հաստամեստ լիւն մը, շրջանի ամենարտեր լիւնը, Բեյլի անունով, (քուրզեր Գալլըր կը կոչեն), որու

զրտ կան շատ մը արձաններ՝ կանգնած կամ կիսակործան, և արձանագրութիւններ: Լեռան վրա քարանձափի մը պատերուն վրա խոշոր ճարդու մը և ուրիշ նկարներ կան փորագրված, նաև արձանագրութիւններ: Այս լեռը կարգ մը պատմիչներու կողմն՝ արար կամ թուրք, «Նեմրութ» (Նեքրոսթ) անունով կը հիշվի: Իսկ ժողովուրդը առհասարակ նփրատի ձախ կողմը՝ Միջագետք, Նեմրութի Հոյ կամ երկիր կանգնեն: Գարձյալ ափանգական Քեչն ալ՝ Նեմրութ անունով ծանոթ է, ժողովուրդի կողմն Քեչի անունը արժան է այս լեռան, Հակառակ որ նփրատի աջ կողմն է:

Քեախթայի և շրջակայքի ժողովուրդը, բնութիւն տակ խլամացած Հայ, ասորի կամ այլ ժողովուրդներ են, տիրով քոչորովին կը սարբերին մասակա գաժառակներու բնակչութենեն, խոշոր սև աչքեր, թիկնեղ մարմին և կարմրակոն: Քեախթայի շրջանը Հայ և քուրդ խառն շատ մը գյուղեր կար: Ատիտանի գաժառարարքունեն քիչ մը տարբեր Հայերեն կը խոսեն, մինչև 1915 թվականը իրենց զորավոր ազդեցութիւնը ունենն քուրդերու և թուրքերու վրա:

Քեախթայի շրջանը Հնութիւններով և Հանքերով Հարուստ է, սակայն չէ շահագործված, ներկայիս նազիմ Հայտնաբերված է և Անտրիկայիները նազիմաճորի բացած կը շահագործեն: Գյուղեր Հարուստ և ջրաբրի, գաշտային տեղերը արժանիք կը մշակեն և ունին խաղողի այգիներ, լեռնային մասերը անասնապահութիւն Համար լոյժ Հարմարութիւն ունին, ամբողջ շրջանը անասնապահու է, և պտուղի բոլոր տեսակները ունին:

Քեախթայի շուրջ կան երեք քուրդ ցեղախումբեր. Մրանս, Կաժոյ և Դաշքթան անուններով, շատ գյուղեր Հայ և քուրդ խառն են, կային նաև գուտ Հայերնակ գյուղեր՝ Հայի, Կապան և այլ անուններով, կային նաև անունը Հայերեն, բայց բնակիչները քուրդ գյուղեր: Հայ և քուրդ զինագծով, կազմավորով, ասրապով, սովորութիւններով, նրա ու կացով միննույն են, միննույն զրազմներով: Բոլորն ալ առողջ, քաղ և խիզախ և Հանգուզն ժողովուրդ են, Հայերուն մեջ կային նաև արհեստավորներ, 1915-ին բոլորն ալ փնայուցին, այժմ Հաս ու կուտր Հայեր կան այդ շրջանին մեջ:

Քեախթային երկու ժամ զեպի Հարավ—արևելք լեռներու մեջ ճանապարհին եղերքը, իրարմն բաժական Հեռու՝ ետանկյունի մը ծայրերը, երեք ծակեր կան, որու մեջը նգխատասի լափյաւրինթասին նման ծայրերու մեջ փորված, կանոնավոր փողոցներով, սենյակներով քաղաք մը կա, այժմ որևէ անունով չի հիշվիր:

Անգամ մը Կարոյնեց Տըյուն (Խկական անունը Հսկիյան Հակոր) Թաժուօրին՝ Գարզըտոյ իրենց պապենական գյուղը երթալու ժամանակ, եւսյն ծակին առջեկեն անցնելու առեն, փորձութիւնը կունենա ծակեն

վար ստորերկրյա քաղաքը իջնելու: Վայրի մեղուներ հան բույն գրած են և մեզք շինած են: Հակոբ մեզք աննել կուզե, հանկարծ ընդհատակյա քաղաքին ներսեն ազմուկ մը կը փրթի և անզգույն բնակիչներին արջ մը — մեզքի սիրահար — կը հարձակի Հակոբի վրա: Հակոբ հազիվ հրացանը շահած՝ արջը կը բռնե հրացանի ծայրեն և կառնե ու պատին զարնելով կտիչ փշուր փշուր կընե ու կը հարձակի Հակոբի վրա: Հակոբն այ արջին չափ ուժեղ երիտասարդ մը՝ կակսի մենամարտ մը երկուքին միջև: Հակոբը արջը կանակիին վրա գետին կը ձգե, արջը սաքի կելլե, կրկին կը հարձակի, հանկերը կը խրի Հակոբի ուսերուն և բղիկ-բղիկ, արյունլիվա կընե Հակոբի ուսերը, Հակոբ կրկին կզգեսանե արջը, չվարած և ինքզինքը կորսնցուցած, հանկարծ արմուկը, կողքի դաշույնին կը զարկ, կը հիշե, որ զառույն ունի, զառույնը կը հանե ու կակսի հարվածել, արջը կը սատկի, շարզված հրացանը առած ծակեն զուրս կելլե, վախենալով, որ ներսեն ուրիշ արջեր վրան կը հարձակին, անմիջապես ծառ մը կը բարձրանա, ծամերով կպտտե, մինչև որ քուրզ անցորդներ կու գան, Հակոբ ծառեն կիջն, արյունլիվա և քուրզերու հետ կը շարունակե համբան:

Քննաթղթի Հյուսիս-արևելյան կողմն է Փաքը-Հայքի մաս կազմող պատմական Կարկառ գավառը, որը այժմ կեղծոն ունի Կարկառ մեծ գյուղը 600 բնակիչներով՝ հայեր և քիչ թվով քուրդեր, (Ներկայիս հայեր զրեթե չկան, 1915-ի Քարդին զոհ զաչին): Կարկառը բարձր լեռան մը վրա անտառիկ դիրք մը ունի, կանաչը ավելի բարձր և անմատչելի լեռ մը կը պաշտպանե, երեք կողմը ձորեր կան, արևմտյան կողմը դեպի Կարկառ հառաջանալու համար պետք է անցնել կիրճե մը, որուն երկու կողմը սեպ լեռներ կան: Կիրճին աջ կողմը մուսաթին բերանը պաշտպանված է երեք հարկանի ամրոցով մը, որու հսկողոր մասը բացված է, մյուս մասերը կանգուն կը մնան: Կարկառի ետեւը Եփրատն է: Ունի հին բերդ մը՝ ավերակ գինաղի մեջ, և ուրիշ հնուիթյաններ: Հյուսիսային կողմի ձորի մուտքը զարժայ պաշտպանված է: Կարկառ գյուղին մեջ կա հինավուրց աղբյուր մը, մեծ սեկյակի մը չափ, քարաշեն, մեկ մեթր լայնքով, կես մեթր խորութեամբ, մաքուր ջուր մը կը հոսի աղբյուրին մեջն: Երջանը լեռնային և խիստ անառաներով ծածկված է: Կարկառի բնակչութեան մեծ մասը հայեր էին: Երջակա գյուղերը հայ և քուրդ խան էին: Պարսոմիկ, Տրքուզո և այլն հայ անուններով շատ մը գյուղեր կային: Տրքուզո գյուղը, որ Կարկառի Հյուսիսը անմիջապես ձորի մը մեջ է համանուն աղբյուրով մը, քարաշեն, որու մեջն առուի մը չափ մաքուր ջուր մը կը հոսի: Զինգակ ձորը լայն կիրճով մը կերկարի դեպի Եփրատ երեք քիլոմետրի չափ: Հոս է Եփրատի վերջին իջվածը, 15 մեթր բարձութենե մը հսկա գետը շատայնուով մը կը թափի

վար: Անձրեի ժամանակ նամբարդներ Հանախ այս ջրվեժին տակ կառուցա-  
տանին շքրջվելու Համար: Կարկառի կողմը՝ սափարակ և զուշտ, խոկ Հա-  
կառակ կողմը բարձր ու լեռնային է: Բարձունքի մը զրա կա Նուրիյն գյու-  
ղը, Ջազար կոչված քուրդ բնակիչներով: Սույն գյուղի լեռան ետևը կա Ան-  
կան անուեով Հայ գյուղը, լեռնային ու խիտ անտառներով ծածկված: Ջա-  
զար քուրդներու լեզուն (բարբառը) խրթին և գրեթե անհասկանալի է: Լեռ-  
նային և անտառապատ է այս շրջանը, տեղ տեղ հովիտներ ու գալտային,  
ուկի ամեն տեսակ պտուղներ և խաղաղի այգիներ ու վայրի պտուղներ ան-  
տառներու մեջ, արհեստավորները Հայեր էին: Հաղորդակցութեան Համար  
ճանապարհներ չկան, ամեն կողմ նեղ շափիղներ, տեղումն բերքերը կը  
կան տեղումն զրա, փոխազրութեանը ջրերներով և էջերով կը կատարվի,  
այն աչ շատ դժվար: Կույս անտառներ, կույս Հող և կույս լեռներ, Հանքերն  
ու բնական Հարստութեանները կը մնան պահպան լեռներու ծոցին մեջ:  
Կարկառի Հանդիպակոց կողմը, Եփրատի ձախ կողմն աչ մինչև Ջերմուկ  
ափանը, նույն լեռները, նույն անտառները և նույն պատկերը ունին. ամեն  
ինչ պահպան լեռներու ընդերքին մեջ: Քեարթայի արևելքը, Կարկառի Հա-  
րավը, կա Երրո գաղտակը, Թոխարիս կնդրանով, Եփրատի երկայնքին,  
լեռներով, Հովիտներով, և Եփրատի եզերքը ջրված գյուղերով, մինչև Սա-  
մուսատի սահմանը: Բնակիչները քուրդեր, Հայեր և քիչ թվով ասորիներ  
էին: Կար մեծ գյուղ մը Եփրատի եզերքը Մեպին անունով Հայաբնակ:  
Կարկառի և Երրոյի շրջանին մեջ քուրդեր կան, որոնք խոսակցութեան ըն-  
թացքին Հայերեն և քրդերեն բոռերը միաժամանակ կարտասանեն (որի-  
նակ՝ «ասս-աս փարա» և այլն) տառը փարա:

Եփրատի եզերքը կա ասորական ուխտատեղի մը Մորուֆա անունով,  
մտակը կա Հազրո գյուղը, ուր իրարմե մեկ երկու Հարյուր միկը Հեռու,  
զատ զատ Հսկա ծառեր կան, որոնք ուխտատեղիներ են, նմիրված Ա.  
Գնարգի, Ա. Սարգսի, Գրիգոր Լուսավորչի, Ա. Աստվածածնա և Ա. Նշանի:

Հետաքրքրական է, իրարու մտոյիկ շարք մը գյուղերու անունները,  
որոնք Հին ծագում ունին, ասորական կամ այլ, սակայն բնակիչները Հա-  
յեր, քուրդեր և Հաղվաղյուտ ասորիներ էին: Թիլ, Թիլպե, Ղար-Թիլպե,  
Էնիե, Ափան, Աշուրփո, Ուլպիշ, Թեյլիշ, Հեֆերտիշ, Փեթրկա և այլն:

Շրջանին մեջ կա նաև պատմութեան մեջ Հայտնի Մար-Պարսումի  
գտնքը, Թուպակ՝ կիսավեր:

Այս շրջանի Հայերու խոսակցական բարբառը բոլորովին կը տարբե-  
րի Ասորականի և շրջակա քաղաքներու բարբառեն, տեսակ մը լեռնային  
շինականի բարբառ, բայց ավառս, որ վերապարդներ բնավ չկան, գոնե մե-  
զի ծանոթ: Այդ շրջանի ասորիներն աչ նույն Հայերեն բարբառը ունին:

**1895**-ի ընդհանուր շարզի ժամանակ Ատիամանի չրջակա գյուղերու հայ բնակչութիւնը զերծ մնաց շարզն ու թալանն, քուրզ ցեղախումբեր մեռք չբարձրացուցին իրենց գրացի հայերու վրա:

Քուրքեր կարգ մը քուրդերու հետ (Ջրաձրանցի և Պեղըքըջի ցեղախումբերեն) Հարձակեցան Ատիամանի հայութեան վրա, սուլթան Համիտի կարգադրութիւնով ու հրամանով, թալանեցին բոլոր տուններն ու խանութներ, շարզեցին 560 հոգի ընտրանի հայեր՝ քաջ, խելացի, հարուստ և աչքի ընկած մարդիկ:

Մանուկան Սարգիս, լսելով որ Հայկական ետհանդներու մեջ շարզեր սկսած են, կշիմն Ատիամանի զինվորական հրամանատարին (Քուրք Հազարապետ մը) և 3.000 սոմսեյան հեշուն ոսկի իր տնտեսական հարստութենէն անկէ խոստում կտոնէ, որ Ատիամանի մեջ հայերու շարզ տեղի չպիտի ունենա:

Հազարապետը, ըստ թրքական ետնգամտութեան և ստորնութեան, զրոմը կտոնէ և իր կողպուտար բաժինը ապահովելու հետ շարզը տեղի կուտենա: Ութը որ շարունակ կ'ընդհանն ու կ'իջալին: Ատաշին առթիվ կ'հարձակին Մանուկաններու տան վրա: Հարութեան Մանուկան ստրկանակով քուրզ մը կ'սպաննեն, Սարգիս Մանուկան կ'հակառակի և կ'արգիլի այն հուշտով, որ Հազարապետը հիմա զինվորներով օգնութեան պիտի գա և պիտի արգիլի շարզը: Քուրք և քուրզ իրան խուժանը չեն համարձակիր ներս խուժելու և տունը կ'հրդեհեն, 72 հոգի կայրին բոցերու մեջ: Մանուկաններու խանում մայրը՝ Մըրսի Աննան, բերենն կը մորթեն սալապաթ չրերելուն համար: Մանոթ քուրզ մը բոցերու մեջն կ'ազատե մանկամարդ աշիկ մը, որուն մեկ թեւ այրած էր, կը տանի գյուղ, կը խնամն և քաղաքը խաղաղելու հետ, պատժով կը վերազարմեն իր հարազատներուն, այդ ընտանիքն չորս երեխաներ ազատվեցան՝ ետիս պահուցաւ հարստ գուրս գանձելուն համար:

Չելեզուն թաղը Փուլապըշիզ կրպոն իր տան վրա հարձակող քուրդերն մեկը կը զլսին գետին և կ'սպաննեն: Անբոխը, երբ կը տեսնէ հրացանազարկ քուրդին մեանիլը և կ'ըպոյի զիմազրութիւնը, կը փախչի: Փաշա-Փուլապի թաղին մեջ բերդին տակը, Ալայեյան Գնորզ եւ կը զիմազրեն և կ'սպաննեն մի քանի հոգի: Նույն թաղին մեջ Կեյրնայան Սաքս եւ կը զիմազրեն և կ'սպաննեն քուրզ մը: 2-3 որ այդ թաղին չեն կրնար մտն-

նայ, Հետո այդ երկու առեւերն այ կրակի կուտան, կիներն ու երեխաները Խախտապետութեան կը զրկեն և Գնորգն ու Մարտի կոյրիկն իրենց առեւերուն մէջ, այրեցին նաև Շիշմանյաններու տունը՝ երկը եղբայրներն սպաննելու Հետո կիներուն ու երեխաներուն ձեռք չզարկին: Քուրքեր ենեզամարտին միշտ քուրգերը առաջ կը քշեն:

Գարգ մը Քուրքեր ու քուրգեր իրենց ծանոթներուն ու զբաղիներուն կը թելադրեն, որ առժամայեա իսլամութեանը ընդունին և այսպիսով կողատուին շարգէ, խաղաղելու Հետո կը լքեն իսլամութեանը: Ուրիշ քուրգ մը, Հայ մը սպաննելու առաջ, կառաջարկէ որ իսլամանա և կրտ. ստալաֆաթ բերս: Հայը կրտ.

— Ի՞նչ ըսեմ:

Քուրգը դարձայ կը կրկնէ նույնը: Հայը, որ չգիտեր թէ ստալաֆաթը ի՞նչ է, նույնպէս քուրգն այ չի գիտեր, ուստի տեղն ու տեղը կուսանն: Ստալաֆաթ ըստաղը Հեռուայն է. «Ես իրահա իլ—լայլահ, էշհետու տնու Մուհամմետն բնուլ ուլլահ» (Աստուծոն զատ ուրիշ Աստուծ չկա, կիկայեմ որ Մուհամմետը աստու. առաջայն է): Այս ստալաֆաթը ո՞ր առեւ ըստը կընդունովեր որպէս իսլամ: Ուրիշ Հայ մը բողոքաւարան կազմին և կրտ. «Տեր, թող դոքա, զի ոչ գիտեն զի՞նչ գործիցեն»: Այս խելն այ կաջիկի Հարգաններով կմտնի և միայն ինքն է, որ չի գիտեր, թէ ինչու՞ Համար կը մտնի: Այրիսանյան Մարտոն՝ կուր մը, կիպարիի և Հայոց Էսկիսերայ թաղի մզկիթին միմարիթը կապատտան: Քուրք մուկղղիկը (միմարիթին վրա էջան կանչող մուլլան, որ իսլամները աղոթի կկանչէ) Մարտոյին կզրկէ և միմարիթին վար նետել կուզէ, Մարտոն կիտիթի մուկղղիկն և երկուքը կիյեան միմարիթին վար՝ Քուրքի մը վրա: Տակի Քուրքը և մուկղղիկը կաակին, Մարտոն ող կմեա, ամբողջ կպտա՞ մի սպաննէր, քանի որ միմարիթին ինկազ ու չմեազ, ուրեմն Աստուծ պահեց և չուզեց, որ մտնի: Մարտոն ող մնաց: Իսկ 1915-ին Մարտոն ևս սպաննեցին:

Ամենազերիին տունը, որ չէր թալանված և ուր Հազարգած էին 300-ի չափ զինված երիտասարդներ, խուժանը Հասկչած ըլլալով, չէր Համարձակած Հարգանկելու՝ ուրիշորդ և զերիին ուրբաթ որը 500 Հոգիանոց խուժան մը կուգա մեր ասն վրա: Ներսիմները կուզեն կրակել: Ուրիշայի Ավետիս Գուլանեյան և Գրիգոր Թենեքեեյան, որ մեր տունը Հուր կզանովին, Ավետիսը զիմաղբելու արգելք կՀանդիտանա (Ավետիս Գուլանեյան զուճկեցազ 1915-ին Ուրիշայի մէջ, իսկ Գրիգոր Թենեքեեյան 1895-ի շարգէն զերջ Ամերիկայի Միտչայ Նահանգներ զմոց): Մինչ այդ ծանոթ քուրգեր զազանի կրտեն, թէ չներսիմները աանիքեն Հեռացուցէր առեւեն մինչև ձեր Հեռանալը, մենք դուռը չենք շարգեր, բոլոր քաղաքը

Քալլվեցա՞մ, այս առեւը բազաուսթյուն չպիտի կազմեւ: Ներսիսները կհեռանան ու կապաստանին թաղին մեջ Քալլված պարսպ տունները, առեւը կը Քալլի՞: Հախոզ սրը թուրք շէյխ մը եկեալ է մեզ տարա՞մ իրենց առեւը, մեաքը առպար մը, որո՞ւմ բազմութեան մեջնէն ետեւս կը բռնար: Ծանապարհին Հանդիպեցանք խարուշիի սրբամ մերկ մեռելներու, որոնց սրունքները գեղես կայրեին, շէյխը մեզ պահեց իրենց առեւը, մինչև քաղաքին խաղաղիլը: Միամամանակ տեսանք շէյխին առեւը, մեր տան առարկաներն ու կահկարասիները՝ բերձած զտեսզան քուրզերու կողմ, հետագային գլուզ տանելու համար:

Պետք է Հիշատակեմ ուրիշ զովեշտ մըն ալ: Նախքան մեր տունէն հեռանալը և Քալլվիլը, ծանօթ թուրքերու գաղտնի թիւադատութիւնովը մեր տան կառուրին ծայրը մփխրին զրա գաժազանի մը ծայրը անբացման ճերմակ լաթի կտոր մը անկեցին, որպէս թէ ապաստամբան ենք և Հեռահանման և ներման արժանացած, իսկ այդ 300 հոգին ևս ոչ միայն:

Եսա մը թուրքեր իրենց զրացի և ծանօթ Հայերը տարին իրենց առեւերը և պաշտպանեցին մինչև վերջ, իսկ ոմանք ալ գաժազանցին և առեւնէն զուրս Հանելով սպաննեցին կամ սպաննել տվին, իսկ կիներն ու երեխաները պահեցին:

Ավետիս Գորանեյան Ատիամանի Զարդեն ազատվելի Հեռո գնաց Սերֆա, ուր երեք ամիս Հեռո տեղի ունեցա՞մ Սերֆայի Զարդը: Զարդը ուշացած էր, որովհետև սերֆացիները սկիզբը զիմազրած էին, իսկ թուրք կառավարութիւնը, ինչպէս միշտ, այս առթիւ ևս Հազարումնի խոստումներով և երգումով, որ Զարդ տեղի չպիտի ունենա, Հայոց զինքերը Հաճաբելի Հեռո, տեղի ունեցա՞մ Զարդերու ամենաստեղծակին: Այս ու այնտեղ Հազարաժողովներ Զարդելի Հեռո, 5-000 հոգի՝ մեծ ու պզտիկ, այրեցին Հայոց եկեղեցիներն մեջ: Իսկ Ավետիսի աղջիկը՝ Խանըմ Գոնասրածյան, 1915-ին Սերֆայի ապստամբութեան ատեն Հերոսարար Հրաչքներ գործեց և վերժը լուծելի Հեռո, երբ ապստամբութիւնը զոսկվեցա՞մ, Ենվզի փայտի և գերմանացի Հերն էքարտի աջակցութեամբ, Խոնըժը թուրք զինվորական առյուտի կողմն զատապարտվեցա՞մ 101 տարի բանտարկութեան: Անգլիական բանակին Սերֆա մտնելէն Հեռո (1918-ին) Խանըմը ազատվեցա՞մ և եկեալ Հայեպ, ուր մեռա՞մ վերջին տարիները: Ատիամանի Զարդեն ազատման ժողովուրդին մեծ մասը Հաճաբելին ազգային խոնը, մեծաբանակ նա՞մ և փայտ գիղեցին խոնի բակը, մեռացուցներն այրելու համար. քաղաքի մաֆթին (մահմեդական օրինաց Հմուտ վճատու) ազգով սրար, շէյխ Մահմա Ալի Հիլայի արգելք Հանդիսացա՞մ: Բուրք մեռելները մերկ վիճակի մեջ ձգած էին կոյուղիներու մեջ: Հայերը ամերձ

ու թալլված առևները վերագրանալի Հետո Հայոց գերեզմանատան մեջ մեծ թու մը փորեցին և բոլորը լեցուցին մեջը:

Իսկ թուրք կառավարութիւնը ձեռնհասութեան Համար մաս մը անկողին, ամանեզնե, մզկիթին բակը տարին ու Հայերուն բոխն թէ՛ եկեք ձեր գուշքերը տարեք: Մեր գրացի ներսես և Մարթա՝ այր ու կին, որ խոր տնտեսութեան Հասած էին և գտնամայ տարիքի մեջ, իրենց սան ջրհորը ձգած էին գլխիմար, զոր շարութենը Հետո Հանեցին և թաղեցին:

Ջարդեն Հետո, շատ մը Հայ ընտանիքներ փոխադրվեցան Այնթապ և Ատանա, որպէս ավելի Հայաշատ և ապահով վայրեր, ընդ որս նաև Հակոբ Ալիքտանյան Այնթապ փոխադրված էր: 1915-ի բնակիչնը մեծ եզեռները վերջ, 1924-ին, երբ Հալեպ (Սուրիա) սպառնաւած էինք, տնտեսի Հակոբ էմմին Հեռակայը պատմեց. «1895-ի Ջարդեն Հետո, երբ Ատրամտի կյանքը բնականոն զարմով, թուրք ծանոթներես մեկը խանութս եկավ և ըստով. — «Հակոբ, գիտն՝ ս, մեր կառավարութիւնը ինչու՞ Ջարդէ տվով Հայերը: Ջարդեն առաջ, 2-3 շաբաթ շարունակ ազոթի ժամանակ, մանավանդ ուրբաթ օրերը, մզկիթներու դռան ետեւ և ներսը գինեմ ժողովի պահակ կեցան, կառավարութիւնը լուր տված էր թուրք ժողովուրդին, թէ Հայերը ազոթի ժամանակ պիտի Հարձակին մզկիթներու վրա և պիտի Ջարդեն թուրք ժողովուրդը»: Թուրք կառավարութիւնը այս զավագութիւնը կազմակերպած էր պարզապէս անոր Համար, որ խուճանը գրգռե, որպէսզի անխնա Ջարդեն և Հետո կառավարութիւնը ինքզինք արդարացնեն»:

Հակոբ էմմին պատմեց նաև ուրիշ գեղաց մը. «Եսնկամ մը Հայրոց Հակոբի Հետ Ուրֆա կերթայինք՝ երկուքս միտանակ: Ուրֆայեն ուրբ ժամ Հեռավարութեամբ Չուխուրաշ քուրդ գյուղը իջեռնեցանք: Կես գիշերին Հակոբը ըստով, ել պիտի երթանք: Անարկեցի, թէ գիշեր է, նամբան վտանգաւոր, մի վտանգար, — ըստով: Ծամբա ինկանք, երկու ժամ Հետո Հասանք Տալանպան ըստով տեղը. խոշոր քարերով և ժայտերով ծանկեմ բլուրներ են, նամբան խիստ գիկզտակ, երկու կողմի բլուրներու ստորոտեն նեղ շաղիղներն օձապատույս կերթայինք: Նույն գյուղեն երկու քուրդեր մեզ Հեռապեղելով եկած էին այդ ամայի տեղը՝ կողոպտելու Համար: Հակոբ անմիջապէս նշմարեց, գրաստներեն վար իջանք, ինձի ըստով, դուս անասունները քշե և երբ որ մեր վրա Հարձակին, քու վրաստ Հարձակողը 2-3 բուգե գրացուր, ես շուտով քեզի օգնութեան կը Հասնիմ: Երբ նեղ կիրնին մեջ մեր վրա Հարձակեցան, իմ վրա Հարձակողը քիչ մը գրողցուցի. Բայց քուրդը գիտ գեղտուկեց, մինչ այդ արդեն Հակոբը մշուտը գգեանած, քուրդին գյուտի եղծուներով (գլխու փաթիթոց) մեռեցին ու ոտքերը կապած, Հաստով ինձի օգնութեան, այն քուրդն ալ պաակեցուց, անոր ալ մեռեցին ու ոտքերը կապեց և



երկուքը իրարու կապելն Հեսո, զնայ ժայտի մը տակ պահած գրամն ալ բերավ, քուրդերուն ցույց տվավ, ըստվ թէ՛ ահա այն գրամն է, որ չկրցար առնել, Հոս կապված կը մնար, վազը առտու նամերորդներ կուզան և մեր երեսը կը թքենն ու մեր կապանքները կը քակեն: Երբ Ռեքֆայեի վերագարձանք նույն գյուղը, գյուղապետ Տեսո քեհյան (քուրդ), որ Հակոբի մտերիմ բարեկամն էր, Հաջորդ օրն իսկ երբ կիմանա եղելութիւնը, այդ երկու քուրդ ավագանիները իրենց ընտանիքներով գյուղին գուրս կը քննէ»:

Տարիներ Հեսո նույն Տոյանդանի մէջ գարձայ գիշեր ատեն նույնպիսի գեպք մը կրկնվեցա՞վ ուրիշ երկու քուրդերու Հեսո, այս անգամ Հակոբին կրկնեցանար Պըլըզենց Կրպուշը: Այս երկու քուրդներն ալ նույն մեով նույն բախտին արժանացան:

1895-էն առաջ Ատրիանոսի անմիջական շուրջի կալվածներուն (տյգի, պարտեղ և մշակելի հողեր ու խանութներ) Յ՛՛՛՛՛՛՛՛՛՛՛ Հայաց կը պատկանէր: Մասնագորտակա սոր և այրիներ սկսան իրենց կալվածները ծախել թալանով Հարստացած թուրքերուն: Հինգ կամ վեց տարի Հեսո, երբ ժողովուրդը կամայց—կամայ վերականգնեց իր տնտեսութիւնը, գառարկապարս և ծուլ թուրքեր սկսան իրենց գնած կալվածները ծախել Հայերուն և նախկին վրեակն ու Համեմատութիւնը վերականգնեց Հայ ժողովուրդը կալվածներու տեղամասը և քիչ մըն ալ տվելի:

Ատրիանոսի Սարգիս Տեմիրճյան, որ իր մարթին վրա կրած է որութիւն քուրդ արհաւիրքներն ու առուապանքները, կըզրէ Հետեյալը.

«Օրբորդ Քորինա Շաթըզ, Հարուստ ընտանիքի մը զավակ, իր ծաղիկ Հասակին մէջ որոշած էր կույս մնալ ու ապրիլ մինչև մահ և ծառայել Հայերուն: 1895-ի խորհուն անմիջակա ետք իր պաշտօնին ու սրտին շունչը լայն բացած էր Ռեքֆայեի և շրջանի քաղաքներու սրբացած, սոր և որբնայրիներու Համար: Բիշ ժամանակվան մէջ, բառին արդիական իմաստով, կազմակերպած էր մանչերու և աղջիկներու առանձին սրբահոցներ ու այրի կիներու Համար արհեստանոց—մեղաքործանոց մը: Իր սրտառուչ կանչերը Ամերիկայի քաղաքացիներուն՝ օգնելու Համար Հայութիան մնացորդներուն, ապարդշուն անցած չէին, օգնութիւն Հեղեղ մըն էր կողոզեր Ռեքֆան ու բարբարոսներու ընդհատած կյանքը իր բնականն Հուներն մէջ կը մտներ:

Ատրիանոսի Հայութիւնն ալ օգտված է այս աստվածաուսք օրբորդին: Հայ բողոքականներու պատվելի Վարդան Նանարյան, Հովաքելով քաղաքի Հրապարակը մուրացող երկսեռ Ատրիանոսի մանուկները, 150-ի շօք գրկած էր միս Շաթըզին, որուն մայրական գուրգուրանքով բավական ատեն մեծնայե վերջ, Հոնձնված են Հայասեր տորթ. Լերսիուսի բա-

ցած գերման որբանոցին: Այս նոր Հասարակության մեջ, սակայն, Ատրամանցի որբը, ինչպես նաև ուրիշ անզայի որբերը, իսպառ զրկված էին միս Տաթևզյան գուրգուրանքեն: Հանձին որբանոցի ընդհանուր տնօրեն՝ Հավեա անիժնիչի Հերն Էքարտի, խոշտանգումի, խարազանումի ու կես տնօրնության սարսափելի շրջան մը բուխրած են: Վանտալ Էքարտի բերնին մեջ սովորական խոսք եղած է կոչել երկսես՝ ազգաբնեւրը «Հայեր, վասակեր, էշեր, սօի գազակներ, ինչու»՝ մեր Հայրերը սասկեցնող շուն տանիկները մեզի ողջ են ձգեր» և այլն:

Հերն Էքարտի շրջանին է, որ սպաննված են երկու աղջիկ և Ատրամանցի Հարսություն Տնօրնչյան (Հարպոյան): Փոխդրեմի դիմած է Ատրամանցի պատանին, իր վրայն նետած է որբության ազտոս պատմուհանը, մեկ մարզու պես ծառայած է Էքարտի աջ բազուկը եղող որբանոցի «Հայրիկ» անունը կրող Հրեշ Հովհաննես Էֆենտի Ոսկերիչյանի զեմ, փառափոր ծնծ մը քաշած են անոր՝ երկսես որբերու ներկայութեան: Էքարտ տեսնելով, որ կարգը իրեն պիտի դար, զուրս կը վտարն շատ մը Ատրամանցի պատանիներ, որանք թերուս միճակի մեջ կատարվին իրենց երկիրը վերագառնայ: Անյուր ոճիրներու լուրերը աչն ու մախն վերջապես կը Հասնին Լեւրիտւայան Հայրենիքը: Հայ որբի բարեկարգներ պաշտոնագուրկ կը նեն Էքարթն ու ազտոս Վանեսը ու անոց տեղ կը զրկեն Տանիժարգացի ազնվական ցեղն՝ Հայ ցեղին Համար աշխատելու ուխտագոր, սրտով ու մարմնով գեղեցիկ ֆրոյլայն Քառեն Եփփեն (երկրորդ միս Տաթևզը), որ եկած վայրկյանն կը դարմանն որբերու վիրափոր սրտերը և ույժ կուտա ազգային ոգիին: Ամիսներու ընթացքին կը սորվի Հայերենը, ուշիմ պատանի ու աղջիկներ զասելով կը զրկն Հայոց միացյալ Ազգային վարժարանը (լուսավորչական, բողոքական), որ ծրագրված և գլուխ Հանված էր նորեն եպիսկոպոսի և Փորինա Տաթևզի անխանջ Զանքերով: Բազմական թիվով Ատրամանցիներ, Եղեսիս Բարձրագույն վարժարանը լմնցնելով, կը վերագառնան լուսի ջաշը ձեռքերնին, որոնց մեջն երկու Հոգի նաև կը զրկվին Այնթաղ՝ ստանալու Համար գոյնեական բարձր ուսումներ — որբորդ Աննա Մ. Աբրահամյան և Սարգիս Տնօրնչյան (Հարպոյան)<sup>66</sup>:

Ֆրոյլայն Քառեն Եփփեն շարունակեց իր դործը 1918-էն Հետո ևս Հալեպի մեջ, իբր Ազգերու լիկայի ներկայացուցիչ, Հայտնի քեւախառն յարթար նախնին աշակցութեամբ: Քառեն Եփփեն կատարյալ Հայասեր մըն էր, որ իր կյանքը նվիրեց Հայոց Համար՝ մեծ ծառայութեաններ մատուցանելով: 1918-ին և Հաշորդող տարիներուն տասնյակ Հազարներով որբեր և

<sup>66</sup> Պատմութեան նւթանակի, էջ 46-47:

այրենիք Հափաքի տալով Սուրիական անառաղանն ու այլևայլ վայրերն, պահեց—զարչապանեց, ուսում—արհեստ սորվեցուց ու ինքնաբաժ գառնալի հետ անոնց տեղը նորերը առավ: Իր փափաքին Համաձայն թաղվեցավ Հալեպի Հայոց գերեզմանատան մեջ, մարմինը գմբազեցավ և մասնավոր գամբարան մը շինվեցավ իրեն համար: Իր գործը ներկայիս ևս կը շարունակվի Հալեպի մեջ, իր մեաքին տակ մեծցած Լեոփոլա Գաշչիկի կողմն:

Իսկ գերմանացի Հերն Էրարթ, որ միսոնար և բարեգործ անունին տակ թաքնված զինվորական մըն էր, թնդանոթածիղներու Հաղորապետի աստիճանով և լրտես մը, 1915-ին Ուրֆայի ազատամարտիցյան ատեն, երբ բերդին վրա տեղափոխված թրքական թնդանոթը զորմածոց թուրք թնդանոթածիղները նսնկ ետե գեաթին կը գլորվին Հայոց զնդակներով, թնդանոթը փոխադրեցին Թլլիքուտուրի թաղի բարձունքը և այնտեղն էրարթ թնդանոթին զլուխը անցած անձամբ սմբակոծեց Հայոց եկեղեցին և թուրք վայրագույցյան զեմ ծառայած Հայույցյան վրա, որոնց մեջ կաշին իր Հասցուցած շատ մը սաները, ընդ որս նաև Ասիամանցի սաներ, և խորտակեց Հայոց ազատամարտիունը: Գերմանացիներու պարտութենեն հետ փախավ Գերմանիա ու Հոն կնքեց իր անփառունակ մաշը:

## Ց. ԱՏԻԱՄԱՆԸ ԽԱՐԲԵՐԴԻ ԳԱՎԱՌԻՆ ՄԵՃ

**Մ**անուկ Գ. Ճիզմեճյան կը գրե հետևյալը. «Որչափ որ գիտանը, թուրքիս կանոնավոր մարդահամար ունեցած չէր: Խարբերդի կուսակալույցյան ազգարնակչույցյան մասին կուտանը հեանյալ ցանկը, Հափառարար անվամ Օսմանյան սահմանադրույցյան սրերուն:

Խարբերդի վիլայեթը (կուսակալույցյուն) 575.300 բնակիչ ուներ, որոնցմն 174.000-ը քրիստոնյա: Այս քրիստոնյաներեն 168.000-ը Հայեր էին, 5.000-ը Սուրիացի (ասորի) և 1.000-ը Հույն: Իսլամ ազգարնակչույցյունը բազկացած էր 180.000 շիիտի քրդըլլրաշներն, 95.000-ը քուրդերն (75.000-ը նստակյաց և 20.000-ը վաշկատուն) և 126.000-ը թուրքերն<sup>55</sup>:

Խարբերդի գավառի բնակչույցյան ընդհանուր թիվը ըստ Vital-Cuinet-ի (էջ 322, Բ Հատոր).

<sup>55</sup>Մանուկ Գ. Ճիզմեճյան, Խարբերդ և իր գավառները, Յրեզն-Քալիճորմիս, 1965, էջ 49:

575.314 քիվը բաճակած է երեք գավառակներու վրա հետևյալ ձևով

Գավառակներ	Մուտքնաճ		Քուրթեր		Ղեզու սրահ		Չայ լուսավորչ.		Չայ կաթոցիկ		Չայ քողողակ		Չայն սրբուտոց		Գումար ըստ գավառակների
	այր	կին	այր	կին	այր	կին	այր	կին	այր	կին	այր	կին	այր	կին	
Նարթեղի Սեզոլ	64.456	75.000	10200	10750	44.300	44.600	10.152	20.191	430	475	2500	2600	300	350	295.704
Մալաթիա	56.000	57.000	10.000	12.000	33.060	33.000	7.060	8900	370	400	150	200	---	---	216.260
Տեղալիճ	7.460	8.000	6.000	6.000	13.700	14.000	3.560	4.000	---	---	300	310	---	---	63.330
Գումարներ ըստ սեռի	126.916	140.000	26.200	28.750	91.080	91.500	29.792	32.191	800	875	2950	3110	360	360	
Գումարներ ըստ կրթության	266.916		54.950		182.580		61.903		1.675		6.060		660		575.314

Ընդամուր Գումար

**Խաղրերդի կուսակալության առևտրի տարեկան ցուցակը.  
վերջին հինգ տարիներու միջինը. ըստ Vital-Cuinet-ի (Խատր Բ, էջ 348)**

Արտածում		Ներածում	
Ապրանքների անվանումը	Արժեքը դրուշով	Ապրանքների անվանումը	Արժեքը դրուշով
Արմսեր	1.965.000	Բանրակա զործվածքներ	1.800.000
Քույզ և բանրակ չզործված	3.800.000	Մամած	3.000.000
Ափիում	5.800.000	Մուրճ, շաքար	800.000
Այլի մորթ	2.000.000	Նավթ	800.000
Դեղին հումա	155.000	Գունչի կաշի	1.300.000
Պտուղներ	300.000	Երկաթ, անագ, պղինձ և այլն	600.000
Չամիչ, հուշ, ընկույզ և այլն	300.000	Ժամացույցներ, գոհաբերիչ, ապակեղեն	250.000
Ծիրանի կուտ	179.000	Ֆես	350.000
Մեղր և մեղրածոճ	232.000	Մետաղա պիտույքներ	100.000
Գինի	250.000	Դեղորայք, նեղիեր և այլն	140.000
Շինվաճառ	710.000	Յուղերղեն և փղաբերի քույթ	740.000
Շերամի բոճ	664.000	Լուցիկներ	
Մետաղե և բանրակ զործվածքներ	2.894.000	Չամազան	
Գրգ	700.000		
Տեղական կոշիկներ	598.000		
Չամազան	810.000		
Արտածումներու արժեքը	21.357.000	Ներածումներու արժեքը	10.000.000

Գարկեր.

**Խաղրերդի կուսակալության պյուտճեի մուտքի բաժինը  
(Խատր Բ, էջ 348) 1889 մարտ 13 – 1890 փետրվար 28**

Կաշվածքի տուրք	3.372.874 դրուշ
Նկանտահարկ	2.202.397 *
Զինվորական ծառայության փոխաբերն վճարվող հարկ	1.796.848 *

Ստացվածքի տուրք	171.644 *
Արմտիքի տասանորդ	8.539.981 *
Սնասունների հարկ	2.579.719 *
Ստացվածքներու տարեկան տուրքը և հետևյալ պարտքերը	600 *
Չանագան տուրքեր	16.640 *
Ծխախոտի և որսորդության արտոնագրերն	737 *
Դանքեր և անտառներ	120.708 *
Չանագան եկամուտներ	48071 *
Պատարաններու եկամուտներ	192.281 *
Պետական պաշտոնական կալվածատոմսերն	391.592 *
<b>Գումար</b>	<b>19.434.072 դրուշ</b>

Մտտավորապես 4.500.000 ֆրանք  
Vital-Cuinet, էջ 348

*Ըստ Vital-Cuinet-ի Խարրերգի կուսակալութիւնը 1890-ին ունէր 575.314 բնակիչ, իսկ ըստ Մանուկ Գ. Ճիզմենյանի, 1908-ին (Սահմանագրութեան օրերուն)՝ 575.300 բնակիչ: Այս երկու թիվերն այ ճիշտ չեն, թուրք կառավարութեան կողմէ գիտումնազօր կերպով արժամ հասկանալի պատճառներով: Իսկ տիներն փաստը Հեանյալն է:*

*1889 մարտ 13 – 1890 փետրվար 28 Խարրերգի կուսակալութեան պաշտօնէի բաժնին մեջ արժանագրված է 1.796.848 զրուշ գինձորական ծառայութեան փոխարէն վճարվող Հարկ: Զինձորական ծառայութեան փոխարէն վճարվող Հարկի քանակն էր յուրաքանչյուր այր մարդու համար 40 զրուշ՝ ընծա օրէն մինչև մահ: 1.796.848 : 40 = 44.921 կտտանանք այր մարդ:*

*Ըստ վիճակագրութեան Խարրերգի կուսակալութեան Հայ ազգայնականութեան այրերու թիվն է 33.842:*

44.921 - 33.842 = 11.079, այսինքն Հայ այս մարդ պահպան ցույց տրված է ըստ պաշտոնական վիճակագրության, իսկ գինեգործական տուրք չվճարելու համար չարձանագրվածները մեկ կողմ թողնած: 1890-1908 տարիներու ժամանակամիջոցին Խարբերողի նախնեզը անում չունենալիք գատ, 14 անձի պահպան մըն ալ կա: Ուրեմն 18 տարվա ընթացքին այս գովառը անում չէ՝ սենցամ, բան մը, որ անկարելի է: Եթե 1895-ին Հայերը շարզվեցան, իսկ Թուրքերն ու քուրդերն ալ չե՞ն անած:

Մինչդեռ համեմատարար հաճախի անդեկուսթյուններ է ավել 4. Գոյսի Հայոց պատրիարքարանը, որը 1882 թվականին ավյալներ հրապարակեց Հայ բնակչության թվի վերաբերյալ: Այդ ավյալների համառոտ թուրքական տիրապետության տակ գտնվող Հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2.660.000 մարդ, ընդ որում Վանի վիլայեթում 400.000, Ափազի վիլայեթում՝ 280.000, Խարբերողի վիլայեթում՝ 270.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Դիարբեքիի վիլայեթում՝ 150.000, Էրզրումի վիլայեթում՝ 280.000, Կիլիկիայում (Ադանայի և Հալեպի վիլայեթներ)՝ 380.000, Ասիական Թուրքիայի մնացած մասերում՝ 455.000, Եվրոպական Թուրքիայում՝ 195.000:

4. Գոյսի Հայ պատրիարք Ենրեսն Վարժապետյանի կողմից Բնույնի կնեզրես ներկայացված հուշագրում թուրքալսաաակ Հայերի թիվը 1870-ական թվականներին հաշվվում էր 3.000.000, որից 400.000 Եվրոպական Թուրքիայում ու 4. Գոյսում, 600.000՝ Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670.000 Փոքր Հայքում (Ափազի վիլայեթի և Կեսարիայի սանջակ) և 1.330.000՝ Մեծ Հայքի թուրքական մասում (Էրզրումի, Վանի վիլայեթները, Դիարբեքիի վիլայեթի Լյուսիսային մասը և այնուհետև Սղեբոզի սանջակի Լյուսիսային մասը):

Մկրտիչ Բեյ-Դադյանը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Հայերի թիվը 1870-ական թվականներին սկզբներին հաշվում էր 3.400.000, որից 150.000 4. Գոյսում<sup>66</sup>:

13 Հայաշատ գավառներ կային Թուրքիայի մեջ, ևս ութը գավառներ, որոնց մեջ պատկանելի թիվով Հայեր կային՝ մեկ կողմ թողած Իրազը, Հարոգային Սուրիան և Իսրայելը: Առանց երկրայելու, եթէ ոչ ավելի, գունե երեք միլիոն Հայություն մը կար թրքական իշխանության նեթակա, որուն երկու միլիոնը ըմալնվեցավ 1915-1918թթ. խորգի և տարագրության գաժան ու սարսափելի տարիներուն համապարհներու վրա սոված,

<sup>66</sup>Ս. 4. Արմալյան, Գայ ժողովրդի պատմագրական պարսաթը թուրքական թուլակետության դեմ, Երևան, 1955, էջ 34-35:

Հյուծված և աղքեղու աննետարրական միջոցներն զուրկ, նույնիսկ պուա մը շուրթի կարտառով, անթաղ ու անգերեզման:

Հայկական ՄՍԲ Առյաւս.— «Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանի տերիտորիայում, Օսմանյան կայսրության սահմաններում, պահպանվել էր Հայկական սափար բնակչություն: 1914թ. ամբողջ աշխարհում եղած 4.47 մլն Հայերից 45.9 տոկոսը (2054 Հազ. մարդ) բնակվում էր Թուրքական կայսրության, 45.4 տոկոսը (2.026 Հազ. մարդ)՝ Օսմանյան կայսրության սահմաններում և 8.7 տոկոսը (390 Հազ. մարդ) աշխարհի այլ երկրներում<sup>1</sup>:

## 9. 1908-Ի ՕՍՄԱՆԹԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ե զրուպական զեց մեծ պետություններ որոշած էին թուրքիան բաժանել իրենց մեջ և, որպեսզի այդ բաժանումով զարսկան Թուսաստանը իր ստերը չերկարն դեպի Միջերկրական ծով, Անգլիան և Ճրանտիան թելազրեցին թուրք իթթիհատականներուն սահմանդրություն հաշակել՝ թուրքիան բաժանումն ազատելու Համար: 1908 Հուլիս 24-ին հռչակվեցավ Օսմանյան խարուսիկ Սահմանադրությունը՝ ազատություն, արգարություն, հավասարություն և եզրայություն սկզբունքերով: Բայց հազիվ տարի մը անցած, թուրք կառավարությունը ցույց տվավ իր շնաաամները և իթթիհատը ծրագրեց Կիլիկիայի Հարզը, որոնք ազատ մնացած էին 1895-ի Հարզերին: 1909 մարտ 31-ին թուրք խուժանը հարձակեցավ Կիլիկիայի կեդրոն Ադանայի և չրխիայքի Հայության զրա: Հայեր դիմազրեցին: թուրք կառավարությունը զիմեց խորամանկություն և խարերայության՝ հայոց զներերը պահանջեց: Հայեր զարերու և 1895-ի Հարզերին տտանց խրատվելու և փորձառության մուք բերելու, միամտարար հանձնեցին զենքերը: Իթթիհատի կառավարությունը Կ. Պոլսեն թրքական բանակ մըն ալ զրկեց, որպես թէ խաղաղությունը հաս-

<sup>1</sup> «Առլուսյան Պալատան» օրաթերթի (4 փետրվար 1960 թվականի) տրված մարդահամարի արդյունք՝ Գայաստանի և անրոցը Առլուսյան Սրուքսան մեք 2.787.000 է կայսրքան քիվը: Իսկ Արլուսաստանի կայսրքան քիվը՝ 1.500.000, առանց կաշմուռ, Ճուլղարիա, Ռուսմինա, Արմենիան, Գրազիլիա, Եգիպտոս, Պունաստան, Իրազ, Կազեխստան, Անգլիա, Գերմանիա, Պաղեստին, Անդր-Պորլսանան և Դոնլստանան և ցրված զանազան երկրներ:



տատելու համար: Այս անգամ թուրք խուժանը և բանակը միասնաբար հարձակեցան Հայոց վրա և ջարդեցին 30.000 Հայեր, այրելով, քանդելով, թալանելով քաղաքներ ու գյուղեր: Նույն վտանգը կախված էր նաև Հայկական մյուս գավառներու գլխին: Ատիաժանի թուրքերու տուները տեղափոխեցան 15.000 քուրդեր, 15.000 քուրդեր ևս եկան պաշարեցին քաղաքը մի քանի օր, բայց չհամարձակեցան հարձակիլ: Ատիաժանի Հայու-թյունը մեկ տարվա ընթացքին լավ կերպով գինված էր Հունական կրակներով և զանազան անասակի զենքերով: Արզնն 1860 թվականն սկսյալ ազատ կերպով ոչ պետական զենքեր կկրեին թուրքերու և քուրդերու հետ համահավասար: Զորքը վերջ գտավ միայն Կիլիկիայի ազնաով և սուլթան Համիա ևս դաճընկեց եղավ: Փահակալեց այրույիք, բխամիտ և հաշիշանուղ եղբայրը՝ Բեշտա, որը Համիտի գահակալության որևէ միևնչև դաճընկեցությունը բանասարկված էր Համիտի կողմն և կատարյալ խաղայիք մը ու գործիք մը՝ իմթիհատի ձեռքին մեջ:

1908-1914 Ատիաժանի Հայությունը անտեսադես հասած էր նախանձելի գիրքի մը: Դպրոցը կանոնավորված, շատ մը պատանիներ Այնթապի, Քարբեղզի, Թարսուսի միջնակարգ վարժարաններուն մեջ ուսում կտանուային, ոմանք արզնն բարձրագույն ուսում ստացած էին թրքական, ֆրանսիական, գերմանական համալսարաններու մեջ:

Հայեր զինվորադրվեցան թրքական բանակի մեջ և լավ զիրքերու հասան շնորհիվ իրենց նարպիկության և ուսման: Թուրքեր զինվորական ժարգանքի ատեն ալն ու ձախը չէին գիտեր, ուստի մեկ ականջն սոխ, մյուսն սխտոր կկախեին և ժարգիչները կըսեն. «Հեյն սիլ, հեյն փիվազ» սխտորի կոզմը, սոխի կոզմը:

Ամեն տարի նոր գասեր գորակույի կենթարկվին: Թուրքեր Ատիաժանն միևնչև Մայաթիա երթալու ժամանակ 95%-ը անպայման փախուսա կուսային, իսկ Հայեր՝ երբեք:

## ԱՏԻԱՍԱՆԸ Ա ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ՇՐՋԱՆԻՆ

### 1. Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԹՈՒՐԳԻԱՆ

**1914** թվի հունիսի 28-ին Պանիայի Սարայեվո քաղաքին մեջ

Ավստրո-Հունգարական կայսրության գահաժառանգ Ֆրանց-Ֆերդինանտը զնացքին իջնելու ժամանակ Սերպիայի հեղափոխական երիտասարդ Գրեցիզը սուսրով մը սպաննեց: Այս սպաննությունը կանխամտածված էր: Այս թվականին Ավստրո-Հունգարական կայսր Ֆրանց-Յոզեֆը ձերացած էր և գահին միակ ժառանգորդը կմնար Ֆրանց-Ֆերդինանտը, ասոր մահով Թենուկ մը և դժգոհություններ պիտի ստեղծվեին նոր թագավոր մը ընտրելու համար: Սերպեր՝ որոնց ընդարձակ հողերը գրավված էին Ավստրո-Հունգարական կայսրության կողմն, ստեղծվելիք խառնաշփոթությունն սգավիչ և իրենց գրավված ընդարձակ հողերուն տիրանալ կուզեին: Գերմաններ արզնն պատերազմի մը պատրաստված էին և իրենց զիրենց զորավոր կզգային: Այս առնն աշխարհը բաժնված էր երկու խումբի, մեկ կողմը Նոյակ գինակցությունը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա և Պուլկարիա), մյուս կողմը Նոյակ համաձայնությունը (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսիա, ապա Միացյալ-Նահանգներ) և ուրիշներ ընդամենը 33 պետություններ: Վիլհելմ Բ-ը հրահրեց Ավստրո-Հունգարիան, ստեղծված զինք սաստիկացավ և պատեհ առիթ ծառայեց պատերազմ մը սանձազերծելու: Աշխարհը բաժնվեցավ երկու մասի. երկուստեք 70 միլիոն մարդ զենքի սակ առնվեցավ, սպաննվեցան 10 միլիոն երիտասարդներ, հաշմանկամ եղան 20 միլիոն մարդիկ, և սովն ու համահարակե մեռան 10 միլիոն մարդիկ: Ազատեցավ և փնացավ Նյու-Յուրկան հսկայական Հարսուություն, պատերազմող երկու կողմերը 260 միլիարդ դոլար ծախսեցին պատերազմի համար, շնն քաղաք-

ներ և գյուղեր փոշիի վերածվեցան, Ֆրանսական ճակատի վրա սփաննե-  
րու և գյուղերու տեղը անհունաչելի մոխրակույտի վերածված էին և  
Ֆրանսացիներ այդ ավերակներու տեղը ճշակելու համար, — այն օրերուն  
Թերթեր զրեցին — ցուցատախտակներ զբաժն էին ապագային յուրացանչ-  
յուրի տեղը գտնելու համար: Մտածի ետիտատարտը, որ Գերմաններու  
պարտութունը սրտեց, սփնամարտն մը հետո մարդկանց արյունը հո-  
սած է դետի պես և կես միլիոն մեռելներ ոտքի վրա մնացած են՝ իրար  
անցած մարդկային հոծ բազմութենեն և խոտութենեն իյնալու տեղ չէ  
մնացած:

Գարավեցյալ Գերմաներան, Վիլհելմ Բ.-ը արտաբնեցյալ Պեյնիզիայի  
Անվերս քաղաքը և, զոչյակի մը մեջ բաճաարկված, կնքեց իր մահկանա-  
ցուն: Ավստրո-Հունգարական կայսրութիւնը բաժնովեցյալ երկու մասի,  
Ներկայի Ավստրիան և Հունգարիան, սերպեր տեր զարման իրենց հողե-  
րուն և սրով ժողովուրդներ ազատագրվեցան ու կազմվեցյալ Հարավ-  
Արևմտայի կառավարութիւնը:

Քուրքիան ևս մնացյալ եռյակ գերնախնութիւնն ու մտալ պատերազ-  
մի մեջ 1914 թվի Հոկտեմբերին: Քուրքեր պատե՛հ առիթ նկատեցին  
իրենց զիմային ծրագիրները իրականացնելու նախապես որոշված ծրագ-  
րի մը համաձայն, և գործադրութիւն մէջ որոշվեցյալ պատերազմի նա-  
խօրյակին՝ չուծել Հայկական Հարցը թրքական ըմբռնումով: Իթիբ-  
հաս-Թերագզը յի մոլեռանգ ազգայնաստիչները, գլխավորութիւնը որդան  
կառավարութիւն Քալմարի ու Էնվերի շիքիին, պետութիւն զնկը իրենց  
մէջք առած կազմակերպիչին սերագործներու «Հմակներ, զրգոնցին  
Քուրք խումանի բնածին վայրագութիւնները, կրտսեկան ատելութիւն  
սերմանելով ըստ Ղուրանի և ԱՀմեաիայի գրքերու արտանութիւններ-  
րուն, «անհամար ինչքը, պատիճը, կյանքը իսլամին համար Հայալ է, և  
այս բարբարոսութիւնները կատարողը ուղիղ արքայութիւն կերթա և  
այլն»: Բանաներն արձակեցին սերագործները, Հրահանգեցին սպաննու-  
թիւն առթիվ անգուլթ և անզգա լինել զոհերու նկատմամբ: Եվ կողող-  
անցին, ասորի քաշեցին առանց սեռի ու ասրիքի խնայելու, խորգելով,  
սովամահ ընելով, համահարակի մտանելով փնացուցին երկու միլիոն  
հայեր: Ավելորդ է հանտի զրգածները կրկնել կատարված անմարդկա-  
լին արարքներու մասին: Քուրքերը արհեստներ չուներն, արտադրական  
զբաղում և միջոցներ չուներն ի սկզբանն անտի, սպորաաւթիւն, կողո-  
պուտ, Հարկահոտութիւն Հրեշային մեկրով, սարկացնել ոչ Քուրք ժողո-  
վուրդները և զանաւել սարկացված ժողովուրդներու զավակները, չնա-  
յած իրենց հետամնացութիւնը բռնութիւնը կուղիին մուլել, թրքացնել

Հպատակ ոչ թուրք ժողովուրդները, Հաճառար իրավունքներ պահանջող և չձուլվող տարրերը փնացնել, շնչել տուրի քաշելով, ընդ որս և Հայերը, որոնք իրենցմե ավելի զարգացած, Հառաջագեմ ու բարձր մակար-գակի տեր էին:

## 2. ԹՈՒՐԲԵՐՈՒ ՈՐԴԵԳՐԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԱՅԵՐՈՒ ԼԱՆԴԵՅ

1914-ին Թուրքիան ևս զորաշարժ Հայտարարեց, Ատիամանի և շրջակա գաղառակներու և Հայ գյուղերու երիտաւարգութիւնը բանակ գնաց: Բանակին Համար ինչ որ պետք էր Հայերին բռնի կերպով կգրաճէին, իբր թե պատերազմն Հետո վճարելու Համար: Սա պարզ խաբուսթիւն էր, որովհետեւ բանակին Համար պետք չէր որ իրեր և վաճառականական ապրանքներ ևս կգրաճվին, այդպիսի ապրանքները գինւորականներ և պաշտոնյաներ իրենց տունները կտաննին կամ կմախնին և գրամը կգրպաննին, այդպես էր վերաբերումը Թուրքիո մէջ ոչ թուրքերու, մասնավորապես՝ Հայոց Հանգնալ: Ամեն ազգի Հարուստներ, նույնիսկ միջին դասակարգի մարդիկ, գինւորական ծառայութեան փոխարեն պետութեան կազմն որոշմամբ 40-50 թրքական Հնչուն սակի գումար մը կվճարէին պատերազմի շրջանին Համար, Հետո սկսան նույն գումարը պահանջել յուրաքանչյուր տարեմ Համար, իհարկե, թուրքերը միշտ բացառութիւն կազմելով: Տարի մը լանցած Հայ գինւորները գինաթափ ըրին աշխատանքային բանակի մէջ ծառայելու պատրվակով, կամաց կամաց իթթիհատի կառավարութիւնը իր մանիքները ցույց տալ սկսով, սկսան գինաթափմամբ Հայ գինւորները զազանի ամառի անգնր ջարգել, սկսով դատաւարութիւնը, դատաւիչ Հայ գինւորները կզնդակահարեն, իսկ Թուրքերը կրկին բանակ կըրկին:

«Իթթիհատ վե Թերաքթի» կուսակցութեան ղեկավարներից Մեզլան-զազե Բիֆաթը, որը մասնակցել է այդ կուսակցութեան ղեկավար արգանի մի շարք նիստերին և խորհրդակցութիւններին, իր Հուշերում գրում է նույն պարտիայի 1915թ. սկիզբներին կայացած մի գաղտնի խորհրդակցութեան մասին, որանց որովհնչ ոչնչացնել Թուրքիայում ապրող ամբողջ Հայութիւնը:

«Այդ որոշման գործազրույժը.— գրու՞մ է Բիֆաթը.— Հանձնարարվեց օճրագործներից և բանգրաններից Հատուկ խումբի, իսկ զնկավարութայու-  
նը՝ «գործող նսայակին», որի մեջ մտնում էին զսկտոր Լազըժը, զսկտոր  
Պեհանաթին—Շաքիրը և լուսավորության միմիայր էյուզրին»:

«Ախուհեան Մեկլան—զաղե—Բիֆաթը Հիշու՞մ է այդ խորհրդակ-  
ցության ժամանակ տեղի ունեցած ելույթները: Հիմնական զնկուցողը՝  
զսկտոր Լազըժը ասաց. «Եթե մենք բավականատեղ մտնեալի շարգե-  
րով, ինչպիսիք տեղի ունեցան Ազանայում և այլ շրջաններում, դա մեզ  
փոխանակ օգուտի, փնաս կադանաթի: Եթե մաքրու՞մը ընդհանուր և  
գերջնական չլինի, օգուտի փոխարեն գնաւը անխուսափելի է: Անհրա-  
մեշտ է Հայ ժողովրդին սննչացնել Հիմնովին, այնպես, որ մեր Հոգեբու՞մ  
ոչ մի Հայ չմնա և Հայ անունն էլ մոռացվի: Կերկայումս պատերազմ է  
մղվում և Եման Հարմար առիթ այլևս չի լինի: Օտար երկրների միջամ-  
տությունն ու քերթների բողոքը աննկատ կմնա, նույնիսկ Կեապի էլ,  
Երանք կզրգեն կատարված փաստի առաջ, որանով Հարցը գնոված կլի-  
նի... Ջարգը անհրամեշտ է ... ես ցանկանում եմ, որ մեր Հոգեբու՞մ աս-  
րեն մրայն թուրքերը՝ իբրև անկախ իշխաններ: Բոլոր ոչ թուրք տարրե-  
րին պետք է սննչացնել... Այսպես է մեր անուշիքայի նպատակն ու ծրա-  
գիւրը»<sup>20</sup>:

Դեկտոր Լազըժը զբանք ձեակերպել է վեց կետերում:

- ա. — Մեկընդմիջտ կլուծվեր Հայկական Հարցը, Երա առարկան Հանդի-  
սացող տարրի անհետացումովը:
- բ. — Օսմանյան պետութայունը կհերքազատվեր այդ Հարցի Հեա կապ-  
ված միջնազգային և ներքին քաղաքականութայան Հոգեբերից:
- գ. — Վերացնելով Հայերին՝ թուրքերը կազաափելին Երանց տնտեսա-  
կան մրցակցութայունից և լայն գործունեութայան առադարեզ կաա-  
նային:
- դ. — Երանց Հարստութայան տեր կգառնային Օսմանյան պետութայունը  
և թուրքերը:
- ե. — Ամբողջ Անատոլիան թուրքերով բնակված մրատարր երկիր կգառ-  
նար:
- զ. — Ամենամեծ խուշընդատի՝ Հայ ժողովրդի, վերացումով կՀարթվեր  
«Մեծ իզեալի՝ Համաթուրականութայան» ճանադարը, որին «կառ-  
չած ենք մեր ամբողջութայամբ»<sup>21</sup>:

<sup>20</sup> Ա. և. Մնացականյան. Դայ ժողովրդի որբերգությունը, Երևան, 1965:

<sup>21</sup> Չ. Փրակոյան. Ա. Դանաշեարեալին պատերազմը և արեմտապայութայունը. 1914—1916 թթ.,  
Երևան, 1955, էջ 239—249:

«Խոշա—Հասան—Ֆեհմին ասաց. «Աստու կամքով թող ոչնչացվին կանայք, երեխաները և թույլերը: Դրա Համար ես այսպիսի Համար մի միջոց եմ առաջարկում: Ներկայումս մենք պատերազմում ենք: Պատերազմելու կարող բոլոր Հայերին պետք է ուղարկենք կրակի առաջագործ գիծը՝ առանձին գեմ, իսկ ետևից, Հատկապես այդ գործի Համար ուղարկված ուժերը կրակի բաց կանոն և կոչնչացնեն բոլորին: Մենք պետք է Հրամայենք մեր կրտսերներին, որ ոչնչացնեն Երանց, Երանք կկոչուպանեն Հայերի ունեցվածքը և կվերցնեն աշխիհներին: Այս միջոցը ես Համարում եմ նպատակահարմար: «Իր եղբայրական խոսքում նիստի նախագահ Քալաթ փաշան նշում է, «Հայերի ոչնչացումը մինչև վերջին մարդը մեր ազգային քաղաքականության Համար այն աստիճան կարևոր է, ինչ աստիճան, որ կարևոր է թուրքերի անտեսական գերիշխանության սանդուխտը»<sup>21</sup>: Ռիֆաթը ասում է, որ Քալաթ փաշան քվեարկեց և որոշումը ընդունվեց միամայն:

Այս որոշումին Հաշորդող զեղքերու մասին և Քալաթի տված զազանի Հեռագիրներու, Հրահանգներու և Հրամաններու պատճենը Հրատարակված է այլևայլ գրքերու մեջ, որոնք լույս տեսան զանազան Հայրենակցական միություններու և անհատներու կողմն: Ուրեմն Հայերու բնաշնչումը որոշված էր նախքան Ա. Համաշխարհային պատերազմը, նույնիսկ Քալաթի խոստովանությանը. «Թեև Հայկական տարրի բնաշնչումը նախորդ որոշված էր, Հանգամանքները թույլ չէին տալիս իրականացնել այդ սրբազան գործը և այլն: Ես ընդունում եմ, մենք սախլված եղանք կորուկ գործել: Ինչ արած, այժմ պատերազմական դրություն է»<sup>22</sup>:

Ամեն ինչ վերջանալի Հետո մեր Նվթրողացի և Ամերիկացի «բարեկամները» կոկորդիլոսի արջուներնրով դիմադորեցին սանզեն և գեհնեն Հրաշքով ազատված Հայերուն, ըստ իրենց՝ 13-րդ զաշնակիցը: Իսկ մեր կորուսաններն ու իրափունքը մոսացություն ավին, երբ արդեն իրենց պետք չէին և իրենց քաղաքական նպատակներուն Հասած էին:

<sup>21</sup>Արևելաշխուսական մոլորվածք, էր 394—395:

<sup>22</sup>Նույն, էր 398:

### 3. ԶԱՐԴԵՐ ԵՎ ԲՈՆԱԳԱՂՔ

1915-ի ապրիլին շատ խորամանկությամբ սկսան առևերը, զպրոցները, եկեղեցիները խուզարկել, որուն Հաշորդեց ժառանգականներու, Հարուստներու, ազգեցիկ և աչքի զարնող Հայերու մերքակալութունը և մաս առ մաս սպաննութունը: Ատիամանի մեջ սկզբի օրերը Հայտնի չընելու համար, Հայ և թուրք միասին հավաքեցին, մարտի Զարդելու կամ այլ աշխատանքներու պատրվակով, քաղաքն Հեռացնելի Հետո Հայերը Զարդեցին և թուրքերը ազատ թողուցին, այսպես Հաշորդարար: Երբ այլևս զտառ էին, թէ որն է գիմազութունը ընող ույժ չմնաց, սկսան քացն ի քաց Զարդելու, սակայն միշտ ամայի տեղեր՝ քաղաքն դուրս:

Մերքակալութունները զայրագործն և անխնա կը ձեռնին, տեսակ-տեսակ տանջանքներու կենթարկելին՝ խուստովանութուններ կորզելու և զնեքերու անզր իմանալու: Զունեցողները թուրքերին գրամով կը զնեին ու կը Հանձնեն: Վերջապես գտան գիծած և զավաճան Հայ մը, Մանուկ Գաւգեճյան անունով, որը սկսավ մեկիկ-մեկիկ ցույց ապ զնեքերու տեղերը և զնեք ունեցողները, բանակն փախած Հայերու տեղերը: Թշվառականը խլամազացով, իսկ կինը մերժեց իշտամանայ, ուստի թուրքերը առաջարկեցին, թէ՛ կինը, որ խլամութունը չընկուկիր, պետք է սպաննես, որ Հազառանք, թէ իսկապես անկեղծորեն խլամացած ես: Կինը սպաննեց և կոշիկեցով Մանուկ-Մուսթաֆա՝ ամուսնանալով թուրք կնոջ մը Հետ: 50-60-ի չափ երիտասարդներ ազատանեցան Աւրֆա, կարգ մը երիտասարդներ 20-30 Հոգի միացած և զինված փախան դեպի Այնթապ և այսպես մի քանի խումբեր, անապարհին թուրքերու և քուրդերու Հետ կուգի բռնվելով, յուրաքանչյուր խումբն մեկ կամ երկու Հոգի Հազիվ կը ցան Հտանիլ Այնթապ, իսկ մյուսները կուգի մամանակ զարնելով-զարնվելով մեռան: Թուրք կառավարութունը և Մանուկ-Մուսթաֆա իմանալով, որ 50-ի չափ երիտասարդներ Այնթապ Հասած են, Մանուկ թուրք ստաբիկանի մը Հետ զնայ Այնթապ և Հտն մեկիկ-մեկիկ մերքակալել տալով, Այնթապեն 4-5 քիլոմետր դուրս Հանեցին և զնդակահարեցին, Հազիվ հինգ Հոգի ազատվեցան և ապաստանեցան Հալեպ:

Տեր Կարապետ Ժամկոչյանը և Հայ կաթնիկներու Հովիվ Միքայել զարգապետ Աստվածատուրյանը Սերաստացի, ուսումնական և զարգացած, ազգասեր և անձնվեր ու քաջ Հայ մը, այս երկուքը զտեազան տանջանքներ, ձեռնել և յուսանքներ Հետո, Զակ գյուղին մտա ոտքերը պայտեցին, սպաննեցին ու վերջը զլուխները հզմեցին քարերով: Թուրքը շատ

վայրագ է և անզուժ անզեն մարդկանց հանդեպ, թուրքին նկարագրի  
 դիմն է Հեռեայլը, երբ գիմադրեցիր ու զարկի՞ր փախուստի կը դիմն, իսկ  
 երբ փախար, մինչև վերջ կը հայածն: Երեք կարկառուն զենքեր, որոնց ոչ  
 միայն Ատիամանի Հայությունը, այլ թուրքերն ու քուրդերն երախա-  
 պարա են և որնէ դժվարութեան ու ծանրակշիւ զեւքերու պարագային  
 կը դիմենն սասնցմն մեկուն, անպայման իրենց խնդիրը հաշող կերպով կը  
 կարգադրվի: Մանուկ Մանուկյան և Հանի Պոզու Մանուկյան, որոնք  
 1895-ի շարդին ազատված էին օրպես ուսանող Այնթապի Ամերիկյան  
 Գոյնը զտնվելուն համար և Հովհաննես Գափուգարյան: Այս երեքը  
 թուրք կառավարութեան և թուրք ազաներու աչքին փուշն ու արտյան-  
 ներն էին, շատ անգամ հայերու և թուրքերու միջև պատահած զեւքեր  
 ու խնդիրներ հարթած են, միշտ ի նպաստ հայերու: Հանի Պոզու Մանուկ-  
 յան հարցաքննիչ պատաճար էր, իսկ Մանուկ Մանուկյան և Հովհաննես  
 Գափուգարյան, միշտ կամ թուրք պետական վարչակոն խորհուրդի կամ  
 թաղապետական խորհուրդի անգամներ էին: Այս երեք հայերը ծննդե,  
 խոշաանգեղն, պայտելն, պայտված սարքերով քաղի տոյի, մասնատելն Հե-  
 տո, գլուխները եղմելով սպաննվեցան Զակ գյուղի մոտ: Այս երեք հա-  
 յերը իրենց բարոյական ու նշուխական բոլոր միջոցները կը արամագրե-  
 ին ի սպաս Ատիամանի Հայութեան՝ հայերու և թուրքերու միջև դժվարին,  
 կենսոս և փտանգաճար զեւքերու պարագային: Մանուկի հայրը՝ Սարգի-  
 սը, մենք տեսանք արդեն 1895-ի համիդյան ջարդի ատեն: Ատիամանի  
 շուրջը Պոզ-պեկին աղբուրին քով, Մանուկյաններու պարտեղին մեջ  
 սպաննեցին 800 հայ պատանիներ: Մայրեր տանիքը կլամ կը լսին իրենց  
 Հոգեհատորներու հիշն ու աղապակը: Մի քանի հարյուր երիտասարդներ  
 կը տանին Մենենտ-օղլու կափտոնին քով (որու ջուրը կստուգէր Հայոց  
 թագի մտտի պարտեղները) և կտաննեն: Հայ կիներ կը տեսնեն, որ կա-  
 փտոնի ջուրը արյունի փոխված է, Հոսանքն ի վեր կերթան և կը տեսնեն  
 իրենց սիրելիներուն ու հորազաններուն հոշտոված մարմինները: Զորա-  
 նոցին և զինվորական զենքի պահեստին մոտի ձորին մեջ կը ջարդեն 500  
 հայեր: Մէյրամ-Անայի աղբուրին քով քաղաքին եզերքը, ձորին մեջ կը  
 ջարդեն մի քանի հարյուր հայեր: Ղըզըլուկ գյուղի քով կը ջարդեն 200  
 հոգի: Այս բոլորն Հեռո կակսի տեղահանութեանը, իսկ թուրք բանակի  
 մեջ եղող Ատամանցի Հայ զինվորները արդեն շատոնց սպաննված էին:  
 Ատիամանցի Մըտըզ անուևով թուրք ստահակ մը, իրեն նման կարգ մը  
 ընկերներով՝ Ատիամանեն տեղահանված կարափոնները կտառջնորդեն  
 զեւքի Մամուսատ և Ուրֆա, հանապարհին կողոպտելը և կիներն զբամ  
 պահանջելը շտաննվելու համար շատ սովորական էին: Հարյուրավոր կի-



ներ, պատանիներ և երեխաներ սպանեցեցան այդ ճառագարչին վրա, շատ մը սպանեցած մայրերու փոքրիկ երեխաները ճվալով, նշալով, անսովազ մեռած իրենց մայրերու կողքին, հանապարչին վրա:

Մամուսաա ողջ Հասնոց կարավաններու մեջն շատ մը կիներ ու աղջիկներ նեղեցով Եփրատ՝ սիրահամար մաշը գրկեցին, փոխանակ խայտառակ գոյություն մը քորշ տալու: Կարավանի մը մեջ երեք տարիքավոր այրեր մինչև Մամուսաա ողջ մնացած էին, Սրտըզ և ընկերները Եփրատ կը նետեն խեղդելու համար, երբ խեղճերը լողալով եզերք կլլել կը փորձեն, կակին հրացանով կրակել, երբ կը տեսնեն թէ անպատճառ պիտի մեռցվին, Պոյաճի Աստոն, ձեռքը ջուրնն վեր հանած, մաք բարով կրան իր Հարապատներուն, և երեք ընկերներ իրենք զիրենք կը հանձնեն Եփրատի Հոսանքին ու կը խեղդվին: Ճանապարչին կիներու, աղջիկներու ու երեխաներու զոհեցվիլը ևս քուրդերու կողմն շատ ստորական էր: Ուրիշ կարավան մը Ատիամանեն մինչև Հոփակ գյուղը շարունակ շարժելն, կոտորակելն, փոքրերը զոհեցնելն Հեռո մնացյալներն ալ սպաննեցին:

Կարավան մըն ալ Գարա—Գալըզ գյուղի մոտ (Եփրատի եզերքը) ձուլունն—Բաշ գյուղի քով անջուր պահելով, քարերով և փայտերով բուլբուլ սպաննեցին:

1895-ի Ջարդին եղբորն ու ամուսնին սպանեցիլը աչքերով տեսնելն Հեռո, Եզաս անուևով մեր թաղեցի կինը, որ խենթացած էր և մինչև 1915 թվականը կապրեր խնեթ վիճակով, այդ և նման ուրիշ Հայ խենթներն ալ սպաննեցին: Ամեննն վերջը մի քանի կույրեր և քաղելու անկարող ծերեր մնացած էին Ատիաման, անոնք ալ հավաքելով կը Ջարդեն՝ պատկերը կատարյալ ըլլալու համար: Երկաթաղործ Քուրդ—Պոչոյան Ավետիք, որ մինչև Ջարդերու վերջանալը ողջ պահած էին ձեռնակապեր շինելու համար, Ավետիք թուրքերու երեսին կուտա իրենց կատարած խայտառակություններն ու Ջարդերը, թուրքերը կրան իրեն, «մի խոսիք այսպես», Ավետիք կը պատասխանե.

— Մինևույնն է, խոսիմ—չխոսիմ, զիանմ, որ ինչպիսի լիտիներ և վայրենիներ էք ու ննգամիտ, զիս ալ պիտի սպաննեք, զանն խոսիմ և մեր հանցանքները մեր երեսին տամ ու մեռնիմ:

Ամեն ինչ վերջանալն Հեռո Ավետիքն ալ կապաննեն: Ամեննն վերջը կապանեն Պեղիբիկեյան Սարգիսը՝ Ատիամանի Հայոց Մուխթարը, որը պահած էրն մինչև այդ խուզարկություններու և զինվորութենն փախաներ փնտուելու ատեն ընկերանալու համար, ամեն ինչ վերջանալն Հեռո, ան ալ կապանեն: Այս Սարգիսը շատ մը երիտասարդներու լուր ավան և անոնց փախուստը ապահոված էր:

Ատիամանցիներ Ուրֆու Հասնէի Հետ ողջ մնացած պատանիներն ալ Ուրֆուցի Թուրքեր կը Զարգեն, մեացյալները կը բշեն դեպի Նիզիոյ, Հալեպ ու Տեր-Ձոր:

Ատիամանցի 50-ի չափ երիտասարդներ փախած և Ուրֆու ապստանած էին, որոնց մեջ կային մաս մը, որոնք Ուրֆույի որբանոցներուն մեջ մեծցած էին, իրենց ծանոթ Հայերու քով Թուրքոված էին: Նույնպես շատ մը Ատիամանցի կիներ, աղջիկներ ու պատանիներ պահւած էին Ուրֆույի մեջ, այս բոլորը վրեժով լեցւած, ամբողջ ուժով կը մասնակցին Ուրֆույի ապստամբության և անկարողութի քաջություն ու Հերոսական գործեր կը կատարեն՝ իրենց Հարազատներու վրեժը լուծելով, քաջարար և պատվով կը զոհվին, ոչ մի Հատ ողջ չմնալու պայմանով: Նամահազանդ Եսֆեր Մանուկյան (Ճնյալ Թյուֆէլյան, Մալաթիա) ամուսնացած Մանուկ Մանուկյանի Հետ: Ատիամանցի կիներու և աղջիկներու գլուխը տնցած, այնպիսի Հերոսական կռիւներ կը մղեն, որ քաջ ազամարդիկ իսկ ափ ի բերան կը մտան՝ ի տես Եսֆերի կռիւնու տաղանդին, կազմակերպչական կարողության, դիւրքի դիւրք վազելով աված գրոհներուն ու Հարձակումներուն և կատարած քաջագործություններուն: Վրեժը լինելով ու լինելով Հետո Ատիամանցի տարազիրներու Հետ կերթա Նիզիոյ ու Հոն կը մեանի Հիփանդությանով: Ծով ի սիրտ պետք է ըսել, որ Ուրֆույի Հերոսամարտը գրողներ տող մը իսկ չեն գրած Եսֆերի և իր ընկերուհիներու մասին, Քերեուսմանյան Սարգսի, եղբայրը՝ Կարապետի, Շիշմանյան Վահանի, Չարխափանյան Հովհաննեսի և Չուլիյան Թաշերի մասին՝ շատ մը ընկերներով, որոնք անհազատալի գործեր կատարած են և բոլորն ալ պատվով ինկած:

Այս բոլորն զերջ, երբ Ատիամանի մեջ Հայ չի մնար և արՀեստավոր ալ չի մնար, Հայկական նահանգներն եկող կտրուվաններու մեջն արՀեստավորները կը զատեն ու կը պահեն, որոնք մինչև պատերազմի վերջը ողջ մնացին ու անցան Սուրիա: Թուրքեր սկսած էին իրարու մեջ խոսիլ, եթէ Հայ արՀեստավորներ պիտի պահէինք, ապա մերիններուն Հանցանքը ի՞նչ էր, որ սպաննեցինք: Հայկական նահանգներու, Խարբերդի, Տիգրանակերտի, Ատիամանի և այլ տեղերու ասորիները խիտա պատվարեր ընթացք մը բռնած են Հայերու Հանգեպ, և շատեր զոհւած Հայերու Հոտ միասին, բայց Ուրֆույի ասորիները բոլորովին սարկացած, անբարոյացած և կամավոր կերպով իրենց պատիվը Թուրքերուն ծախած, զազանան ու մատնիչ դուրս եկան: Ուրֆույի Հայության նկատմամբ ամեն տեսակ լրտեսություններ և մատնություններ ընելն Հետո, երբ Ուրֆույի ապստամբությունը կը ճնշվի Ենօզի փաշայի բանակի, Հերմ Էքորթի և Թուրք ու

քուրջ խուժանի կողմն, կռիվնն ազատված և ողջ մնացած ժողովուրդը, երիտասարդներ և կիներ կիջնեն Հորերը և կը պահվին Քաջասուզներու մեջ: Շատեր ազատվեցան գիշերները փախուստ տալով, իսկ ասորիներ, որոնք հայտնու են, ամբողջութեամբ ընկերացած թուրք զինեյալ խուժանին, ցերեկները կը պաշտին հայ թաղերու մեջ և ամեն կողմ, ամեն տեղ կսկսին կանչել — սելեր, եղբայրներ, վտանգ չմնաց և այլն: Պահագոյներ կարծելով, թէ կանչուցները հայեր են, ոմանք զուրս կելլին և անմիջապես տեղն ու տեղը կսպաննելին թուրքերու կողմն: Այսպիսով պատճառ եղան շատ մը ողջ մնացած հայերու մահվան:

1918 թվի նոյեմբեր 11-ին զինազաղարեն և պատերազմը վերջանալն Հեռո, ետև անգլիական բանակը Ուրֆան գրավելն, ապա Փրանսիացիներուն Հանձնովելն և 1921 թվին թուրքերու և Փրանսիացիներու միջև տեղի ունեցող կռիվներն վերջ, Ուրֆան գրավող Փրանսիական բանակը երբ Հեռացավ ու Ենպեքերի կիրճին մեջ զաժաղարար շարզվեցավ թուրքերու կողմն, բանակի մեջի աչներխացի իսլամ զինվորները զատեցին թուրքերը և ազատ թողուցին: Ուրֆայի հայութեան մնացորդները, որոնք վերազարժան էին Ուրֆա, կրկին չընցին ամեն ինչ և ապաստանեցան Սուրիա: Ասորիները տեսնելով, որ իրենք ևս չպիտի կարողանան ապրիլ Ուրֆայի մեջ, զազմեցին Հայկալ և Հայկալի «Դամասկոսի կայարան» կողմն տեղվույն քով Հիմնեցին խեղճուկ թաղամաս մը և քարշ կուտան միևնույն անպատվարներ գոյութեանը, ինչ որ էին Ուրֆայի մեջ:

#### 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԵՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ

Հայկական նահանգներն բնութեամբ տեղահանված հայութեանը, իրենց քաղաքներուն և գյուղերուն մեջ միևնույն խժժութեանց և շարք ու կողոպուտի ենթարկվելն Հեռո, ինչպէս որ եղած էր Ատրամանի մեջ, քչեցին զեպի հարավ երկու ուղղութեամբ, մին՝ Եփրատի մաս կղերքով դեպի Տիգրանակերտ, Մուսուլ և Իրազի ու Սուրիա անապատները — ներքին զորքերու միմեարութեան աման ցուցմունքի և հրահանգներու համամայն, մյուսը՝ Եփրատի աջ կղերքով դեպի Թարքերտ, Մալաթիա, Ատրաման, Ուրֆա և Տեր-Ջոր: Տոտանորզված կարավանները նահանգն

նահանգ անցնելու ատեն, որոշ կայարաններ Հասնելու ժամանակ սակարկությունով և 20—30 Հազար Հնչուն սոխիով կը ծախեն ինք ավազակներու, որոնք բանտերեն արձակված թուրք ռեզազորներ կամ նույն մարզի անուև Հանած թուրք և քուրդ շարդարաններ ու սրիկաներ էին: Ասոնք իրենց վնասած գումարը ժողովուրդեն գանձել և կարելի եղածին շտի կողոպտել և հետ, կը ծախեն նախապես պատրաստված ուրիշ ավազակախումբի ժը: Ջարդերու և կողոպտուտի ամենատոկայի և վայրագ բարբարոսությունները տեղի ունեցան Մալաթիայեն Ատիաման, Ամուսասա, Ուրֆա գծին վրա: Մալաթիայի և Ատիամանի, Մալաթիայի և Քնաթիսայի ու Շիրայի մեջ անսասուպատ, անանցանելի շավիղներ կան միայն: Կայծքարային բարձր լեռներ ու խորունկ ձորեր և նեղ կիրճեր ժողովուրդը շարժներով պատնջել և հետ, այդ լեռներուն մեջ կը բերեն ինչ տեղը՝ ուրիշ մեկնած էին, մերկ, բոկոտ, անոթի, ատեն որ մաս առ մաս ֆարգելով ու կողոպտելով: Իսկ երբ նոր կարավանները կը Հասնեն Հեռզհեան, այդ կարավանը կը ծախեն Ատիամանի չրջակայքի Ջրագրան ցեղախումբի պես Քուլլըր գյուղացի թուրք Պետըր ազային և եղբայրը Ջեյնելին ու Ատիամանցի Սըրըզին, որոնք կը կրկնեն այն բուրբը, որ ըրած էին Ատիամանեն անզահանված Հայության: Այսպես, Հայած ու մաշած, աղքեղու ըրոր Հնարագորությունները կորընցուցած, կյանքի պայքարին տոկալու ամեն տեսակ մտային ու ֆիզիքական կորուստի միջոցները փճացած կը Հասնեն Տեղ-Ջոր և Սուրիական անապատները, վերջ արվելու Համար արդեն Հյուծված ու կմախքացած խեղճերու կյանքին:

## 5. ՆՄՈՒՅՇՆԵՐ ԹՈՒՐԿ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆԵՆ

Լավ ևս Հասկանալու Համար, թէ ո՞վ է և ի՞նչ է թուրքը, կը բաժն Հեանյալ մի բանի գեպերը, զոր աշխարհի ամեն ազգի այլասեռած, սրիկայացած ու անբարոյացած դատարկագորտներն անզամ լսելու պիտի ուժչնային և բողոքեն որ ցերեկով կատարված լքրություններն ու բարբարոսությունները տեսնելով: Ատիամանի և Սեերակի մեջտեղ եփրաաի ձախ ափեն 10 քիլոմետր գեպի Սեերակ կա Օշին անունով գյուղ մը (պատմական Օշին քաղաքը, Կիլիկիայի Օշին թագավորի կողմն շինված), բաղկացած 500 ընտանիքներե, որոնց կեսը Հայ և կեսը

քուրդ են: Այս գյուղի Հայ բնակչությունը՝ արու և էգ, ծնկեր մանուկեն մինչև զառաժայ ծերը, քչեցին Եփրատի եզերքը, բարձունքի մը քով, երեք կողմը պարան քաշեցին և ՀեազՀեան պարանը սեղմելով, բիրերու և սուրբրու Հարվածներու տակ ամբողջ ժողովուրդը Հսկա բարձրությունեն թափեցին Եփրատ և ջարդ ու փշուր խեղդվեցան Եփրատի մեջ:

Ետքերդի և Մալոթիայի մեջտեղ Եփրատի եզերքը, շարան շարան կազմած Հայ երեսասարգներ տանելով, միակ քարի մը վրա 15000 Հայերու գլուխը կտրեցին կաջինով և թափեցին Եփրատի մեջ:

Չմշկամազի թուրք մը, Տերվիշ ազա, թրքական շահանությամբ և քինախնդիր պարծենկատությամբ 1915-ին Հալեպի մեջ պատմեց, թէ Ուրֆայի մեջ 200 Հայ կիներ, բուրբովին մերկ գինակով, շուկաներն ու թաղերը պատցուցին ի պատիվ թրքության և թուրք կառավարության:

Կեսարացի երիտասարդ մը իր մտերգրորը՝ Գևորգ Վիշալյանի, մասին պատմեց Հեռեկայը: Կեսարիայի թուրք պատերազմական առյանը, որահը տախտակն պատով մը երկուքի բաժնել տված էր, Գևորգը և ուրիշ Հայեր Հարցաքննելու և դատելու ժամանակ, գլուխը կտր ծակեն ներս կը խոթեն և կը Հարցաքննելին, իսկ պատին ետևը թուրք զինվորներն Հարցաքննվողներու պատիվը կը բռնարարեն ի պատիվ թուրք դատարանի, զինվորականության և թուրք սրկնազբբի: Հեառ սպաննեցին: Ուրֆայի և Պերսեկի կես հառնապարհին կա Սուրուհ անունով տվան մը: 1915-ին Հայ քառանս մը և երեցկիներ կը տանին ախոս մը և երեցկիներն ու դիտող թուրքերու ներկայության, կատիպեն, որ զուգավորվի էգ իշու մը Հեա, Հեառ կապանենն քառանան ու երեցկիներ՝ ի Հարգանս և ի պատիվ իրենց կրոնական բարձունքին:

1921-ին Ուրֆային մեկնող 600 ֆրանսացի զինվորներ, որանք ջարդվեցան Ենպեղի կիրճին մեջ, Հեաերնին կար նաև ամերիկացի մը: Թուրքեր այս ամերիկացիին պատրվն ուլ բռնարարեցին և տարին Ուրֆա, մի քանի շաբաթ վերջ ամերիկացին փոխազրեցին Պերսեկի, Հալեպ և Ամերիկա, միշտ կոնակի վրա պտուկամ: Հիշալը, Ամերիկա Հասնելի Հեառ, երբ Հարապատանը, մանրիմներ և այլն այցելության կուզան քովը, Հարցնողներուն կրտ, թէ «Թուրքեր գիս կին կարծեցին»:

1920-1921 թվին թուրքեր ապստամբեցան ֆրանսացիներու դմ և կիլիկիայի ամեն կողմը աեզի ունեցան կռիվներ. 200 ֆրանսացի զինվորներ գերի ինկան թուրքերու մոտ: Ֆրանսական թրքաանք պուրծվազին, իր ներկայացուցիչը՝ Ծրանքլին Պուլլոնը, զրկեց և Հաշտություն զոյացավ թուրքերու և ֆրանսացիներու միջև: Ծրանքլին և ժենեռայ Կուրս առաա կերպով կաշապեցան թուրքերին: Երբ այդ գերի ինկան

Ֆրանսացի զինվորները գեղապետի մը առաջնորդությամբ հասան Մերսին, քույրները ուսադիրները փրցուց և զինք զինվորացի Ֆրանսացի ժեներալին երեսին զարկով՝ հայհոյելով և նախատելով, որովհետև, թուրքեր այդ 200 զինվորներուն պատիվը բռնաբարած էին: Այդ զինվորները մասնավոր նախով ճամբա հանեցին Ֆրանսա տանելու համար մասնավոր կերպով: Թրքապետներու թելադրանքով նախ թորֆիլահարեցին ու ծոփմույն ըրին՝ զինվորներով միասին, որպեսզի Ֆրանսա երթալով, չպատահն իրենց գլխուն եկածը՝ Ֆրանսական ժողովուրդին մեջ հակաթուրք շարժում և խլրտում տեղի չունենալու համար:

\* \* \*

Երբ սուսական բանակը հասավ Վան և ինքնապաշտպանության դիմող հայ ժողովուրդը ազատվեցավ, Վանեն և շրջականներն թուրքեր և քուրդեր հեռացան ու հասան Ատրաման, ցրվեցան դատարկ հայ աուսներու մեջ: Չմնա՞յա ցուրտին, գոթանակ պարտեզներեն ու այգիներեն վառելիք եարելու, իրենց բնակած տուններու առաստաղները քանդեցին և մարդակները վառեցին, սենյակն՝ սենյակ, տունն՝ տուն գոթադրվելէ հետո, ամբողջ թաղամասեր քանդեցին, ավերակ դարձուցին: Հեղզ և ավազակարտո՞ւ, կոտորատելու և գողութեան վարժված այս անբոխը, սկսով գողութեաններ ընել թուրք աուսներն, թուրքեր ասոնցմն երես դարձուցին: Վերջի վերջս բոլորը կոտորվեցան անթութեանն և հիվանդութեան:

Թուրքը նեկ պարագային իրար հոշտառ ժողովուրդ է:

Թուս-թրքական ճակատի վրա 12 Ատրամանցի հայ զինվորներ գերի ինկած էին և ազատված, որոնցմն երկուքը ներկայիս ոչլ են՝ Վարդանացի Գետրոս Սովետական Հայաստանի մեջ Սովետաշէն ավանը և Թուսարեան Գևորգ Թիֆլիսի մեջ, իսկ մյուսները տարիներու ընթացքին բնական մահով մեռած են և ո՞մանց ընտանիքներն ու զօգակները կան: Բարբ և չհեղինակ և խաղաղ կապրին Խորհրդային Միության<sup>10</sup> և Խորհրդային Հայաստանի մեջ:

<sup>10</sup> Խորհրդային Միությանը զարգացն գլոխայն ունենալուց 1991թ. իսկ Խորհրդային Խանրպետությունները, այդ բխում և Չալատանը, Խոյանցին իրենց Ազգայն անկախ պետականության վերականգնուող թիւր :

1918-ին, երբ Ա Համաշխարհային պատերազմը վերջացավ, Հայկոյի մեջ կային 500 Ատիամանցիներ, 10-ի շուրջ երիտասարդներ, մնացյալը՝ կիներ ու երեխաներ: Իսկ գյուղերու հայութիւնն հազիվ 3-4 հոգի: Ատիամանի մեջ թուրքերու և քուրդերու քով ազատված էին կարգ մը հայեր, ուրիշներ պատերազմի շրջանին Ուրֆայն և Նիդիպէն վերապարձած էին Ատիաման, նաև հայկական նահանգներն հասած տարագիրներն, մաս մը մնացած էին Ատիաման և մոտ 100 ընտանիք հայութիւն մը կար: Հետագային մեկ մասը եկով Հայկոյ, մաս մըն ալ գեռ կը մնան հոն:

1921-1922 թվականին ֆրանսացիներ քաղվեցան Կիլիկիայէն, Սուրիա, Լիբանան հայութիւնն ալ միասին քաղվեցավ, Սուրիայի և Լիբանանի մեջ հազարվեցավ հոծ թիվով հայութիւն մը: Պազաասի երկաթուղայինը, որ Սուրիայի և Թուրքիայի սահմանն է, գծին Սուրիական կողմը հայեր հիմնեցին շատ մը ավաններ. թուրք կառավարութիւնը շատ դժուր մնաց հայերու տեղափարումն Սուրիայի և Թուրքիայի սահմանին վրա: Թուրք գործակալներու միջոցով սկսան զազտնի փրփակածս ընել և յուրեր տարածել, թէ թուրքեր Հայկոյն ու Դամասկոսը կը պահանջեն, թէ՛ թուրքեր պիտի հարձակին Սուրիայի վրա և այլն, ահաբեկելու համար հայութիւնը, որ Հեռանան Սուրիային: Մասամբ հաշտեցան. 100.000-ի մոտ հայութիւն մը Հեռացավ Սուրիային, զեղի Պաղեստին, Եգիպտոս, Յրանս, Միացյալ Նահանգներ և Հարավային Ամերիկա: Թուրք կառավարութիւնը զազտնի կերպով համաձայնած է Եգիպտական նափային ընկերութիւններու Հետ, որ հայերը կես զեղով փոխադրեն, իսկ մնացյալ կես գինը վճարե թուրք կառավարութիւնը, միայն թէ հայերը Հեռանան Սուրիային:

## ԱՏԻԱՄԱՆԸ Ա ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍԵՆ ՀԵՏՈ

### 1. ԱՏԻԱՄԱՆՑԻՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՄԵՋ

**Ա** տիամանի մեջ կան գնուելու 50 հայ ընտանիք:  
 Ամերիկայի (Միացյալ Նահանգներ) մեջ կան 25 ընտանիք:  
 Ֆրանսայի մեջ կան 120 ընտանիք, բոլորն ալ երիտասարդներ 1915-ի եղեռնին ազատված երեխաներ՝ մեծ ժառանգ որբանոցներու մեջ մեծ-ցած, այժմ ընտանիք կազմած են:  
 Սուրիայի մեջ կան 100 ընտանիք:  
 Լիբանանի մեջ կան 120 ընտանիք:  
 Հարավային Ամերիկա, Արժենթինի մեջ կան 4 ընտանիք:  
 Հուլիանայի մեջ, Ատախ-Ալպալա 5 ընտանիք:  
 Պաղեստին, Սրուտազեմի մեջ կան 4 ընտանիք:

### 2. ԱՏԻԱՄԱՆՑԻՆԵՐ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

**Խ** որհրդային Հայաստանի մեջ կան 110-ն ավելի ընտանիք, 17 ընտանիք Սովետաչին ավանդ հաստատված: Բոլորն ալ սեփական տուններ կանուցած, բանվորներ և արհեստավորներ, բարեկեցիկ, խաղաղ, հանգիստ ու ազատի կյանք ժը ունին:  
 7 ընտանիք շրջանները կապրին, նախապես արհեստավոր կամ բանվորներ, հանգիստ ու բարեկեցիկ:



Մնացյալները Երևանի մեջ, բոլորն ուլ արհեսավորներ, կամ բան-  
վորներ և և փական առև չինամ, անտեսութուն ստեղծած, հոտնդով կաշ-  
խատին Հարազատ Հայրենիքի վերելքին համար: Քրքական սարսափներն  
ազատ ու ազաւոզ, դեմ դիմաց մեր դարավոր թշնամիին, որը սահմանեն  
անդին խեղճիզ կղիտե մեզ և Խորհրդային Հայաստանի վերելքն ու Հա-  
ռաշխմութունը, սակայն ակոսան փշրված զազանի նման չի համարմա-  
կէր — Խորհրդային Միութեան եղբայրական մեծ ընտանիքին փոքրիկ մեկ  
անդամը կազմող Խորհրդային Հայաստանին իր ասելութունը արտա-  
հայտել:

Մենք, ապրելով մեր Հարազատ Հայրենիքին մեջ, պատիւ և Հպարտու-  
թուն կզգանք ամբողջ աշխարհին Հայանի և Հոչակ հանած մեր կարկա-  
ռուն գեմքերուն համար, փոքրիկ ժողովրդի մը մեծ զաւակներ Հայանի  
գինգորականներ, Հազարավոր հին և նոր գիտնականներ և ամեն մարդի  
մեջ ուղբի պարնող մասնագետներ կերտած են մեզ համար փողուն և նա-  
խանձելի կյանք մը և հիմը դրած լուսավոր ու ամուր հիմքերով ապա-  
զայի մը, շնորհիւ և անսպասելութեանով առև մեծ ժողովուրդին:

Մեր պատմութեան սև և դժբախտ էջը փակված է այլևս, սկսած է նոր  
չրջան մը, վերելքի և Հառաջգիտութեան, խաղող և անվրդով: Մեր դարա-  
վոր թշնամիին սարսափը չքացած է, մենք այլևս մեր երազներուն մեջ  
հուրի, սուրի, թալանի, ջարդի, կատարածի և տարազրութեան ուրվականը  
չենք տեսներ: Խորհրդային անմայրամիբ Հայրենիքի և միութեան անդամ  
մեր փոքրիկ, սակայն հզոր Հայաստանի մայրաքաղաք մեծ Երևանի փա-  
ռավոր շենքերն ու կաթոնները և Հորիզոնին վրա մեր փառավոր ու Հազ-  
թական ապագայի լուսավոր ջուհերը կը տեսնենք: Խորհրդային Հայաս-  
տանը նոր փառավոր պատմութուն կը կերտե ապագա Հայ սերունդնե-  
րու ամար:

Հայ ժողովուրդի ծոցն կլած են շատ կարկառուն գեմքեր անցյալին,  
կան ներկայիս և դեռ անոր ընդերքին մեջ պահված կտն շատ ու շատ  
կարողութուններ ու զանձեր, որոնք երևան պիտի գան ժամանակի ըն-  
թացքին:

Թող իսպին բոլոր անոնք, որոնք Հայ ժողովուրդը գերեզմանված  
անանկ կուզեն կամ կկարծեն: Այժմ գերեզմ փոխված են և ժամանակ-  
ները շրջված: Հայ ժողովուրդի աշխատանքով և իր բացառիկ զաւակնե-  
րու ջանքերով լուսավոր ապագան կը վազն դեպի մեզ և մենք Հաստա-  
տուն Հալատքով կը Հասնինք այդ երջանիկ ապագային:

### 3. ԱՏԻԱՄԱՆՑԻ ՀԱՅ ԵՇԱՆԱՎՈՐ ԴԵՄՔԵՐ

**Կ**ային կարգ մը ասիականցի Հայտնի զեմքեր, որոնց մասին այժմ Հիշատակել: — Փըշոյան Մարգիս կամ Փըշո Մարտ:

Քիֆինոյ Հսկա մը, 1870 թվականին Մարտն մաքրանենդուսթյամբ կղթաղի և զհոյի Այնթապ ու Հայկոյ արգիլված ծխախոտ փոխադրելուն Համար կը Հետապնդվի թուրք կառավարութեան կողմն: Շատ մը ընդհարումներն վերջ մի քանի ընկերներով Մարտն կը քաշվի լեռները և կսկսի թուրք և քուրդ կարաւանները կողոպտել: Ապա, փոխանակ կողոպտելու, կսկսի կարաւաններն յուրաքանչյուր անցնող մարդու և անասունի Համար թրքական 5 դրուշ ոսկն դրամ առնել: 1906-ին Հորս Հեա Մալաթիայի հանապարհին վրա, Յուլամի գաշանն Ազատուլ—Սարապի գաշառ տանող լեռնային կիրճին կանցնէինք, Հայրս հանապարհի մախ կողմը, մեկ մեթր բարձր ողորկ մայրի մը վրա, Մարտի ձեռքով փորված փոքրիկ փոս մը ցույց տվա՞մ, ուրի՛ն անցնող կարաւաններ այդ փոսին մեջ պետք է տեսնին 5 դրուշ բաժը, ապա թէ՛ ոչ, կը կողոպտվին: Հայերն՝ ոչ:

Անգամ մը, Սարքերդի կողմերը մինակ համարողելու ժամանակ ծանոթ երեք քուրդ ավազակներու կը Հանդիպի, տեղ մը կը նստին և, բարեկամարար խոսելու ժամանակ, քուրդերն մեկը տեղն կնչէ և Մարտի ետեւն սուրով Հարված մը կուտա զլիսուն: Կարծելով, թէ այլևս կը մնանի, կը թողուն կերթան: Մարտն ծանր վիրավորված, երկու ձեռքերուն մեջ գլուխը պինդ սեղմած, քրգական գլուշ մը կը Հտտնի և անմիջապէս տապակ մը յուզ ապրցնել տալով, վերքին վրա թափել կուտա: Բուրդերը զինք կը պահեն, կը խնամեն և կառուցանա: Բուրդ ավազակները երբ կը լսեն, թէ Մարտն ոչ է, կուզան Մարտի մոտ, զնքերնին կը Հանձնեն և կըսեն, թէ «աՀա մենք, կուզես սպաննե, կուզես ներն»: Մարտն զնքերը ետ կուտա ու կը ներն «գապեք»,— կըսն: Բայց ժամանակ մը Հետս, կը Հետապնդե և մեկիկ—մեկիկ, առանձին տեղ մը Հանդիպելով, երեքն ոչ կտպանն: Նման զեղքերու և ուրիշ քաղաքործութուններու երկար շարք մը ունի Մարտն: Ամեն կողմ հանչցվում էր Տեղը—Մարտ (եկնթ Մարտ) անունով: Թուրք կառավարութուն, չկարողանալով մերբախտել Մարտն, վերջապէս ներում կը շնորհէ: 1895-ի Չարդեն մի քանի օր առաջ, Այնթապ համարողելու ժամանակ, Գալա—Տաղի մեջ Տերպինա կոչված կիրճը անցնելու առնն, կիրճի կողքին բարձունքին վրա Հինց Հայ մարդիկ կերեան: Մարտն կերթա տնոնց քով, կը տեսնվի ու միտսին Այնթապ կերթան: 4—5 օր Այնթապի Էմրիլի խանը այդ մարդկանց Հեա մնալի Հետս,

չորինեցը, գրամ և այլն իր քով աշխատող Քեռելյան Կերեսին կուտա, որ տանի կնոջը Հանձնեհ, ինք կանՀետանա Խույն մարդոց Հեռ, ու անկե Հետո Հայտնի չեղավ. թէ ինչ եղավ Մարտն:

## 2. Աւլան Էմմի

Մերուէր Աւլան Էմմին, որ 1900 թվականնն Հետո բնական մահով մեռավ, իր շատ մը քաղաքորութիւններու կարգին միայն Հետնյալ դեպքը կը բովն անոր Հանրահայտ քաղության և խրգարության որպես ցարտուն մեկ որինակը: Սուլթան Համիտի Ժամանակ, մտաւորապես 1885 թվականին կամ քիչ մը առաջ, Ատիամանի կառավարութիւնը մեծաքանակ զուժար մը Այնթապ զրկել կուզէ: Թուրք ժանդարմաները և ոչ ալ ունէ թուրք չեն Համարեակիր այդ զուժարը Այնթապ տանիլ՝ ավազակներու վախեն: Ատիամանի կառավարիչը կը կանչէ Աւլան Էմմին և կը խնդրէ, որ այդ զուժարը տանի և Հանձնէ Այնթապի կառավարության: Աւլան Էմմին Հանձնէ կասնէ, զրամը կասնէ ու գրասաներու վրա բեռուցած կը մեկնի: ԸստուպարՀին, Գարա-տաղի Տերպենա կոչված կիրճը Հասածին պես, ավազակներ կիրճը կը փակեն, երբ կը տեսնեն, որ Աւլան Էմմին միասին է, կասնէն զինքը ու կը տանին լեռան մեկ իրենց քարայրը, և մի քանի Հողի ավազակախումբն կը նկերացնեն կարավանին ու կը տանին կը Հանձնեն Այնթապի կառավարության ու ստացականները տանելով կարավանին Հեռ կուզան կիրճը՝ Աւլան Էմմինին մտա: Մինչ այդ ավազակապետը մի քանի օր կը Հյուրասիրէ Աւլան Էմմին ու հանապարհ կը զնն զեպի Ատիաման: Աւլան Էմմին մինչ այդ արդեն իր անվեհերության և քաղության ապացույցները աված էր:

Այսպիսի մարդկանց շարքը կարելի էր երկարել. որինակ՝ Մըխտի Թարո, Տիրոյան Մարգիս, Էֆնիյան Գրիգոր, Պիոյան Հակոբ, Մուրվաթյան Պարտ (Փըչո Մաքոյի ընկերներն) և ուրիշներ:

## 3. Չուլճյան Սահակ

Սամուտտի քուրդ ազաները Ճըզիրն-Պոթթաննէ փախտական եկած՝ Սամուտտա Հաստատված էին 1800 թվականին և այդ շրջանի տերն ու տիրականը և պատուՀասն էին: Ատեցմն Համի-Ղատարը ազա կոչված ավազակը ավազակախումբով մը կարավաններ կը կողոպտէր, մինչև էրզրում և ուրիշ կողմեր կարավաններ կողոպտելու գացած և կողոպտուող վերազարմած էր: 1804-ին Պար Ծարեթ կոչված գյուղը բնակող իր

Հորեղբայրը երեք երիտասարդ տղաքներ և անեղջիները, մեծ ու պզտիկ սուրն անցուց գիշեր մը, իր օգնագտեկախուժքով դադարով ժամելով անոր տունը: Քուրք կառավարութեանը Խարբերդէն 1000 միավոր ժանտարմաներ՝ Հազարապետի մը Հրամանատարութեան սակ, Մամուլատի գրկեց Համոն մերթափառելու համար: Այդ ժանտարմաները տարի մը կտոնեցան Համոյի տունը, կերան, խմեցին և կաշառփեցան, Համոն տունն էր և ամեն որ Հազարապետին հետ ետքի կը խաղար: Տարի մը հետո քաշփեցան — գացին Հայտարարելով, թէ, — Համոն փախած է և չկա, անկարելի եղավ անոր հետքը գտնել:

Փամանակ մը հետո Ատիամանի գայժագամը (կառավարիչ) և Քուրք-յան Մահակ Մամուլատի շրջանը գիշեր տանն գյուղն մը ուրիշ գյուղ մը երթնալու ատեն լուր կառնեն, որ Համոն երկու տունով գյուղ մը կը գտնվի մինակը: Մահակ կառավարիչն գայժագամին, թէ, — կուզե՞ս որ Համոն մերթափառել:

Գայժագամը դարմանքով կըսէ. «Հազար միավոր գացին և չկարողացան մերթափառել, երկու հոգիով ինչոքե՞ս կտրելի է»: Մահակ կը քաջատրեք գայժագամին և կը ստրվեցնէ մարթինի խողովակը ճիշդ գինգորական փողի պէս փշել: Գայժագամը կը կատարն ըստմաք և փողը կը հնչեցնէ, Համոն փողին ձայնը լսելով՝ գյուղը պաշարված կը կարծն, կիսամերկ, առանց զենքի, տանիքն կը ցատկն և շփարած ուղղակի իրենց կողմը կը վազէ: Մահակ կազգարարն Համոյին, որ մեռքերը վեր տունն, ապա թէ ոչ կը կրակն: Համոն կը հնազանդի: Մահակ գայժագամին կըսէ, որ Համոյին մեռքերը կապէ: Գյուղնն գրաստ մը կը ճարեն, Համոն վրան կապած, գիշերով Ատիամանի բանտը կը բերեն: Մի քանի շաբաթ վերջ Համոն Մալաթիա գրկել կորոշեն (որովհետև Ատիամանի սերագլատ ապանը Մալաթիա կը) դատուելու համար: Գայժագամը Քուրք սերման մը (Էմմէր շափուշ) և 25 միավոր ժանտարմաներ կը կանչէ և կը հրամայէ, որ Համոն Մալաթիա տանին, Քուրքերը կը մերժեն և կըսեն թէ՛՝ եթէ Մահակը մեզի ընկերացնես կերթանք, ապա թէ՛ ոչ՝ չենք կրնար տանիլ: Գայժագամը Մահակին կտրուպէ և կընկերացնէ ժանտարմաներուն ու համփա կելլեն: Համոյի նման Հայանի մեկու մը կառված գինակով Մալաթիա տարվիլը ամոթ սեպելով, Համոյի ազգականներն՝ Ատիամանի Քուրք և քուրդ աղաներն մի քանի հոգի, Մալաթիայի ճանապարհը կերթան և կը խնդրեն Էմմէր շափուշն, որ Համոյի մեռնակապերը քակն ու այնպես տանի: Էմմէր շափուշ կը պատասխանէ. — «Իս չեն կրնար քակել, գացեք Մահակն խեղբոցեք»: Աղաները նախ չեն գիշանի Հայն մը խեղբու, հետո կը տեսնեն, որ ճար չկա, Մահակին կը գրմեն, Մահակ կըսէ Համոյին. —

«պատճի վրա խոսք տուր, որ փախչելու փորձ չպիտի ընես, այլապես կը կրակեմ»: Համոն կը խոստանա և ազատ կերպով կը տանին Մալաթիա:

Մի քանի ամիս վերջ Համոն, կաշառելով Մալաթիայի կառավարութիւնը, երկու ժամաարձաններու ընկերակցութեամբ բազմիք կերթա: Ժամաարձաները, որ նախապես տեղյակ էին, ժամաարձաներուն ձեռք մի քանի ուկի կը գնե, մեյ մեկ ապաակ կը զարնե ժամաարձաներուն ու կը փախչի: Մալաթիային զուրս ետխապես պատրաստված Համոյի ավազակախուժքը Համոն կառնե ու կը տանի Մամուլաւա:

Անկե հետո Մահակ մի քանի անգամ, որ Մամուլաւա զայցած է կամ Համոյին հանդիպած է սեւ անդ, Համոն Հյուրատիրոս և Հարգամ է Մահակին որպես քաջ մարդու: Միաժամանակ պետք է ասել, որ Ատիամանի շրջանակին մեջ Համոն սեւ Հայու վնաս չէ հասցուցած:

1909-ին զիշեր մը, երբ Համոն ընկերոջ մը հետ Ատիաման կուգար, Ատիամանեն 4 քիլոմէթր զուրս Ձերքեղ—գայա կոչված տեղը, ժայռերուն առջեւ կանցնէր, իրան տաւ իր թշնամի քուրդերեն երկու Հոգի եկած ու զտրանակող կողոտակին ժայռերուն մեջ: Մեկը մութին մեջ կը կրակե Համոյին վրա, Համոն նույն վայրկյանին պայթող Հրացանի լույսին կը կրակե ճիշդ կրակողին բերանին մեջ ու կողանն, ինքն ալ կիյնա միւս վար ու կը մեռնի: Կրակողին ընկերը կը փախչի, Համոյին ընկերն ալ կը զանա Մամուլաւա:

1915-ի Խորհերու ժամանակ թուրքեր Մահակին կրսն, որ մի վախար, ոմանք ալ կը թնջարեն, որ Այնթապ կամ Հալեպ գնա: Մահակ, երբ կը տեսնե, որ քաղաքը ամայացած և բոլոր այրերը Խորհեցին, կերթա կը գիմե թուրք կառավարութեան և կը խնդրե, որ զինքըն ալ մեռցնեն, այլեւս տպրիլը ավելորդ Համարելով և կը մեռցնեն իր փափաքին Համաձայն:

#### 4. Գարույուն Ծերնիկյան

Կրքումի Մանասարյան վարժարանը ուսում առած 1900 թվին Ատիամանեն կը մեկնի Հալեպ, ուսուցչական պաշտոնով: Հալիվ 22 գարուններ բոլորած, բանաստեղծական միջոցով ստոված երիտասարդ մը Հրվանդանալով կը մեռնի, իր մահէն վերջ ձեռագիրներն ալ կանհայտանան:

#### 5. Արսես Գույումճյան

Այնթապի Ամերիկյան Գոլենեն և Մարաշի Աստվածաբանական վարժարանեն շրջանավարտ: Կարն ժամանակ մը Ատիամանի Հայ քաղաքակա-

նայ դպրոցը՝ ուսուցիչ և միաժամանակ ժողովարանը՝ քարոզիչ, խոստումալից երեսասարդ մը, բոլորովին Հակոբյան կարգ մը Հայ բողոքական ծխաւան պատմելիներու, որոնք փոք մը Հացի Համար Ամերիկյան միսիոնարներու կամքին գերի դարձած էին: Սա աշխատած է զուտ և մաքուր Հայ, Հեռու Հարանձանական սին վեճեր: Օգտակար եղած է Արամյանի բոլոր Հայութեան: Հետո պատմելի ձեռնադրված, 1909-ին Կիլիկիայի Ղարզի ժամանակ Օսմանիներ մեջ 72 ուրիշ պատմելիներու հետ, որոնք միութեան ժողովի գացած էին, իրենց գտնված շենքը Հրկիզվելով թուրք խուժանի կողմ, կայրին բոլորն ալ: Ներսես եպիսկոպոս թողուց մի Հատիկ որդին՝ Արմենը, որը այժմ Պեյրուսի է և բժիշկ Պեյրուսի Ամերիկյան ֆուկուլթիցին շրջանավարտ:

## 6. Դակոր Գույումճյան

Ներսես եպիսկոպոսին, Այնթապի Ամերիկյան զուեճէն և Փարիզի Համալսարանի իրավաբանական նյութին շրջանավարտ: 1909-ին Կ. Պոլսի մեջ յուշ տեսած «Աշուղի կարտաներ» իր բանաստեղծութեաններու առաջին գրքուկը: 1912-ին Եգիպտոս գնաց, 1914-ին մտած Անգլիական բանակը՝ որդես թորդման, 1916-ին Չանազ-կաչի (Ճարտանեյ) պատերազմին ուսման մը վերադարձելով մտած: Գաղարատած չորս Հատոր բանաստեղծութեաններու ձեռագիրներն ալ կորսվեցան:

Զորայ Գառայան Հեանյայը կը գրէ Դակոր Գույումճյանի մասին. «Հաս շեմ կրնար անցնիլ առանց մի քանի տող նվիրելու Գուեճի գաղտնիներին և իմ մտերմիս Հրանդանուսուրցի (Ատրաման) բանաստեղծ Դակոր Գույումճյանի Հիշատակին: Թէ ինք և թէ իր երկը (Աշուղի կարտաներ) անունով յուշ տեսած Գույում մեջ 1909-ին, անհետացան Առաջին Համաշխարհային պատերազմի միջոցին: Իր փրոֆեսորները և իր զուեճակիցները իր մեջ տեսան զգայուն բանաստեղծի մը ապագայ աստղը, որ շիջվածաւ կորսվեցավ սիրոյ և պատերազմի կրակներուն մեջ: Նա իրավամբ կը գրէր.

Ձմեռ մը կայ, ո՛հ, ձմեռ մը Հուլայս մեջ,  
Յորդ անձրևներ իսկ կը պարեն թողժողին  
Ճամբուս վրայ ամպելով մութ մը անվերջ  
Այ, շող մը ջինջ մեղմով գգուէր իմ Հոգին:  
Դեռ անհամբեր կապանեմ պատասխանին նամակիս,  
ուր Հոգիիս կրակն կաթիլներն կաթնեցի,  
Ուր յուզումէ գոզուշուն ծիածանը ջաթնեցի,  
Եւ ուր ինկան ծաղիկներն ալ արցունքիս:

Այդ շողը չեկե՛մ էրբեք և ոչ ալ նամակը: Եւ ամենքը մոռցան զինքը ու իր գործը: Այդ կայծը թաղուեցաւ, ք՞ով զիտէ ու՞ր, հետու իր սիրած-ներեն և իր տունէն հայրենիք՞:

Նույն չէ՞ք մե՛կ Գևորգ Ա. Սարաֆեան կափելցնե՛ն. «Աստղեամանցի Թա-կոր Գուլումեանն քանաստեղծը իմ ալ բարեկամս էր: Կրեամ վկայել, թէ քանաստեղծական տաղանդով օժտված սիրակարտ երիտասարդ մըն էր»:

## 7. Գովիաննես Պետրոսանյան

Մեծ 1892-ին, հայրը 1895-ի համիայան խարզին սպաննվեցա՛մ: Որը Հովհաննեսը 1912-ին Դամասկոսի թրքական Համալսարանն շրջանավարտ եղա՛մ՝ որպես զեղագործ: 1912–1915թ. Պերենիկի թագապետութեան մե՛կ կաշխատե՛ր որպէս զեղագործ: 1915-ին Ուրֆայի Արտաշէս Տառայանի և Տեր Մկրտիչ Մարտոյանի (Այն-Քապըք) հետ Պերենիկի հայոց դպրոցներեն, եկեղեցիներեն և ժառանգորներու տուններեն զբաղված գրքերու և թուղթերու գրաբնինչ եղան և բոլոր վնասակար կարծ-ված գրքեր, թղթեր, նամակներ և այլն պատակով պատահածն Եփրատ նեոտեցին ու Պերենիկի հայութեանը ազատեցին. (Պերենիկի հայութեանը չի խարդվեցա՛մ): Արտաշէսը սպաննեցին Ուրֆայի ճանապարհին վրա:



Տեր Մկրտիչը փոխա՛մ, երկու ամիս միայն խոսաւ ևսեղով ապրեցա՛մ Սուրուհի կողմը քարայրի մը մե՛կ, հետո ապատտանեցա՛մ Հալեպ ու եր-կար տարիներ վերջ մեռա՛մ: Իսկ տարաբարտ Հովհաննեսն ալ քանտարկ-վեցա՛մ, զրկեցին Հալեպ, երեսուն ոսկի կաշառով ազատվեցա՛մ զինվորա-կան առյանի ճանկերին: Ապա անվեցա՛մ թրքական քանակ հարյուրա-պետի աստիճանով, պետմա շարունակեց մինչև 1922 թվականը: Նույն տարին Ուրֆայի գորարածինը տեղափոխվեցա՛մ Խալֆեթի (Հոսմէլյա), Հովհաննեսն ալ միասին: Հոն Ասիամանցի թուրք մը էֆենտի տնունով, բոսին բուն իմաստով փոզոցային լակոտ մը ճանչցված հայերու և թուրքերու կողմն հովաստարպետ, հայանի չէ, թէ ինչ միջոցներով եղած էր Խալֆեթիի նախնական գառարանի դատափոր, Հովհաննեսին ճանչ-նալով և զարմանալով, որ ոչէ մնացած է՝ կը հաննե Հոսմէլյայի բերդը, կը զնդակահարեն գլուխն և բերդն վար մզելով կը հայտարարեն, թէ խենթացած էր և ինքզինքը բերդն վար մզեց ու մեռա՛մ:

<sup>77</sup>Պատմություն Արևելքի հայոց, հատոր Բ, էջ 499:

Պատերազմի շրջանին Հովհաննեսը բանակի կողմն Բոս—ուլ—այնեն Դամասկոս երկաթուղիով ծծումք և այլ քիմիական նյութեր փոխադրելու գործին պես նշանակված էր: Տարիներով երթնեկույթյան ժամանակ պաշտոնի բերումով, շատ մը Ատրանանցի և այլ Հայ տարագիրներու կյանքը փրկած է իր խնամքով, ցուցմունքներով և նյութական սմանգալույթով, իր սեփական քսակեն, որոնք Հարյուրամյորներ են և շատերը կապրին մինչև այսօր և իրենց կյանքը կը պարտին Հովհաննեսին, ինչպես նաև իմ կյանքը: 1918 Հունվարին Համաճարակի ժանտախտի ընկած էի Հայկաի մեջ: Հովհաննեսը զիս փոխադրել տվավ Թաղապետության Հիվանդանոցը, բան մը, որ եթէ ոչ անկարելի, գոնև շատ զգուշ էր Հայերու Համար: Լաջորդ որը քոֆս եկան երկու թուրք բժիշկներ, զիս քննած էին ու ըսած էին, — «քեզի գեղ մը գրեցիրք, որ շուտով կը Հանգստանաս»: Հովհաննեսը դեղի շիշը առավ և փոքրիկ բաժակի մը մեջ յեցուց ու համը նայիլ ուզեց, ետ թրեց ու ըսավ. — «Թույն է, չիմես»: Երիշ տարավ Հիվանդանոցի գեղաբանը, որու վարիչն էր Այնթապցի Հայ մը Հակոբ անունով, իր ձեռքովը գեղ պատրաստեց ու բերավ, իսկ գեղազործին այ կը պատվիրեն, որ ամեն օր ժամամբար գեղ բերն ինձ: Լաջորդ առաւ թուրք բժիշկները նորեն եկան, զիս քննեցին, դատարկված շիշն այ քննեցին և զարմանքով ինձի Հարցուցին. — «Իմեցի՞ր»: «Այո», — ըսի: Իրարու երես նայեցան և անպատկառորեն ըսին. — «ճանաչ, ինձը շիշ տիրո, զի կնպերմեմը» (զարմանալի, խնամ եմ, կըրես, և չի ստոկամ): Թույնը կրկնվեցավ, այս անգամ ես թափեցի ու գեղազործ Հակոբ եկավ, շիշը տարավ ու Հովհաննեսի պատվիրած գեղեն բերավ: Լաջորդ որը կրկին եկան թուրք բժիշկները՝ զարմյալ պարտալ շիշն ու նույն Հարցումը և նույն զարմանքը ու գային: Անկե Հետո այլևս չեկան, Վահան Ամիրխանյան անունով Հայ բժիշկ մը խնամեց զիս: Պետք է ըսել նաև, որ նույն Հիվանդանոցին մեջ շատ Հայեր նախապես թուճամբարված ու մեռած էին:

## 8. Բժիշկ Պողոս Ապանյան

1895-ի Բարդին Հայրը՝ Գեորգ, զիմադրած և մի քանի քուրդ սպանած էր և իրենց տունը հրկիզված էր, մայրը երկու զավակներով ազատված էր: Պողոս մի քանի տարի Ատրանանի զոլորոցներուն մեջ ուսուցչություն ընելի Հետո, մտավ Կ. Պոլսի բժշկական Համալսարանը: 1914-ին Հազիվ ավարտած կը վերադառնա Ատրանան ու զոհ կերբթա 1915-ի սպանդին: Եղբայրը՝ Հակոբ, Երզրումի ճակատը գերի կիլես, Վրաստանի մեջ կամուսնանա Խարբերդցի տղջկան մը Հետ, ապա Հիվանդանոցով կը մեռնի, իսկ մայրը զոհ գեաց Տեր—Ջորի Լուրդին:



## 9. Սարգիս Շիշմանյան

1895-ի Շարգիին հայրը՝ մելիսի Գրիգոր, և հորեղբայրներ՝ մելիսի Հարություն և մելիսի Կարապետ հռչակական Թուրքերու կողմն: Ապա Խնարով վարժապետ Աբրահամյանի (Հանընջի) ջանքերով որպես որդի կրթվեցավ Էրզրումի Մանասարյան վարժարանը, 1903-ին շրջանավարտ եղավ՝ մի քանի տարի Ատիամանի Մեքուսյան վարժարանը որպես անօրեն աշխատած և զպրոքը բարեկարգ ու նախանձելի վիճակի մը հասցուցած է: Տարի մըն ալ Մալաթիայի ազգային վարժարանը աշխատելի Հետո 1908-ին Մանասարյանի խնամակալության կողմն զրկվեցավ Եվրոպա սովորելու և վերադառնալու՝ Մանասարյան վարժարանը զաստիտելու համար: Տարի մը Վրեննայի, 3 տարի Պրիլիի և 3 տարի Լոզանի Համալսարանները, մանկավարժության և բնական գիտություններու հետեւելի վերջ «Ֆիլոզոֆի սիտես նաթուրել» սիտեզուսով ավարտեց: Վրա հասավ Ա Համաշխարհային պատերազմը, զարձած էր Պոլիս, հաշտեցավ փախչիլ Գուլհարիս և Հասով Զվիցերիս: Հոն ևս ուսուցիչ շարունակելի ու ներկեր պատրաստող քիմիական գործարանի մը (Հայկական) մեջ (Ժընեվ) որպես անօրեն աշխատելի Հետո, գինազազարին վերադարձավ Կ. Պոլիս և ժամանակ մը Կ. Պոլսի Հայկական որբանոցներու անօրենությունը վարելի վերջ, 1922-1929 Հայկաի Ազգային վարժարանի անօրենը եղավ, ապա Ատիս-Ազապայի (Հապեշխտան) Ազգ. վարժարանի անօրեն, Հուսկ Հետո Հապեշխտանի Համալսարանի մեջ՝ զաստիտ: 1935-ին հիվանդանալով՝ մեռավ օտար երկրի տակ: Մեծ և միակ փառաբան էր մեկնելի Սովետական Հայաստան և ծառայել իր բնիկ երկրին ու հայրենիքին: Ափսոս, որ մահը անկատար թողուց իր այդ փառաբանը:



## 10. Սարգիս Տեմիրճյան

1895-ին որբացած Ուրֆա ֆրոյլայն Բառան Եփեփի որբանոցի աներեն, որպես գերազանցիկ զրկվեցավ Այնթաղի Ամերիկյան դպրոցը, 1909-ին վերադարձավ Ատիաման և որպես անօրեն աշխատեցավ զպրոքի բարեկարգության և Հառաջդիմության, զպրոքը Հասով նախանձելի զրության շնորհիվ իր ջանքերուն, կանոնավոր ծրագրով և արդիական գառազրեբերով: 1915-ին ապաստանեցավ Այնթաղ և պահվրտեցավ: Թուրք կառավարությունը ի բացակայության մահվան դատապարտած էր և շտա

խիստ փնտառուքներ կատարեցին ձերբակալելու համար: Կի՞րը անուն հայ մը Այնթապի մեջ պահած էր իր տունը և ոչ ոք կը կասկածեր, թէ այդ մարդուն տունը պահված է: Այնթապի տարազրոյախներուն խառնվելով, ծոյտյալ կազաստանի Հալեոյ, Հոն ևս կը պահվէրտի: Որդես գաղթական կը ձերբակալվի Տեր-Ջոր քչելու համար, սասիկանատան մեջ ինքզինքը խննթ մնացնելով կը հախոյի փախչել: Թուրք կառավարութունը, սակայն չի գազրիր փնտռել:

Վերջապես Իսկենտերունի (Ալեքսանդրեթ) մեջ իր դիմագծով չերքեզ մը կը ձերբակալեն՝ որպէս Սարգիս Տեմիրճյան: Չերքեզը որքան կաշխատի ու կը ճգնի իր չերքեզ ըլլալը ապացուցանելու, սակայն թուրք կառավարութունը չի հավատար և կըսեն իրեն. «Դուն այնպիսի մեկն ես, որ ամեն գույն և մե կրնաս աննել» և չերքեզը կախաղան կը բարձրացնեն: Որմե հետո մեջտեղ ելավ, Հալեպ, Ուրֆա, Ատանա, Դամասկոս թափառումներն վերջ մեկնեցավ Հապեշխտան:

## 11. Սարգիս Մարաշլյան կամ Չեթ Սարգիս (Ատիամանցի)

Սարգիս Մարաշլյան Կիլիկիայի զբաղման ժամանակ (Ֆրանսացիներն) 1918-ին շատ մը կարևոր գործեր կատարելէ քացի, 1918-ին Հաճընցի ճրգտըզյան Հակոբի հետ կը հեռապնդեն Հաճընցի Արամ Մանկըրյանին, որը պատերազմի ժամանակ դավաճանելով Հաճընի Հայութեան, թաքեղած զննչերու տեղը ցույց տված է թուրքերուն և կարգ մը մատուցելուները: Դավաճան Արամ Մանկըրյանը զգալով, որ Հայ վրեժխնդիր մեռքերն չպիտի ազատվի, կը փախչի Թարսուս և կը թաքնվի թուրքի մը տունը: Մարաշլյան Սարգիս և ընկերը, իմանալով դավաճանին տեղը, Սարգիս տերվիշի մեռով և թուրք մուրացկանի հազուատով կը մտնեն Արամը պահող թուրքին տունը, կը սատկեցնեն դավաճանը ու կանհայտանա:

1946-ին Պեյրուիթեն, ընտանիքով ներգաղթից Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան, 1956-ին մեռավ հիվանդութենէն Երևանի մեջ:

Անհետացող զննչերու կարգին պնտք չէ մոռնալ նաև մի քանի զննչեր, որոնք մեծ ծառայութուններ մատուցած են ժողովուրդին, շինարարական մեծ մեռնարկներու աստն իրենց նյութական լայն աջակցութուններով, ժողովուրդին շահերը թուրքերու, և թուրք կառավարութեան ստեճգութուններու դեմ պայտպտեելով, համառ և մահացու պայքար մղելով և միշտ հաջողելու պայմանով: Երջակա և զբացի քաղաքներու Հայ ազաններն բոլորովին տարրեր ևլամ են, վաշխառութուն և ժողովուրդը շահագործել բոլորովին հակառակ ելամ է իրենց զգացումներուն:

Կրթական և ազգային գործունքի Հասաջապահները եղած են, միշտ լայն բանալով իրենց քսակները: Պետեղը տաքերիյի (գինգուրական տուրք) կոչված Հրեշտային տուրքի ատեն, ազքատ դասակարգին դատը միշտ պաշտպանած, այդ տուրքի Համար տարին մի քանի անգամ բանտարկվող ազքատ բանվորները բանտեն Հանելով, կամ իրենց քսակեն վեարելով՝ զոհոսթյուններ քրած են: Այս Հրեշտային տուրքեն ազքատ դասակարգը փրկելու Համար արժատական միջոցի մը գիմելով, վեարելու անկորոզ կողմներու տուրքը բաժանած են ունեվորներու վրա և ազատած ինզները Հայածանքե ու բանտարկութենն, միշտ իրենց լայն մասնակցությունով: Ատիամանի Հայությունը բնով վիղ չէ ծուած թուրքին, քաղաքեն դուրս թուրքերը կատուի նման էին Հայոց քով, իսկ քաղաքեն ներս ևս Հայոց Հետ վեճ և կռիվ ունենայ չէին ուզիր: Հոնախ կը գիմելին Հայերու օժանդակության, իսկ աղաները՝ թուրք աղաներու դեմ մահացու պայքար կը մղեին խիստ վտանգավոր պարտղաներու տակ, շատ մը կառավարիչներ և պաշտոնյաներ պաշտոնանկ ընել տված են, կոթնած ըլլալով Խարբերդ և Մայաթիայի մէջ իրենց նման կարգ մը ազգեցիկ Հայ աղաներու և կառավարական պաշտոնյաներու աջակցության: Երբեմն ալ, ոգովելով թուրքական աղաներու ներքին պայքարներն, միացած են թուրք քլիբի մը՝ ուրիշ թուրք աղաներու դեմ և միշտ Հաշուած են: Իսկ շրջանի քուրդ աղաները միշտ Հայ աղաներուն կը գիմելին այս ու այն դժգարին խնդիրներու կարգադրության Համար: Սարգիս Տեմիրեյան ճիշտ կերպով նկատած և Հետևյալ կերպով կը թուսթազրե Ատիամանի Հայության նկարագիրը:

«Գիմարգժով նաև Ատիամանցին կը տարբերի զբացի քաղաքներու Հայերեն, աչքեր՝ ժանր ու խիստ խմաստուն, Հասակ՝ թանձր, թիտղևն ու խիստ սև մազերով, կամարածև քիթ ու բարձր նակատ և երկար պարանոց: Անոր մեջ՝ սխարի բարությունը, զայլի զազանությունը ու առյուծի վեճանձնությունը իրար կը լրացնեն Հեզարարտությունը, կոճաղանությունը ու ծայրահեղ խստապարանոցությունը իրար կը գլեն: Գութը, անզութը, սերն ու ատելությունը ու ներդաժտությունը զուեղ—գուեղի կը պտտկին ասոր սրտին մեջ: Առանձին կը մեան իր մեջ միայն, անբասիր բարտյական, Հյուրասիրություն, միաբանություն ու զարգացման մեծ ընդունակություն: Այս բոլորը աչքառու փաստեր են Ատիամանցիին շրջակա Հայ ժողովուրդեն անկախ և Հետու տեղն մը զազմած ըլլալուն և իրենց Հայկական տոհմային նկարագիրն ու առնական վեճանձնությունը անազարա պահած ըլլալուն»<sup>20</sup>:

<sup>20</sup>Պատմություն Ատիամանի, էջ 10:

## **Գոստ-Պապա (Պէլյուք մըղղոսը)**

*Թուրքերուն ահ ու սարսափ ազգող, Համառ պայքարող և խիստ բնագորութեամբ ազգեցիկ անհատ մը, ազգաշին և զոհողութեան մարմնացում մը (1810–1885):*

## **Գազանճի մըլխսի թորո**

*Հին դպրոցին հիմնադիրը, Ազգային միասնութիւնը շլատող շատ շարժումներու զեմ խիստ և զաման պայքար մղած ու արդէլը Հանդիսացած է կաթողիկոսութեան և բողոքականութեան մուտքին, նախանձախնդիր եղած է ազգային զարթոնքի ու վերամնութեան համար (1820–1895):*

## **Գևորգ Գալուզտրյան (1840–1895)**

*Օրենսգետ և խիստ խորամանկ, առանց զգալի գարձնելու՝ լազ ասկտիկոյով աշխատող Հայ մը, չափազանց հարգման Թուրքերու և քուրդերու կողմն, իր աշքառու կարողութեան համար իսկ սպաննված 1895-ի շարդին:*

## **Թովալ մըլխսի Կարապետ աղա**

*Ազքատասեր, բարեսեր ու առատամեն, 1895-ին սպաննված:*

## **Եփրեմ աղա Ճերնիկյան**

*Ուշիմ, վեհանճն և օրենսգետ, սաար շրջանակներու հետ (Թուրք և քուրդ) զիմանագիտութիւնով պայքարող Հայ մը և զոհողութեան պատրաստ: 1895-ի Համիտյան շարդին զոհ:*

## **Մըլխսի Աբրահամ Շուշանյան**

*Հանգուզն և բարի, 1895-ի Համիտյան շարդին զոհ:*

## **Շուշանյան Սարգիս**

*Ազգու ու խիստ պատկառելի, մեծապես հարգման կառագարական շրջանակներու մեջ, 1895-ի Համիտյան շարդին զոհ:*

## Մանուկյան Սարգիս

Գոստ-Պապայի մարմնացույժը, անաՀման գոՀոգուՅիուհներ ըրած, շատ Հանդուգն, օրհնուգեա ու պատկոտազգու: 1895-ին՝ այրած իրենց բնակարանին մեջ բայր բնաանիքով:

ՀարուՅիուն, Սարգիս և Հակոբ Գույումճյաններ, երեքն ալ 1895-ի Հարզին զոհ:

Մըխի Գրիգոր, մըխի ՀարուՅիուն և մըխի Կարապետ Շիշմանյաններ, 1895-ի Հարզին զոհված, իսկ Հովտիժ Շիշմանյան 1915-ի եղեանին զոհ: Մերմիկյան Հակոբ Հանկարծամահ եղած 1908-են քիչ առաջ, իրովուգեա և Հարզված անձ մը:

## 4. ԱՏԻԱՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ

Ատիամանի արևմտյան մասը կտտարեկապես ավերակ է, բերդին վրայի Հայոց տուները քանդված են, դպրոցներ, եկեղեցիներ Հիմնահատակ կործանված ու բերդի տակի փողոցին Հավասարեցված է: Դարեր առաջ կործանված քաղաքի մը ավերակներու պատկերը ունի, Թուրքի բնածին ավերիչ ձեռքը գործած է Հոն, Թրքական խորշակը անցած է պարտեղներու և այգիներու վրայեն, ծառերը՝ տապալված, բերրի արանքը խուպան Հողի վերածված, ատտասի և դժնիկ կը բուսեն երբեմնի արգալանդ և դրախտանման այգ վայրերու մեջ:

Ճեկիզներու և Լենկ-Թիմուրներու Հարապատ Հաջորդները իրենց բնածին և իսկական զերին մեջ են և կը մնան նույն Թուրքը: Իսկ արևմուտքը կը շարունակի իր նենդամիա ընթացքը Հանդեպ արևելքի ու Հայ իրավուհքի: Հայ ժողովուրդը արթնցած է խոր Թմբիրին և այլևս իրեն Հրոմեցված Թմբեցուցիչ ղեղաՀատերը յուզի պես կլլկու տգիտությունն ու Հիմարությունը չունի, փորձառություն զուժը նետած է:

Ատիամանը մեկ փոքրիկ մանրանկարն է ամբողջ Հայկական նահանգներու: Հայ ժողովուրդը իր բնիկ երկրին տարազրված առեն չնեշոյ և նախանձելի վիճակի մը մեջ Թողուց ամեն ինչ, բայց 50 տարի անցած է այց օրեն և ավերակներու սիրահար Թուրքը ավելի Հետամնուց է և վայրենի, ինչ որ էր առաջ:

Ատիամանի 8-10 հազար հայութիւնն այսօր հազիվ 2200 անձեր կան, որոնց մեծ մասը Հեռագատերագոյան ձեռնդռներ են, առանց հաշվելու չբիտկա գոյուղերու հայ բնակչութիւնը, որոնք խաղառ շնչված են: Համեմատութիւնը ետեւն է նաև Արևմտյան Հայաստանի մյուս բոլոր գաղթաններու հայ բնակչութիւն, բացի Վանն: Եվ այդ բոլոր գաղթաններու քաղաքներն ու գոյուղերը միևնույն ավերակի տեսարանը կը ներկայացնեն, ինչ որ է Ատիամանը:

Իսկ այն հաս ու կոտոր հայ բնակիչները, որոնք կողքին Քուրքիայի մեջ, ահ ու սարսափի օրեր կանցնեն, կյանքերնին միշտ վտանգի տակ է, իբրևական յաթաղանը ամեն բոլոր պատրաստ կողման անոնց գլխուն վերև, միայն փոքրիկ ասիթ մը կրավն հարվածելու և խոցխոցելու համար: Քուրքը միշտ նույն Քուրքն է և չի փոխվիր:

Քուրքը անվազն երկու հարյուր տարի ետ մնացած է աշխարհի հառաջադիմութիւնն:

Կեղծափոր Քուրքին պոռոտախոտութիւններուն և շողորթութիւն միայն անբրկացիներն ու Եվրոպայի պետութիւնները հաճապ կկեղծեն և կույր ու խուլ կնեացնեն գիրքեր՝ լո՛վ ևս շահագործելու համար: Քուրքիայի մեջ կողոպուտիք և թալանելիք ոչ Քուրք ժողովուրդը գրեթե չմնաց, այժմ Ամերիկայի Միացյալ Նահանգներն են այդ կողոպուտի աւարկան:

Մեր գիտցած ու հանչցած Քուրքն ոչ մեկ ժողովուրդ քարիք չէ տեսած: Իր տիրապետած երկիրներու, ժողովուրդներու պատմութիւնը վկա է այս նշմարտութիւն (Պաշտաններն մինչև Աբրիկն, Աբարիա, Մերձափոր Արևելքի երկրները և Հայաստան):

Մինչև 1890 թվականը, 250 տարեկան ընկառցին 82 շաբաթ կեղծակերպած են Քուրքիայի բազկացուցիչ ոչ Քուրք ժողովուրդներուն:

Մեր պապերը շատ իրատես եղած են և իզուր չէ, որ ռուսին կոչած են քեռի: Որովհետև (Անգլիա, Ֆրանսա Գերմանիա, Միացյալ Նահանգներ) բոլորին ալ հասակը չափած ենք, հարկ չկա մեկիկ-մեկիկ անոնց հասցուցած շարիքները թվել երեկ և այսօր, բոլոր հայերը գիտեն այս պարագան: Փոր մը հացի, գոյութիւն մը քարը տալու կամ գրամի համար գործիք գառնայ ստարներու, համազոր է գաղթանութիւն:

Ի մի բան, Հայ ժողովուրդի դավանանքը Հայրենիքն է, ամեն բանէ առաջ Հայրենասիրութիւնը մեր ժողովուրդի սրբազան և վեհ իտեպն է: Բարգալանում, հառաջադիմութիւն, զարգացում և ամեն տեսակ բարիք՝ միայն ու միայն Հայրենի հողին վրա կտրելի է, այդ Հայրենիքը Հայաստանն է:

## ԱՏԻԱՍԱՆԻ ԳԱՎԱՌԱԲԱՐԲԱՌԸ

## ՄԻ ԲԱՆԻ ԳԱՏՄՎԱԾՔ ԱՏԻԱՄԱՆԻ ԳԱՎԱՌԱԲԱՐԲԱՌՈՎ

## ԽՈՏԱՆ Օ (ՈՒ) ԻՐՎԱՏԱՍՏԵՍԻ ՈւՂՈՂՆԵՐԸ (ԵԿՈՂՆԵՐ)

Նաորաստին խոճան օր մի աններին կրնկի վառքը կը կտրվի, աունը հըզմանա կը պառկի, քանը մի պարեկամներ հըզմանաոտեսի կուզան, արսի աուռը կը զննեն, խոճային կնիկը կերթա գուռը կը պանա, կըսեն. «խոճան հըզմանա է, անսնալու էկէրէք», կընիկը կըսեն. «կազնեք էրթամ խոճային խապար ուտամ»: Կընիկը կերթա խոճային կըսեն, քի քանի մի մարդիք էկնր են քըզի անսնալու: Խոճան կըսան քի, ում վառքը ասկըջ առաջ կտրվեր է նա, անի թա քա քովիս:

## ԽՈՏԱՆ Օ ՍԻՂԵ ՂԵՆՈՂ ՄԱՐՂԸ

Օր մի նա խոճան զուգազն մընակ կացած ասները մարդ մի էտեզնե գիզին քեռքին խաղաբարդ սիլլէ մի (ապտակ) կը զննե: Խոճան կը առանա կըսեն քի, օրի<sup>6</sup> (ինչու<sup>7</sup>) զարքիր: Մարդը կըսան. «իմ պարեկամիս կիտցա (կարծեցի), եկընկույթան (կատակի) հըմար զարքիր»: «Ձէ,— կըսեն խոճան,— աուն էսէլէթի (գիտումնալոր) զարքիր»: Ենլլի վախըթ (խախտան ասեն) զըրվրտեյն, խար խուր էնկն, անզըաըը քաշկաւայնե սոնը, խոճան մարդուն ետիայնե (օմիքեն) կըպանե ու կըսանն զատիին (զասալոր):

Ղառին կը հարցնեն. քաղքամընիս ինչ է»: Խոճան կը նազն էզածը, զատին պարըջնեկ կուզեն, խոճան չի պարըջվիր. «աս մարդուն եկզան պըտ ուտաս»,— կըսան: Ղառին քիրքը կը պանա, կը տարմեն—կը տարմեն, կը հայնենա, կըսեն. «կասա, սիլլեյի մի Հմար մեկ սակի եկզա կըզամ է (զրվամ է) քիրքին մեջ: Աս մարդը քըզի մեկ սակի պետք է ասա»: Մարդը

կըսան. «քովիս փարս չքա(չկա)»: Ղատին կըսան.— «կնա, պեր»: Զենոզ մարդը զատինն պարեկեամն է կչեր, «կնա պեր» ըստելու վարելք, զատին մարդուն կողաուկնն աչք կէնէ քի, կնա մու քար (մի գար), խոնան աչքին նաթեն (ծայրեն) կը տեսնա զատինն աչք էնելը:

Մարդը կերթա, արթըզ (այլես) չու քար (չի գար): Էրկու սըճաթ (ժամ) կանցնի, խոնան կը Հայենայս մարդը չեկա՞մ, զատինն կըսան. «մարդը չեկա՞մ»: Ղատին կըսան. «բ<sup>ո</sup>նչ էնիմ»: Խոնան կը Հարցնեն. «մեկ սիլլեյին նեզան մե<sup>կ</sup> սակ է»: «Հա,— կըստե զատին. քիբբին մեջ ստանց կըգամ է»:

Ազկեկ արասահի շամառ (սպտակ) մի նա ինք կը քաշե զատինն, կըսան. «ասանց է, նա եփա (երբոր) մարդը սակին պերն, տուն առ, քըզի թա ըննա»:

Տուրս կելլա, կերթա: Ղատին էշութինը կը Հասկնա:

### Կըտըրի՞մ տղան

Մարդ մի որ մի պզտիկ քաղաքի մի զուգաղեն անցած ասեն կը տեսայս, տասըճինն տարփան մահաուժ (անմեղ) ազկեկ մի տուրսի տան քով նստեր կուշայս: «Օրի<sup>ն</sup> կու շայս, աղաս»,— կը Հարցնեն: Տղան կըսե քի, պապիս (Հայրս) շամառ մի զարքա՞մ ընծի, տունեն տուրս էրա՞մ: «Ինչի<sup>ն</sup> Հըմար,— կըստե մարդը: Տղան կըստե.— «աս մեր քաղաքի պանակ նամրուն վրա աշան մի թէօրէմիչ կզեր էր (երեան ելեր էր), նամրուն Հիտար էրեր էր (պաշտեր էր), մարդ, մարդասանք չէր կըրնըր անցնիրա, անցնողը կը պզտերա, ուժ պերանը ընկեր էր ասկըց անցնելու, Վոփս (ով որ) կերթարանա, խերուչկն ետ կը տառնարա, ասը ինչ պըտ ըննար չէ որ կրանարա: Պապիս ընծի ըսսա՞մ, քի պըտ էրթես, ստ աշանը սասկըրցենա, ամմա, թուր, սիլաճ, փէտ եախուս պաշխա պան մի Հետիս պըտ շառնաս, մընակ մարքո՞մ պերանը պըտ նաթես, մեկ էան քարես. Համ վըրատ եարա մի պըտ չը կանձի:

Ինչ էնիմ, պապուս խոսքը չէի կընըր կտրեր, էլլա, կաջի, տեսայս աշանը համրուն վրա նստեր է, ընծի տեսածը քիմի, կիւրըլթի մի վրցուց, վրա հիւհիւժ էրա՞մ, քովիս Հասսա՞մ—չՀասսա՞մ Հըմըն եսա վազկեցի վրան, չէնկէլէն (ձնտուն) պոնեցի, էրկու փարչա էրի, ամմա ստ զրի՞մ ասեն, աշանին ճէնկը թնձիս ճըզմիչ էրերէ: Պապիս, որ աթ շտեսա՞մ, կրակ կտրա՞մ, ընծի սիլլէ մի զարքա՞մ, տուրս էրա՞մ:

Մարդը ային պային կըննա, շաշմիչ կըննա, քի ասանց կըտըրին տղա մի ատանց պզտիկ պանի մի Հըմար տուրս արնոզ պապը ինչ չէշիս մարդ է: Մարդը կըստե.— «էկո, քըզի ասնեմ պապուս մարդը պապ, պարըջըր նիմ, քըզի աֆ թա էնէ»: Տղան կը վախնա. «չէ»,— կըստե: Մարդը զորո՞մ—



մորով Հրմըշանէն ազան ենքս կը տանն, «պարեմ» կըսես, պաղը «սաս-  
 ծու պարին,— կըսես,— Հրաման նստիր,— կըսես»: Մարզը կըսես. «Իրա-  
 թըրքն Հրմար սա տղուն ափ էրէ»: Պաղը կըսես. «Ինչըս (ինչպն՝ս) ափ  
 էնիմ, ես իրոր ըսսեր էյի ջի, վրաս էարա—փարա, էրզըզ—պըզըզ պըս ը  
 կանվի, ապանը թեզին վրա ճըզմիշ էրերէ»: Մարզը կըսես. «Շանըմ,  
 սասնցուկ կըտըրին ազա ունիս, արթըզ սատըմն ի՞նչ կուզես»: Մար-  
 զը շատ կը կերըկնա (կազաշե), պաղը կըսես. «Կաշիք, մարը կանչիմ»: Մարը  
 կուզա, պաղը կը պաշյե նազէ էնել, մարդուն կըսես. «Մտիկ էրէ»:

Աս մեր քաղաքին մեզ ինչ զըտըր մտնել որ մտաներ, վրայի վանքո-  
 վուն կերթային կը տեսային ո, ինչ տեսան, կերզմանը պաշտիր է, մա-  
 սկը մեղը չքա: Մտը (վերջը) պէքնիներ կողքին ջըշիքները աշելու Հը-  
 մար: Աշոգները մեկ միւս կը տեսան ո, կես ջըշիքին միաժող մի էկամ,  
 նազարա մի կոխեց: Պուր աշոգները պայըմիշ կըննան: Միաժողը կերզ-  
 մանին քարը մեկ տի կենէ, կերզմանը կը պանա, մտնելը միան թէրքին  
 կառնայս կերթա: Ատանց ամենն ասն չկրցան կրանալ ջի, վո՞վ է սա  
 միաժողը, ինչի՞ Հըմար կը տանն ե ի՞նչ կենէ սա մտնելաքը:

Օր մի նա ըստի ջի, ես սուսն պըս մտանիմ, ընծի տորեք թաղեցը,  
 մընակ պղտիկ ծակ մի թողցուցիք՝ նէֆէս անալու Հըմար: Ձերկընցընիմ,  
 մառայ, տարին թաղեցին ըսսամիս ջիմի (պն): Քըշեր էզամ, մեկ մի նա կե-  
 տիւնը սազաց, միաժող մի էկամ, քարը մեկ տի կրամ, ընծի պոնեց, միան  
 թէրքին քարեց, միւր ջըշե տարամ պաննըր լեան մի վրա, միսնն էլամ,  
 պատէնքիս զտեց, էրեսիս աշեցամ, ամլեմա (նորն) կրկեց (զրկեց), տարա-  
 վս ընծի լեանն վար քարե, Հըմըն (անմիշտացես) թոթվըմեցա, ես ինքի կրկե-  
 ջի, կետիւնը զարքի, յո սպաննեմ, մեկ միւս էրեսը պտեց, ինչ տեսամ. ար-  
 նիկ մի, անզրաքը աղեկո, արեվին կըսես. «Քարե մի ծնթիր, ես ծնթիմ»: «Մի  
 մառընծիք ընծի, ես ջըզին ջիմի կըտարին մեկը կը փնտուէր, յո Հնաղ կարգ-  
 վիմ, Հըմմա կըսա: Մեք կարգըմաք, սաս (սա այ) մեր ազան է, ըն (աւն)՝  
 մարը: Դարմամ մարուն ըսսամ. «Աս պուր նազլամիս սո՞ր էր»: «Հա, տըր  
 է»,— ըսսամ մարը: Հըմմա տուն ըսես, սասեց մար ու պապ ունեցող ազու  
 մի Հըմար ամոթ չէ՞ կը վեյի յո ապան մի թեզին վրա ճըզմիշ էնէ:

## Թագավորն օ վեզիրը

Սասնայուլի մեզ թուրք վեզիր մի չափնն էվելի գէնկուն կըննա, սի-  
 կոր, տիկոր (ստոր, անոր) սէրմիյե կուտա, յո ասուտուր էնն, պէլքի  
 (թերեւ) զարքար եննն տա, մարզիք կրանան, ջի զարքար էրեր է տա, աչք  
 շապնա: Ուն (որու որ) փարա ամեր է, նա քանի մի զամ էվելի վտա-

կեր է: Տարի մընա քանը մի Հոգար սակիի խուրմա կտանա, իրեք չորս տարի կը պի՛հէ, յո ազնկ մի փորփըստտի, քիւֆլենմիշ ըննա տա, Հոտի ու թափե, յո ըստեն քի վեզիրը մենծ գարար էրեր է:

Շատ կը վախնա, յո իրոր աչք կը տպի: Ան տարինա խուրմա չընծար, խուրմային կինը (զինը) մեկը տասը կըննա, կուգածն խուրման ծախու անապ կուզեն, չուտար, «Թո փտտի»— կըստե: Շատ մի՛նեկթ բիճա կենեն, ալ չի տըմանար, մեկը տասով կը ծախե, ազլեմա (Նորեն) շատ փարա կը վաստկի:

ԱՀճատ անուճով խըզմեթեն մի ունի էզեր, խըզմեթենին կըստե.— «ԱՀճաա, աստը (այտը) պաղնիք էրթանը»: Կեյլան կերթան, կը լոկնան, վեզիրը կը իջը կը սապոնե, աչքը էրնար սապոնա, ծաղըը չուրուենին կերկընդեն, յո թատը աճա, ճուր լըլա կըտը, մեկեն թատը ինք իրոր ծարըը կուգա, թաճուպ կենե: «Ան ինչ ալամոթ Հրաչք է».— կըստե: Հըմըն ԱՀճատը կը կանչե. «Կնա պաղնիքին տուճը Հայեցիր (Նայե), տնա ի՛նչ կա»,— կըստե: ԱՀճատը կերթա, կը Հայենա, յո արապա մի կազներ է տուճը, քանը մ՛աա (մի քանի Հոտ) ճանտարմա քովը: «Ի՛նչ կա»,— կըստե: «Վեզիրը Պագաաա սիւրհիլե՛ն պըա ըննա, թեզ թո քա»: ԱՀճատը կերթա վեզիրին խապար կուտա, էրկուքը մեկեն կեյլան, արապան կը նստին, ճանտարմաները անտըքի կը տանեն Պագաաա, իան մի կ՛նըրընեն, ես կը տուճան:

Թագաճորը Պագաաաի վայլինա խապար կոզըրկե, քի վեզիրը տա խանին մեջ մահպուռ է, դուրս պըա չեյլա: Մընակ ԱՀճատը տուրս կերթա, որվա ուտեկըը կաճա, կը պերե:

Բանի մի ամիս սոճը, քովմընին էզած փարան կը Հոտնի, փարա չի մընար, ամենն մարգա կը վախնա վեզիրին քովու դալու, էրթալու, կը մնան փարաարգ: Վեզիրը մատը շաա զըյմէթի մատնի մի ունի էզեր, ԱՀճատին կըստե. «ԱՀճաա, տար աա մատնին ծախե, ինչ որ (ինչ որ) պի՛ննա՝ աա, քիչ մի միս, պան աա պեր, տեսանք սոճը ինչ պըտ ըննա: ԱՀճատը շուկա կերթա, սիկոր տիկոր կը ցըրընա: ԵսՀոտի մի «մեկ սակի կուտամ»,— կըստե: ԱՀճատը կուգա վեզիրին կը Հարցնե, վեզիրը կըստե.— «Կնա տուր:

ԱՀճատը կերթա, մատնին կուտա, սակին կտանա, միս ու քիչ մի ուտեկը պաներ կաճա, կուգա սապին առաջը, լիճանին մեջ մոճպլին վրա թլնեկըլոյճ (սոճ) միսը կըտընեն ո էփի: ԱՀճատը կերթա Հաց աճալու, վեզիրը նամադի կը կազնի: Մեկ միճա ինչ տեսնա, ազնկ աղտատուցեն մոճի մի թլնեկըլոյճն մեջը կընկի: Նամադը կնա չի կըրընըր թոզուր, նամազը կըթմի, ԱՀճատը կուգա՝ Հացը կը պերե: Վեզիրը ԱՀճատին կըստե.— «Կնա խոճին տուճը Հայեցիր, տնա ի՛նչ կա»: ԱՀճատը կերթա, կը Հայենա, յո տղա (Նորեն) արապա մի կազներ է: «Ի՛նչ կա»,— կըստե: Կըստեն, քի թագաճո-

ըր վեզիրին աֆ էրնր է, կնա խապար տուր: Պաշտատի վային կուգա, յաթեր կը պերեն, կը Հազցենն, պաղնիք կը տանեն, կը վլանան, կը ստկեն, առոք—փառոք սարայ կը տանեն, յարհլըզ կուտան, տափաթ կենեն:

Սահուտին յառանը քիմի, վախեն կը տալա: Լեվալեն, վրան—կլսիւր էուր կարած քրտինքի մէջ, վազպէլեն կուգա վեզիրին վառքը կընկի: Եաման, էս էրի, տուն մ'եներս:— կըստ, մատենն էս կուսա: Վեզիրը կըստ:— ամի վախեր, առ սակին կնա: Սահուտիյին սիրտը կը Հանգչի:

Քանի մի որ ետքը եամրու Հազրուքին կը տեսան, ազլեմա արապան նստած Ստամպուլի եամրան ծարք կառնան:

Ճամբան Ահմատը վեզիրին կը Հարցնի. «Քաշա, տս ի՞նչ Հիքմէթ էր, Ստամպուլ պաղնիքն էանք, ըսիրք քի կնա տուր Հայեցիր: Կացի, յո արապան կազիւմ էր, սիրկիլեն էլանք: Լոտս (Հոս այ) Հացը պերի, ազլեմա ըսիրք քի կնա յանին տուր Հայեցիր, կացի յո թարքար արապան էկեր կազներ է: Վեզիրը կըստ. «տղտս Ահմատ, Ստամպուլ պաղնիքին մէջ էանք՝ աչքիս, էրեսիս սապոնոս, ծարքիս էրկնցուցի, թուր ինք իրի ծարքիս էկափ, կնացա, յո արթըզ չափը լըվեր է, ըստի՝ կնա տուր Հայեցիր, ի՞նչ կա»: Պաշտատ էկանք, փարա չմոաց, մընակ մատերս մոացեր էր, անա տարիք առ զըտըր սուղ մատերն մէկ սակինն էվիլ անեղ չեղափ, թլենըրոյին մէջն ա մուկ ընկափ, ըստի՝ աս նեղութան գերիշանութան չափը լըվեր է, կնա տուր Հայեցիր, տես ինչ կա, կացիրո՞ արապան կաղնիք է, թագափորը աֆ էրնր է: Ամենն պոնծրեսալուն ցամապը կա, ամենն ցամապունա՞ պանծրեսալը կա: Կերթան Ստամպուլ ափալա վեզիր կընես, առաջիս զենկիլուքինը կուտա իբր թագափորը:

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԶԱՐՏՈՒՂԻ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐ

	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
ուղղ.	ես	մեր	տուն	տուք
սեռ.	իմ	մըզի	բեզի	ծըզի
տրակ.	ընծի	մեր	քու	ծեզ
հայց.	ես	մեր	տուն	տուք
բաց.	ըզներ	մըզներ	բեզներ	ծըզներ
զործ.	իմծով	մնզմով	քեզմով	ծեզմով

ուղղ.	ան	անոնք	ինք	իրոնք
սեռ.	անոր	անոնց	իւրոր	իրոնց
տրակ.	անոր	անոնց	իւրոր	իրոնց
հայց.	ան	անոնք	ինք	իրոնք
բաց.	անկըց	անոնցնեք	իւրնեք	իրոնցնեք
զործ.	անով	անոնցմով	իւրմով	իրոնցմով

### Ցուցական

ուղղ.	ատ—ատի	ատոնք	ատ—ատի	ատոնք
սեռ.	ատոր	ատոնց	ատորոր	ատոնց
տրակ.	ատոր	ատոնց	ատորոր	ատոնց
հայց.	ատ—ատի	ատոնք	ատ—ատի	ատոնք
բաց.	ատկըց	ատոնցնեք	ատկըց	ատոնցնեք
զործ.	ատով	ատոնցմով	ատով	ատոնցմով

ուղղ.	ատիկա	ատիկոնք	ատիկա	ատիկոնք
սեռ.	ատիկոր	ատիկոնց	ատիկորոր	ատիկոնց
տրակ.	ատիկոր	ատիկոնց	ատիկորոր	ատիկոնց

	եզակի	հոգնակի	եզակի	հոգնակի
ուղղ.	անիկա	անիկոնք	տիկի (ատիկա)	տիկոնք
սեռ.	անիկոր	անիկոնց	տիկոր	տիկոնց
տրակ.	անիկոր	անիկոնց	տիկոր	տիկոնց
հայց.	անիկա	անիկոնք	տիկի	տիկոնք
բաց.	անկըց	անիկոնցնեք	տիկըց	տիկոնցնեք
զործ.	անիկով	անիկոնցմով	տիկով	տիկոնցմով

ուղղ.	սիկի	սիկոնք	ասկըցուն = այս տեղեն ատկըցուն = այդ ~ անկըցուն = այն ~
սեռ.	սիկոր	սիկոնց	
տրակ.	սիկոր	սիկոնց	
հայց.	սիկի	սիկոնք	
բաց.	սիկըց	սիկոնցնեք	
զործ.	սիկով	սիկոնցմով	

### Ստացական

իմիս = իմիմս	ծերը	տուննընիս = ծեր տունը
քուվիտ = քուվիմդ	ծերը	տուննընիտ = ծեր "
իրորը = իրեննը	իրունը	տուննընիմ = իրենն "

էրկուքմընիս = մեր երկուքը, պարտեզմընիս = մեր պարտեզը, էքիմընիս = մեր այգին.

խանութմընիս = մեր խանութը, ձէնմընիս = մեր ձայնը և այլն:

### Աճկանոն հոգնակի ձևեր

կնաէք = կիներ, արննաէք = աղջիկներ, ամնաէք = ամաններ, ծարքվէներ = ձևաքեր

էքստանէք = այգիներ, կեզզանէք = գյուղեր, կնկոց = կիներու, արննաոց = աղջիկներու

վոզ = ուզ, վոզեր = որսեր:

էրած = երազ, էրեկ = երեկ, արբար = եզրայր, էրեք = երեք, ստըպակ = ճերմակ.

քիթթ = քիթ, զըշերք = կշեռք, ինչըս = ինչպես, էրկաթ, էրկու, էրգուս.

ծոն = ձյուն, սոն = սյուն, բոն = բույն, օրի = ինչու և այլն:

ըրջքնուժ = ցրցքենչ, Հարսալամ = Հարս աննչու երթալ, Հիննամուս = Հիննայուժ

ուժա - մուս եղած = Հիննայել, խեծխուժ = խուսնկ ծխել:

Ազգանունները կը վերջանային ոնց - ենց - իննց մասնիկներով, և ոչ յան մասնիկով, յան մասնիկը վերջին մասնակաները միայն գաղտցնեցու մեջ սկսած է զործածվիլ ու տարազրուիթենն Հետո ընդհանրացած:

Անուններու վերջը անպայման օ գիրը կափկիցվի. Հակարօ, Հովանենսօ, Մովսեսօ, Ենրեսօ և այլն: Ատիամանի շրջակա քուրդերն ալ ունին նույն մէք, Հասսօ, Հուսսօ, Համօ, Մամօ, Օսօ և այլն:

## ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Ուզալ (զալ)

Ուլալ (լալ)

Մասնամասկան ներքա	ապառնի	Մասնամասկան ներքա	ապառնի
կուզամա	ալլոտ ուզամ	կուլամա	ալլոտ ուլամ
կուզասա	“ ուզաս	կուլասա	“ ուլաս
կուզայա	“ ուզա	կուլայա	“ ուլա
կուզանցա	“ ուզանք	կուլանքա	“ ուլանք
կուզեքա	“ ուզեք	կուլեքա	“ ուլեք
կուզանա	“ ուզան	կուլանա	“ ուլան
Մննքառատ	իլամայսկան	Մննքառատ	իլամայսկան
կուզայիյա	էլթ-մուզար	կուլայիյա	լաց - մուլար
կուզայիլա	էլեք-մուզեք	կուլայիլա	լացեք-մուլեք
կուզարա	քեական	կուլարա	քեական
կուզայաքա	ուզամաս=եքե զամ	կուլայաքա	ուլամաս
կուզնիլա	ուզասնա=“ զաս	կուլնիլա	ուլասնա
կուզայինա	ուզանա= “ գա	կուլայինա	ուլասնա
Կատարյալ	ուզանքնա	կատարյալ	ուլանքնա
էլա	ուզեքնա	լացի	ուլաեքնա
էլար	ուզաննա	լացիր	ուլաննա
էլակ	Մննքիտար կամ անորոշ դեղոս	լացեց	Մննքիտար կամ անորոշ դեղոս
էլանք	ուզալ	լացար	ուլալ
էլիք	էլած-էլեք	լացիր	լացած
էլան	ուզալու	լացին	լացեք
			ուլալու

**Ուտալ (տալ) բայը**

սահմանակետի ներքա	սահմանի	սիրել, վազել, ըսել, լսել, քսել, ջրել և այլ կարգ մը բայերու սահմանակետ ներքան, ապառհի և թեմկանի առաջին դեմքերը միայն կը զարտուղին ընդհանուր ձևերն:																			
կուտամա	ազտ ուտամ																				
կուտասա	" ուտաս																				
կուտայա	" ուտա																				
կուտանքա	" ուտանք																				
կուտեքա	" ուտաք																				
կուտանա	" ուտան	սահմանակետի ներքա	սահմանի																		
Անկատար	հրամայական	կը սիրինա	ազտ սիրեմ																		
կուտացիյա	տուր – մուտար	կը վազզինա	" վազզիմ																		
կուտայիրա	տվեք – մուտեք	կը սսինա	" ըսսիմ																		
կուտարա	թեմկան	կը լսսինա	" լսսիմ																		
կուտայաքա	ուտամսա	կը քսսինա	" քսսիմ																		
կուտայիքա	ուտամնա	կը կրինա	" կրիմ																		
կուտայինա	ուտամնա	<p>Թեմկան</p> <table border="0"> <tr> <td>սիրինսա</td> <td>կամ</td> <td>սիրիննա</td> </tr> <tr> <td>վազզինա</td> <td>"</td> <td>վազզիննա</td> </tr> <tr> <td>ըսսինսա</td> <td>"</td> <td>ըսսիննա</td> </tr> <tr> <td>լսսինսա</td> <td>"</td> <td>լսսիննա</td> </tr> <tr> <td>քսսինսա</td> <td>"</td> <td>քսսիննա</td> </tr> <tr> <td>կրինսա</td> <td>"</td> <td>կրիննա</td> </tr> </table>		սիրինսա	կամ	սիրիննա	վազզինա	"	վազզիննա	ըսսինսա	"	ըսսիննա	լսսինսա	"	լսսիննա	քսսինսա	"	քսսիննա	կրինսա	"	կրիննա
սիրինսա	կամ			սիրիննա																	
վազզինա	"			վազզիննա																	
ըսսինսա	"			ըսսիննա																	
լսսինսա	"			լսսիննա																	
քսսինսա	"			քսսիննա																	
կրինսա	"			կրիննա																	
Կատարյալ	ուտանքնա																				
տվի	ուտարնա																				
տվիր	ուտամնա																				
տվալ																					
տվինք																					
տվիք																					
տվին																					

*Տեսնել* = տեսնալ, կատարյալը կըլլա տեսաս, ս գիրը կրկնված է, *ասեզ* = ասեզգ, մտնալ = մտնալ, *սահել* = սահալ, *թեոհեել* = «դառնալ»:

Ատիամանի գաղափարաբանը բուրժուական արհեստ է, շրջակա գաղափարներու բարբառեն (Ուրֆա, Տիգրանահերա, Մալաթիա, Խարբերդ): Միայն Ուրֆայի և Մալաթիայի բարբառներուն հետ մեկ նմանություն ունի: Կը մասնիկը և բայերու ա վերջագորությունը (կուգամա, կերթամա, կը կարգամա և այլն): Իսկ Հնչուամներով երկուքեն ալ բուրժուական կը տարբերի: Մալաթիացի կըսե. հոմ տղանիս, կամ վառու տղան իս = որու տղան ես, Ատիամանցի կըսե. ու տղան ես: Այսպես առհասարակ: Բայերու վերջագորության ա ձևը կա նաև Ատիամանի շրջակա քրդերենի մեջ (տհարըմա = կերթամ, հաթըմա = եկա, խանարըմա = կարգացած եմ, մը յազմիշ քըրիյա = գրած եմ և այլն): Իսկ Ատիամանի արևմտյան գաղափարներու բարբառին հետ համեմատել կարելի է (Պեհեհե, Այնթապ, Հոսիմիլա), որովհետև անոնք մասնակի ընթացքին թուրքերու բանություն տակ թրքախոս գործած են և կորսնցուցած իրենց մայրենի լեզուն: Ատիամանի Հայությունը կզգիացած, մշակած է առանձին բարբառ, իսկ Արևելյան Հայաստանեն գեպի Ատիաման գաղթող Հայությունն ալ որոշ կնիք դրած է Ատիամանի բարբառին վրա, հատկանշական է արեւելահայերենն մնացած հետքերով, Հնչուամներով կարգ մը բառերու և ստություններու նույնությունը, ինչպես՝ տժարել, եսիմ, անազել, ջրէջնոււմ, հարսալոււմ, հիննայոււմ, ինծիոււմ, շամաուկ և այլն:

Գարձյալ Ատիամանի Հայության հոգեկան ապրումները, հակումները և զգացումները միշտ գեպի Հյուսիս թեքված են, իրենց առօրյա խոսակցություններով և սածած գողափարներով, (Անիի կործանում, Մասունի անբանություն, ասոնց շուրջ Հյուսիսում երգեր և այլն): Երկար գարիքը չեն կրցած մոռցնել տալ իրենց արտազայթը Հայաստանեն գեպի Կոնստանդնուս կամ Եփրատացիք: Իսկ արարերեն և պարսկերեն բառերու առատությունը գործածական լեզվի մեջ արարա-պարսկական շրջանն չեն մնացած (բառեր կան, բայց ստություններ և առանձին չկան), այլ թրքական գրավման մասնակ (600 տարվա ընթացքին) մտած են գործածական լեզվի մեջ, որովհետև թուրքերը փոխ առած են արարերեն և պարսկերեն, և պարտադրելով ստիպած են գործածել: Թրքերենով ստություններ և առանձին շատ կան, անոնց մի մասը Հայացուցած են և, սակայն, ամեն դժգոհության հակառակ՝ պահած են իրենց մայրենի լեզուն: Եվ թրքական բանապետության հալածանքներու, ջարդերու և ստրկության մեջ իսկ կրցած են պահել իրենց ցեղային ազնիվ ու վեհ զգացումները, հասկություններ և քաջասրտությունը ու գեպի ազատ կյանք ձգտումը: «Ուր Հայամուս՝ անդ տարածում» — կրնե առաքել:



Հոս պարտք կը Համարեմ Հիշել բարբառ մը, որ բոլորովին ուշագրտ-  
թե՛նն վերագած է. Հաշիւայի բնիկ Հայերու բարբառը, որոնք զարերն ի վեր  
կապրին Հաշիւայի մեջ, մեծ մասով մոռցած են իրենց մայրենի լեզուն, սա-  
կայն մի մասը դեռևս զժգարավ կը խոսի Հայերեն՝ խիստ Հետաքրքրա-  
կան և շափազանց ասորջինակ ՀեշուՄներով: Արարերենի օգնչութեան  
տակ շեշտ, առաջանութեան և ՀեշուՄ այնքան փոխված են, որ կարճես  
ուրիշ լեզու մը կը խոսին:

Հաշիւայի մեջ մտավորապես 85 000 Հայեր կան, որոնց 15.000-ը Հայ  
կաթոլիկներ են, որոնք կորսնցուցած են իրենց մայրենի լեզուն, թեպէս և  
եկեղեցական արարողութեանները կը կատարվին Հայերեն: Նույնպիսի  
արարախոս Հայեր կան Պիլյութի, Գամակոսի մեջ, իսկ Համայի չրջանին  
մեջ երկու մեծ Հայ գյուղեր կան Յագուլպի և Ղըրմիյե, որոնք շատ Հին  
ժամանակներն ի վեր կապրին Հուն և զարձած են արարախոս: Հաշիւայի  
Հայոց առաջնորդարանը քահանաներ զրկեց, զպրոցներ բացին և սկսած  
են մայրենի լեզուն սորվիլ:

Միթիթարյան միաբանութեանը Հաշիւայի մեջ բացած է միջնակարգ  
վարժարան մը և կաշխատին մայրենի լեզուն ասրածնը Հայ կաթոլիկ Հա-  
սարակութեան մեջ: Խորհրդային Հայաստանի իրականութեանը մեծ Հե-  
տաքրքրութեան ստեղծեց այս ուժացած Հայութեան մեջ, Հետաքրքրու-  
թեան արթնցավ գեղի մայրենի լեզուն և աշխուժութեան գեղի ազգային  
գիտակցութեան: Ներկայիս Հպարտ են, որ Հայ պետութեան գոյութեան  
ուճի և Հետաքրքրված են Հայաստանի նկատմամբ: Այդպէս կարգ մը Հա-  
շիւ ներգաղթեցին Խորհրդային Հայաստան:

Տարագիր Հայեր փոխեցին Հաշիւայի ազգային նկարագիրը և աշխու-  
ժութեան ու գիտակցութեան ներշնչեցին ուժացած և թուլացած Հայերու  
մեջ:

Բացի տարագիր Հայերն, մեծ թիվով ստոււնցիներ, արարիկբոցիներ,  
չմշկածազցիներ, անջրգեցիներ, խարբերոցիներ, տիգրանահերոցիներ և  
այլն, ի վաղուց անտի Հաստատված են Հաշիւայի մեջ, որոնք բնիկներու  
կարգը անցած են և, սակայն, պաշտած են իրենց մայրենի լեզուն: Այլևս  
ամենակ է նաև, որ արեւելյան և արեւմտյան գրական լեզուներու միու-  
թեան մը ստեղծվի և գոյութեան ունեցող անջրգետը վերցվի և ունենանք  
մեկ, միասնական գրական լեզու:

Իսկ եթե սպասենք, որ բոլոր զաղութահայութեանը ներգաղթն և  
Հնարահան յուրացնեն արեւելահայ գրական լեզուն, այդ շատ երկար տա-  
րիներու խնդիր է: Անկարելի մը չէ՝ Հոյովումներու և բայերու խմբա-  
ման Համամայնութեան մը կը Հեշտացնեն խնդիրը:



ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԴԵՊՔԵՐ



Մեզի եւ 1891-ին Խարբերդի դավառին մաս կազմող Մալաթիայի սանճագին կցված Ատրաման գավառակին մեջ: Առաջին դժբախտությունս եղած է տեսնել 1895-ի Համիայան Զարդը: 560-ի չափ ընտրանի Հայեր զոհ եղան վայրագ թուրքերու բարբարոսության կողմն արված Հրամանի մը: Հայը զոհ եղա՞մ մեծ պետություններու մրցակցության, Հակամարտության և մեքենայություններու ու դավաղիր խարբրայության պատահա՞ով, Բնակեալ թուրքերու նպատակը եղած է Հայութիւնը ընաջնէլէ — ինչպես արտահայտված է մեծ եղարքոս Քեամիլ փաշան 1875-ին, և սակայն, Համիայը այդ վատարարս և թրքավայել քայլը առած է զորավիգ ունենալով Անգլիան և կարգ մը ուրիշ մեծ պետություններ: Նախապես ծրագրված, Հարկ եղած դաշանի Հրամաններն ու Հրահանգները արված, աշնան երկրորդ ամսու մեջ ուրբաթ օր մը Հանկարծակի թուրք և քուրդ խուժանը ընչաքաղցութենն, կողուպուտ և կրտսական մուխուսն[ու.]թենն զինված տապար, կացին, դաշույն, Հրացան և մահացու ամեն տեսակ զարծիք ի մեռին, Հարձակեցան Հայ տուներու վրա և սկսան Զարդիլ ու Թալլիլ ութը օր շարունակ: Կարգ մը թուրքեր Հայեր տարին իրենց տուները պահեցին և ազատեցին, իսկ ոմանք ալ պաշտպանելու պատրվակով տարին ու սպաննել տվին: Այդպիսին էր Մութուլլահենց ընտանիքը: Շատ մը Հայեր Հավաքեցին իրենց տուը, Հետս մեկինկ—մեկինկ Հանելով սպաննել տվին իրենց ասն քով Էսկի—Սերայի մզկիթին առջև: Խելահեղ խուժանը կապաններ խելքին փչած ձեռով: Վերի Չելեպուսն Թազը Փալապըյից Կրպոն մի քանի Հոգի դշտարեց, խուժանը սարտափահար կփախչեր, Կրպոն ալ սպաննվեցա՞ւ: Մանուկյաններու ասն վրա Հարձակվելու ժամանակ երիտասարդ Հարությունը կուպանն քուրդ մը տարճանակի կրակոցով մը, խուժանը չի Համարձակիր Ենթս խուժել և տուըը Հրդեհի կուտան, բազմանդամ ընտանիք մը (72 Հոգի) այրեցան այդ ասնը մեջ: Բերդի լանջին վրա Ասլանյան Գեփոն սպաննեց մի քանի Հոգի: Անոր ալ տուըը կրակի տվին ու Գեփոն այրեցա՞ւ իր ասնը մեջ: Կիլիսիայան Սարոն ևս կրակեց խուժանին վրա և դշտարեց մի քանի Հոգի, ան ալ սպաննվեցա՞ւ իր ասնը մեջ: Ամբողջ Հայոց

տուները և խանութները թալլվեցան: Աւթերորդ և վերջին ուրբաթ օրը 500 հոգիանոց խուժան մը գլխավորութեամբ ծագումով քուրդ Հանի Շեյխ աղային՝ Ասիական կառավարի ազաններն մեկը, եկան Հարժակելու մեր տան վրա, որ մինչ այդ անվնաս կմնար: 300 զինված երիտասարդներ դարձանակող կապառներ: Պատերը ծակած էին դիմադրութեան Համար: Հորեղբայրս Սահակը, երբ տեսավ Հանի Շեյխ ազան ամբոխին առջևը ինկած, ըստով.— «այս շունը որ այնքան հայու դուրսը կերտով, պիտի գնդակահարեն»: Այդ օրերուն երկու Ուրֆացի հայեր մեր տունը Հյուսիս կցտնվեին՝ Ավետիս Գոյանճյան և Գրիգոր Թեմեքեճյան, Ավետիսը արգելք հանդիսացաւ, Սահակի թեկն թռնեց, որ չի կրակի, ըսելով, թէ բոլորս ալ իզուր տեղը կկարգեն և այլն: Հայրս և Հորեղբայրս՝ Սահակ, փոքոց եկան ամբոխին մէջ և կացինով զուար խարդելու եկող քուրդին արգելք եղան մի քանի բառով: Ծանոթ քուրդ մը կմտտանա Հորս. «Հակոբ.— կրտս, — դու խենթ ես, Հիմա ունե մեկը մեր վրա կրակի՝ իզուր տեղը կմտնէր, գնա ներս, բոլոր տեղերինը տանիքը հանեցեր և տան մէջքին ծայրը ներմակ լաթ մը զաւազանի մը վրա անցուցեր և տնկեցեր, որպէս թէ՛ հանձնված էր, մինչ այդ մենք զուար չենք խարդեր, բոլոր Հայոց տուները թալլվեցան, այս տունը բացառութեան չպիտի կազմե»: Հայրս և Հորեղբայրս ներս եկան, ժողովուրդը տանիքն թալլված պարսպ տուները զրկեցին, տանիքին ծայրն ալ ներմակ կտոր մը զաւազանի մը վրա տնկեցին, որպէս թէ անձնատուր եղած են: Ամբոխը ներս մտավ և սկսավ թալլել: Մեծ մայրս քուրդերու ձեռքն զանազան զուարքեր, իրեղեններ կքաշեր, կառներ ու կառներ տեղը կցներ, ուրիշ մեկը՝ կառներ կտաներ: Տեստով, որ անօգուտ է, կտուրը բարձրացաւ և թալլեցին: Ժողովուրդը պարսպ տուները ցրվեցաւ, մաս մը ազգային խանը ազատտանեցան: Ես, մայրս ու փոքրիկ քուրսը դիշերը տանիքը անցուցինք, Հայրս ու Հորեղբայրներս հսկեցին մեր վրա, առտուն Հորս բարեկամներն Ղարաման անունով թուրք մը եկավ և իրենց տունը տարաւ պահեց Հայրս: Յերեկը կրկին քուրդերը լեցվեցան թաղը և պարսպ տուները մնացած զուարքերը կտրուպեցու: Մեր Հարևան Պալազանճյան Գոսպարեկց բակը քուրդերու բազմութեան մը լեցված էր, Հանկարծ քուրդ մը տանիք բարձրացաւ երկայն մերկ սուր մը ձեռքը և մեր վրա եկավ, մայրս Հարժակեցաւ քուրդին վրա, զրկեց ու տանիքն վար նետեց բազմութեան վրա: Քուրդը հրացանը ուղղեց ժորս խփելու Համար, ուրիշ քուրդեր չթողին և ըսին «ամոթ թեզ, որ կնոջ մը վրա կրակեց կուզե»: Մայրս կընարանը վեր քաշեց, ինչ հետո երկու Հորեղբայրներս, մեծ մայրս եկան թուրք շեյխ մը հետեւին: Շեյխը՝ ձեռքը տապար մը, բազմութեան մեջն

ճամբա բանալով մեզ տարով իրենց տունը: Ծանապարհին Կերկերյաններու ասն ետեք փողոցին մեջ տեսանք խարույկ մը, ուր մի քանի մեռյալներու մարմինները այրած էին, միայն ազգերեն վար սրունքներն ու սուրբը կմնային, խարույկը կշարունակվեր: Ավետիսը, Գրիգորը և պատիկ Հորեղայրս՝ Կարապետը, ապաստանած էին ազգային խանը: Մենք շարաթ մը մնացինք շէյխին տունը: Մեծ մայրս տեսավ, որ քուրզեր մեր ասն գույքերը բերած են շէյխին տունը՝ Հետո գյուղ տանելու համար, նաև ուրիշ տուների կողոպուտած գույքեր ու առարկաներ: Եարաթ մը Հեռո մեզ փոխադրեցին ազգային խանը: Հոս պետք է ըսել, որ մեր ասն թալլվելին Հեռո այլևս սպանություններ տեղի չունեցան: Թուրքեր տարբեր քրոզեր մը հչացած էին. սղջ մնացած հայերը առանց սեռի և տարիքի խարության հաճաքել հայ ազգային խանը և այրել բոլորին: Խանին գուռը զինյալ ժանդարմաներ կհսկեին, գուռս ելնելը արգելված էր, մեծ քանակությամբ փայտ և նավթ մթերեցին ժողովուրդը այրելու համար: Քաղաքի մյուսֆթին՝ Հանի Մուհամմա Ալի Հիլալի (արար մի) արգելք հանդիսացավ և Ֆեթմա չտվավ այրելու համար՝ որինաց և կրոնի հակառակ գտնելով: Հայտարարվեցավ, թէ թագավորը ներում չնորհած է և ժողովուրդը սրվեցին դատարկ տուները: Ավետիսն ու Գրիգորը գացին Ուրֆա, Ուրֆան զիմացրեց և չկարողացան ջարդել: Խաբեքայությունով զնեքերը հաճաքելն երեք ամիս Հեռո ջարդեցին Ուրֆայի հայությունը: Հայոց եկեղեցիին մեջ 5000 հոգի ամեն սեռի և տարիքի, հրո հարակ եղան: Ավետիսը զիտվածով ազատված էր, Գրիգորը եկեղեցիին ամենքը 300 մարդկանց Հեռ սղջ մնացած էր: Գրիգորը ջարդեն Հեռո զնաց Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Ավետիսը սպանվեցավ 1915-ի եղեռնին: Աղջիկներեն Խանըմը Ուրֆայի ինքնապաշտպանության ասեն շատ կարևոր և մեծ գործեր տեսավ ու պատանիներով ու աղջիկներով կոպեցավ քաջարար և շատ զոհեր խնց գրոհներ տված խուժանին: Նրբ զիմադրությունը զսպվեցավ, Խանըմը Թուրք պատերազմական ատյանի կողմն գառապարավեցավ կարգ մը ուրիշ կիներու հետ:

1918-ին, երբ Անգլիական բանակը մտավ Ուրֆա, Խանըմը և բոլորը ապաստվեցան և անցան Սուրիա: Վերջին տարիները Խանըմը մոտով Հայկայի մեջ: 1898-ին, երբ մեծ մորս Հեռ Ուրֆա գացինք և եկեղեցի գացինք, վերնատան եկեղեցիի առաստաղեն այրված մարդկանց մուխեն սեռացած հարպերը կարված կմնային, հետագային եկեղեցին վերանորոգվեցավ: 1908-ին, երբ կրկին Ուրֆա գացի, հսկա և ընդարձակ եկեղեցին ծովածովայ երիտասարդներու բազմությունով մը լեցված էր և, ինչպես ժողովուրդը կըսե, ասեղ ձգելու տեղ չկար:

1904-ին Իշմն գոցինք ընտանիքով կարգ մը Հայ և թուրք ընտանիքներու Հետ: Իշմն Ատրամանի և Մալաթիայի կես եանապարհին Ապա— ուլ—Սարապ լենն 4—5 ժամ դեպի արևելք անտառուս և անմառաչելի լեռներու մեջ Հանքային պղնձ ջրի աղբյուր մըն է. ամառը խաղողներ սննայու ժամանակ կազույի Համով ջուր մը կհոսի և եզերքի քարերը կարմիր գույն կատանան, այսպես կոտն երկու ամիս, Հետո պղնձ, մաքուր և զուլալ աղբյուր մը կզառնու, առանց ուէ Համի. կարգ մը հիվանդութիւններու Համար բուժիչ Հասկութիւն ունի, մանազանդ՝ ստամոքսի:

1907-ին մեծ մայրս, Հորեղբայրս՝ Կարապետը, Սահակ Հորեղբորս կինը՝ Մարգրիտը, և եղբայրը՝ Հակոբը (Տըլոն), թուրք ընտանիք մը՝ Թեմիր աղա և կինը, որ մեզի մօտիկ բարեկամ էին, և կարգ մը ուրիշ Հայ երիտասարդներ, Հակոբը որպէս եանապարհին ծանօթ՝ մեր առաջնորդն էր, Քեախթայի եանապարհով երեք օր Հետո Հասանք Հայոց պատմական Հայտնի նահանգը՝ Կարկառ (այժմ՝ Կերկեր): Անախի և սեպ լեռներու բարձունքի մը վրա Կարկառ պատմական վայրը, այժմ մեծ Հայ գյուղ մը, բերդերու, ամրոցներու և պատմական հիշատակարաններով Հարուստ կուսական անտառներով շրջապատված: Հսկա բարձունքին վրա քարաշէն Համենի աղբյուր մը պղնձ և մաքուր, կես մեթր խորունկ, մեկ մեթր լայնութիւնով ջուր մը կհոսի: Հոն գիշերեցիկնք Հորեղբորս կնկան ազգականներն մեկուսն աուեր: Լեռան ետևը՝ Նփրատը: Հաջորդ աւտուս կանուխ իջանք Նփրատի եզերքը, Հոս է Նփրատի երեսուներորդ ջրվեժը: 15 մեթր բարձրութենն մը Հսկո գետը կթափվի վար: Տեղ—տեղ ցցված խոշոր ժայռեր կան գետին մեջ: Նավակ չկա. ելուղներով Հյուսիսով փոքրիկ լասա մը, որ Հագիվ մեկ Հոգի կփոխադրե, տակը՝ չորս Հաս ակի: Ամառվան երկար օրը առաւելքն մինչև կես գիշեր Հագիվ փոխադրվեցանք մօտ ամբը: Ձիերն ալ լողալով անցան: Այդ գիշեր Նփրատի եզերքը գիշերեցիկնք: Սո և Թեմիր աղան ջերեկը անցած էինք: Հանդիպուկաց լեռան վրա Նուրիյե անուսով Զազա քուրդերու գյուղ մը կար անտառներու մեջ, երկուքս գոցինք գյուղը՝ ձիերուն Համար Հարդ և զարի գնելու: Զազա քուրդերու լեռուն չէինք Հասկնար, Հագիվ գտանք ձիերուն մը, որ կզկուսը թուրքերն կխոսեր: Թեմիր աղան գնաց գյուղն գուրս ձոր մը՝ կաշի տեղն Հարդ գնելու, ես մնացի ձիերունինն աուեր՝ գարի գնելու: Մերուսինն ուներ 7 աղաք: Տան առջևի ծածքին պտտնն դուռ մը կար, մութ, սպաքը իջան վար: Գուսնն Հատակը մարդու Հասակի չափ ցած էր, ես ալ իջա, Հարս մը հրագ մը բերով, 30 մեթր երկան, 4 մեթր լայն մակուսոր մայրի մեջ փորված քարայր մը սրբաառչ, ողորկ պատերով և



առաստազօմ, ամեն կողմը լեցուն պարեն, ցօրեն, գարի և այլն: Գարին չափեցին, մեծ պարկի մը մեջ լեցուցինք: Երկու եղբայր իրարու մեջ բան մը կխոսեին, քրդերեն որոշ բառեր կսեի, թեև քրդերեն գիտեի, բայց խոսվածքը լրիվ չէի հասկնար, հասկցա թէ խոսակցությունը իմ անձի շուրջն էր: Հարաբ խիստ կերպով կզիներ իրենց Հեա և կհակառակէր. կոչուածի կամ սպաննել էր իրենց նպատակը: Հարաբ օգնեց ինձի պարկը դուրս հանելու և ձիուն վրա բնօցնելու: Մերուկին Հեա զացինք Թեմըբ ազան գտնելու: Գյուզեն Հեոու ձորի մը մեջ Թեմըբ ազան կես մը կոչոպտած էին: Երբ բարձունքն ձայն տվի, պատասխանեց. օգնության հասիր: Մերուկին ըսի: Մերուկը գազանքն բաներ մը խոսեցաւ: Թեմըբ անշային ատրճանակն ու գաշույնը ետ տված էին. եկաւ Հասաւ մեռելի գույն ստացած: Անասուու լեռնեն սկսանք իջնել վար, Հինգ վեց հօգի կը Հեանեին մեզ, մի քանի անգամ մեր առջև անցան, բայց չհարձակեցան: Արեւ մտրը մտած էր, Հորեղբայրս, Հակորը և ուրիշ մը մեր քով կուգային, Հասան մեզ, անվտանգ իջանք Եփրատի եզերքը: Գիշերը նույն գյուզեն գողեր մինչև լույս սլքաացին մեր շուրջը, բայց մենք արթուն կհակեինք:

Եփրատի ձախ կողմը Տիգրանակերտի կուսակալության կպատկանէր: Այդ կողմերը բոլորովին անծանօթ էր մեզ, ճամբա չէինք գիտեր, նեզ անասուու չափիզներն կհառաջանայինք: Զորի մը անկյունը՝ լեռան ստորոտը, պատահաբար Հայ գյուղի մը Հանգիպեցանք՝ Անկան անունով: Գյուզացիները մեզ կաթով, մածուխով Հյութասիրեցին և մեզի նահապարհ ցույց տվին ու բացատրեցին:

Ճանապարհ չգիտեալու պատճառով ամառվան երկար օրը ամբողջ և մինչև կես գիշեր Թափառեցանք և Հազիվ Հասանք Զերմուկ, ամբողջը՝ 6-7 ժամվան ճանապարհ մը: Տեղավորվեցանք օթիկը, ետահարկ մեծ շենք մը: Իրիկուն մը 30-ի չափ պատանիներ բարձրացանք օթիկի տանիքը՝ Ուրֆացի, Մայաթիացի, Տիգրանակերտցի և Ետրքերդցի: Խարքերդի Եփրատ Գոյնենն ազա մը ջուրակ կնվազեր, մենք այ կերպեինք: Հանկարծ 5-6 Հատ Թուրքեր եկան և ըսին, թէ այս խուճըք նվազով միայն եկեք մեզ ձառ նվազելու և երգելու: Մերմեցինք, մեզ սպաննացին, անմիջապես վար իջա և Հորեղբայրս լուր տվի: Տղաքը և Թուրքերը իջան բակը: Հորեղբայրս, Հակորը և Ատրոմանցի երիտասարդներ բակը գիզված թաց փայտերն մեկ մեկ Հատ առած լավ մը տփեցին Թուրքերուն: Օթիկը անբազական էր, բաց գաշաին մեջ Հարյուրավոր խրնիթներ պատրաստված էին և ժողովուրդը վարձքով կնստեր: Երնիթներու տերը Զերմուկի Հայտնի Թուրքերն մեկն էր, և մեզ սպաննացողը՝ 35-տարեկան, թավ, երկայն

չեկ պիտե՞րսո՞վ թուրք մը: Բողոքեցին Ջերմուկի գայմազամին, որ Ճազ-  
 նազ կոչված մեծ առուի մը, որ ժայռերու մեջէն կըզխեր, պարտեղներու  
 մեջ զբանի մը մեջ կըբեակեր: Հաջորդ որը ժանաարմաներ մեզ տարին գայ-  
 մազամին մաս: Վրանին առջևը սեւամորթ մը պահակ կ'էկեւար, երբ Հակո-  
 բին (Տըլոյին) տեսա՞վ՝ ճանչցա՞վ և անմիջապէս գայմազամին լուր տվա՞վ:  
 Գայմազամը զուրս ելա՞վ, Հակոբին տեսնելուն պես անմիջապէս նստա-  
 րաններ և աթոռներ բերել տվա՞վ, նստեցանք: Վեյսի պէկ էր գայմազա-  
 մին անուըր, որը առաջ Բեախթայի գայմազամ էր և փոխազգրված էր  
 Ջերմուկ, Հակոբի բարեկամը և սրտի ընկերը: Ժանաարմաներ չըջապատեր  
 էին մեզ: Եղելությունը պատմեցի, գայմազամը Հորեղբորայրս Սահակին ալ  
 ծանոթ է եղեր, անմիջապէս ժանաարմաներուն Հրամայեց և թուրքերը մե-  
 կիկ-մեկիկ ֆառախկալի պառկեցնել տվա՞վ, լա՞վ մեծ քաշել տվա՞վ և զը-  
 կեց բանա: Ջերմուկի թուրք ազաները եկան գայմազամին մաս խնդրե-  
 ցին, որ ներև և ազատե բանտարկչայնեը: Գայմազամը կոչատտոխանն.  
 «գացեք այդ հայերեն խնդրեցեք, եթե անոք ներեցին, ազատ կ'ընդունմ»:   
 Մարդկիւր հարահատ եկան Հորեղբորմես և Հակոբն խնդրեցին և 4-5 օր  
 Հնտս ազատվեցան բանտեն, երկու օր Հնտս խրճիթներու տերը, Հակոբը,  
 Հորեղբորայրս և մյուս Ատրիամանցիները Հրապիտեց խնջուլքի, ոչխոր մը  
 մօրթել տվա՞վ և գիշեր մը մինչև լույս խնջուլք ըրին և բարեկամացան:  
 Անկն վերջ Հորեղբորայրս և Հակոբը ամիս մը շարունակ ամեն օր կ'երթա-  
 յին Վեյսի պէկին մաս նարտի խաղալու մինչև մեր վերազարծը: Ուրֆա-  
 ցի Մարգիտ Պերպեղյան և Կարապետ աղա Բեթնենչյան, երկուքն ալ ան-  
 գամալույս վիճակով, եկան և ամիս մը Հնտս կատարյալ առողջացած վե-  
 րադարձան: Մեծ ժայրս և Հորեղբորս կ'էին ալ սպավեցան: Երես առատ  
 լուր ունի՝ ծնումբով: Բազմիքներն զուրս վազող ջրով ջրազացքներ  
 կ'զարձենն: Ամիս մը Հնտս վերազարձանք, քայց այս տեղում Մեներակի  
 ճանապարհով: Առաջին որը մի քանի ժամ Հնտս Հաստեք քարքարուտ  
 վայր մը, կարծես երկինքն քաբ տեղացած էր՝ միատեսակ, խոշոր, սղորկ  
 և Հրարխային գորշ գույնի քարեր, դաշտային ընգարձակ տարածու-  
 թյուններ ծածկված այգ քարերով, կանոնավոր հանապարհ չկա, քարերու  
 մեջ են սյորապտույտ նեղ շավիղներ: Ժամերով տեցանք, կարծես թէ  
 նույն տեղն ենք: Իրիկուն եղա՞վ, Հանդիպեցանք ջրհորի մը՝ մինչև բն-  
 րանը ջրով լեցուն Հոր մը, շատ քիչ տարածութիւն մը կանաչ խոտերով,  
 լուրջը՝ նույն քարերը, անուըր՝ «Նոթ-գարտաչ գույուտը» (յոթը կըբոր  
 աղբյուրը կամ Հորը): Ամայի, անմարգարնակ վայր մը, նույնպէս քարե-  
 րով ծածկված ընգարձակ տարածութիւնները ամայի էին: Գիշերեցինք  
 այգ Հորին քով, առտուն ևս մի քանի ժամ այգ քարերու մեջէն անցնել

Հետո, Հասանք բերքի Հողերով անծայրածիր դաշտեր, արեմուտեն առաջ Հասանք Սևերակ, իրևանեցանք Զերի փաշայի խանը: Ետան ժողով Սևերակի բերդը, նույն Հրաբխային քարերով շինված: Հորեղբորս կնոջ ազգականուհիներեն մին Հորս գտցած էր Սևերակ, ամուսինը՝ կոչկակար Մինաս, մեզ տարավ իրենց տունը, Հյուրասիրելու Հետո գիշերը մեզ տարավ խանը, ամրոցը գիշերը Հրացանածգությունը շարունակվեցավ: Սևերակի ժողովուրդը մեծ մասամբ քուրտեր են, ինչպես նաև շրջակաները: Ժողովուրդը երկու Հակառակորդ խումբի է բաժնված: Օր ցերեկով խանութեցաններ գնեքը, սուրը քովը տոնտուր կրենին: Հաջորդ առաուն նույն Մինասը ընտանիքով ճանապարհ գրին մեզ, ճանապարհին վրա այգի ունեին, առաջ խաչող քաղցիկն մեզ Համար և բարեմաղթություններով ճանապարհ գրին: Երեք ժամ Հետո ուրիշ մի տեսարան պարզվեցավ մեր առջև: Սև մոխիր դարձած ընդարձակ ցորենի, գարիի դաշտեր, գյուղեր այրված և ամայի, ավերակ դարձած, բնակչությունը անՀայտացած, միակ վկա կմնային ծառ մը կամ ջրՀոր մը և կործանված անհյուս խանձված կիտակործան պատերը: Ահ ու զոհով շարունակեցինք ճանապարհը, իրիկվան ժող Հասանք Եփրատի եզերքը, տնմիջապես նախկիներով անցանք աջ ափը՝ Սևակին անունով մեծ գյուղ մը Հայերով և ասորիներով բնակված: Երկու թշնամի ցեղախումբեր քուրդ և արաբ, երկուստեք Հազարավոր զինված միավորներ կալի բռնված էին և բոլոր ցանքերը, գյուղերը այրած, կոպտատած և ամայացուցած էին: Մենք ապահով Հասած էինք Եփրատի մյուս ափը, երկու որ Հետո Հասանք Ատրաման:

1905-ին Ատրամանի Մեսրոպյան վարժարանը ավարտելու Հետո Հորս բախ, որ զիս Այնթապ զրկե ուսումս շարունակելու Համար: Մեծ մայրս, Հորեղբայրս և ուրիշ ազգականներ կուզեին, որ արՀեստավոր դառնամ, ես մտազբամ էի անեն զեռով ուսում շարունակել: Դիտմամբ ընտրեցի այնպիսի արՀեստ մը, որ իրենք չէին ուզեր, տարի մը գացի Սարեմընի քով պայտարություն սորվեցա, արՀեստին տիրացա, բայց իրենք ալ, ես ալ զժողՀ էինք: Հաջորդ տարին նոր ուսուցիչներ եկան, իմ դասընկերներուն Հեռ (տե՛սնք ալ ինձի նման էին) որոշեցինք կրկին գլխոցը շարունակել, այն տարին շարունակեցինք: Հաջորդ տարին այլևս շարունակել Հնարավոր չէր՝ բավարար ուսուցիչներ չկային: Հայրս խոստումներով կորորեր զիս: ԾարաՀատ, Հակառակ բոլորի կամքին, որոշեցի անպայման Այնթապ երթալ: Հայրս Ուրֆա պիտի մեկնեք Հորեղբայրս Կարապետի Հեռ, մի քանի անկի ավամ ինձի, որ ձավարի, այլուրի և այլ պաշարի Համար Հարկ եղամ գնումները ընեմ ձեռագր Համար, և ըսով. կի՛՛՛՛՛ փողը

պակտի, իր Հորեղբայրը՝ սակերիչ Պեւորդ էմմինն, որքան որ փող պետք է՝ առնեն, ու դառնի Սեբֆա: Մյուս Հորեղբայրս՝ Սահակը, Մալաթիա գացած էր, կմնար մյուս Հորեղբայրս՝ Աբրահամը, տիրնկը աշխատցնելու Համար: Հորս ազամ փողը բաժական եղա՞վ զնու՞մենքը կատարելու Համար, դառի իր Հորեղբորմենն տասը ոսկի առի, որպես թէ դրամը պակասած է, մորեղբորս խոսնու՞թեն պետք եղած Հազուստեղենի կտորենքը առի, կարել տփի Հորս Հաշվույն: Խորթ մորեղբայրս՝ Հովհաննեսն, ալ Համագեցի, որ միասին երթանք: Խասազատյան Միքայելին ալ ըսի, որ Այնթապ մեկնելու որը մեզի երկու խորի պահեն, Հորեղբայրս Աբրահամին ալ ըսի թէ՛ Հայրս ըսա՞վ, որ եթէ ես ուշանամ, դուք դեռ Այնթապ տասը ոսկի ալ ես Համագած էի: Կարա՞վանը մեկնելու որը Միքայելին Հետ դառնիք Այնթապ, զիմեցիք Հայկական միջնակարգ Ազննական դպրոցը, քննություն տփինք և մասնք Համապատասխան դաստրաններ: Հովհաննեսը ինձմե փոքր էր: Մեզմե Հետո Հանի-պեկն ալ (Մկրտիչ Պարտապետյան, իորթ մորս աագերը տղան) եկա՞վ, Հովհաննեսին Հետ դասընկեր եղա՞վ: Մկրտիչին Հայրը զու՞ժամ էր 1895-ին, մայրը տու՞ստացած էր և Այնթապ կմնար, զնոց մորը մոտ: Մենք երկուքս դպրոցին կողքը սենյակ մը վարձեցինք և կշարունակեցինք դպրոցը:

Ազննական վարժարանը գիշերօթիկին բաժին չուներ, ատոր փոխարեն պայմանագործամ էր ընտանիքի մը Հետ: Ատու՞ւր Հմմի, այր ու կին էին, սեփական տուն ունեին և շրջաններեն կամ գու՞րսեն եկող ուսանողները ամսական մեկ ոսկի վճարու՞մով կպահէին շաա խզեամբտ և Հոգածությունով: Իրենք զավակ չուներին, իսկական ծնողքի մը պես կպահէին մեզ, շատ պատվավոր և լավ Հայ ընտանիք մը էին: Ամիտ մը մնացինք-Հովհաննեսը դժգո՞ւ էր, որովհետև որկրամուլ էր, մինչգեւ մեզ շատ մաքուր և լավ կկերակրեին: Եղբորը զորտնչը կտր, մայր մը և տղա մը Հովհաննեսին Համագած էին, որ իրենց մոտ երթանք՝ ամիտ մըն ալ անոնց տունը մնացինք: Հովհաննեսը դարձյալ դժգո՞ւ էր, ամեն որ պատավին Հետ կախի ունեք: Վերջապես անկից ալ բաժնվեցանք և առանձին սենյակ մը վարձեցինք: Տան տերը 75 տարեկան պատգական ծերունի մըն էր, նույնքան և ավելի լավ և Հոգածու էր պատավ կինը՝ մեր ճաշերը կպատրասանք, լվացքը կրներ: Տղա մը ունեին՝ Հայեց կմնար: շաա Հոգածու էին մեզ նկատմամբ, դպրոցին կողմն պարտականություն տրված էր՝ մեր վրա հսկելու: Հովհաննեսը այլևս դժգո՞ւնելու պատահա մը չուներ, ամեն ինչ ծանրացած էր իմ վրա: Արգեն զգջացած էի միասին քերելուս Համար: Հաջորդ տարին չչարունակեց, երայրսները ծախքը Հոգալ չուզեցին և արհեստի Հետնեցա՞վ:

Մեր դասարանը 22 հոգի էր (երեք դասարան անուսում): Ընկերներս անդլիերենի մեջ շատ առաջացած էին, Լովհաննեսի դասարանին հետ անդլիերեն դաս կառնեի մեր անդլիերենի ուսուցիչ Լարուիթուն Թաֆաճյանի կարգադրությամբ:

Ազնեականի սաներեն Անտիոքցի Զարեու (Զափն) Նալպանյանը մտանադոր զնարումով մը դպրոցն զուրս անդլիերեն կը գասափանգեր ինձի. վեց ամիս հետը միացա դասարանիս: Զափնը շատ խղճամիտ և նուսնդուն աշխատանքով զիս հասցուց դասարանիս, այժմ Միացյալ Նահանգներ կգտնվի:

Հայրս Ուրֆայն կվերադառնա և կատարված իրողություն առն կգտնվի: Նույն տարին զեկտեմբերի մեջ Հորեղբայրս Կարապետի հետ Այնթապ եկավ: Թրքերեն գասի մեջ էինք, տեսեսուհին (գալոցցի հովաքարբը) եկավ, ըսով թէ՛ Հայրդ եկած է, զուրը կապան, քեզ տեսնել կուզի: Ուսուցիչը թույլարեց, գացի զուրը որ՝ Հայրս և Հորեղբայրս, բեռնափորված անասուն մը հետերնին, կապանն: Վարձած սենյակս, որ դպրոցն հաղվի ասար մեթր հետս էր, ասարի գիրները, ըսի. «կեսորը մտտ է, գասերը վերջանան, կուզամ»: Դպրոցին առնի փառսը շուկա էր, ամեն տեսակ խանութպաններ կային, զացի քեզսայ ապստղեցի ու դարձա գալոցց՝ դասիս: Կեսորվա դագարին Լովհաննեսին հետ զացինք իրենց մաս, ճաշեցինք, ինձի և Լովհաննեսին համար ամեն տեսակ պարեն և կենսամթերք բերած էին: Հայրս դպրոցի անօրենը (Ղազարոս Ղալիկյան) տեսնել ուզեց, անկե հարկ եղած տեղեկությունները տասնալե հետս, իրկուսը գոհունակություս հայտնեց և խաղացած խաղես գոհ մնաց: Մնեղյան զտախկը մաս էր, Հաշորդ օրը զիս տարավ իր ծանոթներն Ուրֆայցի վաճառականի մը խանութը, կոտայում կտար առավ ինձի և եղբայրներուս համար, վաճառականին այ պատվիրեց, որ եթէ ուրիշ ասն հագուստեղենի և այլն պետք ունենամ՝ տա, հետս ինքը կվճարի: Նաև ուրիշ երկու ծանոթ Հայ վաճառականներու ևս պատվիրեց, որ երբևիցի գրամի պետք ունենամ՝ տան: Մի քանի օր հետս մեկնեցան Անիաման:

Հայրս լավ որսորդ և մկնորս էր: Իրիկուն մը Հորեղբայրս՝ Կարապետը, Հակոբը (Տրոն) և երկու հարևաններ որսի կերթային: Գարունը մեր կողմերը շատ տեսակ ձմեռոց թռչուններ կուզային ասք երկրներ: Կեսնեխը (գարա-թավուղ կոչված) հավու չափ թռչուն մըն է, և մեծ խումբերով կուզա, տերև կոչված անտառուս ծառերու վրա կգիշերի: Ես ալ միասին երթալ ուզեցի, անոնք տանիլ չէին ուզեր, ինձի ըսին, թէ Ալիքսանին սերեն կերթանք, մինչդեռ իրենք ուրիշ կողմ գացած էին: Մինչև Հրացանը և փամփշտակալը ասնեյա իրենք մեկնած էին: Երտակ գացի

Ալեքսանին տերնն՝ Հովիտ մը, չորս կողմը բարձր բլուրներ, ամայի տեղ մը, Հովիտին մեջ քարայրներ և թաքստոցներ, գողերու որջ մըն է, քաղաքնն 45 բուռք Հեռու: Բարձունքն Հորնդրայրս կանչեցի, մորը արձագանգ կուտար, մի քանի անգամ կանչեցի, պատասխան ավոզ չկար, մեկ էլ տեսնեմ մուխին մեջ մարդ մը դեպի վեր կբարձրանա: Կասկածեցա, ետ դարձա, մարդը թուրք մըն էր, սկսավ զիս Հետապնդել: զինված էր: Խաշխաշի պարտեզները մտա և սկսա վազել, ան ալ սկսավ վազել, անգամ մը դարձա կրակեցի, բայց երկրորդ անգամ հրացանը լեցնել ժամանակի կկարտոտեր: Փախչելով Հասա քաղաքի եզերքը՝ Հայոց գերեզմանատան մոտ, մարդը Հոն կեցավ, գացի առն: Հայրս ըսավ. «Ինչու» եկար»: Պատմեցի եղելութիւնը: Հաջորդ առաու որսորդները եկան ձեռնուռնայն: Իրկուներ Հայրս ըսավ. «Քալե, որսի պիտի երթանք»: Երկուքս գոցինք: Հայրս, որ շատ անգամ զացած էր, անմիջապէս տերն մը Հասանք, գտավ կեռնեխներու գիշերած ծառերը, թաշուկները խազողի սղկույզի նման կախված էին ծառերն: Մեկ-երկու գարկով 18 Հաս կեռնեխ գարկավ, ինծի ըսավ. «Հաւոքէ, բավական է»: Դարձանք առն: Այս բոլորը երկու ժամ տեւեց: Առաուն Հանդիմանեց Հորնդրոս՝ զիս խաբած ըլլալիւն Համար, որսին մեկ մասը բաժնեց ազգականներու և ծաղրեց նախորդ որսա որսորդները:

Ձմեռ առնն Հաճախ մյուսի պատահաւով առնը կմնար: Եարաթ օրերը Հորնդրայրս՝ Կարապետը, Հոտը առած կերթայինք Զիյարեթ—չայ կոչված գետակը: Սերվան կոչված թոռ մը ուներ, զոր իրնն զատ գործածող մեկը չկար ամբողջ քաղաքին մեջ, Հաճախ մինչև կես մեջքը ջուրը մտած, մյուսը՝ գետինը, սառ ջրինն մեջ, ուր որ ձուկ կար սերվանն կընեանք և մի քանի ժամվան մեջ խուրջինը ձուկով լեցված կգտնեայինք: Որոացած ձուկին երեք քաւորդը կը բաժնէր ազգականներու և բարեկամներու:

Անգամ մը Այնթապ քոչերա (ժանտախտ) կար: Հայրս Այնթապ գացած էր. վերադարձին Էկիլ—չայի քով ազրյուրի մը մտա ամբողջ կարավանը քարանձիխայի տակ առին, մտաւորապէս վախժուսն Հոգի՝ Հայ, քուրդ, և թուրք, Հարյուրի չափ անասուններ բռններով, առանըհինգ օր պահեցին այգտեղ և Հականեխեցին: Ամեն օր կերակուր կտանէր իրիկվան մտա: Օր մըն ալ կերակուրը տարի, իրիկուսն եղավ, կը անտեայի և Հորս աչքնն Հեռու կմնայի, սրպեսզի այդ իրիկուսն իրենց մտա գիշերերի: Ուշ առնն զիս տեսավ.

- Դեռ Հո՞ւ ես,— ըսավ:
- Այս գիշեր Հոս կմնամ,— ըսի:
- Ետև գարձիք տուն,— ըսավ:

Մանսթ համբարդներ բարեխոսեցին. «ուշ գիշեր է, Հեռու տեղ է, թող Հոս մնա»,— ըսին: Անօգուտ, «հիմա պիտի վերադառնաս»,— ըսավ: Հետո ունեի հրացան մը, մի Հեծա և սկսա արարչավ առաջանայ, Հասա քաղաքին մօտ, Հայոց գերեզմանատան քով, պարտեզներու մեջ մին Հանկարծ կեցեալ մացառուտի մը դեմ և այլևս չի առաջանար: Ամեն ջանք իյուր անցավ, աչքերը մացառին, սկանջները անկած կՔոռա և չի քալեր: Երկար տուն շարչարվելն Հետո որոշեցի ձիուն նայած կողմը կրակել: Կրակեցի, Հանկարծ մացառներու ետևն էլ մը փախավ: Ձին էլուն սկանջները տեսած՝ գազան կարծած էր և չէր առաջանար: Անմիջապես Հայ, թուրք պարտիզականներ և էլուն տերը Հավաքվեցան՝ Հրացանի պայթյունը լսելով: Եկան, եղելությունը Հասկցան և սկսան քահ—քահ ինզուպացի տուն: Մեր տունը շատ մօտ էր այդ վայրին, Հրացանի ձայնը լսած էին, ինձի Հարցուցին. «այդ ի՞նչ Հրացանի պայթյուն էր»: Պատմեցի, անոնք ալ ծիծաղեցան և սկսան ծաղրել:

Տարի մըն ալ Ատիաման քուրա կար: Երեսուներ չափ ընկերներ տեղաշարժ տարինք Սարգիս Տեմիրճյանենց այգին և ամեն գիշեր կՀավաքվեինք Հոն, քուրան սոսկ պատճառ մըն էր, իսկ մեր նպատակը ընկերներով Հոն գիշերել և զվարճանալ էր:

Ամեն իրիկուն քաղաքին եզերքը ժամադրապայր մը որոշած էինք, Հոն կՀավաքվեինք ու կերթայինք այգի: Բուրն ալ զնք ունեին, զներքըր այգին կՔոռուինք, Հոն ցերեկը մնացող կար: Իրիկուն մըն ալ մեր տունը Հյուր կար, ճաշը ուշացավ և ես ես մնացի ընկերներս: Գիշերը ճաշն Հետո Հարեզորոս Գարսպինա ըսված կես մարթին խաշոր ատրճանակը և փամփուշտները սախ և պարտեզներու մեջն ուղղվեցա զնոյի Գուլասուզի այգիները՝ ընկերներու քով: Ծամբան ամայի էր, երթեկերը՝ դադրած, պարտեզները վերջացան, Հասա խաղողի այգիները: Այգին որ կերթայի, քաղաքն ժամ մը Հեռու էր, ճանապարհը կարճեցնելու Համար շիտակ ճամբան թողուցի և այգիներու մեջն կերթայի: Լուսնակ գիշեր էր, Հանկարծ թուփի տակն արևն սև եղած ոտքն մինչև գլուխը մերի, ձեռքը երկար գաշույն մը (չտմա) երկասյրի դեմս անկվեցավ, բայց անխոս, Հայերն, թրքերն, քրդերն Հարցուցի. «ո՞վ ես, ինչացու» ես», պատասխան չկա: Եղբւրս ձայնով «վա—վա» կընէր, կրկնէր: Ատրճանակը ուղղեցի իրեն, սպառնացի՝ կզարնեմ ըսելով, զարմայ նույն ձայնը, քուրցի՝ ետևս դալ սկսավ՝ գաշույնը ձեռքը, վազեցի՝ ինքն ալ վազել սկսավ, զարմա կրակեցի՝ փամփուշտները չպայթեցան, սա ավելի սիրա ոտով և սկսավ ավելի արագ վազել ետևն: Բաց ճանապարհ գուրա եկա, այգին դեռ շատ Հեռու է, վազելու ժամանակ փամփուշտները փոխեցի, կրկին կրակեցի, ոչ

մի փամփուշտ չպայթնցա՞յ և սակայն շարունակ կզագե՞մ, ի՞նքն աչ ետևեմ: Անգամ մըն աչ կրկին կրակեցի, փամփուշտ մը պայթնցա՞յ, սա կտո՞ղ տառա՞յ, ես հեռացա: Հասա այգի, ընկերներս՝ երկար պետական զինքերով կամ Ջոզիցերիական տասնհարվածյաններով, գայիք այդ այգիները թու՛փ առ թու՛փ տակն ու վրա ըրինք, մարդը չկարողացանք գտնել: Վերագարժի ժամանակ Հովհաննես Քյուֆենկեյանը ջրայնութենեն թուրքի մը խրճիթին (Հայժա) կրակեց, մարդ ու կնիկ իրենք զիրենք խրճիթի տանիքեն վար նեակեցին, զնզկը վրիպած էր, մենք անհայտացանք:

Ամեն գիշեր թուրքերու այգիները, պարտեզները կերթայինք խազույ, սեխ, ձմեռուկ կցազեխնք ու կտանեինք կուտերնք: Իրիկուն մըն աչ թուրքի մը պարտեզը մտանք սեխ, ձմեռուկ, վարունգ, խի՞ա քաղեցինք, պարկերը լեցուցինք, Հովհաննես Քյուֆենկեյանը խուշոր սեխ մը ձեռքը թուրք պարտեզականին գլխուն վերե կապտսեր, համկարծ մարդը արթնցա՞յ և նստեցա՞յ: Հովհաննեսը սեխը իջեցուց մարդուն գլխուն: Մարդուն աչքերը, քիթը, բերանը սեխի ջրով լեցվեցա՞յ, մինչև ինքզինքը գտնելը մենք անհայտացանք: Հովհաննեսը (այլ անունով՝ Ահեմ) Ա Համաշխարհային պատերազմին թրքական բանակի զինվոր, մի քանի ընկերներու հետ, տեցած և զերի ընկած էին ուսաց մեռաք: Եարիներ վերջ բնական մահով մեռած է Հայաստանի մեջ:

1910-ին Ատիամանի Մնարոպյան զպրոցին Համար ուսուցիչ մը կզակեցեր, չէին կարողացած ուսուցիչ մը գտնել: Աջ — ձախ ամեն կողմ զիմումները ապարդյուն տեցած էր: Ստիպեցին ինձ, որ այդ պակասը լրացնեմ: Որպես ուսանող ինքզինքս անհարմար և անկարող կզգայի, մի քանի արդարացի առարկություններ ըրի, սակայն իզւր, լսել չուզեցին: Մենզավայրիս և նախակրթությունը ստացած զպրոցիս Հանգուս անտարբեր չէի կրնար մնալ, վերջուպես առ Հարկի ընդունեցի: Ատիամանցի Մարգիս Տեմիմերյանի (տնօրեն), Մալաթիացի Գեղամ Ալիքսանյանի և երկու ուրիշ Ատիամանցիներու հետ աշխատեցա այդ տարին: Ամազերչի քննություններուն տասնը հինգ որ մնացած բնիկ պոլսեցի Իսկյուտար Թազեն բժիշկ Արաաշես Ազնավուրյան, որուն մայրը ժամանակ մը սուլթան Համիտի Նըլաբը սերային մեջ խոհարարուհի եղած էր և այդ շնորհիվ հազարապետի աստիճան սացած էր (ուրիշ բացատրության կարիք չկա), Ատիամանի Թազապետության բժիշկ կարգված էր: Որպես բժիշկ կարող էր նամանավանդ ներքին հիվանդություններու համար: Մի քանի անուններ Հայտնած էր թուրք կառավարության, որպես թէ՛ ուսմը կպատրաստեն: Յույց տրված մարզկանց տուները խուզարկվեցան, ոչ ուսմը, ոչ գործիքներ կամ նյութեր և ոչ ալ սեն զենք չգտնվեցա՞յ: Բնիկ



Արարկիրցի ձեռքը վազուց Ատիաման Հաստատված, արհեստով գերման Գեմորգ Ազնավուրյանի տունն ալ խուզարկվեցամ, բոլոր սենյակները, նույնիսկ արտոները խուզարկեցին, ուն լան չգտան: Դատարկ սենյակ մը կար, չորս պատ միայն և ձմեռը կրակ վառելու Համար ռախ մը, առջևը վարազույր մը քաշված: Եստ տունը կային այդպես վարազույրով սնարներ, խուզարկողները գտնեն նայեցան դատարկ սենյակը, տեսն ու ետ քաշվեցան, գացին: Վարազույրին ետը կար երեսուն Հատ պեռական Հրացան, նավթի սետուկ մը լեցուն փամփուշտ. մյուս բոլոր խուզարկված և կասկածելի տուները մարքեցինք, տեղեցիները տունը չէին և մենք ալ Հաղթի Հոն Հասած էինք, արդեն խուզարկվեցամ, խուզարկողները Հեռանալն անմիջապես Հետո փոխադրեցինք ուրիշ տեղ: Բժիշկը նպատակին չՀասամ, Սարգիս Տեմիրճյանի Հանգեպ ունեցած Հակառակության Համար կուզեր դուրսը խոնկարել: Որպես պահեստի գինվոր Սարգիս, Տեմիրճյանը պեսք էր 45 օր գինվորական մարզանք անցկացներ: Հաջորդ օրը 5-6 Հատ գինված ժանտարմաներ դուրսը եկան Սարգիսը տանելու Համար: Ժանտարմաներուն գալնն առաջ արդեն լուր առած էինք՝ մեր աշակերտները Հրահանգված և պատրաստ էին: Ժանտարմաները եկան Սարգիսին ըսին, որ գինապարտ ետ և 45 օր գինվորություն պիտի ընես, գինվորական իշխանութենեն մեզի Հրաման տրված է քեզ տանելու Համար: Սարգիսը պատասխանեց, թէ ամսվերջի քննությունները կատարենք, 15 օր Հետո պատրաստ եմ գալու: Ժանտարմաները պնդեցին, Սարգիսը ըսով. «ես ազգին պաշտոնյան եմ, գացեք ազգն պահանջեցեք»: Չընդունեցին և ուղեցին բանությամբ տանիլ, աշակերտները ընդիզեցան. «ս՞ր կտանիք մեր ուսուցիչը, չենք տար» և այլն, անտուտ եղամ: Աշակերտները խուճրեով Հարձակեցան ժանտարմաներուն վրա, բոլորին զենքերը առին և սկսան ձեռնել: Գեղամն ու մյուս ուսուցիչները փախան: Տեսա, որ խեղիքը շատ բարդացամ, Սարգիսին ըսաք. «Գնա Հանձնվեա: Սարգիսը գնաց, աշակերտներուն ալ ըսի, թէ ոչինչ բաժական է. ժանտարմաներուն զենքերը Հանձնեցինք, գացին: Աշակերտները փողոց ելան, խուճր մը գացած են բժիշկին տունը կրակոծեն, Հզի կինը գիժուժ կուեննա, ուրիշ խուճր մը ժանտարմարիի պաշտոնատան վրա կՀարձակի քարերով: Երբ լուր եկամ ինձի, անմիջապես վազեցի, գացի աշակերտները ետ գարձուցի: Ժանտարմաները եկան զիս մերթափայեցին, ըսին. «քանի որ քու խոսքով ետ դարձան, ուրեմն դուս ետ ուղարկած»: Տարին զիս պաշտոնատուն: Եզելությունը պատմեցին ժանտարմարիի Հրամանատարին, որ թուրք Հարչուրապետ մըն էր: Սարգիսը կեցած էր անկյուն մը, զիս ալ քովը կեցուցին: Թուրք չափուչ մը (սերժան) մեկ

ծունկը՝ գետինը, մյուսը՝ տեկած, Հարյուրապետը կթելազորեր, չափուշը կզրեր: Հայ և թուրք, ամբողջ քաղաքը լսած էին անցուղարձի մասին: Եւրս մտան երկու Հայ ազաններ. Մանուկ Մանուկյան, Հովհաննես Գափուզսորյան: Հարյուրապետը թելազորութունը վերջացուց, աքաղաղ պատրաստ էր, Մանուկյանը Հարյուրապետին առաջ կարգալու համար, կարգաց և Գափուզսորյանին տվա՛մ, ան ալ կարգաց և տվա՛մ Մանուկյանին: Մանուկյանը ըսա՛մ. «այս աքաղաղ պատու և մի գրկներ»: Հարյուրապետը սկսա՛մ օրենքնն հասել և կտուա՛մարության պատիճը պաշտպանել: Մանուկյան ըսա՛մ. «գուն կուզես այս քաղաքի Հայութունն ու թուրքերը իրար ձգել, քեզի կրես՛մ մի գրկներ»: Հարյուրապետը ընդգիմացա՛մ, Մանուկյան արթը պատուեց, թրքա՛մարի Հայհայանքո՛ւմ մը, գրողին՝ ալ, գրկողին՝ ալ: Հարյուրապետը մեռելի գույն ստացա՛մ, լուեց: Մանուկյան Հարյուրապետին ըսա՛մ. «այս տղան ի՛նչ գործ ունի այստեղ»: Հարյուրապետը կրկնեց ժանտարմենքուն պատմածը: Մանուկյան ըսա՛մ. «չուտ այս տղան տուն զրկն, մյուսն ալ գորանոց»: Հարյուրապետը ինձի ըսա՛մ. «գնա»: Գացի, պահակները թույլ չա՛մին, ետ դարձա, չափուշ մը եկա՛մ Հետս, զես գաննն զուրս գրին: Եուն միջոցին ուրիշ ժանտարմ մըն ալ Սարգիսը գորանոց կտաներ, ծանոթ ժանտարմաներ կծիծաղէին: Այսպիսով խնդիրը փակվեցա՛մ: Տուն կերթա՛յի, ժողովուրդը խանութներին կգառնար տուն: Ծանապարհիս վրա բժշկկենց տանը մտա Հայ երիտասարդներու քաղմութուն մը տեսա, մտեցա, տեսա, որ բժիշկը գետինը պառկած, թաղի տղաքը կկոխկրտեն: Եուն միջոցին հորեղբայրս՝ Սահակը, շուկայնն տուն կուգար: Արզեն արևը մարը մտած էր, տեսա՛մ քաղմութունը, տղաքը ջրվեց, բժշկին թեւ մտած տարա՛մ Հանձնեց իրենց տունը: Հաջորդ օրը բժիշկը ետ դիմու՛մ մը կուտա իմ մասին, դիմու՛մը մնաց Հարցաքննիչ գատա՛մորին քո՛ւմ, ինձի կանչող շեղա՛մ: Օր մըն ալ գործով կտուա՛մարչատուն գացած էի, բժիշկն ալ Հոն էր, գայմագամին ըսա՛մ, որ ահա այս տղան է, որու մասին քոզքած եմ: Անմիջապես Հարցաքննիչ գատա՛մորին (մյուսՄանուկը) կերթա և ձերբակալութունս կպահանջէ: Հարցաքննիչը ժանտարմս մը կկանչէ և կզրկն, որ զիս ձերբակալէ: Ժանտարման եկա՛մ շուկային մեջ Հասա՛մ ինձի, ըսա՛մ թէ՛ քեզ ձերբակալելու եկա, բայց պիտի գառնամ ըսե՛մ, թէ՛ չկրցա գտնել: Ժանտարման եկա՛մ շուկային մեջ Հասա՛մ ինձի, ըսա՛մ թէ՛ քեզ ձերբակալելու եկա, բայց պիտի գառնամ ըսե՛մ, թէ՛ չկրցա գտնել: Հարցաքննիչ գատա՛մորը Մանուկյան Մանուկի հորեղբորորդին՝ Հանի Պոզոս Մանուկյանը, ինձի ըսած էր, զես անհող եղիք, այդ դիմու՛մը և քոզքը պիտի մնա մեր արխիվներուն մեջ, այլ կերպ ըսած «Միևտեր ալթը» եղած է:

Գործը փակվեցաւ, քննութիւնները չեղան: Օր մը զորանոց գտնիք Սարգիսին քով, պահակ էր, պահեստի դռան առջև: Միջանկյալ պետք է ըսել, որ Հակա շէնք մը, որ անփո կկոչվէր, շատ մեծ քանակութեամբ զենք և սպառամթերք կար Ատիամանի տնօրինի մեջ: Սարգիսը զենքը մեկ կողմ զրած, կոնակին վրա պտակած զենքեր ու պահեստին կհօկեր: 1915-ին կաշառակերութեան Համար քիչիչը երեք տարւան Համար բանտարկված էր Մայաթիայի բանտը, բանտին մեջ սպաննեցին զինքը: 1910-ին Ատիամանի մեջ թուրք կառավարութեանը, մասնավորապէս Հայերու Համար, մարդահամար և ստուգում մը կատարեց՝ քանակ առնվելիքները նշելու և զինվորական տուրք չվճարելու Համար, մինչ այդ շարժանագրովածները արժանագրելու Համար: Ստուգիչ մարմինը կազմված էր՝ քաղաքի կառավարիչը, դատավորը, մէկիւրը, խտարեմը, թաղապետութեանն մեկ—մեկ անգամ, Նուֆուսի տնօրինը, քարտուզորը, Հայոց կողմն մէկիւր խտարեմը, թաղապետութեանն մեկ—մեկ անգամ, թաղական խորհուրդը, առաջնորդական փոխանորդը և Հայոց մուխթարը թաղ առ թաղ ստուգեցին, Հերթը Հասաւ մեր թաղը. ինծի: Կուզեմք տարիքս երկու տարի պզտիկցնել, մեծդյան թվականը Հարցուցին, ըսաւ թրքաց 311 ըսի, Նուֆուսի տնօրինը չընդունեց և 309 գրված է ըսաւ, Հայ անգամները պնդեցին 311-ի վրա, վեճը սասակացաւ, երկու կողմը կպնդեին իրենց տեսկետին վրա, Համաձայնութեան մը կարելի չեղաւ: Ժողովը տեղի կուեկնար Հայոց Առաջնորդարանին մեջ: Մանուկյան Մանուկ Հայտարարեց. «քանի որ մեր խտարը կտրկորութեան չունի և մեզի չէք Հաճատար, ուրեմն ինչու» կանչել էր մեզ, դուք առանձին կատարեցեք»: Հայ անգամներուն ըսաւ. «քալեցեք երթանք, մեք այս ժողովին չենք մասնակցիք» և Հայերը մեկնեցան: Ժողովը ցրվեցաւ, աշխատանքն այ ընդհատվեցաւ: Երեք շաբաթ ժողով տեղի չունեցաւ: Այս միջոցին շատ խնդրանքով Մանուկյանը Համոզեցին և ժողովը վերսկսաւ աշխատանքի: Առաջինը ես կրկին ներկայացաւ: Նուֆուսի տնօրինը ինք առաջարկեց իմ տարիքը 311-ի մեծեղ և ժողովը միաձայնութեամբ Հաստատեց: Անկից վերջ մարդիկը լավ խրատված, այլևս ուրիշներու մասին ուն ասարկութեան չըրին: Հաջորդ տարիներուն ուսումնա շարունակեցին:

1914-ին, երբ թուրքիան զորաշարժ Հայտարարեց, Այնթապ էի: Հայրս և Հերեզրայրս՝ Կարապետը, Այնթապ եկան և ինձի ըսին.— «Ատիաման մի գտր, զինվոր պիտի ըլլաս»:

1914-ի վերջերը Պերեկիկի Հայոց վարժարանի ուսուցիչ Տիգրան Մեղրսպանը (Այնթապցի) զինվոր առնվեցաւ: Տիգրանը և կարգ մը բարեկամներ ինձի ըսին. «գնա, տեսներ ժամանակ մը Հետո ինչ կըլինի»:

Ջորափոր անձրևոտ որ մը արեժուսեն Հնառ Հասա Պերենիկ, գերշին եւ-  
զակը ծառ, Եփրատը անցանք, անձրևի աստակութենեն Հսկոյ և ստուգոյ  
ժանտարմաները քաշված էին, ազատ կերպով անցա: Քուրք բռնակէր  
մը, իշու մը վրա պայուսակն և գուշքերս բռնցած, զիս առաջնորդեց Հա-  
յոց կկեղեցին: Ամբողջ որը անձրևի սակ նամարդած, մինչև սահորներս  
թրջված էի: Եանութենքը զեռ քաց էին: կոշիկներս Հանած էի և բոլորիկ  
կքայլի, տանիքներեն զազոզ ջորթանի ջրերուն տակն անհոյ կանցնեի,  
Քուրք խանութպաններ բռնակարին կՀարցնեին, կզատասխաներ, կարծեմ  
թէ՛ գիժ է:— կըսեր: Իսկապէս ալ խենթի մը երևույթը ստացած էի: Հա-  
ջորդ որը սկսա աշխատանքի՝ Պերենիկի սգնական ուսուցչի մը Հնա,  
Ջորաջ խոճա անուամով, Ջաքար Եւզուպյանի Հայրը:

Օրերը Հզի էին, անպրոքը պիտի պայթեր Հայ ժողովուրդի գլխին,  
ամեն կողմն տխուր լուրեր կսաանայինք: 1915 ապրիլ 24-ի գիշերը Պեր-  
ենիկի Հայտնի Հայոց տունըը խուզարկեցան, ոչինչ չգտան, գրքեր,  
տեսարակներ և այլն Հաժարեցին, անբերն ալ բանտարկեցին, Հաջորդ ա-  
տուն Հայոց դպրոցներն ու կկեղեցիներն ալ խուզարկեցին, բոլոր գրքե-  
րը գրավեցին, մեր դպրոցի գրադարանն ալ դատարկեցին ու տարան:

Միջանկյալ պետք է ըսեմ, որ խուզարկութեններն մի քանի շաբաթ  
առաջ որ մը դպրոցի Հողարտբժուները ինծի ըսին, որ այս կերակի կկե-  
ղեցիի բնեն ժողովուրդին Համար եղանակով մը Հասկցուր, որ Հանկարծ  
եթէ Քուրքերու կողմն Հարձակումի մը ենթարկվինք, 1895-ի Ջարգին  
Նման շանսատակ չըլլանք, զիմադրենք ու այնպէս մտնենք: կերակի որը  
թրքերեն լեզվով (որովհետև Պերենիկի Հայութունը թրքախոս էր), բնեն  
ըսի, ինչպէս որ պետք էր: Սղերդի ձերուկ քահանա մը երուսաղեմեն վե-  
րադարձին, Տեր Բարսեղ անուամով, Պերենիկցիները Համոզած և գինք պա-  
Հած էին, որովհետև իրենց նախկին քահանան Հրամարած և մեկնած էր,  
ազաներու Հնա տարակարծության մը Հեռանալով: Քահանան (Տեր Բար-  
սեղը) թրքերեն չէր գիտեր, Սղերդի պաժառարարքառով կխոսեր, որը պե-  
րենիկցիները չէին Հասկնար: Քահանան լավ քրդերեն գիտեր, նաև պե-  
րենիկցի Հայերը, այսպիսով իրար կՀասկնային: Քահանան ծանուցումնե-  
րը կկեղեցիին մեջ քրդերեն լեզվով կընէր: Ուստի այդ որը ես խոսեցա  
ժողովուրդին թրքերենով: Պերենիկի Հայոց մուխթարը՝ Աբրահամ Այն-  
թապալյան, խոսածներս բառ առ բառ պատմած էր անզգույն ժանտարժա-  
յի Հրամանատար Ճամաա էֆենտիին (Ուրֆայի Քուրք մը): Այդ օրերը  
Աճաթբաշի երիտասարդ մը և աղջիկ մը Պերենիկ կկած էին, երկուքն ալ  
ձարգիկներ, ձարգախաղեր կընէին: Պերենիկի Քաղապետութունը, Քա-  
ղապետության պատկանող ընդարձակ սրբաբանի մը մեջ ի կզատա Քա-

դաստառնայն տոմարներ ծախեց սուղ գներով քաղաքացիներուն: Ժամանակն առաջ մի քանի ընկերներով գացինք արհարան: Պերենկի կառավարության կազմի գլխավորները Հոս էին, զեռ ևս մոզովուրդը չէր եկած: Ժամատրմայի հրամանատար Ճուժան, կիրակի որ եկեղեցիին մեջ խոսածներս բառ առ բառ ինձի կրկնեց և ըստով: «Յոզաս, զուն այս քաղաքին մեջ ստորական մըն ես, զգուշը եղիք, ուրիշ անգամ այդպիսի բաներ չխոսես և այլն: Ես կընրեմ երիտասարդութեանդ. զեռ անհոյ եղիք»: Ուրանայ անոգուտ էր, շնորհակալութեան հայտենցի և քաշվեցա մեկ կողմ: Այս բոլորը խոսեցավ ինձի առանձին, արհարանի ամառնային տեղը, Եգրասի եղերքը: Այսպես խնդրքը փակեց:

Իմ սենյակս ալ խուզարկեցին, հուշատետր մը տետրակի մը մեջ գտի չափ չափածո բանաստեղծութիւններ, նկար մը՝ շորս ընկերներ, նկար՝ Բան Այնթապի մեջ՝ ես, Մկրտիչ Արարայան (Այնթապցի), Հովհաննես Գուլագորսոյան (Ատիանացի, մեռած Եղիպտոսի մեջ), Կյուրանցի Ղևանդ Թաշոյան (այժմ՝ Ամերիկայի Միտչայա Նահանգներ): Երկրորդ նկար մը՝ 18 երիտասարդներ — Այնթապցի, Բնասպցի ուսանողներ, պետական գեներալով, փամփուշտակալներով, զաշույններով նկարված. «աչա գտանք», — ըսին: Մկրտիչը առաջին և երկրորդ նկարին մեջ կար, չկարողացան ճանչնալ. «ովքե՞ր են ասոնք», — ըսին: Ըսի:

— Ձեռ գրանք, փողոցը կծախեն, գնեցի:

Սենյակս արխանին վրա արևելահայերենի քարգմանված զուրան մը կար, կկորցայի: «Աս ինչ գիրք է», — ըսին:

— Ըսրան է, — ըսի: Նայեցան ու ետ տվին: Մի քանի որ Հետո ժամատարմա մը (քուրդ) և Հայոց մուխթարը եկան ու ըսին. — «Ժամատարմայի հրամանատարը քեզ կուզէ»: Գացինք Իթիֆի-Հառ Յերազգրի ակումբը, առանձին սենյակի մը մեջ զգրոցն գիրք մը հանեց. — «Այս գնասեկար գիրքը ձեր գրքերուն մեջն ելավ», — ըստով: Առի, նայեցա՝ Մարգարի մեջ ապված Հայերեն երգարան մը, Մ. Նալպանոյանի, Գամա-Բարթիկայի, Ռիմյան Հայրիկի, Ջեյթունցի Նազարիթ Չափուշի և այլոց նկարներով, կողքը ներմակ Թուրք կապված կազմարարի մեքով և մեռապի կարգ մը երգեր գրված: Ըսի. — Ատիկա մերը չէ: Իսկողոս մերը չէր, ինքն ալ չով գրանք, որ մերը չէր. — «զուք ինձն չով գրանք, թէ որուն է»: Պեզեց, թէ՛ մեր գրողարանն էլավ: Չափուշ մը կանչեց, ըստով. — «Ընդարմակ և քաղմակողմանի Հարցարձնութիւն մը կատարե», ու զուրս ելավ: Տառ մեծ էջով Հարցարձնութիւն մը ելավ՝ սուտ ու փուս պատմութիւններով յեցուն: Լրանայն Հետո ներս եկավ, ստորագրեցի, ըստով. «աարեք»: Տարին վարի Հարկը, ընդարմակ արտու մը, մի քանի Հարյուր

էջ ներքը, ասեղ մզելու տեղ չկա, խեղճ անտառուներ շնչաճեղճ պիտի ըլլան: Հեծա իշու մը վրա, կես ժամ մնացի, արդեն մարելու վրա էի, ասք օդ և գարշաճառուքուն (այս էշերը ժողովուրդին բնօրգրոված էին գին՝ գորական փոխադրութուններ կատարելու համար), կես ժամ հետո դուրս հանեցին և ըսին,— «բայէ ընկերներուդ մաս»: Վերի Հարկը մեծ սննյակ մը, քսան վեց հոգի էինք: Երեք չորս օր հոն մնալն հետո մեզ փոխադրեցին բերդ, ուր էր նաև կառավարական շենքը ու բանտերը:

Երգարանը կոպտականեր Զեյթունի գյուղերն Կարապետ Քեթենճյանի (որը Հայ բողոքականներու քարոզիչ էր Պերենիկի մեջ) տասնվեց տարեկան տղուն, որը ուսանող էր Այնթապի ամերիկյան գոյնը: 45 սակի կաշառ տված էին ժամատարմայի Հարյուրապետին և ըսած էին, մեր մասայսպիսի գրքեր չեն գտնվիր, Հայ լուսավորչականներու գիրք է: Կ. Քեթենճյանի տունն գտնված էր պրոշյուր մը, որը ծրագիր մըն էր մշակված Հայ բողոքական պատվելիներու համագումարի կողմն, թէ ինչ միջոցներ պետք է գործածել Հայ լուսավորչականները որսալու և բողոքական դարձնելու համար: Բանաք եկան և քառատուն սակի գրամ առաջարկեցին ինձի, որդեսզի ըսեմ, թէ երգարանը իմ է: Պատասխանեցի. «ոչ գրամը կառնեմ, ոչ ալ իմ է կրտսմ, և ոչ ալ կրտսմ թէ այս ինչին է»: Երգարանի անբը պատանին տարագրության ժամանակ խեղճվեցա՞մ Եփրատի մեջ լողալու ասեն, Բողոզայի առէր:

Նրդիպի մեջ ժամագործ Հարությունի տունը խուզարկելու ժամանակ կինը նամակներու և թուղթերու ծրար մը որունքներուն մեջ առած կնտի, որպես թէ վախեն չըրած է: Սուզարկողները կը կատկանին, կինը ասքի կկեցնեն, ծրարը երևան կելլի: Հարությունը Հալեոյ փախած էր, բերին մեր քով, նամակներու ընթերցումն կարգ մը անուններ ևս երևան ելած էին: Այնթապն երկու եղբայրներ՝ Հակոբ և Հովսեփ Միրաքյանները, Հոսովյայի դաժառակի էճենչ գյուղն (գուտ Հայ մեծ գյուղ մը) գյուղապետ և մեծահարուստ Քեզան աղա Քեզանյանը, ազան՝ Սարգիսը, (Ռալֆեթիի հարցարնիչ գատավոր), եղբորը որպէն Հարություն Պարսուսյանը ևս բերին մեր մաս: Հակոբ Միրաքյանի նամակներն մեկուն մեջ գրված էր, թէ հոս 150 ընկեր ունինք (Հնչակյաններ): Մեծը սկսա՞մ: Ամեն գիշեր 10 հոգի Փոլախկայի կպատկեցնեին և սասկայի կը ծծեին խոտովանութուններ կորզելու և 150 Հնչակյաններու անունները կուզերին: Ամիս մը այսպես շարունակ: Ճարաճատ միջոց մը կմտածեինք: Գիշեր մը Մալո անունով քուրդ ժանգարմա մը պահակ էր, քուրդը ծանոթ էր: Կես գիշերին Մալոն դաները բացա՞մ, բոլորս մեկ անդ հաճաքվեցանք և 150 հոգիանոց ցտեկ մը կազմեցինք՝ մեռած, Եգիպտոս, Ամերիկա և արտա-

տահման մեկնածներու: 30 սոկի աչ կաշառ՝ ծնծր դազրեցազ, 150 Հոգի-  
 քն ոչ մի մարդ չգտան: Պատասխան կուգար (մահալը մեհհուլ) — ասեղը  
 անհայտ: Մարաշին պատերազմական ասյան մը եկազ, Ուրֆա կերթար:  
 Մարաշի մեջ շատ մը Հայեր կախաղան բարձրացնելն և Ջեյթուլցի Նա-  
 գարեթ Չափուլը (Նագարեթ Սուրենյան կամ Ենիայուլյա, Ջեյթուլի չորս  
 իշխաններն մին) շարաշար սպաննելն Հետո Ուրֆա կերթային Հալի-  
 Հարզարի Համար: Պերեհիկ մնացին մի քանի օր՝ որպես ամբաստանիչ  
 ասյան և մեզ Հարցաքննեցին, ու ամբաստանագիրը կազմեցին և որոշե-  
 ցին Հալիուփ պատերազմական ասյանը զրկել: Մինչ այդ խուզարկու-  
 թյուններու ընթացքին զբաղված գրքերը, թուղթերը զբաբնուութեն ան-  
 ցուցին: Երեք Հայեր գրացնելի կարգեցին, բանասարկյալներն երկու Հա-  
 գի, Երկուսի քահանա Մկրտիչ Մարգոյանը (Այնթապցի), Պերեհիկի թա-  
 զաղեալության զեղազործ Հովհաննես Պետրոսյանյանը և գուրսն Ուր-  
 ֆայի Արտաշես Տառյան, Պերեհիկի (Թափու մեմուրի) կալվածոց արձա-  
 կագրության տեսրեն: Այս երեքը խղճամիտ կերպով կատարեցին իրենց  
 վրա զրգած պարտականությունը, որքան վնասակար կամ վտանգավոր  
 թղթեր, գրքեր և այլն կային, ամբողջը զատեցին, պատուեցին և թափեցին  
 եփրառը: Հայտարարեցին, թէ ոչ մի վնասակար թուղթ կամ գիրք չկա:  
 Արտաշես Տառյանը Ուրֆայի ճանապարհին վրա սպաննեցին: Բանվեց  
 Հոգիքն ինը Հոգի Էհենչի Բեզան աչա Բեզանյանը, աչան՝ Սորգիսը, և  
 եղբորորդին՝ Լարություն Պարուսյանը, Այնթապցի երկու եղբայրներ  
 Հախը և Հոգսեփ Միքայելյանները, Պերեհիկի Նուրխան Նագարյանը և  
 Միհրան Պալապանյանը (Պերեհիկի Հայոց զաջոցի Հոգաբարձուներ), Պե-  
 րեհիկի թաղապետության զեղազործ Հովհաննես Պետրոսյանյանը (Ատի-  
 ամանցի) և ես, մեկնելու օրը մեզի ընկերացուցին թուրք երիտասարդ մը՝  
 Մուհամմետ անուսով, սրճարանի Կարսն: Մեզ Հալիսը զրկելն մի քանի  
 օր առաջ զերջին անգամ ըլլալով կանչեցին զիս պատերազմական աս-  
 յան: Դուրս կա անաս, որ ծանոթ թուրք ժանտարմա մը զիս օլտի ասալ-  
 նորզն, իրար ճանչցանք, զիտոց ելանք, ըսազ, — «Ի՞նչ խնդիր է» — պատ-  
 մեցի: Խոսելով դացինք իմքի-Հասի տկուսը, ներկայացա պատերազմա-  
 կան ասյան. Նույն Հարցումները և Նույն պատասխանը ստացան:

— Էտեր, — ըսին ժանտարմային, — տար ասիկա ժանտարմաներու  
 սենյակը:

Գացինք, ժանտարմա մը անմիջապես Փալախկան պատարստեց:

Էտեր Հարցուց, — Ի՞նչ է այս:

Ժանտարման ըսազ, — Էն՞ս գիտեր, ինչու զրկեցին Հոս:

— Ոչ, — ըսազ Էտեր:

— Զկ խոստովանեա՛մ, Հոս գրկեցին որպեզի ձե՛նով խոստովանեց-  
նենք:

Էօճեր անմիջապես Մարթինին մե՛ղ փամփուշտ մը գրա՛մ և ըսա՛մ.

— Ո՛վ որ ձե՛ն քաշել ուզե՛, պիտի սպաննե՛մ,— աճելյացնելով թրքա՛վա-  
րի Հայհոյանքնե՛ր ձե՛ն քաշել տ՛վողի և քաշողի Հասցեին:

ժամատարմանե՛րը շատ ազա՛լեցին, բայց անօգուտ: Էօճեր Հաստատա-  
պես սրոշամ էր կրակել, ո՛վ որ մտնե՛նար ին՛ծի: Ճարահաս սրոշեցին, որ ես  
լաց ու կո՛ծի ժայնե՛ր Հանե՛մ, որպեզի մյուս սենյակը լսեն, որ ձե՛ն կքաշեն  
ին՛ծի: Այդպես ալ ըրինք, քիչ Հետո Էօճեր գիտ տարա՛մ մյուս սենյակը, պա-  
տերազմական ասոյան, ոտքերուս վրա չէի կրնար կոխել, ծուռ ու մուռ  
քայլվածքով, երեսներս թթված մտա եերս: Նույն Հարցումները կրկնվեցան  
և նույն պատասխանը ստացան: Էօճերին ըսին.— «տար արկիտ բանս»:  
Էօճեր գիտ տարա՛մ դարձյալ ժամատարմանբու սենյակը և ըսա՛մ, Հոս նս-  
տիք, երթամ տեսնե՛մ, թէ ասոնք ի՞նչ սրոշում պիտի կայացնեն: Փնաց,  
պահվեցա՛մ յուսամուտին տակ և քիչ վերջ եկա՛մ, ըսա՛մ.— «քալե՛, եր-  
թանք»: Ելանք փողոց, ին՛ծի ըսա՛մ,— «բնա՛մ մի վախենա՛ք, ՅԵ-րզ Հոգվա-  
ծի Հաճելվածով ամբաստանեցին քեզ, մեկ տարիեն երեք տարի ազատազր-  
կու՛մ և մեզ բոլորդ Հալեպի պատերազմական ասոյանը պիտի գրկեն»:

Էօճերը Ռւբֆայի մեծահարուստ և կատազի ու ազգեցիկ թուրքերեն  
Տիշը զբրբզներու քով աշխատա՛մու էր և Հորս բարեկամ, շատ ազ ու Հաց  
ուսեր մեր Հեա, Հահախ մեր տունը Հյուս բզամ էր: Ակու՛մքեն դուրս գա-  
լն Հետո ըսա՛մ ին՛ծի.

— Մինչև իրիկուն քեզ բանտ չե՛մ տանիր, երթանք առնելիք, տալիք,  
պահելիք, պատուելիք, ինչ—որ ունիս, ամեն ինչ մարքե՛, Հետո կերթանք  
բանս:

Ըօի.

— Մեկ բան չուներե՛մ, Հարկ չկա, շնորհակալ ե՛մ:

Ե՛վ գացինք բանտ: 1895-ի Համիտյան Իտրդի ժամանակ կարգ մը Հա-  
յեր սպաննե՛ված էին. ժողովուրդը անմիջապես գիմեց և իշամություն ընդու-  
նեց: Ամբանե՛ր վերջ Սվրոպական վեց մե՛ծ պետու՛թյուններու Հյուպատոսնե-  
րը Պերեճիկ գալով Հաճատարացոյցամ և ստիպամ են, որ զսանան ետրեն  
զեպի քրիստոնեւթյան և զարձամ էին: Երբ Ջեյթու՛նի շրջանի տարազրձամ  
Հայու՛թյու՛նը և Սվրատեն տասնյակ Հազարներով սպաննե՛ված Հայերու գի-  
ակները տեսան, կրկին գիմեցին իշամանալու և իրենց զիմու՛մը ընդունվե-  
ցա՛մ: Բացի Հալեպ գրկված ինը Հոգիեն, մնացյալ բանտարկյալները ազոտ  
տրձակեցին և զիրենք աքսորեցին Բազա, շարժական բոլոր գույքերին  
միասին, նավակներով և սպա՛հով կերպով: Հոն մնացին մինչև պատերազ-



մի վերջը և վերագարձան Պերենիկ ու տիրացան իրենց անշարժ կալվածներուն, առնելուն, այգիներուն, պարտեզներուն ու արտերուն:

Առասու մը Հանեցին Կանապարհ, Պերենիկի երկեսն թուր թուրքերը Հափաքմած էին Եփրատի եզերքը և տանիքներու վրա, «կեցցի Սեֆեր չափուչը» կանչվառու քնեքո՞վ մեզ նա՞վակ նասեցուցին ու անցանք Եփրատի մյուս կողմը, երեք միավոր ժանտարմաներ կընկերանային մեզ: Էշեր վարձած էինք Հեննելու Համար, Լեռնակապերով էինք, Հայ իշապաններ կողներին մեզ: Երկու ժամ երթալէ Հետ Հասանք գյուղ մը՝ Քարուն—Մաշ—մուս անունով: Մեր ընկերներու չորսին թևերն արյուն կզաղէր, Լեռնակապերը խիստ ամուր սեղմած էին: 10 մենիտ կաշառով մը Լեռնակապերը թուլցուցին: Հասանք Նիզիպ: Այն գիշերը Հոն անցուցինք, կես գիշերին մեզ Կանապարհ Հանեցին, Լեռնակապերը մուխին մե՞ջ կամրացնենին, մեկ մնխերուն, մեկ էլ մեր Լեռքերուն կզարնենին Հասկապես: Երբ Հասանք Օրուլ գյուղը, նորն կաշառով Հանեցին թուրիս Լեռնակապերը և ազատ, Համարձակ մեզ տարին Այնթապ: Չեյթունի և շրջակա Հայ գյուղերու տարագրությունը սկսած էր, նաև Հայկական նահանգներու: Այնթապի բանալը Հանգիպեցանք Ջուհրապին ու Վարդգեսին, որոնք Ուրֆու կտաննին: Մեզ բանտարկեցին խնամով և ազատա նկուզի մը մե՞ջ, գեանա-Հարկ տեղ մը, ուր պատերն շուր կկաթիկներ: Երկու փոքրիկ լուսամուտ կար, որոնք բակի Հասակին Հափասար էին: Տեսա ժանոթ թուրք մը, որ ժանտարմայի չափուչ եղած էր, անունը Հեռքեշ էր: Մի քանի եղբայր էին և ծխախոտի մաքսանենկությամբ կզբաղենին, Մարտալըն—սղու կկոչվին: Լուսամուտան կանչեցի, կկամ, գույլ մը շուր խնգրեցի:

— Եսա լավ, — ըսով, գնաց սղու մը Լեռք երկու գույլ լեցան շուր սալով բերով: Փոխանակ մեզ սալու խմելու Համար, դռն տակն զեպի վար մեր տակը թափել տվով: Կանչեցի ծակին բերանը և երեսն թրեցի, ըսի.— «Եթե ողջ գուրս եկա, դուն չպիտի ուտրիս, իսկ եթե մեռա, կապրիս»: Ըսով.— «գացեք, մեզ կախելու կտանին»:

Ոսկի մի կաշառ տվինք, մեզ Հանեցին Հին սերայի երկրորդ Հարկը, նախկին դասարանի սենյակը: Հաջորդ որը ժանոթներ, բարեկամներ, ընկերներ և ոճանց Հարազատները այցելեցին մեզ և Հարկ եղած անզեկությունները առին, առատ ուտելիք և պտուղներ բերին մեզի: Հեռքեշն այ կկամ, — բռն մը կուզե՞ս, — ըսավ:

— Ոչ, — ըսի, — չնորհակալ եմ:

Այս Հեռքեշը ամեն տարի Ատիաման կուզար և ծխախոտ կզներ, Այնթապ կտաներ ու կծխեր: Օր մը կեսգիշերին մեր գուռը զարնվեցավ, Հայրս ըսավ.

— Գնա տես, ո՞վ է:

Գացի, դու ուր բացի, տեսա, որ Հեռաքենը՝ սաքը բուպիկ, գլուխը բաց, միայն շապիկ մը և վարտիք մը վրան: Կերս եկա՞մ, պատանց, որ լնուք քուրդերը զինք կողոպտած են, 100 սակի տրամը, մին և զենքն ու Հագուսար առած թողած են, տեղաշար փռեցիք կատկեցա՞մ, նույն ժամուռն Հայրս մի Հեծա՞մ, զնաց այնտեղ, ուր քուրդերը զինք կողոպտած էին: Հաջորդ օրը մին, զենքը, 100 սակին և Հագուստները առած թերա՞մ և Հանձնեց իրեն: Ա. Համաշխարհային պատերազմը վերջանալէն Հետո 1920—1921 թվականին Այնթապի կռիվներու ժամանակ սպաննվեցա՞մ:

Նույն օրը Հանկարծ տեսանք, որ Ատրամանցի փոխ Ալին և Մանուկ Գահգեղանը Հին սերայի բակը մտան: Ես ու Հովհաննես Գեորգիանյանը անմիջապես մեկ—մեկ պաթթաներա (ապալ) երեսներս քուրդերն ու պատկեցանք, մեր ընկերներուս Հասկցուցիք եղելու թյուրը: Եկան յուսամուտան նայեցան, տեսան, որ բուրք իրենց տեսնա՞մ մարդիկ են, ես գարձան գացին: Այս մտնուկ կողմած թշվառականը Ատրամանի մեջ Հարյուրավոր Հայեր մտանկն, զենքերու տեղերը ցույց տալն և բուրքի մահվան պատճառ գառնալն Հետո, իմացած էր, որ 60-ի չափ Ատրամանցիներ կռվելով ողջ Հասած են Այնթապ, և բուրքը բռնել տույժ Հանած էին Այնթապեն գուրս և սպաննած էին. կորսվեցա՞մ զնաց: Երկու օր մնացին Այնթապ և կառքեր վարձելով ազատ Համարձակ նամորդեցիք: Երկու ժամաարձա ընկերացան մեզ, մին՝ Այնթապցի, մյուսը՝ Քիլիսցի: Շտա լավ վերաբերմունքով գացինք Քիլիս: Սերային մեջ մեզի սենյակ մը բացին, իրենք դացին, շուկա, գացիք, պատեցանք, ծանոթներու Հետ տեսնվեցանք, զիշերը բակը պատկեցանք առանց Հսկողության՝ ամեն կողմ բաց: Նույն օրը յուր առած էին, որ Պալսո մեջ քսան Հնչակյաններ կախաղտն Հանձնած են, երկուքը՝ Քիլիսցի: Մեզի հաշ թերին: Քիլիսի Հայ ազաները մինչև կես զիշեր մեզ մտա մնացին: Հաջորդ օրը կանուխ Հասանք Հալեպ, ժանգարմաները մեզի ըսին. «Գուրքը ուն գործ տեսնելիք մարդիկ կամ կարգազրկիք դործեր ունիք, կորզադրեցեք, իրիկունը մեզ կտանիք բանա»: Այգալես ոչ եղա՞մ, մենք ոչ լի ու լի վարձաարեցիք զիրենք և շնորհակալություն Հայտեցիք: Գացիք Հալեպի կառավարության շենքը: Երկու բանա կար. պզտիկ բանա կոչված տեղը բանաօտարկվեցանք: Առաջին զիշերը Լեզարեթ ըսված տեղը անցուցինք, առատ մյուս և գարշահատություն կար: Երեք շաբաթ Հոն մնալն Հետո մեզ փոխադրեցին Լոււզղե—խան, որ բանաի վերածված էր՝ բանտարկյալները շտանալու պատճառով: Բացի այդ կար զինվորական բանա մը, Սուգարը—գրչուսը կոչված զորանացին մեջ: Երբ պատերազմական առ-

յան ներկայացանք, երկու հոգարարձու ընկերներն՝ Միհրան Պալապան-  
յան և Նուրիեան Ղազարյան, հայտարարեցին, թէ «Մենք հայերեն չենք  
գիտեր, միայն հայատառ թրքերեն կգրենք ու կկարդանք»: Այսպիսով մեկ  
մեկ տարի ազատագրված գաղապարովեցան: Մինչդեռ թէ հայերեն և  
թրքերեն լեզուները լավ գիտեն: Բանասարկությունը մեզ համար օրհնու-  
թյուն մը և մահվոն փրկություն եղավ: Ուրֆացի Ապտուլ-Մենիա  
տնունով առորի մը, երգարանը ծայրն ծայր թարգմանել աված էին (որը  
սովորել էր Այնթապի Ամերիկյան գոլենը): Երգարանի մեջի նկարներու  
մասին հարցուցին. «չեմ հանչեար և չեմ գիտեր»- ըսի: Երկար բարակ  
ավելորդ հարցաբնույթնեն Հեսո երեք տարի բանասարկություն որոշե-  
ցին: Քեզան ազա Քեզանյանին, եզրորը տղան Հարությունին, Հակոբ Մի-  
րաքյանին և եղբայրը՝ Հովսեփին, որպես Հնչակյաններ՝ 12 և 10 տարի  
բանասարկություն որոշեցին: Որոշման մեջ կարգացին. «Վեց մեծ պետու-  
թյանց թագավորներու Բեմալի մեջ ունեցած ժողովին ներկա գտնվել էր  
և (մեծալիքը մահուանի շահանանըն պիտ ճյուղընը այլըրըզ մյուսթագիլ  
էրմենիսթան Եսփմազա չալըշարըղընը իւզին). կայսերական Թուրքիա-  
յի մեկ մասը գտաելով անկախ Հայաստան կազմելու աշխատած լինել-  
ուուզ համար»:

Ժամագործ Հարությունին (Հնչակյան) և Թաթուլ Բյուսեկյանին  
(գաշնակցական) կախազանի պատիժ որոշեցին: Վեց ամիս Հեսո կախա-  
զանի պատիժը գիտեցին 101 տարվա (ցկյանո) բանասարկության: Սարգիս  
Քեզանյանը (որ Խալիթթիի հարցաբնեիչ գատափոր էր) հարցաբնու-  
թյան ժամանակ հայտարարեց, թէ «ես Հնչակյան կուսակցութենեն Հրա-  
ժարեցա, որովհետև կառավարությունը հայտարարեց, թէ՛ պետական  
պաշտոնյաները սեև կուսակցության պետք չէ անդամակցին»: Նախազա-  
հը՝ Բեմալ թեկ, ըսավ, թէ «Կրնայիր առ երես հրաժարիլ և նորեն մեալ  
Հնչակյան, մենք թուրս այգպես քրինք»: Սարգիսը երկրորդ անգամ  
ըսավ, թէ «տեսա, որ Հնչակյանները գող, ավազակ մարդիկ են, ուստի  
հրաժարեցա»: Որոշման մեջ կարգացին. «Գա իրատեի սենիյն թատիգ  
օլունմըշ պիր սիյասի Ֆըրդա հազգընաա իըրըսըզ, էշգիյա սեռյիտիյին  
իւզին սծիգի սենն մահպուսիյեթ» (Կայսերական Հրամանով Հատատ-  
ված քաղաքական կուսակցության մը հասցենին գող, ավազակ ըսելուս  
համար ասանընրելու տարի բանասարկություն): Հովհաննես Պետրիբան-  
յանը երեսուն (30) ոսկի կաշառով տղատվեցավ և բանակ անվեցավ  
հարյուրապետի ատրեմանով՝ որպես գեղազոր: Մենք մեաջյալ ութը հո-  
գիին համար Հինգ Հարյուր (500) ոսկի կաշառ ավիքը, փոքը ես դարձու-  
ցին, շընդունեցին: Փոպին կեսը հազիվ հատավ մեր ձեռքը:

Զարգը և տարագրութիւնը խիստ կերպով առաջ կտարվեր և մեծ Համեմատութիւններ առած էր: Սուրբան լեզված էր Հայ աքսորյալներով, Տեր—Ջորի Զարգը տեղի կունենար, Հայկական Նահանգներու Հայ բանտարկյալները բանտերու մեջ սպաննած էին, Վանի, Շապին—Գարաշխարի, Ավետիայի և Ուրֆայի ինքնապաշտպանութիւնները տեղի կունենային, Ուրֆացի, Մարաշցի, Այնթապցի, Բիլիսացի և Անտիոքցի մի քանի թուրքեր խորհրդակցութիւն կրննին, թէ՛ «ամեն տեղ Հայ բանտարկյալները սպաննեցին, մենք ալ այստեղիները պետք է սպաննենք»: Խորհրդակցողները բոլորն ալ մարդասպանութիւնով գատապարտված սերագործներ էին: Պատահարար լսեցի ասոնց խոսակցութիւնը և անմիջապէս գացի Հայաստեցի սէր—Ղարտիայանին (կարտիաններու պետք, բանտի տնօրէնը սերայի բանտը կմնար, սէր—Ղարտիանը փոխանորդն էր Ղուպպե—խանի մեջ):

—Գնա, ուն մարդու մի Հայաներ, —ըսով:

Ըսի.— 250 Հայ բանտարկյալներ ենք, ընդամենը 600 բանտարկյալ կա այս խանին մեջ (մեծամասնութիւնը՝ արտերներ), զենք չկա, դանակներ իրենք ալ ունին, մենք ալ ունինք, մենք ալ կմտնինք, իրենք ալ կմտնենին, եթէ կողովարական հրաման է, ըսելիք չունինք:

— Ոչ,— ըսով.— այդպիսի հրաման չկա, դուն գնա:

Անմիջապէս այդ թուրքերը Հաճաքել տվով, մի քանի ժանտարմա կանչեց, բոլորին ալ ֆառլիկայով լավ ծեծ մը քաշել տվով, շղթայեց և առանձնացուց գեանահարկը: Այս խնդիրը իմացով բանտարկյալ շեյխ մը, ծագումով աֆղան, Հաշիպարնակ, անգլիաճաղատակ, արտերներու մեջ պրոպականտող հարչուր հիուն (150) պրոպականտիստներն մին: Թուրք կառավարութիւնը Ճիհաա (կրօնական պատերազմ) Հայտարարած էր, շեյխը՝ Մուհամմա—Սաիա—Թերմիզի արտերներու մեջ քարոզած էր, թէ՛ սուս է, սա կրօնական պատերազմ չէ, քաղաքական պատերազմ է, և այն:

Ճեմալ փաշան անձամբ նախագահած էր պատերազմական առյանին, շեյխը գասի ժամանակ (չղթայակապ) նախատած էր Ճեմալ փաշային, նախ կախողանի պատիժ, Հետո 101 տարի բանտարկութիւն, վերջը՝ մեկ տարի բանտարկութիւն Հաւուն (50) ոսկի տուգանքի փոխված էր պատիժը, Հիտուն (50) ոսկի կաշտառով: Տարի մը Հետո ազատվեցավ, կրկին պրոպականտը շարունակելու Համար արտորվեցավ Գոնիա, ուր մնաց մինչև պատերազմի վերջը ու կրկին դարձավ Հաշիպ: Շեյխը Հայաստ էր, ամեն ուրբաթ օր Հայ բանտարկյալներն աղքատներուն դրամ կրամներ: Ինսուուն (90) Հայեր Տեր—Ջորի Զարգէն փախած, Հաշիպ ապաստանած էին,

Քուրք պատերազմական առյանը այս Հայերու մեկ մասը մեկ տարվա և մեկ մասը՝ ինը ամսվա բանտարկութեան զատապարտած էր, կառավարութեան որոշած տեղին փախուստ արած լինելու հանցանքով: Քուրք բանտ եկան կիսամերկ վիճակով: Շեյխը համաձայնական պետութեանն էր փոխանորդ Հյուսիսային Երևանի դիմաց և անգլիական գերիներու համար եկած բոլորովին նոր իննսուն ժաքիթ և իննսուն փանթալան, իննսուն շաղիկ և իննսուն վարտիք և երեսուն ոսկի դրամ բերել տված և բաժնեց այդ բանտարկյալներուն: Քուրք կառավարութեանը տեսնելով, որ այս մաշված զատապարտված և յախազանն ազատած Հայերը բանտարկվելով պիտի ազատին, վեց ամիս հետք բանտարկութեան շրջանը չլրացած, գուրս հանեցին և ջեղքին այլևայլ կողմեր:

Շեյխը կանչեց ինձի և ըստ, թէ՛ դեռ, ըստ Հայերուն, ոչ որ քովս թող չգա, մեկիկ մեկիկ մտով արարներու սենյակները և սկսավ պրոպագանդա տարի. 15 օր հետո ինձի կանչեց, ըստ, թէ՛ դեռ ըստ բոլոր Հայերուն, այսօր իրենց սենյակներէն գուրս չելլեն և ինչ որ պատահի, միայն դիմեն և չխառնվին:

Անմիջապես լուր տվի: Քիչ վերջ Քուրք մը և արար մը շրջապատին գլուխը շուր քաշելու համար, յուրաքանչյուրը՝ «ես առաջ քաշեմ», ըսելով, իրարու հետ կովեցան: Քուրքեր՝ Քուրքին պաշտպանելու, արարներ՝ արարին պաշտպանելու համար պետութեան հասան: Ամբողջ բանտարկյալները կրկուրի բաժնակցան, կոխվը մեծցամ: Փանտարմաներ տանիքէն զնեք արձակել սկսան բարձրին՝ առանց դարձելու, անողուս: Կերջապես զորանոցն մահակներով զինված երկու հարյուր զինվոր բերին բանտ, զինվորները սկսան աջ ու ձախ հարկածել, բոլորը լեցուցին սենյակները: Կոխվը սկսավ սենյակներէն ներս, որովհետև անպարտքով խառն զրած էին սենյակները, գանցին, մաքրեցին յուրաքանչյուրը՝ իր սենյակը և սենյակները շղթայով փակեցին: Հաջորդ օրը վաճառու հողինոց ցանկ մը կազմվեցամ, արարներ և Քուրքեր արարվեցան Այնթապի բանտը: Օր մը վերջ շեյխը կանչեց զիս, ըստ. — ինչու՞ քովս չեք գար: Երբ առանձին մտազնեք, ըստ. — գացեք հանգիստ եղեք, այս թշնամութեանը մինչև պատերազմի վերջը կը տան, մեզ կմտնան, մեր մասին վատութեան մտածող չմնաց: Այդպէս ալ եղամ, մինչև պատերազմի վերջը, երբ անգլիական բանակը մտնեցամ Հայկաի, որ մը առաջ արար ցեղախուճիքը հարկներով շրջաններէն խուժելով Հայկա, կովելով Քուրքերու հետ, խորտակեցին բոլոր բանտարկու զոները և ազատեցին բոլորին:

1916-ին ժամատաննորը մեծ ավերներ կգործեր Քուրքիայի մեջ: Բանակը, սկսած Արարիայէն մինչև Կովկասի ետևաքը և մինչև Պոլիս ու

Տարաանել, վարակված էր ժանտառենդով, պատերազմի ճակատներուն վրա մեծնոզներն ազնիլ էր ժանտառենդով մեծնոզներու թիվը: Ամբողջ թուրքին վարակված էր և ժողովուրդը անհամար զոհ կուտար ժանտառենդին, իսկ Հայ տարագիրները խորզվածներն ազնիլ զոհ ազնի ժանտառենդին: Սովմամհաւթյան ու այլևայլ Հիվանդութուններու բժշկական խնամքը շատ թույլ էր, շատ տեղեր բնավ գոյության չուներ: Երկրի տուեաւորը մեռած էր, արդյունարերությունը դադարած էր, գոյուզանտառությունը այնքան տկարացած, եւ մնացած էր (արդեն նախնական մեկրով կկատարվեր), որ սով կտիրեր ամեն կողմ: Գերմանացիք մեկ կողմէ, թուրք կառավարությունը՝ մյուս կողմէ, կկողոպտեին ժողովուրդը: Ամեն ինչ թանկ էր, շատ մը պարենային նյութեր հրապարակն քաշված էին, Հացը, ալյուրը, ցորենը և այլն՝ չափազանց սղած էր և զժգարով կնարվեր: Բանտարկյալներուն նախապես 500 կրամ ճերմակ մաքուր Հաց կտրվեր, 240 կրամ Հոտած, փտտած, սեւացած զարբի Հաց սալ սկսան, չմաքրված՝ քարը, Հողը, փուշը, ամեն ինչ մեջը (եւ չէր տրվեր, միայն Հաց, իսկ մնացյալը բանտարկյալը ինք պետք է Հոգար: Ամեն ինչ գուրսեն բերել առու և եփելու արտանված էր): Հիվանդությունը, սովը, սնունդի պակասը իրարու միացած, ամեն օր (միայն Ղուզպե-խանի մեջ) 15—30 Հոգի կմեռներ: Գետք է ըսել, որ ամբողջ պատերազմի շրջանին միայն երեք Հայ բանտարկյալներ մեռան տարբեր Հիվանդություններով, իսկ ուրիշ Հայ մը սպաննվեցով Բելխսի թուրքի մը կողմէ: Կրթառու մեռքը սպաննող թուրքին ալ զրկեց Հայ մեռյալին քով: Հինգ Հատ թուրք զինվորներ միևնույն խնդրով հինգական տարի բանտարկության գատապարտված էին պատերազմական ատանի կողմէ, զուգադիպություն մը, որ Հազվադեպ է, հինգ ընկերներ միևնույն զինքը մեռան, ուղշած մնացին բոլորը: Լուր տրվեցավ բանտի տնօրինության կողմէ զինվորական վերին Հրամանատարության և Ենվզի փաշան, մի քանի զինվորական բժիշկներ և բարձրատեղեան սպաներ, բանտ եկան քննության Համար, քննեցին: Ոչ թուևափորում, ոչ վերք, ոչ պարզապես Հիվանդությունով: Բանտին մեջ կար Աղու.—Ղապուր տնունով եզրպացի արար մը, Հաշիշամու և գող մը, բուկտան, զուխը բաց, առանց ձերմակեղենի, միայն էնթարի մը (զըրպուն) վրան, կմուրար: Այսպիսիներուն արարները Աղու — Հաշիշ կըսեին: Սա Հապիա մըն էր, բոժոժներով, փաքրիկ զանգակներով զարդարված գլխարկ մը ուներ, կիտազար, կպարեր, Հաց կամ դրամ կՀափաքեր և կմուրար, սակայն չնաշխարհիկ շուրհը մը ուներ. վարի շրթունքը երկու մասներուն մեջ տեղմած այնպես զորավոր կը զուար, որ անկարելի էր իսկական էջ մը զանազանել, կթե աչքով չտեսներ: Բոլոր բան-

տարկյալները Հազարված էին բռնաին բակը քննության արդյունքը իմա-  
նալու համար: Փնտնեցի գտա Ապու-Ղապուլուրը, սե գարիի Հաց մը ավի  
իրեն, «ժողոզ պահե»,— ըսի,— և բազմության մեջ ուժեղ գտա՝ երբ որ  
Նշան ընեմ, կամաց-կամաց մտնեցիր, իսկ երբ քեզ տեսնեմ և Հարցնեմ,  
գարիի Հացը ցույց կուտաս և կըսես, թէ գարիի Հաց ուտեցնեմ սկսա էջի  
պես գտալ, ես անմիջապէս կուզամ և թարգմանի գործը կկատարեմ»  
(որովհետեւ ինքը թրքերեն չէր գիտեր): Ապու-Ղապուլուրը սկսավ գտալ,  
թուրք Հարյուրապետ մը, որ բռնաի տնօրենին քով կանգնած էր, իշու  
ձայնը լսելու պես տնօրենին Հարցուց. «այս ի՞նչ իշու ձայն է»: Տնօրե-  
նը գիտեր, բայց ըսավ, թէ երևի բանտարկյալներու Հացը բերած են  
(որովհետեւ էջերու վրա բեռցած կերերին Հացը): Նշան ըրի, Ապու-Ղապ-  
ուլուրը կամաց-կամաց մտնեալ սկսավ, Հարյուրապետը տեսավ, որ ձայ-  
նը բազմության մեջն կուզա, կրկին տնօրենին դարձավ ու ըսավ.— «այս  
ձայնը բազմության մեջն է»:

Ապու-Ղապուլուրը արգեն բավական մտեցած էր, Հարյուրապետը  
նկատեց, ըսավ.— «եկուր, տեսնեմ գարդա ինչ է»: Փութացի թարգմա-  
նության Ապու-Ղապուլուրը ժողոզ Հացը հանեց, սովով Հարյուրապետին  
և կրկնեց ըսածներս: Հարյուրապետը ըսավ.— «ի՞նչ ըսել կուզե»: թարգ-  
մանեցի: Դարձավ բիշկներուն և Ենվզի փաշային, ցույց ավով Հացը և  
ըսավ, թէ արտու չէ այս ժողովրդին, կառավարությունը մաքուր ցորեն  
կուտա, ինչու՞ սեպցած գարիի Հացի կը փոխի: Դարձավ բանտարկյալ-  
ներուն ըսավ.

— Գաւազու վրա կերպնում և կխոտանում, որ պիտի զիմե ուր որ  
տնկ է և ձեզ Համար 200 դիրհեմ (մտաւորապէս 700 կրամ) մաքուր ներ-  
մակ ցորենի Հաց պիտի տան, միայն 15 օր պետք է սպասեր,— և գացին:

Իսկապէս 15 օր ետքը 200 դիրհեմ ցորենի ներմակ և մաքուր Հաց  
եկավ մեզի. Հարյուրապետը խոստումը կատարած էր և իր դիմումը տեղ  
գտած էր: Ճիշտ էր, կառավարությունը մաքուր ցորեն կուտար, բայց  
բանաի տնօրենը Համաձայն մատակարարողներու Հետ, ցորենը փոխած  
էին մզլտած գարիի: Համանարակը կը շարունակվեր, սովը կը սաստկա-  
նար, օգությունը անհամեմատ շափեր առավ, բանաին մեջ և զուրոր  
ամեն տեղ մաշը կհնձներ ժողովուրդին, նամանավանդ աղքատ և չքավոր  
գաւակարգը:

1917-ի զեկտեմբեր 15-ին Հանկարծակի ծանր Հիվանդացա, թաղապե-  
տության Հիվանդանոցը և Նույն Հիվանդանոցի բանտարկյալներու բաժի-  
նը լեցուն էր Հիվանդներով, ամեն օր տասնյակներով մարդիկ կմեռնէին  
ժանտաւտենդի (չքիչի Հումմա) Հիվանդությունով. ես ալ բռնված էի Նույն

Հիմանդուծյան, Հակասակ պատմաստված քլլալուս! Նույն օրը Հովհաննես Պետրբերեանյանը բաւա եկա՞մ գիս տեղեկու: Տեսա՞մ իմ ծանր վիճակը և ըսա՞մ— «քեզ Հիմանդանոց փոխադրել պիտի տամ»,— ու գնաց: Հովհաննեսը ազատվելէ Հետո Բաւ—ուլ—այն — Դամասկոս երկաթգծին վրա, Բաւ—ուլ—այնեն Դամասկոս ծծու՛մք և այլն կփոխադրէր Դամասկոս՝ զեղորայք պատրաստելու համար, առաւ փող կտնցեցնէր ձեռքը: Առան փողը իր ճանապարհին վրա հայ զաղթականներու կը բամներ, շատերու կյանքը փրկէց: Գնաց, գտեր էր թագապետութեան բժիշկներէն Իսկենտեր Իսկենտերյանը (սա 1895-ին սուլթան Համիդի հրամանով Ձեյթունը զրկված և մանուկները պատմաստելու պատրվակով թուճաճարած էր) եկա՞մ և գիս Հիմանդանոց զրկէց: Այն օրը իմ շնորհի՞մ ՉԼ արարներ ևս փոխադրվեցան Հիմանդանոց: Ժամերով մնացի պազ քարերուն վրա, ոչ որ ուշադրութեան չզարժուց իմ վրա: Բերկ Հայեպցի մեծահարուստ հրեա երիտասարդ մը, որ Հիմանդ չէր և կաշառով բանտէն Հիմանդանոց փոխադրված էր, պարզապես Հանգստանալու համար, գիս տեսա՞մ և տնտիշապես իր սենյակը տարա՞մ: Էողքն Սասունի էր տնուը: Հաջորդ առաւուն երկու թուրք բժիշկներ եկան և գիս քննեցին, զեզ գրեցին ու գնացին, ըսին.— «չուտա՞մ կ'անդատեա՞ն»: Հիմանդանոցի զեզագործը՝ Այնթապցի հայ երիտասարդ մը Հակոբ տնուճով, շիշ մը զեզ և փոքրիկ բամակ մը բերա՞մ և ըսա՞մ— «ժամը բամակ մը պիտի խմես»,— ու գնաց: Նույն րուպին Հովհաննեսը Հիմանդանոց եկա՞մ: Զինվորական համազգեստով Հարցուրապետ մը լինելուն համար առանց աղգելիքի քոփս եկա՞մ և շիշով զեզը տեսա՞մ, քիշ մը լեցուց, բերանը առա՞մ ու ևս թքեց, ըսա՞մ.— «թույն է, չխմեա՞: Երէք տարա՞մ Հակոբին ու իր ձեռքով զեզ պատրաստեց ու բերա՞մ, զեզագործին ալ պատմվիրած էր, որ աճեն որ բժիշկներու ըսած զեզը պատրաստե, Հետո դա ու թափվելէ վերջ ուրիշ զեզ պատրաստե, «փոխարմեքը ևս կ'կտարմ»,— ըսած էր և Հարկ եղանը խոսած էր Հակոբին:

Հաջորդ առաւուն երկու թուրք բժիշկները նորեն եկան քննութեան, ըսին. — «զեզը խմեցի՞ր»:

— Այո,— ըսի:

Իրարու կրտսին. «տեսիւց իշտը՞մ զիշոր զն տա՛հա կեպերմննը» (զարմանալի, խմեցի կրտս, և գետ չէ ստակած): Ըսին.

— Այդ զեզը քեզի ողճած է, նորեն կ'զրկենք:

Դարձյալ եկա՞մ զեզը: Աչքերս փակ, կտա թափեցի մահճակալին տակի նուէրիկին մեզ: Դեզագործ Հակոբը եկա՞մ, շիշը տարա՞մ ու նոր զեզ բերա՞մ: Մյուս օրը կրկին եկան թուրք բժիշկները, նորեն Հարցուցին.— «զեզը խմեցի՞ր»:



— Այս,— ըստ:

Նորեն խոսեցան իրարու ետ և զարմանք Հայտնեցին, որ չեմ ստահած: «Նորեն զեզ կզրկենք»,— ըսին ու գացին: Հակօրք դարձայլ պարագ շիշք տարած ու ուրիշ զեզ քերտով: Թուրք բժիշկները այլևս չեկան և Հայ բժիշկ մը Վահան Ամիրբեանյան անուեով, եկավ և զիս կքեներ ու զեզեր կզրեր:

Արզեն շատ մը Հայ քաղաքական բանասրկյալներ նույն Հիվանդանոցին մեջ թուամփոքելով մեռած էին թուրք բժիշկներու ձեռքով: Տիգրանակերտցի Արս անուեով Հայ երիտասարդ մը, որ սննեկանից էր ինձի, յսելով իմ ծանր գրուեթյունը, սուտ Հիվանդ մեանսով եկավ Հիվանդանոց և խնամեց զիս: Երբ Հասկեցիկեցով, որ Հիվանդ չէր, շարաթ մը Հետ ետ զրկեցին բանտ: Մինչ այդ նշանածս եկավ քովս անասկեցության: Հիվանդապահ աղջիկներն Տիգրանակերտցի Արշալույսին, որ ծանօթ էր իրեն և Հորեան եղած էին, Հորի եղածը կՀասկեցնե և կխնդրե, որ ինձի լավ նային: Արշալույսը և Սևերակցի ուրիշ աղջիկ մը շատ լավ Հոգ տարին և խնամեցին ինձի: Մրսկուժներ ըրին բժիշի խորՀուրդով:

1918 թվի Հունվարի վեցն էր, աչքս բացվեցով, Հիվանդանոցի թափը անցած էր և մահճակալի ետեք պատեն կախված փոքրիկ քարն տախտակի մը վրա կտրեցայի Քրանսերեն տառերով գրված "Յիֆուզ" բառը: Հովհաննեսը Հանախ կայցելէր ինձի, ամեն անգամ գալուս գրամապանակը կՀաներ և մեջը ինչքան որ գրամ կար, կպարպեր մինտերին տակը և կըսեր.

— Մախտ, տուր, որպեսզի քեզի լավ նային,— և տուժ մը սիկարեթ ալ գրամ էր բարձիս տակ և ըսած էր.— երբոր այս սիկարեթին Հոժը առնես, զիտցիր, որ առողջացած ես:

Սիկարեթ մը քաշեցի, տեսա, որ Համով է, ուժ ստացա և ինքզինքս կազգուրված զգացի, բայց ոչինչներու մեջ խեղդված և խիտ տկարացած էի:

Հուեմարի վեց, Մենդյան Զատիկի օրն էր, Հիվանդապահ աղջիկները եկեղեցի գացած էին: Սևերակցի աղջիկը վազելով քովս եկավ, տեսավ, որ Հանգիտ եմ, ըսավ.

— Քեզի լավ լուր. Հարություն քահանա Ստայանը քարոզ խոսեցավ և ըսավ, թէ՛ պատերազմը վերջանալու մտ է և կարն մասնակեն կալատվինք:

Անգլիական բռնակը Պազնախինի ետկառը եեզցած կՀասաջանար: Պազնախինի և ծովեզերյա քաղաքներու բուրք բանասրկյալները փոխազրեցին Հալեպի բանակը: Մի քանի օր Հետս գուրս գրեցին և գացի

բանա: Երկու քուկն աճիս պատկեցա տկարութեան պատճառով և Հազիվ ոտքի եյա: Հիմանդանացին մեջ ամեն որ նվազագույնը ըլլալով տասնը-հինգ հոգի կենեանին:

1915-ին Հաշուպէն 50 հոգիանոց զինչալ խումբ մը Հայեր մեկնեցան Զեյթունի ճամբով դեպք ուստական նակատ՝ ուստական բանակին միանալու համար: Այս խումբը թուրքերու հետ կռիւի բռնկելով սչեւազամ: Երկրորդ խումբը պատրաստամ էր մեկնելու, թուրք կառավարութեանը զգաց, սկսան հետապնդել, զսան Հայ մասնիչ մը՝ Զեյթունցի Կարապետ, որը սկսով տատուցիները և ուրիշ Հայեր մասնել: 250 Հայեր բանտարկվեցան: Տիգրանակերտցի Օնիկ Մուրազյան զատապարտվեցով 101 տարի բանտարկութեան, մյուսները՝ տարբեր ժամկետով բանտարկութեան: Մեզի լուր տրված էր, որ եթե կարենանք՝ փախչիլ բանտն և միանալ մեկնողներուն: Կարն լամ մը բերին պատը ծակելու համար: Որոշեցինք ծակելիք տեղը, իսկ երբ մասնութեանները սկսան, լամը պահեցինք և հրատարկեցանք փախուստ տայն:

Զեյթունցի Կարապետը զիտմամբ բանտ բերին՝ ներսինները լրտեսելու համար: Հազիվ գիշեր մը մնաց բանտը, Հաջորդ գիշեր Հանդերձալ աշխարհ պիտի զրկվեր: Զպացին ու անմիջապես զուրա տարին: 1918-ին, երբ անգլիական բանակը գրավեց Հայկը, Կարապետը փախավ Կիլիկիա՝ Քարսուս քաղաքը, անկից Պոլիս կամ այլ տեղ փախչելու և հետքը կորսնցնելու համար: Ատիտմանցի Մարգիս Մարաշլյան կամ Զեթն Մարգիս, իմանալով Կարապետի թաքնված տեղը՝ թուրքի մը ասուը, Մարգիս ծպտված, մուրացկանի հաշուստով կը մտնե թուրքին տունը կը սասկեցնե ու խուլս կուսա: Մարգիս մի քանի տարի առաջ մեաավ Երևանի մեջ: Նույն բախտին տրմանացամ մտանիչ Արշազիրն ալ: Իսկ Այնթապցի արգաղավ Հակոբեան Մանուշակյանը սպաննվեցամ Ալեքսանտրեթի մեջ Ատիտմանցի Հակոբ Շարապյանի ձեռքով:

Օր մը բանտին բակ երեք քայլ կցատկեինք: Յատկելու ժամանակ ոտքիս տակ ընկույզի լափ կէր քար մը եկամ, ինկա դեպին և աջ ձեռքիս մեջի կողմը պատռվեցամ և մեջը հող լցվեցամ: Իրիկունը մտա էր: Ձեռքս մինչև արմուկներ ուռեցամ: Հաջորդ ատուս Հիմանգանոց գացի: Ուրֆացի Ովանեսա Ալանեյան, որ փորձաուս բուժքույր էր և նախապես ծանոթ (եղբայրը՝ Գեփորգ Ալանեյան, ընկերս էր, անանաբույս, մյուս եղբայրը՝ Արուշ, մեզ ժամ բանտարկված էր մեկ տարի ազատազրկումով) վերքը լվաց և սպիկանի զրամ, կուպեց, Ղարախանին պատվիրեց, որ ամեն որ պետք է բերն մինչև որ լավանա: Շարաթ մը վերջը լավացամ: Ովանեսային ըսի, որ երկարաձգե: Ձեռքս կապած 7 շտաթ ամեն որ Հիմանգա-

նոց գացի: Եմենցի արար Ղարախան մը կրնկերանար ինծի, 70 տարեկան  
ծերունի մը, կոշիկները 5 քիչս կկուեր, Հաջիվ կքաչեր, բայց շատ լավ  
մարդ էր, ամեն որ իմ և երբեմն Հիվանդանոցը Ովսաննայի Հաշիույն կու-  
տեր, կխմեր և զիս քաղաքը կպատաներ: Երբոր ժանձրանայիք, կտաներ  
բանա: Ուրբաթ օրերը Հաշիվի իսլամական շուկաները գյուղացի արար-  
ներով և աշխրթիթի (ցեղախումբ) տնտեսաբան վաչկատուն արարներով  
կկեցվի: Եսանութն մը չամիչ գնել ուզեցի: Բազմության մեջն անցա և  
խանութպանն չամիչը գնեցի, զարձա, որ զարախանը չկա: Ժամի մը  
չափ իրար փնտռեցինք, բայց իզուր: Հուսահատ առանձին գացի բանա:  
Ղարախաններու պետք՝ Հանի Էֆենտի Խարբերդցի (որուն մայրը Հայ  
կրթած է), Հարցուց «ու՞ր է զարախանը»: Եղելությունը պատմեցի, ըսավ՝  
— Գնա, մի երևար:

Ժամանակ մը հետո զարախանը կուգա.

— Ու՞ր է բանտարկյալը, — կհարցնե Հանի Էֆենտի:

Ան աչ կպտամն եղելությունը և կըսե.

— Ան չի փախչիք, ուր որ է կուգա:

Բավական նեղելն հետո զիս կանչեց: Ղարախանը ըսավ.

— Ես չըսի՞, որ ան չի փախչիք, գուրս գնես՝ գացողը չէ: Դուրսը  
այնպիսի դժոգք էր գործած, որ բանաը զերագանիլի էր գուրսն:

Կովկասի, Տարտանելի, Պաղեստինի և Իրազի ձախառներուն զրա  
առևձաղն չորս միլիոն զինվոր խորզված էր, բացի Հիվանդությունով  
մեռածներն, մինչև 16 տարեկան պատանիները և 60 տարեկանները բա-  
նակ առևձաղ էին:

Շաղան 11-ին երեք տարին լրացավ և բանտն զուրս եկա: Թուրքե-  
րը այն ժամանակ լուսնային տարիով կը Հաշիվին բանտարկյալներու օրե-  
րը: Առաջին օրը տարին (ախըը ասկեր շնուպտին) զորակաշիկներու  
գրասանյակը, Հաջորդ օրը կառավարչատան միլիցիայի բաժինը, հետո  
Եսանտըի միլիցիայի բաժինը, ուրկն գորանոց: Մտազորապետ 25—30  
Հազար զինվոր կար գորանոցը, մեծ մասամբ Հիվանդներ: Առանց նայելու  
Հիվանդության, տկարության՝ կզրկեին ճակատ: Ետանք պահանջներուն  
կաշառ տալով կփախչեին գորանոցն: Ես չկարողացա կաշառով փախչիլ:  
Ամեն օր մաս տա մաս կզրկեին ճակատ կամ աշխատանքային բանակ:  
Մտազորած էի զինվորություն չընել: Ամեն օր ցանկ մը կկարդային և կու-  
ղարկեին: Նախապես կիմանայի, թէ ու՞ր պիտի գրկեն, և երբ ցանկին մեջ  
անունս կկարդացվեր, լուռ կմնայի: Մի քանի օր հետո 100 հոգի պատե-  
ցին որպես արհեստագոր Հաշիվ իջեցնելու համար: Այն օրը անունս  
չկար, ամենն վերջը պայտար մը ուզեցին, պայտար չկար, ևս ներկայա-

ցա որպէս պայտար: Մեզ տարին Հայեզ: ՃՏ ժամ արտոսի մը մեկ բան-  
 աարկիւմ մնացինք, սոված, անջուր: Երկու օր զերէ մեզմե 12 հոգի գեր-  
 մակ, ներկարար, կտուտայան, Հյուսն, պայտար տարին խան մը՝ Գապ-  
 ուլ—Փարսեի մեկ, մյուսներն ալ ուրիշ տեղեր: Եւանը լեցուն էր էշերով:  
 Այդ էշերով զինձորական փոխադրութեաններ պիտի կատարվին, վայ  
 այդ կովոյ բանակին: Մեզի տրված ճաշը (օրական մի անգամ) պարզ  
 տար ջուրն բազկացած էր: Բանջարի տերներնուով և միտով ճաշ կպատ-  
 րասեին, միւր կզատեին սպաներու, չափուշներու և մասնավորներու  
 Համար, միայն ջուրը կմնար զինձորին: Օր մըն ալ զիս ու արար ազա մը  
 զրկեցին Տեփեզիկ խանը՝ էշեր պայտելու Համար: Երկու էշի առջևի երկու  
 ոտքերը պայտեցինք: Ես ոտքը բանեցի, ազան պայտեց: Արդին կեսը  
 եղած էր: Դուռը նստած տարիքոս լեյտենանտին գացինք, որ թայ տայ  
 երջանք հացերնիս ասննք, ճաշենք: Տեստա մարզ մըն էր, փոխանակ  
 պէլ էֆենտի ըսելու, չափուշ էֆենտի ըսի՝ ուսադիրներն բան չէի Հասկ-  
 նար: Այդ միջոցին երիտասարդ լեյտենանտ մը եկավ և լսեց «չափուշ  
 էֆենտի» ըսելու և լավ ապտակ մը զարկավ ինձի՝ լեյտենանտին չափուշ  
 ըսելուս Համար և մեզի ես ներս զրկեց՝ ըսելով, «կարծես թէ ճաշարան  
 պիտի երթաք, չոր հաց մը ունիք, երբ որ տանեք կուտեք»: Քիչ մը խո-  
 սեցավ ու դնաց: Կրկին գացինք և խնդրեցինք, որ մեզ թույլատրեն:

—Փացեք,— ըսով, ու գացինք, այլևս ես չզարժանք:

Վարպետ մը ունեինք Ապու—Ալի անունով, շատ լավ մարդ էր: Երբ  
 անգլիական բանակը զրափեց Հայեզը և զերի ինկած թուրք սպաներուն  
 Հատկապէս բեռնակրութեան ընկ կուտային, կայարանը պարկերով Հան-  
 քածուխ կկրեին շաշակով: Զիս ապստակող սպան Հանգիպեցավ Գապ-  
 ուլ—Փարսեի պահակատան (միլիցատուն) առջև. լավ մի քանի ապտակ  
 և պոքս՝ քաղաքացիական չոր Հագած սպային: Ակտով արարերն խոսիչ,  
 որպէս թէ՛ թուրքերն չի գիտեր: Միլիցաներ եկան մեզ միլիցատուն  
 տարին, Հարցաքննեցին: Ետձառիքը պատմեցի և ավելցուցի. «Թուրք  
 կատավարութեանը հայերուն ի՞նչ ըրավ, գիտեք, Ճեմալ փաշան արար  
 նշանավոր մարդիկը կախազան բարձրացուց, Ջեյթուներն, Ապու—ուլ—Հա-  
 միտ —Ջահրափին և այլն, այս արարը, որ Համացի է, թրքական սպա է,  
 անխիղճ և իր ազգին զավճան մեկն է, մեզ արգիլեց, ընկերս ալ խալա՛մ  
 արար մըն էր, հիմա արժանի չէ, որ ինքը Հանձնեմ անգլիացիներուն և  
 կայարանը անուխ կրն»: Միլիցապետը պախարակեց սպային, մեզ հաշ-  
 տեցուց և ճամբու դրավ: Ըսի, «ես Հայ եմ և իրեն պես անխիղճ չեմ մտա-  
 ծեր ճնշված ժողովուրդներու մասին և կներեմ իրեն, միայն թէ այս պա-  
 րագան լավ գաս մը ըլլա իրեն»:

Տեղեկիկ խանի զնպքն երկու որ Հնոս թուրք զուրնն մը և մի քանի բարձրաստիճան սպաներ եկան, Հեանքնին արարական ազնիվ ցեղն նմուշ մը, որ այն ատեն ութը Հարյուր ոսկի արժեք: Չին խնկաւոր չէր, ինծի Հանձնեցին, որ բռնեմ: Ռեզն տնասունը կը ցատկուտեր, ուղեւորն վրա կհանգաներ և այլն: Տեսա զուրկ կարելի չէ, առջևի մեկ ուրքը վերջուցի բռնեցի, մյուս ձեռքով ալ պախուրձտ բռնեցի, չէի կարող զուրկ, Մուրատ չափուշը ինծի սպննու եկավ, սակայն անուշուս: Մուրատը Մասունցի էր: Մուրատ անունը Հայերու և թուրքերու մեջ կա Հազասարապետ: Աս ինքզինքը որպէս իսլամ ցույց կուտար և այդպեսով անքոր ազատան էր, երբ ատանձին մնայինք՝ Հայերն կխոսեինք և իրար լավ Հասկցան էինք:

Մուրատը Հակա Հազթանզամ երեսասարը էր 35 տարեկան: Մյուս սպաները Գուրնելին (Նալ-ազար) կըսեին (Քնուզիմ պեկ էր անունը):

— Դուն զուրս գնա, գնդակ մը տանք այս ձիու ճակատին և խեղճ կենդանին թող ազատփի շարձարանքն:

— Այ, — կըսեր, — այս ձին քանիցս իմ կյանքը փրկամ է, — և այսպէս կըզիճեին:

Դիմացը, առջևը բաց ծածքի մը տակ մի քանի Հարյուր երկար նստարաններ զիգզամ էին մինչև առաստաղը: Չիուն զուրքը զարժուցի գեպի այդ կողմը և Հայերն կամաց մը Մուրազին ըսի.

— Չին թող պիտի տամ, որ այդ նստարաններուն մեջ մտնեմ:

— Լավ, — ըսավ, — բայց փորձանք չըլլա գլուխդ:

Ըսի. — Ինչ կուզե թող ըլլա, — ու սորք թող ավի, պախուրձը թուրջուցի, ձին զուրկ բարձրացավ նստարաններուն մեջ ու թողզամ մնաց: Սպաները Քնուզիմ պեկը զուրս տարին, որ կուտար և սպա մը ասարձանակը Հաննց ու գնդակ մը տվավ ձիու ճակատին, ձին ստուկավ:

Հաջորդ որը Հարյուրապետ սպա մը եկավ և Հրամայեց, որ մեկ-մեկ էջ բերենք ու փոքր կառքերու լծենք: 12 Հոգի էինք Հայեր, 12 էջ բերինք և կառքերուն լծեցինք, Մուրազը սպնեց ինծի լծելու, տարին մեզ զուրս փողոցը մեկնելու Համար: Համա պիտի երթայինք՝ քար կրելու, որպէսզի ճանապարհ սարքեն: Մինչև իրիկուն անոթի, ծարավ սպասուցին արևին տակ, այն օրը Հեամագեցին Հաջորդ օրվան ու վերադարձանք խոտ: Ընկերներս բուրն ալ գացին իրենց տունները: Քիլիսի գլուղերն երկու քուրք բերած էին՝ իրենց գտալիք ազոց անդ, երկուքն ալ 55-60 տարեկան: Այդ օրը Հերթապահ էի, քուրդերը ինծի ըսին թէ՛ փախչիլ կուզենք, ճանապարհը չենք գիտեր: Ըսի.

— Ես մեզի ճանապարհը ցույց կտամ:

Գիշեր էր, մեր երեքնն զտա մարդ չկար խանին մեջ: Քուրդերը տարի Էստուպարճը ցույց տվի, գացին, ես ալ գարձա խանը ու քիչ Հետո փախա, գացի Նշանածին տունը, եզրորը և Հորը քո՛վ: Եզրայրը մեր Հեա 15 տարի բանտարկութեան դատապարտված էր՝ ի բացակայութեան, տնունը փոխած՝ Մարաշցի Թորոս եղած էր Միգրաթը: Զննքի խնդրով մերբակալվեցա՛վ և Գ ամիս բանտը մնայն Հետո ընկերներով աքսորեցին Տեր—Ջոր: Ընկերներուն մեկ մասը Զարգած էին: Մի քանի Հոգի Հաղագած էին փախուստ տալով, երկու ամիսնն Տեր—Ջորնն Հալեպ Հասած էին մալուխով և խառ ուսելով, մեծ եզրորը ընտանիքը Այնթապ էր մնացած, չէր աքսորված որպէս զինվորի ընտանիք, իսկ ինքը Հալեպ գլխավոր վարպետ էր զինվորական արհեստանոցի մը: Հայրն ու մայրն ալ կը մնային Այնթապ, թուրքեր կոռաջարկեն և կրնն.— Ենթաց, խալած եղիրս: Սա Հայհոյանքով կզատաստանն: Հաջորդ օրը երկու ծերերը կաքսորն Պերճիկ: Ժամանակ մը Հոն մնայն Հետո, էրիկ, կնիկ փախուստ կուտան: Կինը կերթա Այնթապ, ինքն ալ՝ Հալեպ: Փախստականներու մտա գացի պատագարվելու: Երեք շաբաթ Հետո ամուսնացա, Համրոյի թաղը սենյակ մը վարձեցի ու մի ամիս ևս փախստական մնացի: Բարեկամներու և ծանոթներու միջոցով մտա զինվորական արհեստանոց մը, աչքն Հեաու արաբական խանի մը մեջ: 400-է ավելի վարդեմներ կաշխատեն, բոլորն ալ երկաթագործ, Հայ և արաբ՝ խառն, Պերթո—ալ—Մեալա կոչված թաղը: Աշխատանոցի պետը՝ Մարաշցի Խալիլ էֆենտի անունով լեյառնամտ մը, Հիսունը անցած տարիքով, զինվորական վարժարան շտեմած, բանակի մեջ ծառայելով այդ աստիճանը ստացած մարդ մըն էր, սակայն՝ խզեամբ և բարի մարդ մը, Պետուք էմինին: Գրեթե իր փոխանորդը, ուսյալ երիտասարդ մը՝ Այնթապցի Ավետիս Կեոյոզլանյան, զինվորներու Հացը կուտար, Հալիվները կրոներ և այլն: Ես՝ արհեստին անտեղյակ և, որովհետև Ավետիսը ծանոթ ընկերս էր, որպէս աշխատավոր վտերգա մը տվին և ամեն օր կերթայի մեկ—երկու ժամ կնստի և Հացը աննելով ես կզատնայի: Ոչ մի օր ունե աշխատանք չկատարեցի: Մի օր ալ Խալիլ էֆենտին մի քանի ընկերներով և երկու բեռան կառքով մեզ զրկեց Գոթթան—Բլեպ խան մը, որը զինվորական Հազուսաներու պահեստ էր, զինվորներու (արհեստանոցի) Հազուստ բերելու Համար: Գացիք, մեծ սրած մը մինչև առաստաղը լեցուն Հազուսա էր: Հազուսաները կզատենք, Հանկարծ երեք թուրք սպաներ եկան, սպաններն մեկը Ազըր—Հաթար—գոյին փախուստ տվածս անզգուն սպաններն էր, որ զիս կհանչեար: Անմիջապէս Հազուսաներու վերը էլա, փոս մը շինեցի, մեջը պառկեցա: Ընկերներս քսին.— Ի՛նչ կա: Ըսի.— վերջը կպատմեմ մեզի: Մի քանի բուզն զուրը

խոսակցելէ Հետո, ներս եկան, Հինգ բողոքի չափ ալ ներսը կեցան, գացին խանին դռան մեջ աթոռներու վրա նստեցան, կառքերուն մեկուն մեջ փոս տեղ մը շինեցինք, մեջը նստեցա, երես իրենց Հակառակ կողմը դարձուցի, երեք զինվոր ալ պատնեշի նման քոփս նստեցան, անկատելի կերպով դուրս եկանք: Ընկերներուս պատմեցի պատճառը:

Զինվորական ունէ տեղէ փախուստ տվող Հայ մը անմիջապէս կզնդակահարեն, թուրքերու Համար ներողամիտ էին: Մեր գատը տեղի ունեցած ժամանակ զինվորութիւնն փախած Ուրֆացի թուրք մը բերին պատերազմական ասլան, Հազիվ 30 տարեկան: Նախագահը ըստվ.

— Բտանմեկերորդ անգամն էր, պետական զենքով ու ձիով կփախչիս,— և այլն:

Զինվորը ըստվ.

— Թույլ տվեք, որ խոսիմ:

Նախագահը ըստվ.

— Խոսե տեսնեմ, ինչո՞վ պիտի արդարացնես ինքզիքդ:

Զինվորը ըստվ.

— Մայրս ինծի ըսած է, որ Հազուտուներդ ուրիշին լվալ չտաս, ես ալ մի քանի ամիս զինվորական ծառայութեան կըրնեմ, Հազուտուներս աղտոտածին պէս կերթամ ձորս լվալ կուտամ ու կերթամ կՀանձնվիմ զինվորական իշխանութեան:

Նախագահը ըստվ.

— Գեա, այս զերջին անգամն է, Հաջորդին կզնդակահարվիս:

Ղրկեցին բանակ: Վերջին անգամ փախած էր Ալիզի քանայի կոթներու ժամանակ:

Անգլիական բանակը Դամասկոսի կմտանաւար, պատերազմական նախարար Էնվեր փաշան Հրամայած էր, որ աշխատանքային բանակը ողջ մնացած Հայ զինվորներն ալ ջարդեն: 10—12 Հայեր գատելով Հաճաքեցին Խանտեքի պոզոտային վրա խոն մը: Մեր արհեստանոցն ալ 10 Հոգի գացինք, 750 Հոգի Հաճաքված էինք: Մեզի երկու օրվա Համար Հաց տվին և ըսին, թէ Պոզանթի (Կիլիկիայի լեռները) գլխի երթաք զնացքի Համար փայտ կտրելու: Հանքածուխ չկար, Հանքածուխի տեղ փայտ կփառեն: Ուղեցի կտուրեն փախչիլ, Ուրֆացի չափուլ մը, ասորի՝ Իլիաս անունով, տեսավ և զիս ժառանգ: Առանձնացուցին ինծի և պահակ մը զրին քոփս, քիչ Հետո Հինգ ևս բերին քոփս: Վերջը մեզ զրկեցին Հաշիպի Պոզոտաի կայարանը, ուրիկ զնացքով պիտի երթայինք Ատանա և Պոզանթիի լեռներու անտառները: Գնացքը կետրվա ժամը մեկին մեկնած էր, մենք ուշացած էինք, պիտի սպասեինք կես զիշերվա ժամը 12-ին երթայիք զնաց-

քին: Փշտտ, տատասկտտ արտի մը մեջ մեզ նստեցուցին, որոցեզի սպասենք գիշերը մեկնելիք գնացքին: Երջադատված էինք զինչալ պահակ գինվորներով: Մեզ կառաջնորդեր Տիգրանակերտցի Տիգրան անունով սպա մը, ան ալ մեզի բարտակից էր: Իրիկուն եղամ, քամին կփչեր, մի քանի ընկերներու ըսի, թէ եկեք երթանք խնդրենք սպային, որ մեզ տանի խանը, գնացքը մեկնելի առաջ կուգանք ու կմեկնինք: Շատերը չհամաձայնեցան, անծանոթ հայեր էին: Ըսի.

— Մի քանի հոգի հետս եկեք, մի խտիք, ես կխոսիմ պետք եղածը:

Վեց հոգի եկան հետս, դացիներ Տիգրանին. խնդրեցի, ըսի, թէ՛ փոխանակ այս փուշերուն մեջ սպասելու, երթանք խան, գնացքը մեկնելի առաջ կրկին կուգանք: Սպան առանց առարկութեան համաձայնեցամ, դացիներ խտին առջև փողոցը, սպան գնաց Հայեպի բուր արհեստանոցներու տնօրեն Թախզ պելին հարցնելու: Թախզ պելը (հազարապետ) մի քանի սպաներու հետ նստած են օդի սեղանին շուրջը, կես զինով կհրամայէ՝ շուտով դարձեք կայարան: Տիգրանը եկամ տիրամ: Զինվորներու հսկողութեան տակ զույգ—զույգ շարվեցանք ու սկսանք քաշել: Պոզտային երկու կողմը մայթերուն վրա բազմութեանը կերթնեկեր: Ես ամենագերջին զույգն էի, միտքս դրած էի, ինչ գնով ալ լինի, փախչիլ, ուրիշ ճար չկար:

Ինձմե 10 հոգի առաջ զինվոր շարքեն շեղեցամ մի քայլ, կողքիս պահակը փութաց շարքի մեջ մացնելու, առիթը հարմար սեպեցի և սկստ արագ—արագ երթալ գետի ետ: Մեկը կանչեց՝ զինվոր մը փախամ: Պահակը վազեց, մտա բազմութեան մեջ, չէր կրնար կրակել: Եփոթութեան մը ինկամ զինվորներուն մեջ, և բուրն ալ սկսան փախչիլ: Մինչև փոստի շենքին հասնիլը հոգիով 50 հոգի մնացած էր 750-էն: Տիգրանը անոնց ըսած էր.— զուք ալ կորսվեցեք դացեք: Թերևս ինքն ալ դժ էր եղածն: Հետանալն հետս հանապարհին վրա սպասեցի, խուճք—խուճք փախչողները հասան ինձի, իմացտ Տիգրանին ըսածը վերջին 50 հոգիին: Արովհետև 750 հոգին 700 ավելի արհեստանոցներն բերված էին՝ 10—12-ական հոգի՝ յուրաքանչյուր արհեստանոցն, բուրին ալ ըսի.

— Վաղը կըսեք, թէ՛ ես չփախա, վերջին հիսուն հոգիի մեջ էի, և այսպես պատվիրեցեք մեր ընկերներուն, անոնք ալ իրենց ընկերներուն:

Երկու օր չգացի աշխատանոց, երբորդ օրը առտուն կանուխ դացի, որ Խալիլ էֆենտին խանին դուռը նստած նարկիլն կցաշն: Բարեկցի, ըսով.

— Երկու օր է, ու՞ր էիք:

Ըսի.



— Տենդ բռնած էր, պահպան էի, անօթի—ծարձօ՛վ, բաժակ մը ջուր տօ՛ղ չկար, եկա, որ բժշկի զրկէք ինձի:

— Լա՛վ,— ըսա՛վ,— Հապա տօ՛ն որը ինչու՞ փախար:

Ըսի.

— Ես չփախա, փոստին առջևը Հաստեք 50 Հոգի մնացեր էինք, սպան ըսա՛վ «գու՛ք ալ կորսո՞վեցեք»:

— Բոլոր եկողները այդպես կըսեն, ուրե՛մն փախչողները որո՞նք էին:

Անգամ մըն ալ Հայ և արարախոս քրիստոնյաներ, յուրաքանչյուր աշխատանոցն՝ մի քանի Հոգի, ընդամենը Հինգ Հարյուր (500) Հոգի Լալեպի պարտեզները զրկեցին պողա՛տու ծառերը կարելու՝ գնացքի Համար վաճառափայտ պատրաստելու: Պարտեզի մը մեջ տասը Հազար (10000) սերկհիլի ծառ կար, շարաթ մը Հեռա այդ ծառերուն վրա մեկ Հաս սերկհիլ չէր մնացած: 12 Հոգի էինք, մեզի բաժին ինկա՛վ Հսկա Հնամենի ընկուզենի մը սոցոցել տապալելու Համար: Կողոցիներ, երկու Հոգի սոցոցին գլուխը կնտակներ, երկու Հոգի պահակ կկենայինք Հերթով, մյուսները կզառկեին: Երբ քննիչ սպան կուգար քննելու մեր աշխատանքը, պահակները լուր կուտային, սոցոցը կաշխատեր, սպան գացածին պես սոցոցը կկենար: Անգամ մըն ալ եկա՛վ, ըսա՛վ թէ՛ այս տանյակեն ավելի լավ աշխատող չեմ տեսներ, բայց ինչու՞ այս ծառը գեռ կանգուն կմնա: Ըօրեք.— ծառին մեջը պարտու է և Հոգ քար լեցված է, սոցոցը շաշխատի: Մեզ գո՞վեց ու գնաց: Երբ տեսանք, որ աւաղը երևան պիտի ելլէ, շարաթ մը վերջ ծառը տապալելներ, կողքի բանջարանոցին մեջ, որպեսզի ընկուզեններուն Հեռ բանջարեզենն ալ Հա՛վարենք: Պարտեզին տերը՝ կին մը, եկա՛վ պուտոց, կանչեց, լսող մը չեղա՛վ, գնաց երիտասարդ տղան բերա՛վ: Սա սկսա՛վ Հայհոյանքով խոսիլ: Բանեցիներ լավ մը տփեցիներ, գնաց սպային մտա գանդատի: Տղոց ըսի.

— Տղաք, գու՛ք մի խոսիք, ես ինչ որ ըսեմ, գու՛ք վկայեցեք և Հաստատեցեք:

Սպան եկա՛վ, արարն ալ Հեռը, Հարցուց.

— Ինչու՞ ձե՛նեցիք այս երիտասարդին:

Բարեկցի և պատասխանեցի.

— Մտալ ինքնաբերաբար ինկա՛վ բանջարանոցին մեջ, մայրը եկա՛վ մեզ նախատեց, գնաց տղան բերա՛վ, տն ալ թագա՛վորեն սկսած կառավարութեան և մեզ պարտեզը զրկողին և այն Հայհոյեց, մենք ալ լավ մը ձե՛նեցինք:

Ընկերներս ալ Հաստատեցին ըսածներս: Սպան, Հեռը՝ մեկ—երկու շա՛վուշ, մտրակը քաշեց, լավ մը ձե՛նեց երիտասարդին, որը Հոգի՛վ տէրը ազատեց: Մեզ ալ ըսա՛վ.

— Լավ էք ըրեր:

Այնու մեր թով մտեցող չեզով, ազատ Համարձակ ընկույզները Հաժարեցինք, պամիլոսը, պիլոսը, սմբուկ (պալան) և այն, ինչ որ կար, Հաժարեցինք: Անկե Հետո մնացինք արհեստանոց, ծառը ի՞նչ եզով, չեմ գիտեր:

Էնպէս փառայի տված Հրամանը Հայ գինգորներու մնացած մասը խարդելու մասին չգործադրվեցավ: Այն ժամանակ տարածայնվեցավ, թէ Ազատրիայի մեներայ մը Դամասկոսի մեջ իմանալով էնպիսի Հրամանը, դիմած է Պոլսո Ազատրիական դեսպանին, որը արգելք Հանգիսացած է խարդը գործադրելու: Անգլիական բանակը Հասած է Սիրիայի Համա քաղաքը և մտեցած Հալեպին: Հալեպի արար մեծամեծներն 25 հոգի և Մարտչի Հայ բողոքական պատվելի Ահարան Երեւնյանը որպէս թարգման Հեռերին առած գացին՝ Անգլիացիները Հալեպ Հրավիրելու Համար: Մուսթաֆա Բեմալը (գերջը եզով Աթա-Քուրք) ճակատեն խուճաղաՀար Հալեպ Հասած էր և իր պարտութեան վրեժը Հալեպին առնել կուզեր, թողանդները զետեղել տվավ Հալեպի Հյուսիս-արեւմտյան բլուրներուն վրա և փոխելեւ առաջ Հալեպը սրբակծել և տվիրել կուզեր: Կարգ մը թուրք և արար մեծամեծներ գացին խնդրեցին, բանակը քաշեց ու Հեռացավ:

Առտու մը սոգորականեն շատ կանուխ գացի արհեստանոց: Ծալի էֆենտին խանին զուրը նստած նարկիլե (կլիկոսի) կըրաշիր: Բարեկցի, ըսավ.

— Ինչու՞ եկար:

Ըտի.

— Պարտականութեան կատարելու:

Ըսավ.

— Դուն ականջ չունի՞ս, անգլիացիները Հալեպի մտեցան:

— Ոչ,— ըտի:

Ըսավ.

— Եթէ Հացի կարոտ ես, սպասե Հացդ առ ու զնո, եթէ ուտելիք Հաց ունիս, զնա տունդ կամ ուր որ կը բնակիս և եթէ աշխարհը տակն ու վրա՝ եզածդ ծակեն զուրս չեկնո:

Մնաս բարով ըտի ու Հեռացա: Երկու որ Հետո արար ցեղախուճերը Հալեպ խուճեցին, բանասարկայաները ազատեցին: Հաջորդ որը շերիֆ Թեյալի կամավորները եկան և մյուս որը անգլիական 50.000 Հնգիկ ձրավորները գրավեցին Հալեպը: Հալեպի գլխավոր պողոտաները լեցվեցան թուրք գինգորներու գիտկներով, ժողովուրդը թալանեց բոլոր գինգորական աշխատանոցները, պահեստները՝ ինչ—որ պետական էր: Հայերը ազատված էին, ողջ մնացողները թաքնված ծակերն զուրս եկան:

1918 Հոկտեմբեր 26-ին գրավեցին Հայելը: Թուրքերը կեանքներն գնացի Մուսլիմիյե կայարանը: Հաջորդ օրը անգլիացիք կհետապնդէին Թրքական բանակը: Հայելն Հինգ ջիլմեթը Հյուսիս-արեւմուտք Թուրքերը ճերմակ գրոշակ պարզեցին: Ժներու մը և 25 զինվորներ երբ առաջացան գնացի գրոշակը, Թուրքեր գնդացիքի կրակ բացին: Ժներուայը և 25 զինվորները սպաննվեցան, անգլիական զբաղակառ զինները օգնութեան հասան: Թուրքեր փախան Ղաթմայի կայարանը: Անգլիացիներ հուշարձան մը կանգնեցուցին ժներուային և զինվորներու սպաննված տեղը:

1918 նոյեմբեր 11-ին զինազարգար կնքվեցաւ: Արարներ նահանջող Թուրք զինվորներուն մեծ կորուստներ պատճառեցին՝ կողքերն հարձակումներ ընելով:

Հայելի պատերազմական ատյանի նախագահ Քեմալ պեկը սատկաւ փողոցը՝ պարկի մը մեջ: Իսկ հարչուրավոր Հայեր ձերբակալող Զինել չափուշը սկսած էր մուրալ:

Մալիէ Էֆենտին և Ավետիս Կեոյոզյանյանը (Տեմիրճյան) աշխատանքի բուր գործիքները, շինված երկաթեղներ և պատրաստի երկաթները փոխադրեցին Սրվելյայի շուկան պարագ խանութները: Մեծ քանակութեամբ երկաթեղն, ամեն տեսակ գործիքներ գնեցին ամեն գնով փախող գերմաններն, Հետո Խանաքի պողոտային վրա երկաթեղնի մեծ վաճառատուն մը բացին: Մալիէ Էֆենտին ասոր հազար Թրքական Հնչուս ոսկի ստով և գնաց Մարաշ, իսկ Ավետիսը Հարչուր հազար (100.000) ոսկի տեր եղաւ, Հիվանդանալով մեռաւ, Հիմա եղբայրը տեր դարձած է այդ հարստութեան: Անոն Տաղլյան (այժմ՝ Ամերիկա) Անգլիական տեղեկատու գիտնի պետ ժներուային քով որպէս Թարգման և քարտուղար, ինձի ըսաւ.— պարագ կը պատիս, քեզի համար գործ մը կա: Լոնտոնն Ռոյթեր գործակալութեանը լուրեր կը հաղորդեր. Հինգ օրինակ կը մեքենագրեն՝ օրինակ մը անգլիական բանակի հրամանատար ժներուայ Մեք—Անգրիտին, օրինակ մը Փրանսիական բարձր դոմբերին, օրինակ մը Հայելի կուսակալին, օրինակ մը համաձայնական կառավարութեաններու Հյուստոսին, օրինակ մըն ալ ինձի: Կը Թարգմանէի, տպել կուտայի, 10-ի չափ անտեր Հայ պատանիներ ձեռքի վրա կծախեն: Մեք ալ՝ Հինգ ընկերներ և 10 պատանիներ, ապրուստի միջոց մը գտած էինք: Հետո «Տարաղիք» անունով թերթ մը հրատարակվիլ սկսաւ, ամանը<sup>33</sup> զաղբեցաւ և սկսա նույն թերթին որպէս գրաշար աշխատել մինչև 1919 փետրվար 28, որմէ Հետո թերթն ալ զաղբեցաւ Հայելի շարդին պատահաւով:

<sup>33</sup>Իճա՝ գործակալութիւնը (Յանք):

Փնտրվարի կեսին շար շուկաներ շրջան ընել սկսան: Կարգ մը իսլամ արարաններ, քրիստոնյա արարաններու (ափիլի ճիշտ՝ արարախանս քրիստոնյաներու) անդնկացուցած էին, որ զգուշ ըլլած, առտունները սուկներն ու շուրս սլլին, ջարդ տեղի պիտի ունենա և այլն: Հայեր ևս լսեցին: Հայոց առաջնորդարանը դիմեց անգլիական գինձորական Հրամանատարութեան և փաստացի անդնկութուններ Հաղորդեց: Անգլիական Հրամանատարը պատասխանեց, թէ մեր գանձած տեղը անկարելի է, որ ջարդ տեղի ունենա:

Հայեր ներկայացուած պիտի տային փնտրվարի 27 Հինգշաբթի օրը Արևնա Օրիանթալի մեջ: Լուր տարածվեցա՞յ, թէ արարաններ պիտի Հարձակին Արևնալի վրա: Տոմսերը սպառած էին: Անժիջաղես նույն իրիկունը փողոցներու անկյունը Հայ երիտասարդներ կանգնեցան և ներկայացումի եկող Հայերուն լուր տվին, որ ներկայացումը Հեռանկոված էր: Ժողովուրդը ևս դարձա՞յ և ներկայացումը տեղի չուկեցա՞յ:

Հաջորդ օրը՝ ուրբաթ առտուն, Ճումասս պազարի մեջ իրարանցում մը սկսա՞յ ժամը Գի տակները և զենքի ձայներ սկսան: Գազար դացող Հայերուն վրա Հարձակում մը սկսած էր չուկաներու մեջ, իսլամ արարաններու թաղերու ժողի Հայ սուկներու վրա Հարձակումներ եղան և ձեռք անցած Հայերը սպաննեցին, վիրավորեցին, կարգ մը սուկներ և խանութներ թալլեցին: Բացի Հայերն ուրիշ ոչ մի քրիստոնյայի կամ Հրեայի վնաս չեղա՞յ: Դաժագրութեանը կազմակերպված և կարգազրգծած էր: Ճրանսացի բարձր գոմիսերը անժիջաղես կը դիմն Անգլիական բանակի Հրամանատար Մեք—Անդրեին, թէ քաղաքին մեջ ջարդ տեղի կուկենա: Հրամանատարը կը պատասխանեն. — գինձորները նախանաչ կընեն, թեյ կը խմեն, նախանաչը վերջանալէ Հետո գինձորներ կիջեցնեն քաղաք: Բարձր գոմիսերը կը դառնա Մազուն խանը իր պաշտոնատեղին, կը տեսնեն քաւը ջարդված, մեջի ոսկիները կողոպտված և իր քարաուղարի՝ Մարաշի Արմենակ Տեր Զաքարյանի գլուխը կտրված: Գրկին կը դիմն անգլիացի Հրամանատարին, որը մի քիչ ալ ձգձգելով բանակը կիջեցնեն քաղաք, ջարդը վերջացած էր, ծրագիրը գլուխ Հանված: 56 մեռալ, 250 վիրավոր, մի քանի Հարյուր անՀայա, որոնց մեկ մասը գանվեցա՞յ, անՀայաացածները Հայտնի չեղան: Մեռալները և վիրավորները փոխադրվեցան Թիլ—էլ թաղի Հայ կաթոլիկներու դպրոցը, որ Հիվանդանոցի վերածված էր: Վիրավորները Հարցաքննեցին, թէ որոնք վիրավորեցին: Մի քանի անգլիներն գիտցող Հայեր կանչեցին և Հրամայեցին, որ զրն, թէ որտար միլիցիաներ և գինձորներ վիրավորեցին զիրենք: Աքաը կազմվեցա՞յ և Հեռագրվեցա՞յ Լոնտոն և Փարիզ՝ Հաշտութեան ժողովին: Հաջորդ օրը Են-

րիՖ Զեյսալ ներկայացավ Հաշտության ժողովին՝ Սուրբայի անկախությունը պահանջելու: Ժողովին նախագահը՝ ձորն Քլեմանտ, Հեռագիրը ցույց կուտա և կրսե:

— Հայեպի մեջ Հայերու Զարգ տեղի ունեցած է, դուք արժանի չէք անկախության և մեզ քաղաքակրթելու համար հովանավոր պետություն մը պետք է:

Անգլիացիներ արարներուն խոստումներ աված էին: ԵրբիՖ Զեյսալին Սուրբայի անկախությունը խոստացած էին, որը թագավոր պետի ըլլար Սուրբայի: Միաժամանակ ֆրանսացիներուն ևս խոստացած և համաձայնած էին, որ Լիբանանը և Սուրբան Ծրանսական հովանավորության տակ պետի գրովին, ինչոր Հետագային եղավ: Նժարին ֆրանսական կողմը ծանր եկավ:

Մյուս կողմին որպէս Զարգարար 400 արարներ մերթապաղեցան և զրկեցան ու՞ր, Հայտնի չեղավ, անոնք ալ անհայտ կորսեցան: Իսկ վնասի ենթարկեցած Հայեր վնասուց հատուցում պահանջեցին՝ մեկ վնասողը 50—100 զրկլ ավավ: Անգլիացիներ արարներին գանձեցին և յուրաքանչյուրի վնասին կեսը վնարեցին, իսկ երբ մնացած կեսին համար զիմեցին, պատասխանեցին:

— Արդեն մեղի վնարվածը մեր վնասի ասանապատիկեն ավելի է, այդքանը բավական է: Մնացյալ կեան ալ անգլիացիներ յուրացուցին: Հայի արյունը սակարկության զրկած էր, ՀՕգուտ մեծ պետություններու շահին: Վայ տկարներուն:

ԵրբիՖ Զեյսալ Փորիդի Հաշտության ժողովն մեծուուայն վերագարձով Հայեպ: Իսլամ և քրիստոնյա արարներ, Հայեր, բոլորը հովաքեց արարներու մզկիթը՝ Զարարիա Շամիսի և պատմեց խաղը ու եղելությունը, պախարակեց իսլամ արարները հրապարակավ և ըստով: «Ըի քանի Հայ սպաննելով մեր անկախությունը կորսնցուցիր», անիժեց ու գնաց Պաղատա, եղավ Իրագի թագավոր: Ֆրանսացիք գրաված էին Կիլիկիան: Անգլիացիք արարական երկիրները և Մարաշը, Այնթապը, Պերսեիկը, Ուրֆան, Հեռագային այս քաղաքները և Լիբանանն ու Սուրբան հանձնեցին ֆրանսացիներուն և պարսկեցին Կիլիկիան: Ժամանակ մը Հայեպի մեջ քառորդ միլիոն Հայեր հովաքեցած էին: Մարաշի, Այնթապի, Նիդիպի, Պերսեիկի և Ուրֆայի տարագրված Հայերու վերապրողները վերագարձան իրենց քաղաքները:

Մհրան Պալապանյան և Նուրիան Ղազարյան եկան և ինձի հրավիրեցին Պերսեիկի դպրոցը պաշտոնավարելու: Համաձայնեցանք և կրկին գացի Պերսեիկ՝ դպրոցի չորս պատերը կային միայն: Դիմեցինք թուրք

կառավարութեան, որ մեր գոյրոցն գրաված գրասեղանները և այլն վերադարձեն: Պերեճիկի դայմագամը անձամբ զիս տարա՛վ թուրքերու գոյրոցը և իրենց գոյրոցի սեղանները և այլն ինչ—որ պետք էր, առինք ու բերինք: Բացվեցա՛մ գոյրոցը 1919 ապրիլի վերջը:

Անգլիացի հրամանատար Հազարապետ Վաթն, ճշելով թուրք կառավարութեանը, սգնեց մեզ, քուրդերու և թուրքերու մտա գանձող Հայ կիները, աղջիկները ու տղաքը Հավաքեցինք՝ Հինգ Հազար Հայորդիներ: Բացվեցա՛մ որբանոց մը, որը տեսակ մը կայան էր, ուրկն Հավաքվածները կը զրկեինք Հաշիգի Ազգային Միութեան:

Օր մը երեկոյան ժամը Տ-ին տուն եկա, ըսին թէ թուրքեր քարկոծեցին որբանոցը և քար մը զրկա՛մ մեր հարեան կնոջ մը գլխին և ուռած է: Հայոց թաղին մեջ կար անգլիական զինվորական պահականոց մը՝ Հնդիկ զինվորներ: Անմիջապես դացի և Հնդիկ սերժանտն խնդրեցի, որ եղելութեանը Հեռախոսով Հայանն Վաթնին: Սերժանտը ըսա՛մ.

— Դուն Հայանն:

Պատահածը Հայանեցի Վաթնին, ըսա՛մ.

— Կինը Հոս բերեց:

Կինը, ամուսինը, Հայոց մուխթարը և ես գացինք Վաթնին մտա: Քրիստոնյա Հնդիկ Հարյուրապետ բժիշկ մը քննեց, զեղեց և կապեց, ըսա՛մ.

— Օդ չառնն:

Հազարապետը ըսա՛մ.

— Վաղը ժամը չորսին Հոս կուգաս:

Նախքան Հեռախոսելը անգլիական բանակի մեջ ծառայող և թարգման էտրիներցի Տիրանի Հեռ պարխուպն (Հայոց թաղի շուրջը քաղաքին Հին պարխուպը և աշտարակները անվնաս կմնային) իջանք ետևի թրքական պարտեզները, տղամարդիկ փախան և թուրք կիներ կաղաչեին ու կըսեին ժայտեղեն քարկոծող չեղա՛մ: Տիրանը մի քանի ձեռք տարհանակ պարպեց ու ես եկանք:

Հաշորդ որը ժամը Թ-ին գացի անգլիական բանակատեղին Վաթնի մտա, Պերեճիկի դայմագամը Մյունիք պեկ (1895-ին Էրզրումը շարժել տվող փաշայի աղան) Վաթնը և երկու Հայ թարգմանները Մալաթիացի Գրիգոր Ասլանյան և Տիրան (երկուքն ալ Ամերիկային կամավոր եկած) սանդուխներն կիջնին վար: Վաթնը ըսա՛մ.

— Ինչու՞ ուշացար:

Ըսի.

— Ժամը ճիշտ չորսն է:

— Ինչ—որ է, լմնցա՛մ,— ըսա՛մ:

Երկու թարգմանները պատմեցին Վաթսի սպառնալիքները և արմատեալները գոյամաղամին: Վերադառնալու ժամանակ տեսա՛ գոյամաղամը նանապարհին վրա կապան: Ըսա՛մ.

— Ինչու՞ մեզի չեկար և անգլիացիներուն բողոքեցիր, մենք պետք եղած պատի կուտայինք քարկոծողներուն:

Ըսի.

— Դուք այլևս անգոր էք և ազդեցութիւն չունիք ժողովուրդին վրա: Կրկին ըսա՛մ.

— Նախ դիմեցեք մեզի ուն խնդրի առթի՛վ, եթէ անհետեանք մնաց, այն առնն դիմեցեք անգլիացիներուն:

Տուն եկա, կիները սկսան ծիծաղել:

— Ի՞նչ կա,— ըսի,— ինչու՞ կծիծաղէք:

Ըսին, թէ որքանոցը քարկոծող չեղա՛մ, մենք իբրբայ և՛ես կատակելու և քաշքշվելու ժամանակ Ուրաննային գլուխը պատին դպա՛մ և ուռեցա՛մ: Ըսի.

— Գոնն մի տարածայնեք և գաղտնի պահեցե՛ք: Այդպես ալ եղա՛մ:

Հաջորդ օրը ժանտարմըրի չբամանատար Հարյուրապետ Քենան պեկը ժանտարմա մը զրկած էր և ինծի իբ մտա կը կանչէր: Գացի կառավարութեան շենքը, շափուշ մը դիմաժողոցի դիւ և ըսա՛մ, որ Քենան պեկ տունն է և անհանդիստ է, ժանտարմա մը ընկերացնեմ քեզի, տունը գացե՛ք: Երթալու ժամանակ շուկա հանդիպեցա և Ազգ. Միութեան առնեապետ Տիգրան Նահապետյանին Հայանեցի և ըսի, թէ ինձմն մի քանի բողոք և՛ես երկու հոգի եկեք Քենան պեկի տունը հիմադառեսի պատրմակով ու գացի՛նք (ես տուն կանչելը զաժողութիւն մը կենթադրեի): Քենան պեկը ամուրի էր: Ժանտարման դուռը զարկա՛մ, պառա՛մ Հայ կին մը եկա՛մ դուռը: Ժանտարման ետ զարմա՛մ զնայ: Կոնջ Հարցուցի.

— Ներսը ո՞՛վ կա:

Ըսա՛մ.

— Քենան պեկը մինակ է և պառկած է:

Ըսի.

— Ինձմն առաջ ուն մարդ եկա՞՛մ այս տունը:

— Ոչ,— ըսա՛մ:

Ներս գացի, Քենան պեկը մահանկալին մեջ էր, բարեկցի, նստա: Ըսա՛մ.

— Գիտե՞ս ինչու Համար կանչեցի: Երեկ Տիրանին և՛ես իջեր էք պարտեղները և ա՛լ ու մախ ասրեանակով կրակեր էք, մեր կրօնքին, Մուհամ-

մտայն և այլն Հայհոյեր էք, պարտիզոզաններու կողմն Հանրագրութիուն մը կա՝ բողոքոզ քու մասին: Ահա՛մասիկ Հանրագրութիւնը, զասարան չպիտի տամ, պիտի պատուեմ, միայն կիսեղրեմ, որ անպիտոբ բաներ չպատահին:

Ե՛վ պատուեց կտոր—կտոր ըբամ: Նույն միջոցին Տիգրանն ու Հայոց մուխթարը եկան: Բույրիս Հյուրասիրեց և ճանաչարհ զբամ, շատ քաղաքավարի կերպով:

Մի տարի Հեռո անդլիացիներ քաշվեցան և անոնց տեղ Փրանսիացիներ եկան: Անգլիացիներ Պերենիկի մեջ ունեին Հազար զինվոր, մեծ քանակությամբ ազամամբերք և զենքի բոլոր տեսակները: Ֆրանսացիներ դալն առաջ 180 զինվոր միայն թողուցին և ըսին Փրանսացիներուն՝ մենք այսքան զինվորներով կառավարեցինք: Ֆրանսացիներ 180 զինվորն ավելի չունեցան Պերենիկի մեջ: Նույնը ըրին անգլիացիներ նաև Մարաշի, Այնթապի, Ուրֆայի և այլ տեղերու մեջ: Թուրքեր տեղյակ էին այս վիճակին: Որբերու Հաճաքման գործն ալ օրեօր թուլացուցին Փրանսացիները, և եկավ ժամանակ մը, որ թուրքեր զլուխ բարձրացուցին:

1920-ին Կիլիկիայեն սկսյալ Այնթապ, Մարաշ, Պերենիկ, Ուրֆա կռիվ սկսան Փրանսացիներուն դեմ: Բուրդեր եկան մեզի լուր ավին, թէ՛ չորեքշաբթի քստ թրքաց ժամը Գին Հարձակում պիտի գործվի Փրանսացիներուն դրա: Նախորդ կիրակի որը բժիշկ Ետայի Փոլատյանի Հեռ գացինք տեղեկացուցինք Պերենիկի Փրանսական զորքերու Հրամանատարին (որը խելացի, զորգացած և կարող զինվորական մըն էր) լեյտենանա Ծորենի. սա չՀաճախաց կամ չՀաճատալ մնացուց և, սակայն, բոլոր նախագրուշական միջոցերը և պատրաստութիւնները տեսավ: Ֆրանսացիները եմբրապի եզերքը պարտեղներու մեջ թրքական քարաշեն տուներուն մեջ կգանվին, ամեն կողմը լավ խրամատներ պատրաստեր էին: Որոշյալ որը չորեքշաբթի, ժամը Գին թուրքեր կրակ բացին մոտակա Եշիլ—տաղի բարձունքներեն և Հարձակումը, ավելի երշտ, կռիվը սկսավ: Ֆրանսացիներ գնդացիներնով պատասխանեցին: Ըլ թուրքերը և ոչ ալ Փրանսացիք թնդանոթ չունեին: Ֆրանսացիք միայն Ե.Ե. սուլթեր ունեին: Հայերու և Փրանսացիներու միջև կային թուրք թաղերը, իրարու օգնելու Հնարավորութիւն չուներնք, իրենք և մենք պաշարված էինք: Մենք ևս մեր կարելի պատրաստութիւնը տեսած էինք, մեր կյանքը սուզ ծախելու և շտաստակ չլինելու Համար: Բուրդեր մեզի զենք և փամփուշտ Հայթայթած էին: Երկու անգամ մեր զրա Հարձակում եղավ, թուրք կառավարութիւնը և քաղաքի թուրք մեծամեծները արգիլեցին, երկուտակ կրակ չբացվեցավ: Կռիվը սկսելն երկու օր Հեռո թուրք զինվորական Հրամանատարը,



գայմագամը, ժանտարմայի Հրամանատարը և քաղաքի թուրք մեծամեծերեն մի քանի ազդեցիկ մարզիկ եկան Հայոց թուրք Տիգրան Մահապալայի տունը, կանչեցին Հայոց ղեկավար մարզիկը և Հայտարարեցին. « Թուրք մի զսխնեաց, մենք մեզի դեմ ունե թշնամություն չունինք, միայն թէ թուրք ժողովուրդին բերանը գոցելու համար, ինչքան որ կրնաք, մաս մը դրամ հավաքեցեք բերեք գուժվի միլիոնին (Ազգային ուժ) և ըսեք թէ՛ «մենք՝ Հայերս, Հոգիով, մարմնով, նյութապես և բարոյապես թուրքերու հետ ենք, ընդունեցեք մեր նզիրը», այնուհետև բացեք մեր խանութները, հանգիստ և իսպաղ մեր գործին նայեցեք»: Երկու օր հետը 100 մեհրա փող հավաքվեցավ: 3 Հոգի տարին փողը հանձնեցին Գուժվի միլիոնին, կրկնելով այն, ինչ որ իրենք թելադրած էին: Ետքով մը հետո գայմագամը Անգարայի մեջ ազված թուրքերեն թերթ մը զրկեց մեզի, ուր կար Հաղորդագրություն մը. «Գերեճիկի Հայերը 100 սամախյան հնչուն օսկի նզիրած են Գուժվի միլիոնին և Հոգիով, մարմնով, նյութապես և բարոյապես թուրքերու հետ են, Փրանսացիներու դեմ»: Թուրքերը, կարգալով այս լուրը, հանդարակցան: Կառավարությունը պահեց իր խոստումը և Հայերը ամբողջ կոխվի տնտեսության ընթացքին չեղաք և հանգիստ մնացին: Սակայն չորսուկես ամիս պաշարված ու միշտ կազմ ու պատրաստ էինք մեր զիջքերու մեջ: Տարիքոտ մարզիկ խանութները կրանային, պատանինք չուկա կերթային գնումներ կատարելու համար, երիտասարդներ ժամանակ—ժամանակ գոխնիփոխ չուկա կերթային պարզապես երևնալու համար: Հաղորդակցության միջոց չունեին Փրանսացիք: Նրզիպցի Հայ երիտասարդ մը թուրքի տարագով և գլուխը անմակ փաթթած նամակներ կտաներ Ճարապուս և պատասխանը կրերեր Փրանսացիներուն, այդ նամակաբերին վրա զոհվեցավ: Հայ երկաթագործ վարպետ մը՝ չիլիեկի Սարգիսը, կանչեցին որ թնդանոթ մը շինե: Թիֆեկի Հաստբուն մը ծակեցին, մեջը վառոդ լեցուցին և կտր երկաթե գնդակ մըն ալ գետեղեցին ու կրակեցին: Գայթյունը գորավոր էր, մայրը՝ իսկական թնդանոթի, և սակայն առաջին կրակոցին թնդանոթը ճեղքվեցավ ու փնացավ: Երկրորդ մը պատրաստեցին, վրան երկաթ թելեր փաթթեցին ու սկսան կրակել: Ճրանսացիք սարսափած էին, բայց սուսերը իրենց չէին հասներ: Զորավոր զնդացիքի կրակ մը բացին և 12 սեամորթ կույր զինվորներ սուսերով և սվիններով Հարձակեցան թնդանոթին վրա և զերի վերցուցին: Այդ թնդանոթը Հետագային քաշվելու ժամանակ միասին տարին Ճրանսա: Թուրքերը քուրդերը առաջ կըշին: Գերեճիկի չուրջը գանձող քուրդ ցեղախումբերը եկան ժամակցեցյան կոխվներուն: Մահան պեկի երկու տղաքը՝ Մուսթաֆա և Հրրչո, որոնք թրքոֆիլ էին և Գասրա-

զի ֆրանսացիներու կողմնակից, թուրք կառավարութիւնը զինեց բաւորին: Չորս ու կես ամիս տեսչ այս կառիփներու ընթացքին ոչ մեկ գուշ երկուտանք, միայն ֆրանսացի սերժան մը անզգուշութիւնով տուտու մը եփրատի եզերքը լվացվելէ Հետ մազերը սանաւած միջոցին զարնվեցաւ:

Գերեհիկի և Ուրֆայի մէջտեղ կա Սուրուն գյուղաքաղաքը: Հոն ես կար 80 սեամորթ զինձորներ՝ Հակոբ անունով Հայ սերժանի մը հրամանատարութեան տակ: Սա ես պաշտօրովս լինելով, պաշարման շղթան պատուեց և զնպայիրներու օգնութիւնով Հասով Գերեհիկ, միացաւ Գերեհիկի զինձորներուն, առանց կորուստի, եղաւ 260 ֆրանսական զինձոր: Կովի սկզբնավորութեան օրերուն Քալֆեթի (Համկլլա) շուրջի էՀնէ Հայ գյուղի վրա Հարձակեցան թուրքերը: Անզնե ժողովուրդն 150 սղամարդիկ եփրատի Հոսանքն ի վար լողալով եկան Հասան Գերեհիկ, իսկ գյուղի մնացալ մասը՝ կիներ ու երեխաներ, ամբողջովին Հարզվեցան: 150 Հոգին տեղավորվեցան զանազան տուներ՝ իրենց ազգականներու և ծանոթներու մոտ: Գեհնանքի Դաղիթ Աղամյան Գերեհիկ եկաւ Հայ բարեգործական Ընդհանուր Միութեան կողմն մասնակցու զ մը կազմելու Համար: Հին ծանոթ մըն էր և Ասիականի զպրոքը կը սովորեր (այժմ՝ Ամերիկա): Ենզրեց ինձնե, որ օգնեմ իրեն: Մասնակցու զը կազմվեցաւ, ես ալ առնեալալիրն էի: Բազմական կոկիկ գումար մը գոյացած էր, առաջարկեցի այդ գումարը բաժնել էՀնէնէն եկողներու: Մասնակցու զի անգամները վարանեցան, բար:

— Ի՞մ պատասխանատուութեան տակ բաժնեք, եթե ապագային կեդրոնը չընդունեց, որպէս ի՞մ պարտքը, ես կ'զնարեմ:

Եւ բաժնեցինք: Հար:

— Ասկէ լավ նպատակի մը չախտի ծառայե այս գումարը:

Ապագային երբ Հալիս գացինք, ներկայացա Գարոնին՝ Արմենակ Մալուսյան, կիխք և այլն գույքերը Հանձնեցի, զբամիս ինչ նպատակի գործածված ըլլալը Հայանեցի, ըսաւ:

— Եսա լավ էք ըրեր:

Կախիք չորսուկէս ամիս շարունակվելէ Հետս Ռոլանդ Նորմանը 4500 զինձորներով և թնդանոթներով եփրատի մախ կողմնէն Հարձակեցաւ Գերեհիկի վրա: Ծանապարհին Մեղրեի գաշտ կոչված տեղը թուրքեր խրամներ պատրաստած էին զիմազրելու Համար: Գասրավիս իր քուրդերով մտաւ այդ խրամները: Երբ ֆրանսացիք մտեցան խրամներուն, առանց կոզիլու Հանձնեց ֆրանսացիներուն ու ինք զարձաւ եփրատի եզերքը՝ այն նեղ նանապարհը, ուրկն թուրքեր փախուտս կուտային: Եսա մը նախատական արարքներն Հետս կողոպտեցին փախչող թուրքերը և քաշվե-

ցան անցան ֆրանսացիներու կողմը: Պերենիկը ամբողջութամբ պարզ-վեցաւ, ոչ մի թուրք չմնաց, կիններով, երեխաներով դաշին ջրգական գլուզերը, շարաք մը մնացին և յուրաքանչյուր ախոտի 10 ոսկի վարձք վճարեցին:

Թուրքեր և ֆրանսացիներ Համաձայնութեան եկան, կոխիչը դադարեցաւ, պաշարումը վերջացաւ: Կարգ մը Հայ երիտասարդներ ուզեցին թուրքերու տուները թալանել, արգիլեցինք, նկատի ունենալով սպառան: Թուրքեր վերադարձան իրենց տուները և դժ մնացին մեզմէ:

Եսա շանցած Ծրանքիին Պուլլոն Պոլիս եկաւ (ֆրանսացի թրջասերներու պարագլուխը և քաֆիթալիսաններու կողմնակիցը) և թուրքերու Հետ Համաձայնութեան կնքեց: Ծրանսացիներ, ըստ այդ Համաձայնութեան, քաշվեցան Կիլիկիայէն, Մարաշէն (Մարաշի մեջ կրկին Հայերը ջարդվեցան): Այնթապը զիմադրեց և լավ դաս ավին թուրքերուն, Ուրֆան ևս զիմադրեց: Բայց ֆրանսացիներ քաշվելու ժամանակ Հայեր խորհուրդ ավին, սր բոց դաշտի ճանապարհով երթան: Հրամանատար Մամուրը չընդունեց և Ենպէրեի կիրճի ճանապարհը ըմարեց: Թուրքեր նախագես կիրճը պաշարած ըլլալով, 600 ֆրանսացի զինվոր ջարդեցին, Մամուրին զլուխը կտրեցին և ձողի մը վրա անցուցած տարին Ուրֆա, իսկ իսլամ Ալթերիացի զինվորներ 12 թնդանոթով եկան Եփրատի աջ եզերքը, թնդանոթները ուղղեցին Պերենիկի վրա ու այդ սպանուալիքով ֆրանսացի զինվորները անցան Եփրատի ժուռ կողմը, ուղղամթերքի մեկ մասն ալ թափեցին Եփրատը, սրուն մեծ մասը անգլիացիներ թողած էին ֆրանսացիներուն, անցան Սուրիա:

Մենք տարի մըն ալ մնացինք Մուսթաֆա-Քեմալի իշխանութեան տակ: Հայերուն ոեւ զմաս չՀասցուցին, բայց լավ աչքով ալ չէին նայեր: Կարճ ժամանակ մը Հետո Հայերէն զինվոր պահանջեցին: Մի քանի Հոգի զինվոր առին, անոնց ալ ձինրու ախոտները մարքել կուտային: Է՛հնեղի ջարդէն ազատված փոխառականները մաս առ մաս անցան Սուրիա: Հետզհետե զինվորական տարիք ունեցողներն ալ ամբողջովին անցան Սուրիա, մնացին տարիքավորներն ու պատանիներ:

Պերենիկի գալմագամը՝ Մյունիք պեկ, պաշտոնի բորձրացում ունեցաւ և եղաւ Ուրֆայի մյուսթեարըք: Տեղը եկաւ Մուսթաֆա-Քեմալի բարեկամներէն անառչ ու կոշա մեկը՝ սուլթան Համիտի ժամանակէն մնացած կուպիս թուրք մը: Պուլիի փեար ականքներն ու Հոնքերը կծածկելը, բերանը Հայհոյանքով կրացվեր, ամեն մարդու կանակը տված Մուսթաֆա-Քեմալին բռնապետի մը նման կվարվեր բոլորի Հետ: Օր մը զիս կանչեց և Հարցուց, թէ՛՝ ձեր դպրոցը վազերացվա՞ծ է, փաստաթուղթերը բեր: Ըսի.

— Մեր դպրոցը վաղեմի դպրոց մըն է. փաստաթուղթերը կորսված են տարագրութեան ժամանակ:

Ըստ՛վ.

— Ուրեմն պետք է վավերացնել տաք. ահա ձեզի ծրագիր—օրինագիրք մը (իթիբիհատի կողմն պատրաստված), այս ծրագրին համապատասխան կպատրաստեք, կբերեք, որ Ուրֆա զրկեմ վավերացվելու համար:

Գպրոցի ծրագիրը, շենքին հատակադիրքը և այլն, բոլոր մանրամասնութիւնները պատրաստելն հետո տարի ցույց տվի: Նայեցով, ըստ՛վ.

— Եկեքք անբախտկան է և առողջապահական չէ, չեմ ընդունիր, քեզի ամիս մը պայմանաժամ. պատրաստե և բեր, ապա թէ ոչ՝ դպրոցը կփակեմ:

Ըսի.

— Ուրիշ կարելիութիւն չունինք:

— Զեմ գիտեր,— ըստ՛վ,— օրենքին համաձայն պետք է ըլլան:

Իսկապես, շենքը հին էր, պետք էր հիմքին նորոգվեր, բայց ընդարձակ տեղ չկար: Ոչ պյուտեն ունեինք, ոչ ալ արամադրութիւն: Ամիս մը հետո տարի նույնը, ըսի.

— Հնարավորութիւն չունինք:

— Զեմ ընդունեք և դպրոցը կփակեմ,— ըստ՛վ:

Մի քանի օր հետո գայմագամը, գինձորական հազարուպետ մը, ժանտարմըրիի հրամանատարը, կրթական տնօրէնը, քաղաքային վարչութեան երկու հոգի, թագապետարանին երկու հոգի, թուրք երևելիներենէ չարս հոգի դպրոց եկան: Գայմագամը ըստ՛վ.

— Գիտե՞ս ինչու եկած ենք:

— Ոչ,— ըսի:

— Եկած ենք դպրոցը գոցելու:

Աշակերտներուն ըսի.

— Գատրաստվեցեք, բակը ելեք, շարվեցեք և կեցեք:

Անմիջապես աշակերտները բակը եկան, շարվեցան: Ներս մտա, ըսի.

— Դուք ալ դուրս հրամեցեք:

— Ի՞նչ կա որ,— ըսին:

Ըսի, որ դուռը պիտի դոցեմ, բանային ձեզի պիտի հանձնեմ: Իրարու երես նայեցան, կրթական տնօրէնը ըստ՛վ.

— Քեզի ամիս մը ևս պայմանաժամ, ուրիշ հարմար չենք մը գտեք և ներկայացուցեք,— ու գացին:

Երկու օր հետո Ուրֆայի մյուսթեսարըֆը Գերենիկ եկտ՛վ: Գացի քովը, եղելութիւնը պատեցի և ինչդրեցի, որ մեզի օժանդակութիւն մը ցույց տա: Ըստ՛վ.

—Վազը առաու ժամը Տ-ին դայմագամին քովը պիտի ըլլամ, Հոն եկուր և ինծի ըստ:

Հաջորդ օրը ճիշտ ժամը Տ-ին դացի դայմագամին քով, որ մյուսթեսարըֆը Հոն էր, պատմեցի և ինչդրեցի, որ մեզի գյուրություն մը ցույց տա: Մյուսթեսարըֆը ըստով:

— Դուն թուղթերը ընր դայմագամ պեկին Հանձնե, Ուրֆա թող զրկե, ևս վազներացնել կուտամ:

Ենորհակալություն Հայտնեցի և գուրս կա: Մյուսթեսարըֆը դնաց Ուրֆա: Երկու օր Հետո թուղթերը առի, դացի դայմագամին Հանձնեցի: Գայմագամը ծալլապարիկ նստած էր գետինը բազմոցի մը վրա, առավ թուղթերը, բազմոցը դարձուց, թուղթերը տակը զրավ և ըստով:

— Այս թուղթերը Հոս պիտի մնան, Ուրֆա պիտի չերթնամ, իսկ այդ զպրոցն ալ բաց պիտի մնա:

Ետևը, պատին մեջ փոքրիկ պահարան մը կար, բացտով, օգիտով լեցուն երեք քիչոնոց շիշ մը Հանեց, փոքրիկ բաժակ մը լեցուց և խմեց (գիտնու էր և ամեն օր այդ շիշը պետք է գատարկեր): Ըսի:

— Ձեր սովորությունը այդպես է:

— Ի՞նչ կա որ, — ըստով:

Ըսի.— դուք Հյուրերը Հյուրասիրելու սովորություն չունիք:

Ըստով:

— Գիտն՞ա:

— Այո, — ըսի: Անմիջապես բաժակը լեցուց, տվազ ինծի, «Ձեր կենացը» ըսի ու խմեցի: Ըստով:

— Ասկե վերջ մենք ընկեր ենք, գնա զպրոցդ շարունակ և եթէ իմ օժանդակության պետք ունենաս, դիմե ինծի և կօգնեմ ձեզի:

Ենորհակալություն Հայտնեցի ու մեկնեցա: Անկե ի վեր այլևս իրարու երես չենք տեսած:

Սուրբայի սահմանը մտա էր, Գազաստի երկաթուղին սահման էր և սաքով վեց ժամ Հեռավորություն ուներ: Հայեր կամաց-կամաց քաշվիլ սկսան: Դպրոցը ինքնաբերաբար պիտի ղոցվեր:

Երկու քուրդ և Հայ մը Ազեճի Սարգիս անունով՝ երեքն ալ գիտնած. Հարյուր մեներտ ավի, մեզ ծարապուս Հասցնելու Համար: Գիշեր մը եկան, Սարգիսը առավ կինս, երկու երեխաներս, Հորեղբորս տղան՝ 12 տարեկան (Ատիամանցի ծանոթ քուրդի մը երկու սուկի վհարեցի, գնաց Ատիամանեն բերազ), ուրիշ պատանի մը Գարեգին Քեվանյան առավ ու քաղաքեն գուրս տարազ: Ես ալ երկու քուրդերուն Հետ, երեք Հատ էջերով ինչ—որ կարելի էր վերցնել՝ առինք ու կերթայինք Սարգիսի մտա:

Պարտեզներու նեղ ճանապարհեն բարձրանալու ժամանակ թուրք պարտեզական մը, որ պարտեզին մեջ կրնանար, էշերու ոտքին ձայնը ականջով արթնացաւ. «Աս ո՞վ էք, ու՞ր կերթաք»,— Հարցուց: «Բուրգերուն ըսի՞ գուք մի պատասխանէք: Ըսի. «գժտիք կերթանք, հրաման երթանք»: «Աս ի՞նչ տեսակ պատասխան է»,— ըսով ու գլուխը բարձին զբաժնի ու պահեցաւ: Գացինք, Սարգիսը գտանք որսչգած տեղը, շարունակեցինք ճանապարհը զիտաճոր ճանապարհէն դուրս՝ ձորերու մէջէն: Փշոտ խաղան տեղերե, տեղ մը Հասանք, ուր էշերը ձորը չէին կրնար իջնել. զրկեցինք և մեկիկ—մեկիկ իջեցուցինք ձորը: Արեւածագին ազդրուրի մը քով նախահաշի նստեցանք, Հեռուն երկու զինյալ մարդիկ դեպի մեզ կուգային: Եկան Հասան, ծանօթ քուրդեր էին մեզ առաջնորդող քուրդերուն, ըսին.— ճանապարհին վրա ոչ որ չկա: Հասանք սահմանը, տեցանք երկաթգիծը ու Հանկարծ 25 սահմանապահ թուրք ձիաճորներ եկան և ըսին.

— Ովքե՞ր էք, ու՞ր կերթաք, վերգա ունի՞ք:

— Այո,— ըսինք, — բայց արդեն սահմանը անցած ենք, վերգա ցույց ապու հարկ չկա:

Իջանք Եփրատի եզերքը, լուր զրկեցինք նախակ եկամ ու անցուց ձարապուս: Մի քանի որ հետո երկաթուղիով գացինք Հալեպ՝ 1922 թվականի Հունիսին:

Փրանսացիներ թուրքերու հետ Համաձայնութիւն կնքեցին և դատարկեցին Կիլիկիան ու մի քանի թրքական քաղաքներ: Ամեն կողմն Հայք գաղթեցին Լիբանան և Սուրիա, Հալեպը լեցեցաւ Հայ գաղթականներով, գործ ճարելը շատ դժգոյս էր: Ամերիկյան Բլիթթը Կիլիկիան Հայ գաղթականներու Համար զպրոց մը բացած էր, որուն տնօրէնը Աբրահամ Սերայտարյան՝ իմ նախկին ուսուցիչն էր: Դիմեցի, ըսով.

— Հոգաբարձութիւն առննապետը Լվի Հեքիմյանն է, տնօր դիմե:

Լվին ինծի անծանօթ էր: Գացի նախկին բարեկամս Շեյխ Մուհամմա—Սայիտ—Թերմիզիին՝ գործ մը խնդրելու Համար: Ըսով.

— Հայ դպրոցներուն մեջ գործ մը չես կրնար գտնել:

Ըսի.

— Գործ կա, բայց մարդիկը անծանօթ են ինծի, ամեն մարդ իր ծանօթները կտեղափոխէ: Ըսով.— ես շատ Հայ բարեկամներ ունիմ, կրնամ օգնել քեզի: Ըսի.— Լվի Հեքիմյանին ծանօթ էք:

— Օ, շատ լավ բարեկամս է, ինքն ալ, Հայրն ալ:

Արարեբն երկտող մը գրեց, որ զիս դպրոցը ընդունի: Լվին Ամերիկահաղատակ էր: Հաջորդ աստու կանուխ գացի Լվիենց ասուը, Հայրն ալ ասուն էր, նոր նախահաշ պիտի ընէին, երկտող տվի, ըսի.— Շեյխը տվավ:

Ոչ իրենք, ոչ ալ եւ արարերէն չէինք գիտեր, Լէֆն ըսա՛մ. — Դուն բողանգահաւթյունը գիտես, ի՞նչ բանի համար է:

Ըսի.— դպրոցի համար է:

Ըսա՛մ.— Ժամ մը վերջը դպրոց եկու՛ր, հոգարարութիւնը ժողով ունի, երեք քուսուցչի պէտք ունինք, գիմու՛մ մը գրե հոգարարութիւն, աւուր անօրենին:

Գացի դպրոց, գիմու՛մը գրեցի, ավի անօրենին, ըսա՛մ.— Հոս կեցիր:

Ժողովը սկսա՛մ, գիմու՛մս կարդացին, ինծի կանչեցին և որոշեցին ընդունիլ: Տնօրենը անմիջապէս ինծի տարա՛մ և դասարան մը հանձնեց: Հաջորդ ամառը անապատեն նոր եկած երեխաներու համար ամառնային դպրոց մը բացվեցա՛մ նախապատրաստութիւն համար, անօրենը ինծի դասարան մը հանձնեց, որուն մեջ տասը տարեկանէն մինչև 30 տարեկան տղաք և աղջիկներ կային: Ըսա՛մ.

— Բնգմե հարմարը չկա, այս դասարանը դուն պիտի կառավարես:

7-8 հաս 28-30 տարեկան տղաք ու աղջիկներ կային: Տեսա, որ փոխանակ սովորելու, սիրարանութիւն ընել կուզեն: Ներսես քահանա Պապայանը (խնամակալութիւն անգամ էր) եկա՛մ իմ դասարանը, ըսի.

— Տեր Հայր, այս մի քանի տղաքն ու աղջիկները պսակե, խեղճերը թող ազատվին, ասանք չեն կրնար սովորիլ:

Այդ տարիքով մեծերը զրկեցինք իրենց տուները:

Հաջորդ երկու տարիները պաշտոնավարեցի Ազգ. Հայկազյան վարժարանը: Մենայի՛ն մեջ 120 ընտանիք Հայեր հա՛մարված էին, Գերեճիկցիներ, Սասունցիներ և գանձան քաղաքացիներ: Հայեր դպրոցի մը կարիքը ունեն և սակայն անզվույն որտարական (պետական) դպրոցի անօրենը արգելք հանդիսացած էր, Հալեպի Հայոց առաջնորդ Արտավազդ կախկուզոս Սյուրմեյանը կանչեց և ըսա՛մ.

— Մենեպի՛ն պէտք է երթնա, դպրոց մը բանաս և զավերացնել տաս:

Գացի, դպրոցը բացի, Բարեգործական Միութիւնը գրասեղաններ տրամադրեց: Նախ ֆրանսական իշխանութիւնը, ապա արաբական կառավարութիւնը պաշտոնապէս զավերացուցին: Արաբական դպրոցը մնաց միայն մեկ հայ աշակերտ, ան ալ նույն տարին վկայական պիտի ստանար: Սասունցի Խաչա Էմմի՛ն ազան: Արժե հրչատակել Խաչա Էմմի-ի մօտին: 70-ը անց ծերունի մը սեփական փուռ ուներ, տարազութիւն ժամանակ 10-ի չափ հայ քահանաներ և շատ մը հայ տարազիներ իր միջոցներով պահած և ազատած էր ամիսներով, իսկ ոմանք տարիներով: Երկու տարի Հեսու գացի Ճարապետի Հայոց դպրոցը: Մենայի՛ն դպրոցը ազահով գրութիւն մեջ էր: Ծարապուտը սահմանազուտի էր, պերեճիկ-





Յրանսացիներ Հայերուն ըսած էին, որ ամեն տեսակ զենք կրնար ունենալ, միայն տուներին զուրս չզգեսի Հանքը, քանի որ սահմանազուլի էինք, ամեն տեսակ անահնկալ կրնար պատահիլ:

Ըսի.— զուրս չեմ բանար, գացնք մեր գործին:

Գացին, մի քանի բուռն վերջ կրկին եկան, բոլոր պատուհանները շրջապանեցին, խոսակցությունները կշտի: 12 Հոգի էին, պատուհանները տախտակն փեղկերով գոցված էին: Այլևս համոզվեցաւ, որ ավազակներ պետք է ըլլան: Կրկին աղաչեցին: Գիշերապաւնը չէր երևար, սուլիչը Հանքի և սկստ գորայօր փչել, փախչիլ սկսան: Սուլիչը փչել շարունակեցի, գիշերապաւնը նիզիպցի երիտասարդ մը, Լեւոն անուամբ, սուլիչով պատասխանեց: Վերջապես սուլիչի ձայնին եկավ Հասով մեր զուրս, ձայն ավագ, ըսի.

— Չորս կողմը նայե, տես մարդ կա՞, թէ ոչ:

Ըսով.— մարդ չկա:

Դուրս քացի, զուրս ելա: Թաղի երիտասարդները Հովաքովեցան, գեպի սահմանը բոլոր ամայի տեղերը քննեցինք, մարդ չգտանք: Հաջորդ օրը իմացածք, որ սահմանազուլի մոտ քրդական գյուղն մը անցնելու ժամանակ զուրս գարկած են, տան տերը զուրս քացած է, ներս խուժած են: Տան մեջ՝ մեր մը և պտուսով մը: Տունը կողտպտելն Հեսո կանցնին թրջակած սահմանը և կանհայտանան:

Անցով մտնոր: Գարնան վերջերը Այնթապցի Թափրազէյան Ավետիսը, որուն տղան ու աղջիկը գպրոցը աշակերտ էին, ըսով.

— Սահմանապահներու հրամանատար Հազարապետին հրաման տալի, շորայմ որ սահմանի մյուս կողմ շրտաւա տեղ մը կա՞ ծաւերու տակ, երթանք լավ ուրախ որ մը անցնենք:

Ավետիսը նվագածու էր, լավ ոււտ կնվագէր: Երկու թուրք ընկեր ունէր, մեկը՝ շուքթակաւար, մյուսը՝ Սուհետին անուամբ Անտրոքցի թուրք մը, որ լավ ձայն ունէր և թրքերեն կերգեր ու տափ կգարներ: Միայն չորսերնիս պիտի ըլլանք, ուրիշ մարդ չկա: Սահմանազուլիի գրտ կար կուշարան, նոս թրքական զգալի թիփով զինվորներ: Այս նվագածուներ բոլոր թուրք սպաներուն ծանոթ էին: Ընտրապուսի Սուրբական կողմը թրջատիպ թատրոն կար, ուր աշխարհիկ աղջիկներ կպարէին և թուրք սպաներ այդ թատրոնի տեսական համարողներ էին: Ընդելի, ուտելիք, ամեն ինչ պատրաստելն Հեսո անցանք սահմանը և ծաւերու տակ, կապերտ տարած էինք, փոնցիկներ և կրակ վառեցինք, քեպապ չինեցինք ու նստանք, սկսան նվագել: Հանկարծ թուրք սպա մը եկավ, բարնեց, քիչ մը նստավ, Հյուրարիբեցիկնք ու զնաց: Բիչ Հեսո եւ գարձով զինվորի մը

Հետ և մեծ ստիպանք մը լեցուն սօրի և ուսուցիչը գրավ մեջտեղ ու կասով մեր ջրով: Զինվորը նստավ քիչ Հեռու: Քիչ կարք ուրիշ սպա մը, նույնպես զինվորի մը Հետ, նույնպիսի պատրաստութունով: Վերջապես 30 թուրք սպաներ և նույնքան ալ իրենց ծառայող զինվորներ, բոլորն ալ նույնպիսի պատրաստութուններով և զինվորները քիչ մը Հեռու՝ ծառայելու պատրաստ: Մինչև կես զինչը ուրախութուն ըրինք, սպաներուն մեջ ևս լավ երգողներ կային: Եկավ նաև մարտի անտրեն Գաւրի պեյը և ընկերացավ մեզի: Զինվորական առատ ուսուցիչը ավին: Կես զինչերին կլանք մեկնելու: Գաւրի պեյը մեզի ըսավ.

— Այս ամայի կողմեն մի երթաք (որովհետև սահմանադրուիչը ճարտարունակն երկու քիչունքիբը Հեռու էր), կայարան երթանք:

Այն կողմեն դաջինք: Կայարանը բաժնվելի առաջ բոլորին Հետ տեսնվեցանք, փոխադարձ շնորհակալութիւն Հայտնելով: Գաւրի պեյը բավական տեղ մեզի Հետ եկավ, երբ ընկերներս քիչ մը տառջացան, ինծի ըսավ.

— Կամայ քալե, թող քիչ մը Հեռանան:

Այնքան մը Հեռացան, որ այլևս մեր խոսակցութիւնը չէին կրնար լսել, ըսավ.

— Անգամ մըն ալ այսպիսի խենթութիւն չընեա, սահմանին այս կողմը գործ չուեր: Ես, երբ որ լսեցի, Հատկապես քեզի Համար եկա, եթէ ոչ՝ քեզի Համար ողջ վերադառնալ չկար: Ձե՛ս Հիշեր զեկանմարի գիշերը մեր տունը եկողներ մարտանենգի անուհով, անտք զըզված էին թուրք կառավարութեան կողմն քեզ սպանելու Համար, բախտին բերումով ազատված ես: Դուք սահմանի վրա կիրակնորոյս լսարաններ կը սարքեք, քաղաքական խնդիրներու վրա կ'խոսիք, ազգային ներկայացուցիչներ կուտայք և այլն: Հասկցա՞ր:

Գիշեր բարի ըսով ու զատվեցանք:

Գայրոցական տարին լրացավ ու Հալեպ վերադարձա: Մի քանի ամիս Հետո Հանկարձ չուկայի մեջ գեմս կլավ Գաւրի պեյը. բարեկէն Հետո «խիչը ըլլա» — ըսի: Ըսով. — «մաքսատունեն տասը Հազար (10.000) թրքական Հնչուև ոսկի գրպանեցի, ընտանիքս առի եկա Հալեպ, պիտի երթամ Դամասկոս Հաստատվիմ: Այս գումարը ինծի կրավեմ, ապագաս շահեցի, Դամասկոս տուն կգնեմ և գործի մը կ'մեկնարկեմ»: Բարի Հաջողութիւն ըսի, երթաք բարով ու զատվեցանք:

**ԲԱՌԱՐԱՆ**  
**ԱՏԻԱՄԱՆԻ ԳԱՎԱՌԱՐԱՐԱՌԻՆ**

**Ա**

Աբար – եղբայր

Ագի – պոչ

Ադամաճուփ – արշալույսեն անմիջապես առաք եղող լույսը

Ազապ (ա.) – աշխատավոր ծառա

Ազարլամիչ Լենի (ա.) – հանդիմանել

Ազնաուր – կատաղի

Աժել – արժել

Ալալանկ – սելի առեն ջրելու իրավունքի կախակայությունը ջրող՝ ջրողին,  
նաև զէլ իմաստով

Ալըղ – համետ

Ալիք – մորուք

Ալուճ – հազորան

Ալք կոխել – արյունախտնում

Ախկատ – աղքատ

Ախճիկ – աղջիկ

Ախճնակ – պզտիկ աղջիկ

Ախալըրանուն – փեսեղբայր, պսակի առեն խաչը բռնողը

Աճուք – պարտեզ

Աժուքճընիտ – ձեր պարտեզը

Ակլոզ-տկլոզ – միմու, մերկ

Ահնամ – անհամ

Աղալա – աղուրա

Աղըտ (թ.) – լաց ու կոծ

Աղկեկ – գեղեցիկ

Աղնձել – աղանձել

Աղու – թույն

Աղու – աղի

Աղալեն – տարածը

Աղտոր – ախտոր (սուճագ)

Աղոն – աղուն

Աղոնցու – աղալու ցորեն

Աճապա (ա.) – միթե, արդյոք

Աճտել – օճառված հազուստը ձեռքով շփել, ամռել

Ածախալ (ա.) – զարմանալի  
 Ամպար – ամբար  
 Այան (ա.) – նախազգացումով հայտնի ըլլալ, այքեր  
 Այլակերտ – այլանդակ  
 Անանց – այնպես  
 Անանցուկ – այնպես  
 Անգահ – ազահ  
 Անքեղ – մոխիրով ծածկված կրակը  
 Անքեղել – կրակը մոխիրով ծածկել չմարելու համար  
 Անժուր – առանց յուղի կերակուր  
 Անիծ – ոչլի հունտ  
 Անլի – առանց աղի  
 Անծրել – անծրև  
 Անկ – կոթ, ճանկ  
 Անկաճ – ակաճ  
 Անկաճ կտրիչ – չափազանց հետաքրքրությամբ մտիկ ընել  
 Անկըցուն – այնտեղեն, անկից  
 Անկշտում – անկուշտ, անհագ  
 Անճախ (թ.) – հագիվ  
 Անճարակ – տկար, խեղճ  
 Անճուր – անջուր  
 Անրգել – անարգել, հայիոթել  
 Անպագ – անհամ ջուր  
 Անպաշար – անճարակ  
 Անպարտակ – անպատկառ, անվարկեշտ  
 Անպիտու – անպետք  
 Անտ (թ.) – երդում  
 Անտի – ան կողմ, անդին  
 Աշար (ա.) – տասանորդ  
 Աշել – սպասել, հսկել, պահպանել  
 Աշենալ – նայիլ  
 Աշխիլ – մզլիլ, կերակուրին հոտիլը  
 Աշխորթ – բարակ ու երկար կտոր հագուստի  
 Աշող – դետ  
 Աչքին աղբյուրը – ակնաղբյուր  
 Աչք կապուկ – խաղ մը  
 Ապարագսըզ – անառակ  
 Ապուռ-ճպուռ – խառն ի խուռն  
 Ապրաշ (ա.) – ճանճկեն (ծի)  
 Ապրշում – մետաքս

**Ապուրցու մը** – մեկ անգամ կերակուր եփելու պարեն, ծախար կամ ոսպ և այլն

**Առասպել** – անպատիվ խոսքեր

**Առ էնել** (*ա.*) – անշնայ

**Առեք** – բանվածքին երկայնքը

**Առկայ** – ակոռ, ատամ

**Առսըզ** (*թ.*) – անամոր, անասակ

**Առտաղ** – ասաստաղ

**Ասանց** – այսպես

**Ասանցուկ** – այսպես

**Ասկըցուն** – ասկից

**Աստծու գոտի** – ծիածան

**Ավարա** (*պ.*) – գործեն ետ թողուլ, զբաղեցնել

**Ավտընալ** – հավատալ, վստահիլ

**Առանց** – այդպես

**Առանցուկ** – այդպես

**Ատկել** – կարենալ, կրնալ

**Ատկըց** – ատկից

**Ատկըցուն** – ատկից

**Արևատ** – տոբահար

**Արզըհալ** (*պ.*) – խնդրագիր, աղերսագիր

**Արմաղան** (*պ.*) – հեռու տեղի մը եկած ընծա, և կամ հեռու տեղ մը հյուր գացողի տարած նվերը

**Արջալ** – արջատ

**Արպա** – կշռված ապրանքը պարունակող ամանին ծանրության չափը կամ կշիռը

**Արսուն** – երեսուն (30)

**Աալ** – տաղ, երգ

**Աալել** – երգել

**Աալա** – նորեն

**Աալա** – նորեն

**Աալեմա** – նորեն

**Աալուք** – ավված բան

**Ափսուն** (*պ.*) – հուսուքք

## Բ

**Բազվենտ** (*պ.*) – բազպան

**Բալախ** – զիրուկ և լավ մանուկ

**Բաղազ** – խուխ, մաղաս

**Բերբեր** – անմեռուկ, փրփրեմ (սեմիզ օրու)

Քիսալ – քղիսիլ  
Քնքնալ – քնիլ  
Քորքասիլ – մզլոտիլ, քորքոսիլ  
Քրդօ մի – քրդոն մը, կտոր մի  
Քօք – քրք  
Քօն – բույն  
Քօնկալ – բունկալ

## Գ

Գխտոր – գղտոր  
Գշպանք – հանդիմանություն  
Գշպել – հանդիմանել, կշտամբել, սաստել  
Գուլայ – աղնված քանթակեն պատրաստված պատրույզներու խուրճ ճախարակով մանելու համար  
Գուրալ – կրակին կամաց–կամաց քացվիլը, բռնկիլը

## Դ

Դարտակ – լիսնո  
Դարտակ – դատարկ = պարտալ

## Ե

Եազմա (թ.) – լաչակ  
Եալ (պ.) – բաշ  
Եայ (թ.) – լալուտի աղեղը  
Եապա (թ.) – եղան = հարդով խառն ցորենը հովին տալու գործիք մը երկար մատներով՝ ցորենը հարդեն զատելու համար  
Եավաշա (թ.) – կոճեք  
Եատըրդի (թ.) – օտար  
Եերենկուրփին (թ.) կատակ  
Եէլէկ (թ.) – միլթան = մենթոն  
Եէտէկ (թ.) – պահեստի ինչ = նմույզ երկրորդական  
Երտ = խանձող = ածխակոք կամ խանձած վայտ  
Եփո – երբ որ  
Եցմարտի – աղաղված մորթի  
Եօղտուլ (թ.) – չքավոր  
Եոպազ = ինքնահավան

- Ձաղղըք – խթան  
 Ձաղղըթել – խթել = մշտել  
 Ձաղընծիլ (ա.) – զզվիլ  
 Ձատիկ – կարծիք միջատ մը  
 Ձաֆրա (ա.) – մաղծ  
 Ձեմպիլ (ա.) – զամբյուղ  
 Ձենել – զարնել  
 Ձենճէֆիլ (ա.) – կոճապղպեղ  
 Ձըխըմ (ա.) – ուլեանդր = դժոխային ծառ, որու պտուղը խիստ դաժմէ, խոց = հարված  
 Ձըխմուիլ – զըխըմ ուտել  
 Ձըհար – կերևի թէ  
 Ձընկըլները = պատուտած հագուստին կախված կտորները  
 Ձընկըռտալ = զընկըր զընկըր դողալ  
 Ձըրխըթտիկ – ծղրիթ  
 Ձիմար (ա.) – անպատճառ  
 Ձիվան – որոմ  
 Ձոգ – զուլգ  
 Ձոլտիլ – հասարակության մեջ խայտառակվիլ  
 Ձողնակ – սողնակ  
 Ձոմփ – երկարն ծանր գործիք մը  
 Ձոնքաջ – զոքանջ  
 Ձուվաղ (թ.) – փողոց  
 Ձուրրիյեթ (ա.) – սերունդ  
 Ձուցել – զրուցել = խոսիլ  
 Ձոփպա (թ.) – քիթ  
 Ձպուն (թ.) – բաճկոնակ = ենթարի

- Էլլալ – ելլել  
 Էլլէլեմ – կարծեմ  
 Էլլէիէմ – կարծեմ  
 Էլլուկ – ելած  
 Էծուք – ածու = պարտեզ  
 Էկլէնմիշ ըննալ (թ.) – կանգ առնուլ = զրոսնուլ  
 Էկիշ – ակիշ  
 Էմու (թ.) – հորնոքայր  
 Էճէլ (ա.) – օրհաս

Էմէկ (թ.) – ջանք = հոգածություն = խնամք  
 Էմֆիյե (ա.) – քթախոտ  
 Էնի դունի (թ.) – երկար բարակ = կամաց կամաց = տնտնալույ  
 Էշկերե (ա.) – ակներն  
 Էջնալ – իջնել  
 Էռքի ուզալ – եռալ  
 Էսէլթի – դիտմամբ  
 Էվէտի – ամապարանոք  
 Էտըվանց – ետ ետ = դեպի ետ նրթալ  
 Էտինց = կես օրվան և իրիկվան մեջտեղի ժամանակը = հետինք  
 Էրած – երազ  
 Էրտ – հարդ  
 Էրտընոց – մարազ  
 Էրդմնալ – երդմնալ Էրդում խմել – երդմնալ Էրդում – երդում  
 Էրես – երես  
 Էրեսը շքնած – կկզահոն  
 Էրես տալ – շփացնել  
 Էրզըհան – երազահան  
 Էրէկ – երէկ  
 Էրթալ – երթալ  
 Էրթամնա – եթե երթամ  
 Էրին – արյուն  
 Էրկաթ – երկաթ  
 Էրկան – երկայն  
 Էրկանք – երկան = երկնաքար  
 Էրկինք – երկինք  
 Էրկու կլխէն – երկզուխ  
 Էրկու հոգոք ըննալ – հղի ըլլալ  
 Էրկու մտէն ըննալ – երկմտիլ  
 Էրմունկ – արմուկ  
 Էրնէկ – երանի  
 Էրպապ (ա.) – ձեռնիաս  
 Էրսուն – երեսուն  
 Էվել – ավելի  
 Էվել հոգ – ավելի հոգ  
 Էփնել – եփել  
 Էքի – այգի  
 Էօտ (ա.) – ուտ–նվագարանը  
 Էօտ (թ.) – լյարդ



Ը

Շիտ = ահա

Շնծա – հնձան

Շնծա = (կիր, մոխիր, կանեփ և սև ներկով պատրաստված) տեսակ մը փայլուն սև ծեփ, տուներու մեջ հնձանին հատակը կը ծեփեն խաղողի հույզը վրայեն ոյուրին հոսելու համար տաշտին մեջ:

Շնկըմահ = չմեռցնող հիվանդություն մը, որ անբուժելի է

Շնկիլ – իյնալ

Շնկոզ – ընկույզ

Շնկողին – անկողին

Շնկուկ – ինկած

Շննալ – ըլլալ

Շսեւ – ըսել

Շրդատ (հունարեն) – օղավարձով բանվոր

Թ

Թագգա – պզտիկ պահարան պատին մեջ շինված

Թագլա (թ.) = թավալ գլոր = գլուխը գետին դնել վերի վար դառնալ = գլուխ կոնծի

Թագղըթ – անպատճառ

Թակնել – թակով հագրուտը ծեծել = թակել

Թակ բեմանի – թակի ծնով ջութակ

Թամա (ա.) չնի որ = ճիշտ = կատարյալ

Թամաշա (ա.) տեսարան մը դիտել

Թամբախ = կակուղ միս, առանց ոսկորի

Թանծր – բանծր

Թափան – տափան

Թֆէրուզ (ա.) – եզակի = աննձան

Թեղիկ (թ.) հայացած թրքերեն – ամսպարող

Թեղնիք – թեղանիք

Թելքփիլ = թել թել ըլլալ

Թենճըրա (թ.) – սան

Թեշի – իլ

Թեւէր (ա.) – տապար – դալասար

Թեփուկ (թ.) – կից-աքացի

Թեթրկուն – հոգնած

Թեվարուր (ա.) – տարածայնություն

Թեփուր – դեփուր- փայտե աման մը

Թեվէլի (թ.) – պարզամիտ

**ԹԵՐ ՔՈՒՔ** (թ.) – մեկ մեկ  
**Թըսդիթ** – սխեռով շինված կերակուր մը  
**Թիլու** = (կկոցին) մագոզին տարած բերած քելը  
**Թիւմպ** – քունք  
**Թլֆիլ** (ա.) – հայացած արարերեն – հոգնութենեն մարմինը բուլնալ  
**Թխկել** – խմկել  
**Թմմիլ** (ա.) – հայացած արարերեն – լմննալ  
**Թմնցնել** (ա.) – հայացած արարերեն – լմնցնել  
**Թնտացնել** = մանուկներու մարիլը (հիվանդություն մը)  
**Թնճուկ** – իրար խառնված մազ  
**Թոլ** – բուշլ  
**Թումարել** (պ.) հայացած պարսկերեն – տած  
**Թութուղոճու** – շատ ծերացած մարդ  
**Թոռ** – ցանց – ուսկան  
**Թոնիլ** – քոշիլ – ցատկել  
**Թուվրուկ** = տեսակ մը փոխանցիկ վերջ ուր մարմնին վրա մեկ տեղեն ուրիշ տեղ կը ցատկեն, առհասարակ երեսին վրա  
**Թրել** – շաղել  
**Թրջոց** = քրջված ծավար յուղով կամ ձեքով և համեմներով պատրաստված  
**Թլա** = շուշմայի յուղի և կովու քրքի հետ ջուր խառնված, կտավը մեջը կը քարխեն հետո կըլվան կարմիր ներկելէ առաջ  
**Թոխմաթ** (թ.) – զըրբուկ  
**Թօրթ** (թ.) – մրուր  
**Թօփուզ** (թ.) – բիր, մահակ ծայրը կլոր

## ժ

**ժամ** – եկեղեցի  
**ժամանել** – հասնիլ  
**ժամարար** – պատարագիլ քահանա  
**ժանկ** – ժանգ  
**ժանկոտիլ** – ժանգոտիլ  
**ժաշկ** – երկրաշարժ  
**ժմնած** – հասուկ, չափահաս  
**ժրիլ** – ուժովնալ, ժրանալ

## Ի

**Իզէտ** – զատ  
**Իզատել** – զատել

**Իթակու** – բարակ լավաշ հաց քանակու ժամանակ, զետիներ փոված մասնավոր պատրաստված լաթ մը, որ պլուրը զետին չթափվի  
**Իմնալ** – զգալ, հասկնալ, իմանալ, լսել քան մը  
**Ինս ու ծինս (ա.)** – մարդ, մարդասանք  
**Իշիկ (թ.)** – տեսակ մը քանկոն  
**Իշխուն** – ընծյուղ  
**Իթուն** – հիսուն(50)  
**Իշխուն** – լեռնային պտուղ մը  
**Իշմար (թ.)** – նշան ընել(այքով)  
**Իսալ (ա.)** – թանջ  
**Իսոթ** – տաքտեղ, պած  
**Իտարա (ա.)** – ճրագ  
**Իրեթ** – երեք  
**Իրթ** – բան  
**Իրքենց** – բանենց, այսինչենց

## L

**Լալլիկ (ա.)** – մունջ, համր  
**Լափլփել** – աճապարանքով ուտել  
**Լափլփել** – խարխաբել  
**Լաֆազան (ա.)** – սնասպարծ, մեծխոսիկ  
**Լերթ** – լիթր  
**Լերթիլ** – արյունին թանծրանալը, մածոնու  
**Լեն** – լայն  
**Լէպլէպու** – (թ.) – աղնծված սիսեօ, մրրկասիսեօ  
**Լըլալ** – լեցնել  
**Լըղ** – փոս  
**Լընտ** – լինդ  
**Լըսընկըոս** – լուսնի լույս  
**Լըցի** – լեցուցի  
**Լիլլօ** – ամեն օր չափազանց զինովցող  
**Լից** – լեցուր  
**Լիֆ** – (ա.) – օճառի լաթ  
**Լկրտած** – աներես  
**Լդել** – զլտորել  
**Լմանիլ** – նմանիլ  
**Լմմալ** – բերնին մեջ կերակուրը աստին անդին պտտցնել ծամելու համար, երբ ատամ չունի  
**Լոքթել** – առանց ծամելու կլլել  
**Լոլլիկ** – չափազանց զինով

Լոկնալ – լոգանալ  
Լոդ – քարե գլան՝ տանիքները լողելու համար  
Լողտուր – լողին վրա անցված փայտե տանիքները լողելու համար  
Լոշ – հաստ հաց  
Լոշ – լույս  
Լոպուտ – մահակ  
Լոս – լույս  
Լոսնալ – լուսնալ  
Լոսիկ – լուսրկիկ – փոսուտա  
Լցնել – լեցնել  
Լքցուր – լեցուր  
Լճել – լիճով մարմինը օճառել կամ սրբել

## Խ

խաբըր (*ա.*) – հարգանք, ակնածություն  
խալլիկ (եթրայեցեղեն) – մանր քար  
խալխալ (*ա.*) – քողեք, ոտնապարանջան  
խալխուտ – խախուտ  
խանծել – խանծել  
խաշա – բլիս  
խաշել փետ – հագուստը խաշելու ատեն գործածվող փայտե խառնելու համար  
խաշման – խաշված  
խաս (*ա.*) – հազար (քույսը)  
խավոխ – խաղող  
խարազա – քրիորին բերանը դրված կլոր ծակ քարը  
խարըղ (*թ.*) – առու  
խարաթ (*թ.*) = արաբերեն դարաթ բառն առնված – ձարե (ձագ) շինված մեծ պարկ՝ հարդ կրելու համար = քուրծ  
խափանք – ծխնելույզին քերնի կլոր տախտակե կափարիչը  
խավխազ – փայտ, որ մեջը փտուած է և քեքս է, կամ պարկ մը, որուն մեջը լավ չէ լեցված և մեք ընդ մեջ պարապ տեղեր կան  
խելրծաշկ – խելքը տեղեն շարժած, ուշգը գացած  
խելըրիլ – նվաղիլ, գլուխը դառնալ և մարիլ, խնքեմալ  
խեմի – անգամ մը  
խերու – հեռու  
խերուընալ – հեռանալ  
խզմա (*թ.*) – գինդ  
խզրած – ծայնը մարած, գոցված  
խէթել – խայթել

**խքմեր** – կեսուր  
**խնջեր** (ա.) – դաշույն  
**խր** – դալ  
**խղզ** (թ.) – բափ, արագություն  
**խղզան** – մուրացկան, աղքատ  
**խղթ** – ցորեն գարի իրար հետ խառնված՝ աղալու համար  
**խղմխղմ** (թ.) ռեզախոս, քթին մեջեն խոսող  
**խընտ** – աչգիի կամ պարտեզի սահման  
**խըլըսիլ** (ա.) – (գործ մը) վերջացնել=ազատվիլ  
**խըշըր** – ոսկեղեն զարդեր  
**խըշկա** – բացված քամակակի խղզակ  
**խըշտ** (ա.) – գեղարդ  
**խըսըմ** (թ.) – ազգական  
**խիժ** – խեժ  
**խլաթ** – հարսանիքին տարված նվեր  
**խլինք** – խլիք  
**խլլոտ** – քթին առջև աղտոտ  
**խխտել** – խնդղել  
**խխտուկ** – խնդղուկ, խեղդված  
**խխտրտել** – խեղդրտել  
**խծկել** – գոցել  
**խծիկ** – խղզակին մեջեն քամակաղ բաշված, մնացած կճնաղ  
**խմխիլ** – կերակուրին հոտիլը  
**խմման** – խմած, զինով  
**խնծխում** – մեռյալին քաղման հաջորդ օրը գերեզման երթալ խունկ ծխելու համար  
**խնկակուզիկ** = խնկող կուզիկ – բույս մը, մարիամ խոտ  
**խնքել** – քթին աղտոտութունը պարպել  
**խոզան** – հնձված արտ, ծեղ  
**խոլոր** – խոժոռ  
**խող** – հող  
**խոնճան** – խոնքան, վարտիքի կապ  
**խոնճենալ** – հոզնիլ  
**խոշրտել** – մաղունչել, բաշված ծավարը մաղել և խոշրտուքը հանել  
**խոշրտութ** – մաղունչ  
**խոշրտվիլ** – քարծրածայն խոսքով կռվիլ  
**խոսկոտրիլ** – խիթ ունենալ  
**խոստել** – խիթ ունենալ  
**խոստուկ** – խիթ  
**խորքած** = խորթախ – տանկի սատակի ուրվական, որ գիշերներ գերեզմանեն ելած կըսպառնի, ուրվական

Խուլիկ – խուլլիկ (պեզ)  
 Խուլխ (ա.) – տրամադրություն  
 Խուրտղիսաշ – ջարդ ու փշուր, ճզմվիլ  
 Խուրճ (թ.) – խուրջին  
 Խուփան – խուփան  
 Խալիկ (խիպիլիկ) – երևակայված գիշերային կերպարանք  
 Խանիլ – անչնալ  
 Խամել – սեղմել  
 Խփել – գոցել  
 Խոխալ – շարժիլ  
 Խոխացնել (խոխցնել) – շարժել  
 Խօսք մոել – խոսք բռնել, հնազանդիլ  
 Խօրադա (իունարեն) – խոսակցություն

## Ճ

Ճագ – ճնճղուկ  
 Ճագու հաց – լայն տերևներով բույս մը, որ կուտեն  
 Ճամմել – ծամել  
 Ճամմոց – ծամոն  
 Ճանտղրած – հղի  
 Ճարք – ձեռք  
 Ճգել – ձգել  
 Ճեր – ձեր  
 Ճերք – ձեռք  
 Ճել – ձել  
 Ճեն – ձայն  
 Ճերուր – ձարիլ  
 Ճըզի – ձեզի  
 Ճըճընիկ – ծիծեռնակ, ծիծառ  
 Ճիք – ձյուք, ծամոն  
 Ճմեռ – ձմեռ  
 Ճուկ – ձուկ  
 Ճօն – ձյուն

## Կ

Կազան – զազան  
 Կազինճ (քրտերեն) – զանգատ  
 Կաժ – կարժ

Կաժըղար – կարծառ  
 Կախ – չորցված տանձ  
 Կախօրան – ճօճ, օղին մեջ կախված չվանն օրորոց  
 Կանք – կոր  
 Կապահար – ընդոստ, հանկարծակի վախճալ  
 Կավուն – կանգուն (արշըն)  
 Կարգել – ամուսնացնել  
 Կարգուիլ – ամուսնանալ  
 Կարել – աչքի կուպին եզերքը ելած հատիկ, շտիկ  
 Կարի – գարի  
 Կարկտան – պատռված հագուստին կարված կտորը  
 Կարկտնել – հագուստին պատռած կամ ծակած տեղը կտոր մը կարել  
 Կարկտուք – պատռած տեղը կտոր կարելը  
 Կարշելի – գարշելի  
 Կեղ – գյուղ  
 Կեղացի – գյուղացի  
 Կեղտ – աղտ  
 Կեղևել – փեճօկել, կեղևել  
 Կետին – զետին  
 Կեռալ – քերվիլ մարմինը  
 Կերզման – զերեզման  
 Կերզկըտալ – հորանջել, ճապտկիլ  
 Կերզկնալ – աղայել  
 Կեժ (թ.) – ապշած մնացած  
 Կել – զայլ  
 Կելենի – խոսակցություն  
 Կելում – զաղձն  
 Կեծուկ – կայծողիկ  
 Կեծկտալ – փայլատակել  
 Կեծկտուք – փայլակ  
 Կեշ – զեշ  
 Կենե (թ.) տիզ – պզտիկ միջատ մը, որ կուլերու վրա կըլլա, որուն խայթված-  
 քը մարդոց համար մահացու է, եթե անմիջապես պաղ ջրով չլողցվի  
 Կելէր – առու, կավառ  
 Կերտկ (թ.) – առագաստ  
 Կեպելէկ – թնջուկ, սունկ  
 Կբել – հագուստը կամ թևը մեջը դարձնելով կարել՝ կարճեցնելու համար  
 Կիժ – (մեղուի) խայթոց  
 Կիմի – զիմի  
 Կիտնալ – զիտնալ  
 Կիտուն – զիտուն

Կիր – գիր  
 Կիրակմտի – կիրակնամուտ  
 Կիրկ – գիրկ  
 Կից – աքացի  
 Կիւլլապ (պ.) – վարդի ջուր  
 Կից – զույգ  
 Կիւկիւմ (թ.) – պղնձե մեծ կուժ  
 Կիւման – հավանական, հուսալ  
 Կիւվէ (թ.) – ցեց  
 Կլլալ – կլլել  
 Կըլմնի – կը նմանի  
 Կլխաւոր – ամուսին, կիները իրենց էրկան համար կըսեն  
 Կլոխ – գլուխ  
 Կլոխը լարել – զինովնալ  
 Կլորուկ – պզտիկ միջատ մը դայնալուդ պես կը կլորվի  
 Կճկճալ – քերվիլ, նաև շատ մեղմ ձայն եռացող ջրի  
 Կնա պանիտ – զնա գործիդ  
 Կնտել – խուզել  
 Կնտուել – գլտորել  
 Կնտուուկ – ընկույզի խաղ մը գլտորելով  
 Կոզկապ – կույզկապ  
 Կոզ – ողկույզ  
 Կոզ – գոզ  
 Կոդտուկ – գաղտնի  
 Կոդնալ – գոդնալ  
 Կոճիկ – ոտքին կոճը  
 Կոսկրտալ – զգայել, որովքալ  
 Կոսըրած – երեսը պինդ  
 Կովել – գովել  
 Կոտի – գոտի  
 Կոր – կարիճ  
 Կործ – գործ  
 Կուլ – գաղջ  
 Կուլիկ – գաղջ  
 Կուլնալ – գաղջնալ  
 Կունտ – ճաղատ, գլուխը կունտ, սկունդ (տաճիկներու մարզարեն)  
 Կունտին մթելը – Մուհամմետի վերարկուն  
 Կպցուկ – կպած  
 Կամիթ = կամթել – մեկու մը միսը երկու մատով սեղմել  
 Կտիկ – փոքրիկ ուլ  
 Կտնել – գտնել



Կտտել – չարչրկել, կծել  
Կտոց – դեզ  
Կտոցել – դիզել  
Կրել – փոխադրել  
Կրծան – կրծկալ  
Կրծոց – կրծկալ  
Կրնալ – ատկել, կարծնալ  
Կփալիլ – կաշիլ, փակիլ

Չ

Չագգանա (ա.) – արդարությանը, իրավացի  
Չագիգա – ազուգա  
Չագ ենել (ա.) – ախորժիլ  
Չաքքթել – ընտրել  
Չաքքրուն – հատ–հատ եղած  
Չալագգա (ա.) – օղակ  
Չալալ (ա.) – արժանի, օրինավոր, արդար  
Չալլել – հալեցնել  
Չալուլա – խեղկատակ  
Չալվոր – զառամած, ծեռունի  
Չածել – հավկիթ անել  
Չակ – որթատունկի ճյուղերն հյուսված մեծ սակառ՝ խաղող կրելու համար  
Չակոկիլ – հակառակիլ  
Չամար – դաս  
Չամալի – հուռուքը, կախարդական զրվածք (թալիսման)  
Չամլսել – ճաշակել, համը նալիլ, համը տեսնել  
Չամմլ – հրաման  
Չամպրել – համրել, հաշվել  
Չամպրանք – թիվ  
Չայեվար – հայերեն  
Չանգը կտրիլ – շունչը կտրիլ, ուժը կտրիլ  
Չանգչել քար – գերեզմանատան մուտքին քովը շինված պզտիկ քարասա  
մը, ուր մեռելը 2–3 բույն կրղմեն հանգչելու համար, որպես թե մեռելը  
կըհանգստանա  
Չանգչիլ – հանգստանալ  
Չանման – հանված  
Չանց – հենց, այնպես  
Չալան – շատ հաչող  
Չաստիլ – կոթնիլ  
Չավան (ա.) – սանդ, անկան

- Գազաս (*պ.*) – տրամադրություն, փառաբ  
 Գազլու (*թ.*) – քակ  
 Գատիկ – խաշված ցորեն  
 Գատիկ – արմտիք  
 Գատիկ – կուպին վրա ելած պզտիկ շտիկ  
 Գատիկ մը – մեկ հատ  
 Գատնիլ – լմննալ  
 Գարթած – գինով  
 Գարրիլ – գինովնալ, արքենալ  
 Գարել – խնոցի հարել, ճոճել  
 Գարիր – հարյուր  
 Գարկ – հրավեր, խնջույք  
 Գարուիլ – ճոճիլ, տատանիլ  
 Գարսա – հորնդորո կին  
 Գարսալում – հարս քերելու երթալ  
 Գաւկրուկ – երբեմն մարդոց աչքերը գիշերը չեն տեսներ, երկար ատեն  
 պահք պահողներուն հաճախ կպատահի, հավկուր  
 Գաֆթառ – բորենի  
 Գեզան – հեծան, հաստ գերան  
 Գեթան (հունարեն) – հեթանոս, անհավատ (թուրքերու համար կը գործա-  
 ծեն)
- Գեժտըրո (*ջրդ.*) – իսկա, հաղթանդամ մարդ  
 Գելլի – հայելի  
 Գեմին (*ա.*) – բարձրահասակ, արարական հեծին ուղտը  
 Գեպիկե – բակեղեք  
 Գետմընիտ – ձեր հետը, հետերմիդ  
 Գերին – հերյուն  
 Գերիսա – հարիսա  
 Գերու – անցած տարի  
 Գերստիլ (*ա.*) – բարկանալ  
 Գերտկե – աչքիս առջևն կորավե  
 Գերտկիլ – կորիլ, կորսվիլ  
 Գէկ – որբատունկի ճյուղերն հյուսված կնոց  
 Գեսես (*ա.*) – գիշերապահ  
 Գէվէնկ – ձմրան համար կախված խաղող  
 Գըզգի – մինչև որ  
 Գըմմա – հիմա  
 Գըմըն (*պ.*) – իսկույն, անմիջապես  
 Գընտրել – ընտրել  
 Գընքըթալ – հուտտել, հուտվցտալ  
 Գընտըրտուք – ընտրել, ընտրուկք

**Չըոցք** (ջրոյ.) – քեն, ոխ  
**Չըպա** – հապա  
**Չըանտ** – հիվանդ  
**Չըլընտութիւն** – հիվանդութիւն  
**Չիլուն** – ուլունք  
**Չիմել** – առեջ կազմել  
**Չիճապ էնել** (ա.) – ակնածիլ, անշնայ  
**Չիյալք** (ա.) – ահալոգութիւն, պատկառանք  
**Չնկ** – հինգ  
**Չնկ քար** – խաղ մը  
**Չննամուն** – հինայում, հարսը հիննայելու երթալ  
**Չշեք** – ժամուց, պատարագ  
**Չիւներ** (պ.) – հնարք  
**Չինքեմեր** – կնքամայր  
**Չիւսսել** – հյուսել  
**Չոզոց** – հառաչանք  
**Չոլիլ** – երկայնահասակ (ծաղրական)  
**Չողաք** – խանձարուրին մեջ փաքրված լաքը  
**Չողփոր** – հողը ինքնաքերաքար սրված կամ բարձրացած  
**Չուն էլլել** – մեկու մը հետ վիճելով կամ կոզելով զզլուխ ելլել  
**Չօրենակամ** – հորմե մնացած, հայրական  
**Չօրենի** – հորմե մնացած

## Չ

**Չուինք** – քիւլ

## Պ

**Պազի** – բրջական ոսկեղրամ մը  
**Պազիլ** (ա.) – այծի մազե ոլոբված հաստ քել  
**Պաքմա** (թ.) – եփած, ծծծած մածունով խառնված  
**Պաք մը** (թ.) – անգամ մը  
**Պալաթնալ** (ա.) – սխալիլ  
**Պալտընալ** (ա.) – խալտիլ  
**Պալուն** – պատիկ մանգաղ խոտ քաղելու համար  
**Պալպ** (ա.) – կեղծ  
**Պաղըճել** – անող հավին համած ձայնը  
**Պաղըրտաղ** – խաղիտլենի  
**Պամա** (թ.) – երկասյրի դաշուկն  
**Պամդա** (թ.) – տաշուք, տաշեղ

- Դայլոզ (թ.) – փակ  
 Դայդանա (թ.) – ձկարոց  
 Դանքարմա (ա.) – կամար (շենքի)  
 Դաշմար (թ.) – հտակիտ, ժիժաղաշարժ մարդ  
 Դաշշաղու (թ.) – տած ընելիք, քիմար ընելիք գործիքը՝ կենդանիներու հա-  
 մար  
 Դաշոր – ոչխարների տուրքը  
 Դասնաղ (թ.) – մաղի տախտակե շրջանակը  
 Դավ (թ.) – արեթ  
 Դավալթաղ – լեցված պարկի մը մեջ պարսպ մնացած մասերը  
 Դավում (ա.) – ազգական  
 Դավուրմա (թ.) – խորոված միս մանրված և զուճղ եղած (բովաճ) ծծրան  
 համար  
 Դարթ (թ.) – օբեկ, դահ, պայաթ  
 Դարիլ (ա.) – անզգույշ, հանկարծակի  
 Դգտել – պատռել  
 Դգտիլ – պատռվիլ  
 Դըզըլդուրթ – դիճքերիա, զահրումար  
 Դըզիկ – բարկութենե կարմրող  
 Դէթմը – բարակ բացված հաց իրարու վրա ծալված յուղով, շաքարով  
 Դըթ (թ.) – հազվագյուտ  
 Դըթղըթիլ – խողտիլ  
 Դըթղըթեցնել – խողտեցնել  
 Դըժըտալ – եռացող ջրին հանած ձայնը, դըժժալ  
 Դըւ – ծայրը սուր, հաստ և կարճ գավազանիկ մը գետինը խրելու համար  
 (խաղ)  
 Դըլըլ տնել – խախաչ առնել  
 Դըմըլ (ա.) – ցորենի ոգիլ  
 Դըմ տնել – բավել, գոհանալ (կերակուր)  
 Դատա-պէլա (ա.) – խաթաթալա  
 Դըղըթ – խըրթիսըթ, կոկորդի կարծր մասը, բոքին վերել  
 Դըմիշ տնել (թ.) – լիճայել  
 Դըշեթ – կշիռ, կշեթ  
 Դըրիվ – կոիվ  
 Դըրվըտիլ – կռվիլ  
 Դըր (թ.) – անջրդի հող  
 Դժժալ – եռացող ջուրին հանած ձայնը  
 Դպանթ – կղպանթ, փաղա  
 Դպել – կղպել, գոցել  
 Դպուկ – կղպված  
 Դճեպ – փեճեկ

Դճեկեյ – կեղևեյ  
Դճրտացնեյ – ակուաներդ կճրտացնեյ  
Դըմըլոտած – ոջլոտած ցորեն  
Դոթտո – խոշոր շուն, գամբո  
Դոր (թ.) – տող գրքի  
Դոր (թ.) – ոսկի շարոց  
Դուքնի (ա.) – բանկ կերպաս, բամբակեղեն  
Դուքտիկ (քրդ.) – թզուկ, կարճահասակ  
Դուչի (թ.) – մետաղյա օղակե կոթ  
Դունճ – սենյակի ներսի անկյունը  
Դունճիկ – անկյուն  
Դուրք նատիլ – թխեյ  
Դուրաթ (թ.) – քուռաթ  
Դուֆա – սակառ  
Դրբան – դըրք դըրք ծայն հանող  
Դրբեյ – բուխս նատելիք հավուն հանած ծայնը  
Դրթուկ – նիհար  
Դրվտան – կովազան  
Դոնջ – եղջյուր  
Դոնջեյ – եղջյուրով զարնեյ

## Ծ

Ճածոուն – նրվրա՝ յուղով եփված հավկիթ ջրով  
Ճախճըպան – –ջաղացպան  
Ճաղացք – ջրաղաց  
Ճաղ – գուլպա հյուսելու երկաթե բարակ շիշեր, բազրիկի ծողերը  
Ճաքդըրթեյ – ճանկոտեյ  
Ճամբեյ – ճամբու դնեյ, դրկեյ  
Ճանչակ – ծանոթ  
Ճանչուկ – ծանոթ  
Ճառագ արև – կիզիչ արև  
Ճաստալ – մարմնով գեր և տգեղ կին  
Ճատի (պ.) – վիուկ, ջատուկ  
Ճեխք – ճեղք  
Ճեղ – ճյուղ  
Ճեղ – տոհմ  
Ճզճզան – լալկան  
Ճզտան (պ.) – դրամապանակ  
Ճեթք – ճեղքվածք  
Ճերմկուց – հավկիթին կամ աչքին սպիտակ մասը

**ճեփ** (ա.) – ճիգ, ջանք  
**ճեճիմ** – բարակ զորոված կապերտ  
**ճեպալ** – ծանցակ  
**ճերկ** – հարծակվող ամբոխ, խուժան  
**ճըլզ** (թ.) – ժողխ, ավրված հավկիթ  
**ճըլֆակ** – ջուլիակ  
**ճըլֆկիկ** – սարդ  
**ճըղըզ** – խաղի մեջ խառնակիչ  
**ճըրճըր** – բանալակը կուտեն զատելու մեքենա  
**ճիլվլ** (ա.) – նազանք  
**ճիկզ** (ա.) – հարսին օժիտը  
**ճից** (ա.) – դեվ  
**ճիճիվիզ** – ճենովացի, ճարպիկ  
**ճիճչել** – ճչալ  
**ճինս** (ա.) – ազնիվ տոհմ  
**ճիպառ** – սև ծուրով, հավկիթով շինված սպեղանի մը, որ կտավի վրա քսելով վնասված տեղը կըկապեն  
**ճիւ** – հառուճ ճիվը  
**ճիվլէլկ** (թ.) – աշխույժ տղա, ուղտի ձագ  
**ճիրիթ** – արդընկեց խաղ, ճիարշավի առեն նետված զալազանը  
**ճլքտել** – ճմոթել հազուստը  
**ճլքտիլ** – հազուստին ճմոթիլը  
**ճխկել** – ճեղքել  
**ճխկիլ–ճխկուիլ** – ճեղքվիլ  
**ճխկրտիլ** – ճեղքրտիլ  
**ճկրտիլ** – բարկանալ, սաստել  
**ճկել** – վիզը ծեկ  
**ճմմել** – ճզմել  
**ճմտել** – ճմոթել  
**ճմուռ** – յուղ, հաց և ուտի միասին շաղված ուտելիք մը  
**ճնկըրտալ** – ակամջին մեքեն հնչած ծայրը  
**ճոմարտ** (թ.) – առատածեռ  
**ճոմպ Լճել** – այգիի որբատուճկը տակեն կտրել, որ երիտասարդանա և նորը քուանի  
**ճոմփ** – ճողփյուն  
**ճորճրալ** – օրորվելով քալել, երեքալ, տատանիլ  
**ճուճուկ** – վառյակ  
**ճուվալ** (թ.) – պարկ  
**ճուր** – ջուր  
**ճօալ** – հոսիլ (ջրի)  
**ճօթել** – պատռել

**ճոթիլ** – ճայթիլ, պայթիլ  
**ճոթոն** – ջորդան, ուրկից անձրնին ջուրը տանիքեն վար կըվազն  
**ճոպոտ** – կեղտոտ  
**ճրել** – ջրել  
**ճրագու** – ճարպ  
**ճրագտիլ** – պատին վրա մասնավոր շինված ցցվածք մը կամ տախտակով  
 շինված՝ վրան ճրագ դնելու համար  
**ճրթափ** – ջուրը քափել, միզել  
**ճօլպանտ** – ընդեղեն մը, կովերու կեր  
**ճօք** – ճայր

## Մ

**Մագոգ (թ.)** – կկոց  
**Մագման** – մագ անող  
**Մաթ ըննալ (պ.)** – զարմանալ, ապշած մնալ  
**Մաթիլ** – մանր ողիլ  
**Մալա (պ.)** – ծեփիլ  
**Մալամաթ** – խայտառակ  
**Մալաղմա** – կամնված ցորեն կամ գարի հարող չգատված  
**Մալէզ** – եփած թանձրացած խաղողի հույզ–խյուս  
**Մալխութա (ա.)** – սիսեռ, ոսպ և ծեծածով խառն կերակուր մը  
**Մախաթ** – շատ խոշոր ասեղ հաստ բաներ կարելու համար– հերլուն  
**Մախիր** – մոխիր  
**Մածնապուր** – ծեծածով, մածունով ապուր  
**Մակարդ** – խախաց  
**Մակրդել** – մակարդ զարնել  
**Մահանա (պ.)** – պատրվակ, աղիթ  
**Մահուն (ա. մատուն)** – անմեղ  
**Մաղզան (ա.)** – մառան  
**Մամուխ** – մամխի, սև և քրու մանր սալոր  
**Մաճուն (ա.)** – շաղված, մորտ  
**Մանլող** – կատուի ծագ  
**Մանիճ** – մանիչ (ճարի կոթ)  
**Մանդալ (թ.)** – կրակարան  
**Մանճա (իտալերեն)** – աղցան (սալաթա)  
**Մանճըլլըղ** – առաստաղի ծոած մարդակի տակնն գնրանով դրված նեցուկ  
 (սյուն) չփլելու համար  
**Մանտալ (թ.)** – փակաղակ  
**Մանտրել** – մանրել  
**Մանդրտուք** – մանրուք

Մատեմ (ա.) – քանի որ  
 Մար – մայր  
 Մարդակ – զերան  
 Մարդավարի – մարդու վայել ծնով  
 Մարիամա – քաշկինակ  
 Մասաթ – պողպատե զործիք մը դանակ սրելու համար  
 Մելեստ – տյարնընդատաջ  
 Մեխք – մեղք, ախոս  
 Մեթթահ (ա.) – ընտիր սպրանք  
 Մելիեմ (ա.) – սպեղանի  
 Մկկալ – մյուս  
 Մեկ ժոււմ – անգամ մը ճաշել  
 Մեճնի – երգ  
 Մեշին (ա.) – ոչխարի կաշի  
 Մեքք թու – մեքքը թույլ  
 Մետետ (ա.) – օգնութիւն  
 Մետուր – ճայրոտ  
 Մերձէն (ա.) – թուտ  
 Մեքատ – մնկ հատ  
 Մեքէրէ – գրաստ  
 Մեքիր քարել վրան (ա.) – գրապարտել  
 Մըզդանմիշ ըննալ – մօտիել, միրիել  
 Մըզմըզ (ա.) – բծախնդիր ամեն բանի , դանդաղկոտ  
 Մզմզալ – ցավիլ  
 Մըթթըլալ (ա.) – երգեցիկ նվագածու  
 Մլլիկ – կուզ  
 Մըղրիզ – կծծի  
 Մընակ – մինակ, միայն  
 Մըննար – մի ըլլար  
 Մթել – վերձակին աստառի մասը, որուն մեջ բուրդը դրված է  
 Մթնլոս – մուկմուկուսուն  
 Մթոիկ – չար ոգի մը կամ սատանա  
 Մըքզաշար – երկուքի բաժնված սիսեռ, ծավարի մեջ խառնված՝ փիլակ  
     եփելու համար  
 Մժղլիլ (ա. մեշղուլ) – գրաղիլ  
 Մժոր – մանր կտոր  
 Միլ – տիղմ  
 Միւրտեւէնկ – ջնարակելու համար քրուտի գործածած նյութը  
 Միսթար (ա.) – զգիր, հարկահավաք  
 Մյսծի – մահտեսի  
 Մյստել – խթանել, մլնել



**Մխտոց** – խքան  
**Մկոզ** – խեզ  
**Մըշըր մըշըր** – մուշ մուշ  
**Մկրտիկ** (մկրճուկ, մկրճիկ) – որքատունկի ճյուղերուն վրա տերևին քով բուսած կորունի հաստուքյանը բելանման մասը  
**Մրկատ** – մկրատ  
**Մղլա** – կտրված լման հավկիթ յուղի մեջ  
**Մղկտալ** – լուռ լալ  
**Մուլըրիլ** – կորավիլ, մուկորվիլ  
**Մոռքել** – մորքել  
**Մոռ** (թ.) – մանիշակագույն  
**Մոս մոռ** – կաս կապույտ  
**Մուք մահ<sup>66</sup>** – մահտարածած  
**Մուխը մարիլ** – տնաքանդ ըլլալ, նյութական մեծ կորուստ ունենալ  
**Մուզմըհալ** (ա.) – ավերյալ, աղտոեյալ, ապականյալ  
**Մուշտա** – կոշկակարի գործիք մը  
**Մուտտար** – փնթի, աղտոտ  
**Մշտել** – մատով իրել  
**Մշտոց** – մշտելը, իրելը  
**Մեել** – հնազանդիլ, համոզվիլ  
**Մոռիմ վրաղ** – նախատական ծն մը  
**Մրկտուք** – մկրատին բերմեն ելած մանր կտորներ  
**Մրջնքօն** – մորթի հիվանդություն մը  
**Մրտոել** – աղտոտել, կեղտոտել  
**Մտալ** – ծեռնել  
**Մորքոր** – մորաքույր

## Ն

**Նախըր** – նախիր  
**Նաճաղ** – փոքր կացին, տապար  
**Նանքթօր** (ա.) – ավերախտ  
**Նաչար** (ա.) – անճար, չքավոր  
**Նեզուկ** – գործիք մը, որ վրան կարծը կանցնեն ու վրայի թելը կըկծկեն կարծառով  
**Նեմճում** – անորոշ պատասխան  
**Նեշէր** (ա.) – նշորակ  
**Նըհագ** (ա.) – անիրակ

<sup>66</sup>Ավանդույթունը 1669 թվին եզիպոտոն օրինել է Պոլիս, Օրդու Ասիա և Մեծագործ Արմենի երկրները համաճարակ մահ մը տեղի ունեցած է, Յոսելնըլ անբալ մնացել են, զիշոր և ցորեկ հայտնի չէ նշան:

**Շոշորթա անել** – եկողի մը քեթև ունամայնը կամ սովերը հազիվ հազ  
 զգալ կամ աչքին ծայրովը տեսնել  
**Շոթլաղ** – աղի համ ունեցող ցուր  
**Շոռ** – աղություն, աղի  
**Շոռունք** – շողիք  
**Շող** – տապ, տոք  
**Շուգեկ** – շինել  
**Շուլլալ** – շուլլելը  
**Շուլլել** – խոշոր կարերով կարել կտորները իրարու, հետո կարելու համար  
**Շուլլտուիլ** – մազլցիլ ծառը  
**Շուշմայ** – կնճիք, սուսամ  
**Շախիլ** – ծեփ քսել  
**Շողա** – հնձված հասկերու խուրճ  
**Շոթել** – միզել  
**Շտիկ** – խաղավարտ, քշտիկ  
**Շուտ** – քրի աղջիկ, ալիք  
**Շքնիլ** – սովերանալ  
**Շքուիլ** – զարդարվիլ

## Ո

**Ոհմալ** – զարիուրիլ, սոսկալ  
**Ոռքը** – կերակուրին տակի այրած մասը  
**Ոռքը առնել** – կերակուրին տակը այրիլ, ցորենին ոռքը, մաղված ցորենին  
 տակի մնացած խառն մասը  
**Ոտաց լաթ** – վարտիք  
**Ոտից** – կոշիկ  
**Ոտնաման** – կոշիկ  
**Որդընտ** – որդրտ, որդ ունեցող  
**Ուգալ** – գալ  
**Ութտո** – ինկած շուն  
**Ուլալ** – չալ  
**Ուղունկ** – եղունգ  
**Ուղուր (թ.)** – ճամբա, քարենշան  
**Ուղուրսըզ (թ.)** – վատ ոտն, չարաքեր  
**Ուղուրսըզութին (թ.)** – անհաջողություն, չաջողություն  
**Ում** – որու  
**Ումկըց** – որմն  
**Ուլուզ (թ.)** – քորոտ, քոսոտ  
**Ուլունքի** – սրիկա  
**Ունք** – հոնք

Նիւսիսա (ա.) – հմայական պահպանակ  
Նիյէթ (ա.) – դիտավորություն, մտադրություն  
Նուշկուլ – կտուց  
Նուկի (թ.) – կես օրսա (կշօի չափ մը)  
Նստուկ – նստած  
Նավազիլ (ա.) – հարրուխ

## Շ

Շազզա (ա.) – կտոր  
Շահանա (ա.) – կալերը կնքող և չափող կատախարական պաշտոնյա տա-  
սանորդի համար  
Շամամ (պ.) – սեխի տեսակ մը, որ չեն ուտեր, հոտ ունի  
Շամառ – ապտակ  
Շահպէթ (պ.) – խանդավառ խոսիլ  
Շաշի (թ.) – շիլ, աչքը շեղ  
Շարմաղ – բարակ մաղ  
Շարկալ – շատ հինգած պատուտած կոշիկ, չարփանա  
Շեխ – շաղախ  
Շեխ (ա.) – ցեղապետ, աղանդապետ, վանահայր, գիտուն, մեծ գլխավոր,  
ծեր  
Շեխել – ծեփել  
Շեռ – մեզ  
Շէր (ա.) – գրպարտանք  
Շէլէ – ապարանքան  
Շէրիտ (թ.) – պարան, կապ  
Շըլտան (պ.) – կենդանիներու խախաց, ստամոքս  
Շըղապ – դուր, ծակիչ  
Շըրֆընթի – անպետք, պատիվն ինկած կին  
Շիթիլ – սածիլ  
Շիթթ (թ.) – անկողնյակ, քարծ  
Շիմշիր – տոսախ  
Շիրտ (պ.) – խաղմուզ, խաղողին քամված հույզը  
Շիրիկ – շուշմայի յուղ  
Շիլ – քամված խաղողին կուզկապը, կուտը, մնացած կծեպը  
Շիքար (պ.) – արժեքավոր, հազվագյուտ  
Շիքիւր (պ.) – գոհություն  
Շլիկ – խմորով պզտիկ բլիթ, որ ծծված շուշմա և ոռսի իրար խառնված  
կըթաթխեն և կուտեն  
Շլիթ – վիզ  
Շնոֆոր – շնորհավոր

Ուշկըց – որտեղից, ուրկից, ուսկից  
Ուշկըցում – ուրկից  
Ուտուպ – օտուպ  
Ուոցնել – ուոնցնել  
Ուպուպ (թ.) – կնրպ  
Ուպուպով – խոհեմ, մարդավարի  
Ուսուլ (թ.) – կամաց  
Ուսուլ (թ.) – կնրպ  
Ուտալ – տալ

## 3

Չագգու (թ.) – զմելի  
Չաք (թ.) – խաչմերուկ  
Չագըշմիշ ըննալ (թ.) – (աշուղներու) մրցիլը, (մրցահրավեր)  
Չալխավու – բամբակին խոզակին վրայի աղտերը և տերևները մաքրելու համար, որ որթատունկի կամ ուտիի ճյուղերն հյուսված շատ խոշոր տակառածն գործիք մը (2 մեքր երկայնքով, փորը՝ մեկ մեքր տրամագծով), որ կրդարձնեն խճիկը մաքրելու համար:  
Չախմախ (թ.) – հրահան  
Չախմախ քար – կայծքար  
Չախչախ (թ.) – ջրադացքի կազմած մը  
Չաղա – երեխա, մանուկ  
Չաղալա (թ.) – խակ պտուղ  
Չանղալ – կեռ  
Չանղրտել – ճանկրտել  
Չավտար (թ.) – հաճար  
Չարըղ (թ.) – տրելս  
Չարխ (պ.) – անիվ, մեքենա, երկինք, քախտ  
Չարխել (թ.) – չարխով սրել  
Չար նաչար (պ.) – անճար  
Չարչքվիլ – ճիգ ընել, չարչարվիլ  
Չարչաֆ (թ.) – սալան, ծածկոց կանանց  
Չարփաճաղ (թ.) – մասնավոր ճյուղ մը խաղողի եռացող հույզը խառնելու համար  
Չարփել (թ.) – գարնել  
Չարփու (թ.) – դժնկի ճյուղեր՝ ցանկապատ շինելու համար  
Չափրաստ (պ.) – խոտորճակ  
Չէրլէ (թ.) – հաշվետախտակ  
Չէրէ (թ.) – հրոսակ  
Չեմպեր (պ.) – շրջանակ

- Չեվուկ** – պտղատու ծառերու պարտեզ  
**Չերքեզ** (*պ.*) – աղանդեր  
**Չերչի** (*թ.*) – շրջուն փերեզակ, մանրավաճառք ընող  
**Չեփկեն** (*թ.*) – թեզանվալոր թիկնոցակ, բաճկոնակ արծակ քերով  
**Չըրրղ** (*թ.*) – կայծ  
**Չըղըր** (*թ.*) – նեղ ճամբու շավիղ  
**Չըննայու** – ջիճի որ  
**Չըժժըմնիս** – չմեծանաս  
**Չիթ** (*թ.*) – տպածո, պասմա  
**Չիթարա** (*թ.*) – մետաքսե, մանուսա  
**Չիլ** (*պ.*) – ճգնիլ, նեղ օրեր անցնել  
**Չիկկեն** (*թ.*) – ցիգան, թռչա, կծծի  
**Չինի** (*պ.*) – հախճապակի  
**Չինկո** (խաղերեն) – զինկ  
**Չիվի** (*թ.*) – սեպ  
**Չիրիշկերի** – փայտե կաղապարներով զոգնոցի ներմակ կտավին վրա, հալած մեղրամոմին մեջ թաթխելով վրան տպելի հետո, կապույտ կընեթկեն, լվալի հետո մոնը կանհայտանա և տեղը կըմնա ճերմակ ու զանազան ձևեր ու նկարներ կըներկայացնե:  
**Չիս** (*թ.*) – դար, զույգ, կից  
**Չիսիս** (*թ.*) – փուճ  
**Չիրփի** (*թ.*) – վառելիք ճյուղեր  
**Չիքը կրվիս** (գրվիս) – մեռնիս  
**Չմորքը կրվիս** – մեռնիս  
**Չոլաղ** (*թ.*) – միածեռանի  
**Չոմմաղ** (*թ.*) – ստվարածայր թիր, լախտ, մահակ, տավուլի ճպոտ՝ ծայրը կլոր  
**Չոռ** – անասունների համաճարակ  
**Չորթ** – կոշտ ու կուպիտ, անշնորհք խոտոլ  
**Չորթան** – չորցած թան, ծմբան համար պաշար  
**Չուլ** (*ա.*) – քուրծ, այծի մազե շինված կապերտ  
**Չուվալ** (*թ.*) – սլարկ  
**Չուստ** – ալքը թաց, աշխատասեր  
**Չոփ** (*թ.*) – շյուղ  
**Չոփուտ** – չեչուտ երեսով  
**Չոքիլ** – զճիլ, ծունկի վրա գալ  
**Չոքուկ** – չոքած  
**Չպուխ** (*թ.*) – գավազան, ծխափող  
**Չվեյրոլ** – անվայել  
**Չրթիկ** – ճիռ, խաղողի ողկուզիկ  
**Չօթ** – ցնցուռի, ծործ, գլզլյակ

- Պագ – համբույր
- Պագնել – համբուրել
- Պագտվիլ – համբուրվիլ
- Պագուկ – ճակնդեղի տերևին մեջի հաստ մասը
- Պաժնել – բաժնել
- Պաժնվիլ – բաժնվիլ
- Պալանկազ (քոյ.) – վրան գլուխը պատտտած, աղտոտ
- Պալասան – բալասան
- Պալլի – բանալի
- Պալմալ – քիչ մը առաջ
- Պախտ (պ.) – բախտ
- Պահ – բահ
- Պահել – բահել
- Պահիկ մի – քիչ մը վերջը
- Պահ մալ – քիչ մը առաջ
- Պաղարջ – բաղարջ
- Պաղնիք – թաղնիք
- Պաճանաղ (թ.) – քեճեկալ
- Պաճիկ էնել – պառկիլ
- Պաճ (պ.) – բամբ (ջութակին բամբ թելը)
- Պաճիյա (թ.) – սլամի
- Պաճպակ – բամպակ, բամբակ
- Պաճպատակ – զվարճախոս, կատակախոս
- Պաճպատանք – բամբատանք
- Պաճպասել – բամբասել
- Պայդուշ (թ.) – զիշերահավ, բու
- Պան-իլք – բան
- Պանալ – բանալ
- Պանը բուստեր է – անհույս վիճակ ունի
- Պանձր – բարձր
- Պանկետ – բանգետ
- Պանճար – ճակնդեղ, բանջար
- Պաշլըղ (թ.) – գլխանոց
- Պաշլընել (թ.) – սկսիլ
- Պաշղա (թ.) – ուրիշ
- Պաշշաղ (թ.) – հմմտած արտին խոզանին մեջի թափած հասկերը հավաքել
- Պաշշոք – ծիծրու ճակտի վրա՞ի ճերմակը
- Պաշրտել – բաքքնել, գործ մը գլուխ հանել
- Պապաթ – տեսակ

- Պապանծիլ – պապանծիլ  
 Պառ – խմորված հեղուկի երեսը զոյացած մաշկու նման ճերմակ խավը, փառ  
 Պառկուկ – պառկած  
 Պառնալ – բառնալ  
 Պառափլ – պառափիլ  
 Պառցնել – բեռցնել  
 Պաստեղ (թ.) – խաղողի խյուսը կամ մալեզը սառնանի վրա փռված ու հանված անուշեղեն  
 Պատ կախոց – զանազան գույներով կերպասներն մանր մունր կտորներով այք այք շինված երկար ու նեղ, մեջը թել, ասեղ, մատնոց և նման առարկաներ դնելու համար պատրաստված և պատեն կախված:  
 Պատճան (թ.) – սմբուկ, անպան  
 Պարակ – բարակ  
 Պարակ մանել – միհար, հիվանդոտ  
 Պարակ ցաւ – թոքախտ, հյուժախտ  
 Պարան – մազն ուղորված չվան = (փոխաբերաբար) այգիներու որբատուն-կի երկար շարքը  
 Պարեխօս – քարեխոս  
 Պարեկամ – քարեկամ  
 Պարզ – պայծառօտ  
 Պարզնապապ – սկեսրայր  
 Պարզչվիլ (թ.) – հաշտվիլ  
 Պարի – բարի  
 Պարի ժամ – բարեժամ  
 Պարիշատակ ըննա – (մաղթանք մը) քարի հիշատակ լինի  
 Պարծղնալ – պարծենալ  
 Պարկնտեր – պարտատեր  
 Պարկնտանք – քարեկենդան  
 Պարկութին – քարկություն  
 Պարծ – բարծ  
 Պարտակ – համեստ, պարկեշտ  
 Պարտակիլ – պարտակել  
 Պարցուկ – բեռցած, բեռցված  
 Պաց պերան – գաղմիք չսպիրոլ  
 Պաց – պահց  
 Պեռ – բեռ  
 Պերան – բերան  
 Պերան ծռել – օգնություն խնդրել  
 Պերան տալ – մատնել  
 Պերել – բերել

- Պզզալ – բզզալ  
 Պզզիլ (թ.) – սառիլ  
 Պզեզ – բզեզ  
 Պզիկ պզիկ – բզիք բզիք  
 Պզտորել – թելերը իրար խառնել, սուտ շինել  
 Պզտկուց – պզտիկ ատենեն  
 Պզքտել–պզկտել – բզքտել  
 Պզգմիշ ըննալ (թ.) – ծանծրանալ  
 Պէթր (այ.) – վթար  
 Պէլլըվիլ – պահվըտիլ  
 Պէլլըվուկ – (խաղ մը) պահվըտուց  
 Պէլքի (թ.) – թերևս  
 Պէտկէթ (ա.) – ոչ իսլամներն գանձված զինվորական տուրք, որպես անվստահելի զինվոր չլին աններ, փոխարենը դրամ կտանելին  
 Պետ տուա (պարսկերեն, արաբերեն քարոզված բառ) – անծօր  
 Պըխպըխել – մոլթել  
 Պըրխուտար (այ.) – երջանիկ, ճոխ  
 Պըճըլիկ – շատ պզտիկ  
 Պըճիկ – պզտիկ  
 Պըճօ – պզտիկ  
 Պժկտտել – փնտտտել, փնտտել  
 Պժկտտան – փնտտող, ամեն տեղ խառնշտկող  
 Պժկտուց – փնտտուց  
 Պժպժալ – ջրին եռալու սկսած ծայնը  
 Պիթուն (թ.) – ամբողջ  
 Պիիել–պիիել – պահել  
 Պիիվիլ – պահվըտիլ  
 Պիլէկ (թ.) – դաստակ  
 Պիպի – հորացույր  
 Պէլխ պլըխ – եռացող կերակուրին ծայնը  
 Պլլել – փաթթել  
 Պլլիկ – պզտիկ, տափակ, կլոր լոշ  
 Պլլըվիլ – փարիլ, փաթթվիլ  
 Պլման = որքատունկի կամ կաղամբի տներներով փաթթված կերակուրը (սարմա–տոլմա):  
 Պլորել – ոլորել  
 Պլորուկ – (կերակուր մը) կլորված մանր քրուֆթա  
 Պղինձ – մեծ սան, պղինձ  
 Պղող – քղուկ  
 Պճեղ – փտտորին մանր մասերը  
 Պճեղել – պճեղները զատել



ՊՃԼՍԱՎ – շարժակիլ, աչքերը շարժել  
 ՊՃԼՍՈՒՆ – շարժակող  
 ՊՆՈՐԸ – կերպարանք, դեմքին ծնը  
 ՊՈԳ (թ.) – գորշ  
 ՊՈԳ – բոգ  
 ՊՈՔՆԻԿ – պզտիկ, սատանա մանչ  
 ՊՈԼ (թ.) – առատ  
 ՊՈԼՂՈ – քարակ ճյուղեր քոցավածել տաքնալու համար  
 ՊՈԼՈՐ – բոլոր  
 ՊՈԼՈՐԵԼ – բոլորել  
 ՊՈԼՅ – բույք (աստեղատունը)  
 ՊՈՂՃԻԿ – պոչ  
 ՊՈՒ – խոսքան արտ  
 ՊՈՒԳ (թ.) – սաս-սատույց  
 ՊՈՒՆԿ – ումպ  
 ՊՈՒՆԿԵԼ – ըմպել, ումպ ումպ խմել, ումպել  
 ՊՈՒՎՈՒԳ – կկզած, կուկուգ նատիլ  
 ՊՈՒՄԱՊ (թ.) – վարակ, ոստ, ուղեչ  
 ՊՈՒՐՄԱ (թ.) – ոլորել, մալել, խմորը ոլորել և չորցնել ծմբան համար  
 ՊՈՒՐՄԱ (թ.) – գուլա  
 ՊԱԳՊԻ – կկզիլ, կելուգ նատիլ, պղպզիլ  
 ՊՈՆԵԼ – բոնել  
 ՊՈՔԻԼ – պայթիլ  
 ՊՈԿՈՒՆԸ – շրթունք  
 ՊՈՕՉ – խոշոր սան  
 ՊՍՊԵՆԻ – ծիթենի  
 ՊՍՊՈՒՆԸ – աչքին պտուղը  
 ՊՍՊՈՒԳ – բուք և ցուցամատով բռնված այլուր կամ փոշիե բանի չափ  
 ՊՍՍՈՒԿ – հողե շինված սան, ծիծին պտուկը, ծառին պտուկը (աչքը)  
 ՊՍՍՈՒԳ – ծիրապտուղ  
 ՊՍՍՍՈՒԳ ԿՆԱ – կորսվել, դժոխք գնա  
 ՊՍՍՍՈՒԿ – կորսվիլ, երթալ  
 ՊՐԻՆՈ – բրինձ  
 ՊՍԳ = կանաչ տիպին հունտի ցողունը (սողան էրզկի)

## Ջ

ՋՈՒԳՃԻԿ ԷՆԵԼ – զճիլ, նատիլ  
 ՋԻՔԻԿ – չար, անհնազանդ աղջիկ  
 ՋՈՒՍՈՒՆ – փոքրիկ քարե ալպզան (հնձան) մեջը խաղող ճգմելու համար

**Ջրդիկ** – թթամատն ու միջնամատը իրարու շփելով ձայն հանել պարելու  
ատեն

**Ջրջքնել** – ցրջքնել, ջուր սրսկել

## **Ռ**

**Ռաչալ** – դրումի փրթված կտորները սուփի մեջ եփված անուշեղեն:

## **Ս**

**Սագգօ** – վերարկու

**Սաղդայել** – սանդարամետ

**Սագ** (ս.) – տամպուրա

**Սաքըր** (ս.) – սակուր

**Սալըղ տալ** (ս.) – տեղեկություն, տեղ մը բացատրել մեկու մը

**Սալլտվիլ** (ս.) – ճոճիլ

**Սալման** – ջուլիակի դեզկլախին քառակուսի հաստ փայտը, որուն վրա  
գործված կտավը կրփաթթվի

**Սաղդավու** – կենդանիներու պաղառությունը

**Սաճ** (ս.) – երկաթե բիթեղ կտած, կլոր, գոգավոր վրան հաց եփելու համար

**Սապունել** – օճառել

**Սառատ** – հաղ մաղելիք խոշոր ծակերով մաղ

**Սատակ** – սատկած, թուրքի մետել

**Սատանկություն** – սատանայություն, խորամանկություն

**Սավաղ** – թեթևամիտ

**Սավահան** (ս.) – պարսատիկ

**Սավարնա** (խաչ.) պարիլլըյակ – արմատ մըն է բույսի

**Սևուց** – աչքին սև մասը

**Սևչալու** – դժմիկ

**Սեթ** – որթատունկի բունին հաստ մասը, կտրված վառելու համար

**Սելեպ** – խոշոր քար

**Սելընքի** (ս.) – հեղեղին բերած քաները

**Սելլէ** (ս.) – ուղիի ճյուղերն հյուսված մեծ կլոր կողով կերակուր, ծածուն և  
այլն տակը պահելու համար

**Սեչուկ** – տխմար, հիմար

**Սերկի** (ս.) – փոված օթոցներ

**Սերփեն** – Սարփնա

**Սերու** – տան առջև քարէ շինված նստատեղի, սետիր

**Սըթըլ** – անկով պղինձե դուլ

**Սըլըլուկ** – կոնածն ցցվածք

ՍըԼՇԻՍԿԻԼ – սահփոտուկ, սայթաքիլ  
 Սըպըթուղ – լարձուն  
 Սըպըթըղվիլ – սահիլ  
 Սըռըմ – սելի բարակ շերտեր  
 Սըկընճի – սուտ շինող, ստախոս  
 Սըրա (թ.) – կարգ, շարք  
 Սըրասըզ (թ.) – անկարգ  
 ՍըրըՖ էնել (ա.) – արձակել  
 Սի – սսիկա  
 Սիեկ – սել  
 Սիլլէ – աստակ  
 Սիկի – սսիկա  
 Սիկիլ – ձեօքին կամ ձարմնին վրա պզտիկ գնդիկ  
 Սիկոր – ասոր  
 Սինի (ա.) – պղինձե շինված ճաշասեղան, շինական  
 Սինօր – սահման  
 Սիւլիւկ (թ.) – տգրուկ  
 Սիւնէիտ – քափքփած  
 Սմսեղուկ – քծնող, քսվըտող  
 Սոթսել – հագուստին քներդ կամ քղանցքը վեր քաշել, կողոպտել  
 Սոստուկ – սոք տված  
 Սուլաղ (թ.) – ծախվիկ  
 Սոյ (թ.) – ազգատոհմ, ցեղ  
 Սոյսըզ (թ.) – անհայտ տոհմ, անազնիվ  
 Սուսաղ – ջրի դղումը չորցված ու մեջը պարպված, վրայեն ծակ մը բացված, կարասն ոռոփ հանելու համար  
 Սուրխա – տարապարիակ աշխատանք  
 ՍուրՖա (թ.) – սփռոց, ճաշի սեղան  
 Սուրուղ – երկայն ծող  
 Ստըպակ – սպիտակ, ճերմակ  
 Ստպկուց – աչքին ճերմակ մասը  
 Սրբուկ – սրբված  
 Սոզգի – մեծ փոս քար, որուն մեծ ձեծած և այլն կըծծեն  
 Սօլուղան (թ.) – ծանրաշունչ, ծիեբու պաղատությունը  
 Սօն – սյուն

Վ

Վազանձա (Ֆ.) – արձակուրդ  
 Վազան – շատ վազող  
 Վազ անցնիլ – լքել, հրաժարիլ

Վազզել – վազել  
 Վաթուն – վաթուն (60)  
 Վաչըհաչ – վայրահաչ, պարապ խոսող  
 Վայնաչար – գեշաղենկ  
 Վառուկ – վառած  
 Վանքով – առավուտ  
 Վանքովուն – առտըվանց  
 Վզնոց – փողնոց  
 Վէզը երթալ – իսլամներու հաճ երթալը Սեքքե, Սետինե, ուր պահված է Մուհամմեթի հեծած ուղտին վեզը  
 Վե հեյ – քացազանչություն մը (‘իհնչ եղավ որ’ իմաստով)  
 Վէսի (ա.) – կտակակատար, խնամակալ  
 Վէսիլեթ (ա.) – կտակ  
 Վիզը բուրդոտ – քուրդերուն համար կըզործածվեր  
 Վլանալ – լվանալ  
 Վլացք – լվացք  
 Վլվուկ – վայնասուն

## Տ

Տա – տղա (կոչական)  
 Տագրկին – ներ  
 Տազ (թ.) – կնդակ  
 Տալ – երկան քույրը  
 Տալտա – ծածուկ, հովանի տեղ  
 Տաղ (ա.) – խարան  
 Տաղարան – երգարան  
 Տաղել – խարանել  
 Տանիկ – վազուկ ազգ, անօրեն  
 Տամա (իտալ.) – աղյուսախաղ  
 Տամար (թ.) – երակ  
 Տայաղ (թ.) – ծեծ  
 Տայաղ (թ.) – նեցուկ  
 Տայել – դայակ, մանկաբարձ  
 Տանծ – տանծ  
 Տանծօ – (արհամարհական) տանծի պես մարդ, խելքը պակաս  
 Տանծուկեւ – խելքը պակաս  
 Տանճանք – տանջանք  
 Տաշմիշ ըննալ (թ.) – հորդիլ  
 Տառապ – վերձակի մքելին վրայի խոշոր կարերը  
 Տառնալ – դառնալ

- Տառոս** – քաղաքի հերթ  
**Տասնընամ** – անգամ մըն ալ  
**Տաս մի** – անգամ մը  
**Տատաստան** – դատաստան  
**Տարմատաղը (թ.)** – ցան ու ցիր  
**Տարուկան** – մորթի երեսի տարափոխիկ վերջ  
**Տափ** – դրամ  
**Տեղել** – դնել  
**Տեղեր** – մահիճք  
**Տեղին** – դեղին  
**Տեղնուց** – հավկիթին դեղնուցը  
**Տեներ** – տանիք  
**Տէլիճէ** – բուհնակ  
**Տէկնէկ (թ.)** – գավազան  
**Տհնէ (արար. տօհմն քառնն)** – ջուլիակի գործած կտավի առեջին գլուխն  
 ելած քելոտ մասը, մասնավոր կերպով կտորները իրարու կարված, յու-  
 դոտ ձեռք սրբելու համար  
**Տեմ** – դեմ  
**Տեմթ (թ.)** – տրցակ, խուրճ, փունջ  
**Տեմ տալ** – դիմադարձություն ընել  
**Տեմտեմի** – դեմ առ դեմ  
**Տեմ տնել** – դիմադարձություն ընել  
**Տենկ** – դանակ  
**Տեռչկ (թ.)** – բազմոց  
**Տերեքտաման (Ֆ.)** – ուղղակի (խաչակիրներն մնացած բառ մը հայեր և  
 բուրբեր հավասարապես կգործածենին)  
**Տեռչնէ (թ.)** – սալահատակ  
**Տէշօն** – տաշտ  
**Տերցսկէն** – եմնի կռիվը կարելի վերջ ներսի մասը դուրս դարձնելու հա-  
 մար փայտն գործիք մը, որ կռվակարները կըգործածենին  
**Տերման (պ.)** – դեղ  
**Տերման չունիմ** – անճար, տկար եմ, կարողություն չունիմ  
**Տերպետրպ (պ.)** – քափառական, դոմեդուտ  
**Տորփի** – խոշոր ակոսներով խարտոց ձիերը պայտելի վերջ եղունգը (սմ-  
 քակը) կըխարտեն  
**Տորփիսըզ** – անտաշ, կոշտ, անկիրթ  
**Տըմանալ** – դիմանալ  
**Տըմացկուն** – դիմացկուն, տոկուն  
**Տըմպօ** – խեղճ ու կրակ  
**Տընագել** – ծաղրել, կապկել  
**Տժարել** – տաքություն ունենալ, անհանգիստ ըլլալ

**Տժոխք** – դժոխք  
**Տիլիմ (թ.)** – շերտ  
**Տիկոր** – ասոր  
**Տինկ** – ծավար ծեծելու տեղ, խոշոր կլոր քարով, որ ձի մը կըղարծնե կամ էլ եքորականությունով կըղատնա  
**Տինճ (թ.)** – առույգ, ժիր  
**Տիտիկ** – դաղար, հանգիստ  
**Տիւրխաթ (պ.)** – ուղիղ  
**Տղազկան քննալ** – երկնել  
**Տնքել** – տնկել  
**Տնքուկ** – տնկված  
**Տոլապ (պ.)** – ջրանիւլ, պահարան, դավ  
**Տողալ** – դողալ  
**Տոր** – շիտակ, հարթ  
**Տունա** – դուն ալ  
**Տուտ** – դուռ  
**Տուվա** – տղա (կոչական)  
**Տուրել** – շտկել  
**Տոնպաց** – դոնրացեք  
**Տրացին** – դրացի  
**Տքուն** – քնատ, անքուն

## Բ

**Բավաղ** – սև խաղողն շինված պատեղ  
**Բենտ (թ.)** – հարթիչ, քերիչ

## Ց

**Ցախ** – որբատունկի չորցված ճյուղեր՝ վատելու համար  
**Ցահել** – ցորեն կամ նման հատիկ վալով տակի քարը զատել  
**Ցկնիլ** – ցնկնիլ, շան ծնիլը  
**Ցնծխտել** – հազուստը վալու ատեն ատշտին մեք արագ արագ երկու ձեռով ջուրին մեք թաթխել ու հանել  
**Ցուցանք** – հրաշք  
**Ցըցընել** – ցույց տալ  
**Ցօղել** – վալ քերանը կամ աման մը

- Փալազ – կարպետ, այծի մազե շինված
- Փալախ – խոտ մը
- Փալուտակ – Նշայով և ռուսիով եփված մալեզ, վրան չուշմա ցանված
- Փակեղ – Վակաս, ուրար, իսլամի ճերմակ փաթթոց
- Փակցանք – կրակ վառելու կամ բռնկեցնելու նյութ, տաշեղ և այլն
- Փաղա – փայտե շինված կղպանք
- Փաղազ – մաղաս, խուխ
- Փած (թ.) – քաժ, տուրք
- Փայտոս (հուն.) – դադար
- Փարթ – քաղիթք
- Փարչ – կուժ, սափոր
- Փարսեղ – երկու քնեղը ուղիղ և ծիզ քանալ
- Փարսլատեղ – ճանկատեղ, նան՝ լեզվով աներեսություն ընել
- Փափանք – փափաք
- Փեճկել – փետտել
- Փէլլալ – փայլել
- Փելլուն – փայլուն
- Փէիփեի – փէիփեի ընել – փայփայել
- Փէշկիր (սլ.) – անծեռոց
- Փետ – փայտ
- Փետեղեն – փայտեղեն
- Փեօկիր – քալելու ատեն զարշապարը ոլոքին զարնող
- Փեօրենկ – բրուտի կապեն շինված, թրծված ջրի խողովակ
- Փըլլըվիլ (փըլլըվուկ) – ընքշամարտիլ
- Փիճէ – կոշիկին տակը զարնված կաշիե կարկտան
- Փիր (սլ.) – ծերունի, գլխավոր, պետ
- Փլիլ – փլիլ
- Փլուկ – փլած
- Փլխտիլ – փխտիլ
- Փոթ – ծալք
- Փոթոտիլ – կոճճմտիլ
- Փոշոլ – քերքեր, սիսեռ, դղունի կեղև, յուղ, ծեծած ոսպ, վրան սոխըրանցով պատրաստված կերակուր մը, որ միայն ծնունդի խթման օրը կեփեն
- Փոսրուղ – արտակարգ գեր, նան դիակ ուտող կենդանի մը
- Փորել – բրել
- Փորոտ – բորոտ, քոսոտ, ուրուկ, հայ բողոքականներու համար կը գործածվեր, որպես հիվանդություն մը հայության մեջ, նախատական ծնով
- Փուք – փքոց
- Փնքի – աղտոտ

Փոնգտալ – փոնցեղ, ուժեղ հազով հազալ  
Փսխտիլ – լիկած ճզմվիլ (շան փսխտած = շան ծնունդ)  
Փրթել – ջարդել, մանրել  
Փրթօն – կտոր, մաս  
Փրլքլու – ստեպղին  
Փրցնել – պոկել

Ք

Քշկի (այ.) – երանի թե  
Քարել – նստել  
Քաշան – տակը կլոր պղինձե դուլլ՝ հորեն ջուր քաշելու համար  
Քարկտոց – քարի կույտ, պարապ խոտք  
Քաքի պզեզ – ընդհոն  
Քելել – բալել  
Քելվածք – քաջվածք  
Քլլէլ (թ.) – գեղադեմ, կտրիճ տղամարդ  
Քձէր (այ.) – կամար, կանանց գոտի ոսկին կամ արծաթե  
Քշկիւր (այ.) – մուրացող տերվիշի քաս  
Քվէրէ – կակուղ, դյուրաքնել տեսակ մը ճերմակ քար  
Քվկիւր (այ.) – քամոց, պարզուտ  
Քրստն – փայտե տաշտ մը, տակը կլոր, որուն մեջ չորքան կը հարեն  
Քեզ – հրատ, կարմրած կրակ  
Քեզ – (արևի ջերմության իջնելը) հրատ, տաքություն, ճանր  
Քեօրիճ (թ.) – անդամալույծ  
Քեօտ (այ.) – քարծ, պակասամորուս, երեսը սակավամազ  
Քեօջրե – հեսան  
Քէֆ (այ.) – մսի կամ կերակուրի փրփուրը  
Քըքըմըր – շղթրոնկիլ, պսոնկիլ, սատկիլ  
Քըքըր հաց – կսկուծ  
Քթթալ – երերալ, ասդին անդին երթալ  
Քթթել քթթել  
Քինար (այ.) – եզերք, լուսանցք  
Քինք – քիք  
Քիպիւր (այ.) – հպարտ  
Քիչքերտ – հյուսնի հարթիչ  
Քիթիւկ (թ.) – հաստ կոճղ  
Քիւլահ (այ.) – քաղիքե գդակ  
Քիւլ – գուլա  
Քիւլէկ – տախտակով շինված դուլ  
Քիւլիւն (թ.) – քարհատ, քլունկ



Բիւրվէ – կնքահայր  
 Բմնել – սողմել, քամել  
 Բմնուկ – քամված, կծծի  
 Բմնուք – քամուք  
 Բնթխիլ – ջուր խմած ատեն խաչափողը կամ քիթը ջուր ելրթալ  
 Բննիլ – ընննալ  
 Բշկուր – արար  
 Բշտել – նվազածել, ջութակ կամ տափ  
 Բշքշցնել – իրար ձգել, կռվի հրահրել  
 Բոթոս – բանտ  
 Բոզմընիտ – ձեր քովը, քովերնիդ  
 Բուտօիկ – քուտակ  
 Բոմոս – քսու, անպետ  
 Բրէ Լնէլ (Բրդ.) – զիջիլ, զիջանիլ  
 Բրիվ (Բրդ.) – կնքահայր  
 Բրտնխաշ – քրտինքե խաշված  
 Բրքրան – քրքրող, խառնող  
 Բցխա – տնկելու համար մանր սոխ  
 Բօր – քույր

## Օ

Օգան (Բրդ.) – շատախոս  
 Օրկել – բավել  
 Օլլրվիլ – պտըտիլ  
 Օլուդ (Ք.) – շոնթ, խողովակ  
 Օխլադու (Ք.) – գլան հաց բանալու համար  
 Օծկան – օձացալ  
 Օդորդ – ծիշտ, շիտակ  
 Օդրկել – դրկել, ուղարկել  
 Օրան – օրորոց  
 Օրըկվիլ – պարունակվիլ  
 Օրի – ինչու համար

## Ֆ

Ֆազ (Ք.) – որոգայթ, բակարդ  
 Ֆալադդա – ծնծելու գործիք մը, ֆալախկա  
 Ֆանոս (Իուևարեն) – լապտեր, ֆենէր  
 Ֆարագա – քեպետն  
 Ֆարչիկ – վարչամակ  
 Ֆօս – փուն (ընկույզ)

## ՑԱՆԿԵՐ\*

### ԱՆՉՆԱՆՈՒՆԵՐ

#### Ա

- Աբասի որդի Պագիկ, 69  
 Աբասյան, 49, 59, 64  
 Աբգար, 74  
 Աբուլ – Աբրաս, 59  
 Ահմատ, 136, 137  
 Աղեքսանդր, 55  
 Աննա Մխոթի Աբրահամյան, 39  
 Անտիոքոս Ա, 87  
 Աշոտ, 64, 69  
 Աշտուրիչ, 71  
 Ապլաասար, 71  
 Ապղարիպ, 69, 75  
 Ապուլ–Պասան–Ալի, 57  
 Ապու–Ջաֆար, 49  
 Ապու–Ասիլ  
 Ապուքայա, 64, 66, 68, 69  
 Ապուքայաի որդի Վասիլ, 68, 69  
 Ապտալլա–Իպն–Ալի, 49  
 Առաքել, 38  
 Ասան–Էմմի  
 Ասլանյան Ղևորգ, 91  
 Ավետիս Գուլանճյան, 92, 93, 148  
 Ատոմ, 69  
 Ատոմ Արծրունի, 64  
 Արմեն, 124  
 Արտաշես, 38  
 Արտաշես Տատյան, 125, 165  
 Արտավազդ Արքեպ. Սիւրմեյան, 57  
 Արտաշտանա, 53

#### Բ

- Բագրատ, 63, 75  
 Բագրատունի, 69, 70  
 Բանիկ, 70  
 Բարեբրեոս, 13, 63  
 Բարսալիբբի, 57  
 Բել, 88

#### Գ

- Գարրիել, 64  
 Գագիկ Աբասյան, 64  
 Գագիկ Աշոտյան, 64  
 Գագիկ Շահնշահ, 69  
 Գագանճի Սըխսի Թորո, 36, 130  
 Գագրիկ, 63  
 Գալեդան, 76  
 Գեղամ Աղեքսանյան, 39, 158  
 Գերմանիկոս, 56  
 Գևորգ Ազնավուրյան, 39  
 Գևորգ Գավուզտրյան, 130  
 Գևորգ Մանիակես, 65  
 Գևորգ Սահակյան, 33  
 Գևորգ Վիշապյան, 115  
 Գող Վասիլ, 42, 68, 72  
 Գոստ–Պապա, 41  
 Գուլումճյանճներ, 131  
 Գրիգոր, 41  
 Գրիգոր Աբարդյան, 41  
 Գրիգոր Բջնեցի  
 Գրիգոր Թենեքեճյան, 92, 148  
 Գրիգոր Լուսավորիչ, 90  
 Գրիգոր Մագիստրոս, 66  
 Գրիգոր Մաշկնոր, 75  
 Գրիգոր Վկայասեր, 68

\* Ցանկերում ընդգրկված է միայն «Պատմություն Անիականի» հատվածը:

**Դ**

Դանիել Վարուժան, 67  
 Դավառամոս, 68  
 Դավիթ, 68  
 Դուռ-Խալիա, 53

**Ե**

Եագուպ Մահտեսյան, 67  
 Եաղուպ Փաշա, 88  
 Եակոտ-ալ-Չամավի, 68  
 Եղսա, 111  
 Եղիշե վոդ. Գալֆայան  
 Ենովք, 36  
 Եպիֆան, 66  
 Եսթեր Մանուկյան, 39, 112  
 Եսթեր Սրագործյան, 39  
 Եփրեմ Ծերնիկյան, 130

**Զ**

Զեյնեյ, 35, 114, 185  
 Զյուլգատրյան, 77  
 Զորայ Գասապյան, 124  
 Զորվրի-Կոզեռն, 61

**Է**

Էսմեր-Չավուշ  
 Էֆեյան-Գրիգոր, 121

**Թ**

Թագլարփալասար Ա, 54  
 Թաթուլ իշխան  
 Թալաթ, 108  
 Թերճունանյան Ասրզիս, 112  
 Թիմուրլենկ, 77  
 Թիսբեյան  
 Թաթիկ Չակոբյան

**Թոմաս-Էլեք**

Թոռնիկ  
 Թովմա Արծրունի  
 Թորոս, 70, 72, 75  
 Թուճարյան Գևորգ  
 Թովալ Սըլխսի Կարապետ, 130

**Ժ**

....

**Ի**

Իլու-Տեշուպ

**Լ**

Լեոփոլտ-Կաշչիկ, 97  
 Լևոն, 68, 69, 72, 199  
 Լևոն Գույումճյան, 38, 40  
 Լևոն Խալֆա, 38, 42  
 Լեո, 20, 26, 84  
 Լեվիսիուս  
 Լիկոս, 75  
 Լուքաճան  
 Լուսիկ Պողոսյան, 39

**Խ**

Խաքոյան, 57  
 Խանըմ Գոնտուրաճյան, 93  
 Խանի-Գալիբատի, 55  
 Խաչկա-Խլին, 69  
 Խատտուսիլ, 53  
 Խոսրով, 36, 38  
 Դոսրով Ասքանազյան, 38, 127  
 Խորեն Եպիսկոպոս, 96

**Ճ**

Ճերնիկյան Չակոբ, 131

**Կ**

Կամսարական, 71  
 Կասկա, 54  
 Կավոզ, 88  
 Կարապետ, 36, 149, 150, 153, 155, 156, 161, 164  
 Կարապետ Թափրակչյան, 39  
 Կարապետ Շիրիքճյան, 37, 38  
 Կարապետ Քեթենճյան, 43, 152, 164  
 Կելընոյան Սաբո, 147  
 Կղեմես վրդ. Պեհեսնըցի, 43  
 Կղեռպատրա, 56  
 Կոստանդին, 76  
 Կոստանդին Ա. Ռուբինյան  
 Կոստանդին Ե. Կոպրոնիմոս

**Ղ**

Ղակոբ, 89, 94, 95, 126, 128, 150-152, 155, 164, 174, 175, 192  
 Ղակոբ Ալլիքսանյան, 37, 94  
 Ղակոբ Բընբըրյան, 37, 38  
 Ղակոբ Գույումճյան, 31, 124  
 Ղակոբ Եփրեմյան, 81  
 Ղակոբ Շաքոյան  
 Ղակոբ վրդ. Կեոնուլլյան, 41  
 Ղանի Գայլանյան, 39  
 Ղանի Նաճարյան, 39  
 Ղանի Պողոս Մանուկյան, 110  
 Ղանի Ղառոբ աղա, 121  
 Ղանիտ, 43, 91, 103, 121, 147, 193  
 Ղայկ, 32, 88  
 Ղարություն խաչիա, 36, 38  
 Ղարություն Շերմիկյան, 123  
 Ղարություն Մանուկյան, 91  
 Ղարություն Սեդրյան, 40  
 Ղարություն վարդապետ, 41  
 Ղարություն Տեմիրճյան, 96

Ղեբրու, 28, 64  
 Ղովհաննես, 70, 125, 126, 154, 155  
 Ղովհաննես Աղբարլարյան, 39  
 Ղովհաննես Աճեմյան, 41  
 Ղովհաննես Առաքելյան, 36  
 Ղովհաննես Գավուզորյան, 110, 160  
 Ղովհաննես Էֆենտի Ոսկերիչյան, 96  
 Ղովհաննես Պետրոսյան, 168

**Ղ**

Ղազար վարդապետ, 36  
 Ղաս Ամբուն, 44  
 Ղաս Սաման, 44  
 Ղուկաս Ղուկասյան, 38

**Ռ**

Ռոսլին, 76

**Ս**

Սամտուտ, 73, 74  
 Սանուկ Գահվեճյան, 109, 168  
 Սանուկ Գ. Ճիզմեճյան, 97, 100  
 Սանուկ խաչիա, 36  
 Սանուկ Մանուկյան, 110, 112, 160  
 Սանուկ Մուսրաֆա, 109  
 Սանուկյան Մարգիս, 91, 131  
 Սանսուր-իպն-ճաունա-իպն-ալ-Ղարիս-Ամրի, 49, 50  
 Սանտալե, 69  
 Սատրեոս, 12, 66  
 Սարբա, 94  
 Սելից-չահ, 65  
 Սեպրոպ Մաշտոց, 30  
 Սղեսի Աննա, 91  
 Սղեսի Արրահան Շուշանյան, 130  
 Սղեսի Գրիգոր, 131  
 Սղեսի Թորո, 36, 121

Մլխսի Կարապետ, 127, 131  
Մլխսի Զարուբյուն, 127, 131  
Մինաս Խալֆա, 36  
Մինաս վրդ. Մարաշցի  
Միսակ Մանուշյան  
Միս Շաբըզ, 95, 96  
Միքայել, 36, 43  
Միքայել Ասորի, 13, 61, 63  
Միքայել ծ. վրդ. Աստվածատուր-  
յան, 43  
Մովսես Կյուլենբերյան, 35  
Մուհամմետ-էլ-Մահուի, 59  
Մուհամմետ էլ-Ճատիտի-Մանսուր,  
49  
Մուրվաթյան Պարսո, 121  
Մրվան, 49  
Մրտես, 88

## Լ

Լազարեթ Քուրդ-Պողոսյան, 37, 38  
Լասրեստիկ խոճա, 133  
Լերմե Գ. Ազնավուրյան, 39  
Լերոն, 57  
Լերսես, 94, 124  
Լերսես Գույումճյան, 40, 43, 123  
Լերսիսյան, 82  
Լիկողոս Պեկյան, 38

## Շ

Շահանյան վրդ., 43  
Շեյխ-Մեհմետ-Ալի-Ֆիլալի, 83  
Շեվզի փաշա, 93, 112, 172, 173  
Շիշմանյան, 37-39, 127  
Շիշմանյան Վահան, 112  
Շուստառնա, 53  
Շուշանյան Սարգիս, 130  
Շյուքրի, 107

## Ռ

Ռատանիկ Տեր Պետրոսյան, 38  
Ռուհայեցի, 12, 27, 31, 55, 61, 66,  
68, 74  
Ռատա Միքայել, 36

## Չ

Չարխափանյան Յովհաննես, 112  
Չելեսի, 13  
Չուլճյան Խաչեր, 112  
Չուլճյան Սահակ, 121, 122

## Պ

Պալակ, 76  
Պահլավունյաց, 71  
Պաղտին կոճա, 73  
Պայեն, 73  
Պեզիրկանյան Սարգիս, 111  
Պեսոր աղա, 35, 114  
Պեսորոս, 71  
Պերուքի, 83  
Պեոյուզ-Սըղտըսը, 41  
Պըլըղենց Կրպուշ, 95  
Պողոս Աւանյան, 40, 126  
Պոմպես, 56  
Պոյաճի Աստղ, 111  
Պոզսիմոս, 69

## Ռ

Ռաֆանն, 58  
Ռոմանոս, 62-65  
Ռուբեն, 63, 70, 75  
Ռուբինյան, 35, 64, 84

## Ս

Սալիպ, 43

Սալմանասար 4, 55  
Սահակ, 122, 123, 148, 150, 152,  
154, 160  
Սահակ կարողիկոս, 17  
Սահակ Բագրատունի  
Սամուել Կոչկարյան, 39  
Սաուշատար, 53  
Սառա վարժուհի, 40  
Սարակինոս, 67  
Սարգիս Դակոբյան, 36  
Սարգիս Ընդամյան, 37-39  
Սարգիս Չուլճյան, 39  
Սարգիս Տեմիրճյան, 35, 37, 39-42,  
95, 96, 127-129, 157, 159  
Սարը Տերտեր, 41  
Սաֆֆահ, 49  
Սեբաստացի, 43, 109  
Սելևկյան, 55  
Սելևկոս Նեկատոր  
Սեղեն, 56  
Սյժ-ետ-Տուլեն 57, 58  
Սենեքերիմ, 69  
Սեվաստոս, 62  
Սըտրգ, 110, 111, 114  
Սմբատ, 63  
Սուբարտի, 54  
Սուլբան Դամիտ, 43, 121  
Սուլբան Մահմուտ, 41, 79  
Ստրաբոն, 56  
Սրապիոն, 41

#### Վ

Վահան Ամիրխանյան, 126, 175  
Վանես, 96  
Վասակ Պահլավունի, 64  
Վասիլ Ապուրասլյան, 64  
Վասիլ, 68, 69, 71, 72  
Վասիլ-Տղա, 71

Վարդան Լաճարյան, 37, 43, 95  
Վարդանացի Պետրոս, 116  
Վենտիստիոս, 57  
Վեստ Խաչատուր, 63  
Վկայասեր, 68, 72

#### Տ

Տանգրետ, 68  
Տելը-Սաբո, 120  
Տեր Բարսեղ, 72, 162  
Տեր Գրիգոր, 41, 42  
Տեր Թողիկյան, 37, 39  
Տեր Հովակիմ, 41, 42  
Տեր Հովհաննես, 41  
Տեր Ակրտիչ Սարտոյան, 125  
Տետո-քեհյա, 95  
Տերվիչ, 19, 32, 35, 128  
Տերվիչ-աղա, 115  
Տրմաշլյազ, 79  
Տիգրան Մեծ, 31  
Տիգրանուհի, 31  
Տիշոյան Սարգիս, 121  
Տիոմեն, 61, 63  
Տիրան, 71, 188, 189  
Տուդրիլ-Քեկ  
Տուշրատտա, 53

#### Բ

Բեշատ, 103

#### Փ

Փալապղյեղ Կրպո, 91, 147  
Փըշոյան Սարգիս, 120  
Փիլարտոս Վահրամ, 42, 51, 62  
Փուզիացվոց, 53

**Ք**

Քաղիքոնիտիս, 57  
 Քառեն էփուհե, 96, 127  
 Քասունի, 12, 53, 67  
 Քնաքիա-Չելեպի, 48  
 Քնալի, 20, 33, 34  
 Քյոլայան Ներսես, 121  
 Քորինա Հաթըզ, 95, 96  
 Քուրդ-Պողոսյան Ալեանիք, 111  
 Քուրեյշ, 33, 34  
 Քրիստոս, 48, 61

**Օ**

Օշին, 85, 114  
 Օսմանյան, 11, 14, 40, 77, 79, 97,  
 102, 107  
 Օսո, 139

**Ֆ**

Ֆրանքլին-Պուլյոն, 115, 193

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ****Ա**

Աղեմական, 154, 155  
 Ազազ, 58, 65, 76  
 Ազրազ, 49  
 Ալաշկերտ, 50  
 Ալեքսանդրոս, 128  
 Ախըր-Տաղ, 22  
 Աղթամար, 77  
 Աղճա-Տաղ, 21, 22, 25, 32, 83, 84  
 Ամանոս, 53, 56, 67  
 Ամերիկա, 15, 33, 92, 115, 117, 118,  
 132, 149, 163, 164, 185, 188,  
 192

**Ամզզ, 54**

Այնթապ, 12, 21-25, 34, 37, 58, 80,  
 94, 96, 103, 109, 110, 120, 121,  
 123, 124, 127, 128, 142, 153-  
 156, 161, 163, 164, 167-169,  
 171, 180, 187, 190, 193

**Այրարատ, 50**

Անավարզա, 70, 75

Անատոլու, 77, 78

Անարզարա, 62

Անգլիա, 10, 102, 104, 132, 147

Անի, 63, 67, 142

Անկաճ, 90, 151

Անտիոք, 53, 54, 57, 62-64, 66, 68,  
 70, 73

Անտի-Տավրոս, 67

Անտրիուն, 67

Աշուրկա, 90

Ապլճեշ, 26

Ապտուլ-Խարապ, 22, 120, 150

Ասիա, 14, 59

Ասորեստան, 53, 54

Ասորիք, 56, 57

Ատանա, 31, 94, 128, 181

Ատիաման, 10, 11, 12, 15, 17-46,  
 48-53, 58, 60, 61, 68, 71, 75,  
 79, 80, 84, 88, 90, 91, 93-95,  
 103, 106, 109-114, 116-118,  
 121-124, 128-129, 131, 132,  
 139, 142, 147, 148, 150, 152,  
 153, 155, 157-159, 161, 167,  
 138, 192

Ատտիս-Ապառա, 118, 127

Ատրապատական, 77

Արաքիա, 132

Արազածոտն, 50

Արածանի, 64

Արապան, 53

Արզալուտյա, 49

Արեգ, 68, 71  
Արևընդան, 75  
Արբան, 31, 71  
Արժախաս, 69  
Արսամե, 85-87  
Ափան, 66  
Ափշուն, 66  
Ափրիկե, 132

## Ք

Քարելուն, 53  
Քալու, 64  
Քաղդադ, 65  
Քամբյուկե, 57  
Քելլի, 56, 87  
Քերդուս, 68, 70, 71  
Քերիա, 57

## Գ

Գայալը-Տամ, 27  
Գարա-Գայլզ, 111  
Գարա-Գուշ, 56, 87  
Գարա-Տադ, 120, 121  
Գեղարքունի, 50  
Գերմանիկ, 56, 64, 68  
Գուրգում-Մարթասի, 54  
Գուրսենիք, 56

## Դ

Դամասկոս, 15, 73, 113, 117, 125,  
128, 143, 174, 181, 184, 200  
Դեղին-քար, 87

## Ե

Եղեսիա, 62, 65  
Եվրոսա, 11, 15, 65, 127, 132  
Երևան, 119, 128, 176

Երուսաղեմ, 34, 72-74, 77, 118  
Եփրատ, 11, 20, 21, 23, 28, 29-31,  
35, 37, 46, 49, 52-57, 64, 74,  
76, 80, 84, 85, 88-90, 110, 111,  
113-115, 125, 150, 151, 153,  
162, 164, 167, 190, 192, 193,  
196

## Զ

Զակ, 26, 27, 109, 110  
Զեննիլի, 54  
Զեննիլը-Ղայա, 83  
Զիլիֆլե, 31  
Զիյարեք, 20, 21, 50, 53  
Զյուզմա, 55, 56  
Զվիցերիա, 127

## Է

Էլմալի, 83  
Էհնեշ, 83, 84, 164, 192, 193  
Էմրելի-խան, 120  
Էնիժ, 90  
Էսկի-Սամսուր, 50  
Էսկի-Սերայ, 147  
Էրզրում, 101, 120, 122, 126, 127,  
188  
Էրցենք, 83

## Ը

Ընկազուր, 68

## Թ

Թավուսի, 85  
Թավրիզ, 77  
Թարմա, 32  
Թարսուս, 103, 128, 176  
Թել-էրֆատ, 58



Ձեռն-Ղազան, 83  
Ձըլֆըտուր, 97  
Ձիլ, 90  
Ձիլսյե, 90  
Ձիլի-աղբյուր, 68  
Ձիմուր-Ձաշ  
Ձիֆլիզ, 48  
Ձլսաշար, 73, 75, 76  
Ձոխարիս, 53, 90  
Ձուտ, 21  
Ձուրուշ, 31, 68  
Ձորեշ, 31, 68  
Ձուրքիս, 10, 13, 14, 32, 51, 77, 97,  
101, 102, 105, 106, 117, 132,  
161, 169, 171, 172

## Ի

Իկոնիոն, 76  
Իշմե, 150  
Իշխանագետ, 50  
Իսլահիյե, 54  
Իսկենտերուն, 128  
Իսսոս, 56  
Իսրայել, 101  
Իրագ, 59, 101, 113, 177, 187  
Իւլ-Կեօզ, 20

## Լ

Լիբանան, 14, 117, 118, 187, 196  
Լոզան, 127  
Լոս-Անճելոս

## Խ

Խալսլի, 84  
Խալսլուրճի, 20, 53  
Խալֆեթի, 84, 125, 164, 169, 192  
Խամշիկ, 32  
Խառան, 23, 73, 74

Խաստուր, 50  
Խարբերդ, 18, 37, 46, 52, 64, 76,  
97, 99-101, 103, 112, 115, 120,  
129, 142, 147, 151  
Խարխար, 20  
Խլար, 58  
Խոզկաշեն, 83  
Խոզկերտ, 83  
Խոսրկա, 32  
Խաստինա, 54  
Խուրիս, 77  
Խուրնուֆ, 32

## Ճ

....

## Կ

Կապադոկիս, 62  
Կարբանոն, 48  
Կարկաս, 25, 32, 52, 53, 65, 68, 75,  
76, 85, 86, 89, 90, 150  
Կարկեմիշ, 30  
Կարմիր վանք, 68, 71, 82  
Կեսարիս, 101, 115  
Կեվրուկ, 32  
Կըրքը, 49  
Կիզիստրա, 69  
Կիլիկիս, 15, 27, 31, 35, 51, 56-58,  
60, 63, 64, 67, 70, 72, 76-79,  
84, 101, 102, 103, 114, 115,  
124, 128, 176, 181, 187, 190,  
193, 196  
Կիւլրոս, 73  
Կոթ, 50  
Կոննագենե, 12, 28, 51-58, 68, 76,  
84, 142  
Կոնստակ, 26  
Կյուտիս, 58

Կոստան-լեռ, 22  
Կ.Պոլիս, 62, 72, 75, 127  
Կուրիս, 75

### Չ

Չազրո, 90  
Չալեպ, 13, 15, 23, 25, 29, 30, 34,  
46, 53, 57, 58, 76, 80, 93, 94,  
96, 97, 101, 109, 112, 113, 115,  
117, 120, 123, 125-128, 143,  
149, 154, 164-166, 168, 170,  
171, 175-178, 180-185, 187,  
188, 192, 196, 197, 200  
Չամա, 54, 179  
Չայաստան, 9, 10, 15, 25, 48, 49,  
51, 52-54, 57-60, 63, 79, 80,  
102, 116, 118, 119, 127, 128,  
132, 143, 158, 189  
Չապեչիստան, 118, 127, 128  
Չարբան, 31, 34, 68, 71  
Չարսն-Մուր, 27, 61, 68, 71, 75  
Չեպլանց, 75  
Չերակլեոն, 56, 57  
Չըսնի-Մանսուր, 49, 50, 51, 58, 76,  
77, 80  
Չյուլմեն, 32  
Չովակ, 111  
Չոռմլյա, 22, 23, 53, 55, 84, 125,  
164, 92

### Պ

Պանթարա, 29, 30, 32  
Պար-Թիլպե, 90  
Պըզլար-Պալասը, 83  
Պըզլլճա-Փունար, 26  
Պըզըլուկ, 110  
Պոբուր, 32  
Պոսան, 32

### Թ

Թարապլուս, 22, 30, 46, 53, 191,  
195-200  
Թենտերե, 86  
Թեզիրե, 49  
Թեզգիրե-Պոթթան, 30, 121  
Թիսլին, 83, 85  
Թուրունե-թաշ, 111

### Մ

Մազնլ, 32  
Մալաթիա, 11, 17, 18, 21-24, 26, 34,  
39, 40, 42, 43, 46, 48  
Մանազկերտ, 62-65  
Մատեն-կեօլ, 83  
Մարաշ, 22, 49, 54, 55, 58, 61, 62,  
64, 65, 70, 73-76  
Մար-կեզեր, 22  
Մելիտիա, 55  
Մելիտինե, 28, 53, 58, 62-64, 82  
Մենկենե, 83  
Մերսին, 23, 116  
Մենենտ-օղլու, 110  
Մեյրամ-անա, 110  
Մըստե-շիլո, 83  
Միացյալ Լահանզներ, 92, 117, 118,  
132, 149, 155, 163  
Միքազետց, 31, 52, 54, 56, 60, 88  
Միջերկրական ծով, 31, 102  
Միջին Ասիա, 59  
Միսիս, 75  
Միտանի, 53  
Մնրեճ, 56  
Մորուֆա, 90  
Մուսուլ, 113  
Մսեսլին, 53, 90, 153

**Լ**

Լեւորատ, 87, 88  
 Լիզիա, 55, 75, 85, 112, 117, 164,  
 165, 167, 187  
 Լուրիյն, 90, 150

**Ը**

Շամալ, 54  
 Շամպոյատ, 82  
 Շելֆերին, 20  
 Շեպերե, 113, 115, 193  
 Շիրբազ, 61  
 Շիրակ, 66  
 Շիրո, 25, 32, 40, 53, 66, 90, 114  
 Շուղուր, 84

**Ո**

Ուլաիշ, 90  
 Ուրիա, 49, 63, 66, 68, 69, 70, 73  
 Ուրամա, 54  
 Ուրեմն, 31, 55, 68  
 Ուրում, 55  
 Ուրֆա տես Ուրիա, 10, 23-25, 34-  
 37, 52, 54, 64, 72-75, 86, 92-  
 95, 97, 109, 110, 112-115, 125,  
 127, 128, 142, 149, 153, 154,  
 162, 165-167, 170, 186, 187,  
 190, 192-195

**Չ**

Չանագ-կալե, 124  
 Չարխնակ, 32  
 Չարչուկ, 32  
 Չերքեզ-գայա, 123  
 Չելեպուն քաղ, 91, 147  
 Չիմեն, 26  
 Չուզուր-օվա, 53

Չուխտուրաշ, 94

**Պ**

Պալապան, 83  
 Պալ-զըզ, 85  
 Պալլոթ, 87  
 Պալիան, 22  
 Պաղեստին, 14, 15, 117, 118, 174,  
 175, 177  
 Պաղտատ, 41, 117, 136, 137, 181,  
 187, 195  
 Պապ, 57  
 Պապլկա, 32  
 Պասրա, 30, 49  
 Պատինա, 54  
 Պարսկաստան, 25  
 Պարսոմիկ, 89  
 Պելվերեն, 82  
 Պեհեսնի, 21, 22, 25, 32, 33, 76, 81,  
 82, 83, 142  
 Պեջուր, 124, 128, 143  
 Պեպեր, 32  
 Պերեմիկ, 30, 31, 43, 53, 55, 75, 80,  
 83, 115, 125, 161-167, 180,  
 186-188, 190-194  
 Պերլին, 127,  
 Պիզու, 63  
 Պիպո, 32  
 Պիր, 65, 68, 75-77  
 Պիրիկ, 31, 32  
 Պոզ-պել, 21, 110  
 Պոլիս տես Կ.Պոլիս  
 Պուլամ, 22, 120  
 Պուլկարիա, 104, 126

**Ջ**

Ջահան, 62, 68

**Ռ**

Ռազիս, 31, 68  
 Ռազտիս, 31, 34, 68  
 Ռաբան, 62, 68, 72, 75, 76  
 Ռնապոլիս, 68  
 Ռոմանոպոլիս, 64  
 Ռումանիս, 78  
 Ռում-գալե, 58

**Ս**

Սամուսատ, 20, 21, 23, 25, 28, 29,  
 30, 31, 34, 46, 49, 52-58, 66,  
 74-77, 87, 90, 110, 111, 114,  
 121-123  
 Սամսուր, 50  
 Սանգար, 53  
 Սասուն, 142, 174  
 Սավրան, 82  
 Սարչե-կեօզու, 54  
 Սեբաստիս, 63, 65  
 Սեբլըն, 20  
 Սելևկիս, 31, 56  
 Սենտ-Անրուան  
 Սեսեյոնք, 56  
 Սև-լեռ, 75  
 Սիս, 77  
 Սյուփյուրկիճ, 53, 84  
 Սուվետաշեն, 116, 118  
 Ս. Աստվածածին, 41, 69  
 Ս. Գևորգ, 90  
 Ս. Թորոս, 73  
 Ս. Չակոբ, 82  
 Ս. Չոխիսիմյանց, 50  
 Ս. Նշան, 90  
 Ս. Սանտղզ, 84  
 Ս. Փրկիչ, 53, 82, 84  
 Սուբարի, 54  
 Սուվարը-չայ, 85

Սուրիս, 14, 15, 23, 53, 54, 56, 57,  
 94, 101, 112, 113, 116-118,  
 149, 170, 187, 192, 193, 194,  
 196  
 Սուրուն, 73, 75, 115, 124, 192  
 Սուրճագ, 61, 68, 81, 82  
 Սուրճագ-չայ, 82  
 Ստամպուլ, 11, 135, 137  
 Ստորին Արձնիս, 66

**Վ**

Վաղարշապատ  
 Վան, 10, 101, 116, 170  
 Վանա լիճ, 58  
 Վանքուկ, 29  
 Վասնլլոն, 82  
 Վասպուրական, 69  
 Վարդանա, 21, 24, 26, 31, 32  
 Վենետիկ, 40  
 Վիեննա, 127

**Տ**

Տավրոս, 17, 18, 20-22, 26, 28, 32,  
 52, 67, 87  
 Տարսն, 62, 64, 69, 70  
 Տեր-Ձոր, 30, 35, 112-114, 126,  
 128, 170, 180  
 Տերպենտ, 120, 121  
 Տըրլտղո, 89  
 Տիգրանակերտ, 11, 22, 112, 113,  
 142, 151  
 Տիգրիս, 30  
 Տլուր, 55, 58, 65, 68, 70  
 Տղամպաճ, 94, 95  
 Տորոս, 70

**Բ**

Բագգա, 30, 49, 50, 164, 166  
 Բաս-ուլ-այն, 125, 174

**Փ**

Փալաշ, 32  
 Փաշա-փունարի, 19  
 Փարիզ, 124, 186, 187  
 Փերսիմ-ծածը, 27, 68  
 Փելվերի, 82  
 Փերրկա, 90  
 Փիսիկ-Ռեմաճա, 27  
 Փիրին, 20, 26, 27, 28, 48, 50, 52  
 Փշենիկ, 32  
 Փոցր Յայք, 14, 50, 52, 72, 77, 101

**Ք**

Քարքշուն, 32  
 Քեախթա, 11, 22, 24, 27, 28, 32, 40,  
 49, 52, 53, 56, 76, 85, 84, 86,  
 87, 88, 90, 114, 150, 152

Քեախթա-յայը, 87  
 Քեսուն, 62, 63, 65, 68, 71, 75, 82  
 Քեֆար-սուտ, 77  
 Քեֆեր-տիշ, 90  
 Քըլիսան, 29  
 Քիլիս, 23, 80, 168, 179  
 Քիշտամ, 84  
 Քուլըք, 35, 114  
 Քորսին, 31, 32  
 Քուլաֆըկ, 21

**Օ**

Օշին, 65, 114  
 Օսմանիյե, 124

**Ֆ**

Ֆելլիշ, 90  
 Ֆրանսա, 12, 116-118, 132, 191  
 Ֆրնզն



## ՔԱՐՏԵԶԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Միջնաբերդ (Բերդ Մանուկի)
2. Դայրոց եկեղեցին
3. Դայրոց դպրոցը
4. Հուկան
5. Սեբաղը (պալատը)
6. Չորանոցը և ռազմամբերանոց
7. Անդրիներու եկեղեցին և քաղը
8. Գերեզմանատուն
9. Պալատական յազին
10. Պալ կաթոլիկ եկեղեցին
11. Գերեզմանոցի քաղը
12. Սև տղենց քաղը
13. Պալ բողբոջականներու քաղը և Գավըզտրենց քաղը
14. Միժոն աղայն (Տրեմենց) և էին սերախ սրճարանին քաղը
15. Ճինիվիզենց և Հիլմանենց քաղը
16. Թերզի Մանուկենց յազին և քաղը
17. Կարի Հուլանդիենց Չելչային քաղը
18. Կերի Հուլանդիենց Չելչային քաղը
19. Պատանը Մեքքև և քաղը
20. Խոնա-Էօնի քաղը
21. Քուրդ մահալլեխին
22. Սուսալա քաղը
23. Անթըլենի յոզուլը (դեսի Ուրխ տամոլ ճամբան)
24. Եօքուզ դոզի քրքական այգիները
25. Տալ-տիպին հայոց այգիները և Ալթընի օղլուն հալուզ և Սալ հուլուկի
26. Թյուճրուզ այգիի հայոց այգիները
27. Պուլտուլի հայոց այգիները
28. Ալի-Տաշի կամուրջը (Պեհեմիի ճամբան)
29. Հիլմանենց լճուզը (պարտեզ)
30. Յադուպ աղայենց քաղը
31. Կարդին վարդապետին լճուզը
32. Յալիճի Արթինին քաղը
33. Լախըրին կամուրջը և ուզուն Գրիզորենց քաղը
34. Մուրվաթոյենց, Ունճոնց քաղը
35. Դին սերախի յազին, աղբյուրը և ձկնիքը
36. Մուրուլլայենց տունը
37. Կեօլե-պարճազի աղբյուրը ու Սեֆեդյան, Պանի-Պալայենց քաղը
38. Կեօլե-պարճազ և արար քաղերը
39. Կեօլե-պարճազի աղբյուրը
40. Նախրին կամուրջը և տանիկներու մեզաղիկը (սառսանոցը)
41. Սև Մատուլլայենց, Լույճասիենց և քուրդ մեծամեծներու քաղերը

**Ճանաթ.** – Աղիականի շրջանի քաղաքներում ուղղության և հեռավորության համար կնքված թռվյալ է միջնաբերդը:

Քարտեզը պատրաստած է Մարգիտ Տնփրճյան, վերականգնված է Թադևոս Թադոյան:

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստաշարանի փոխարեն .....	5
-------------------------	---

### ՄԱՍ Ա Պատմության նստածանոթ

Լեռնաույթուն .....	9
--------------------	---

#### ԳԼՈՒԽ Ա

1. Ատիամանի աշխարհագրական դիրքը, կլիման, բուսական, լեռնաանական աշխարհը, բնակչությունը .....	17
2. Սոցիալ-քաղաքական և տնտեսական վիճակը .....	45

#### ԳԼՈՒԽ Բ

##### Պատմական ակնարկ

1. Ատիամանի անունը .....	48
2. Ատիամանի պատմական մ.թ.ա. II հազարամյակին մինչև արաբական տիրապետության շրջանը (7-րդ դ.) .....	52
3. Ատիամանը արաբական տիրապետության շրջանին .....	59
4. Ատիամանը 11–12-րդ դարերուն (Փիլաղտոս՝ Վահրամ Վարաժնունցի իշխանությունը) .....	61
5. Ատիամանը քրդական տիրապետության շրջանին (16–19-րդ դդ.) .....	77
6. Ատիամանը 19-րդ դարեն մինչև Ա Չամաշխարհային պատերազմը .....	80
7. Ատիամանի 1895-ի Չամչության ցարդը .....	91
8. Ատիամանը Նաբրեղոյի գավառին մեք (հարբերոյի գավառի բնակչության ընդհանուր թիվը, հարկերը, պյուստեհի մուտքի բաժինը) .....	97
9. 1906-ի Օսմանյան սահմանադրությունը .....	102

#### ԳԼՈՒԽ Գ

##### Ատիամանը Ա Չամաշխարհային պատերազմի շրջանին

1. Ա Չամաշխարհային պատերազմը և թուրքերան .....	104
2. Թուրքերու որդեգրած քաղաքականությունը հայերու հանդեպ .....	106
3. Տարդեր և բռնազարթ .....	109
4. Չայկական նահանգներեն տեղահանված հայերը .....	113



5. Լնուշներ թուրք բաղբարություններին	114
6. Վերապրող անփամանցիներ	117

#### **ԳԼՈՒԽ Դ**

##### **Ատիամանը Ա Դամաշխարհային պատերազմին հետո**

1. Ատիամանցիներ արտասահմանի մեջ	118
2. Ատիամանցիներ Խորհրդային Դայաստանի մեջ	118
3. Ատիամանցի հայ նշանավոր դեմքեր	120
4. Ատիամանը ներկայիս	131

#### **ԳԼՈՒԽ Ե**

##### **Ատիամանի գավառաբարրառը**

Սի քանի պատմվածք Ատիամանի գավառաբարրառով	133
Դեղանույններու զարտուղի հուլյուններ	137
Բաշի խոնարհումը	140

#### **ՄԱՍ Թ**

##### **Ինքնագնահատություն և զանազան դեպքեր**

Բառարան Ատիամանի գավառաբարրառին	201
Անձնանուններու զանկ	240
Տեղանուններու ցանկ	245
Ատիամանի քարտեզը (հատակագիծ)	252
Քարտեզի բացատրություններ	253

[65077]

ՍԱՐԳԻՍ ԶՈՒԼՉՅԱՆ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՏԻԱՄԱՆԻ

ԻՆՔՆԱԿԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

SARGIS CHULJYAN

## HISTORY OF ADIAMAN

AUTOBIOGRAPHY

---

Պատարակչության տնօրեն  
Մաշա Մնացականյան

Պոդարմատայան ինքնալի  
Սթա Բաղդասարյան

Դանմարդկային ճանփրուծ  
Վիտալի Ասրիկ

Տպարարունի օժան  
Շախչ' 6064 1/16  
Շուրջ' օժան  
Շախչ' 16 տա. Շախչ'  
Տարջանակ' 250 օրինակ  
Գին' պայմանագրով



«ՃԱՆԱԿ»-ԳԻՒՆ ԳՐԱԾՐԱՎՈՐԻԾՅՈՒՆ  
375031, Երևան, Կոմիտասի պող. 49/2  
Ֆեո.՝ (+3741) 23 25 28,  
Ֆաքս՝ (+3741) 23 25 66  
Էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայք՝ www.zangak.am



A  $\frac{\pi}{89214}$

900 9th Street, S.W., Wash., D.C.



220089214